ԳԵՂԱՍ
ՍԵՎԱՆ

ՀԱՅՈՑ ԹԱՂԸ

Herrn Dr. [illegible]

[illegible] Urkunde [illegible]

[illegible] [illegible]

[illegible] [illegible]

[illegible] [illegible]

[illegible] [illegible]

16. Mai. 1878

[illegible]

ԳԵՂԱՄ
ՍԵՎԱՆ

ՀԱՅՈՑ ԹԱՂԸ

„ՀԱՅԱՍՏԱՆ"
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1967

Ар 2
Ս 41

Гегам Левонович Севан

«Армянская улица»

(на армянском языке)

7—3—3

Издательство «Айастан»
Ереван, 1967

ՊԱՏՄՎԱԾՔ՝
ՎԱՉԳՈ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ, ԵՐԱՉԻ ԵՎ...
ՏԻԿՆԻԿՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

1

Ապակեփեղկերու բացվածքեն ներս թափանցեց կայծակի լույսը ու ինք մանկությունեն եկող վարժությամբ մը մտովի համրեց արագ-արագ՝ մե՛կ, երկո՛ւ, երե՛ք... շորս ու հանկարծ կարծես վիթխարի աղմուկով մը լսվեցավ որոտումը. որոտման հաջորդեց հորդառատ անձրևը։ Շանթը հարկ է ինկած ըլլար մոտակա տեղ մը։ Հակառակ անոր, որ արթուն էր ժամերե ի վեր, աչքերը հառած առաստաղին, վերմակը քաշած մինչև շրթները. կհամենար անկողնին մեջ ու կջանար կրկին քնանալ։

Երազները կշարունակվեին՝ իրար հրմշտկելով, կերազեր բաց աչքերով։ Պայթեցավ երկրորդ որոտումը, այս անգամ արդեն բավականին հեռու. ինք երեսը շրջեց պատին ու փակեց աչքերը։

— Պիտի քնանա՞ս տակավին, թե բերեմ սուրճդ,— ձայնեց կինը։

Ելավ, նստավ անկողնին մեջ, դիտեց շուրջը, իր անփույթ նետված հագուստներն էին աթոռներուն վրա, հետո ճամփորդական պայուսակներն էին կիսով բացված՝ հոն

Փարիզեն բերած ինքնագործ ինքնաշարժն էր տղուն համար, ասդին փոքր սեղանին վրա Հունաստանեն գնած պալատական փոքր զինվորը՝ կնոջական փեշով։ Հետո իր աղջկան համար Պրագայեն վերցուցած այլ պուպրիկ մըն էր. գեղին ոսկեթել մազերով ու ուկրաինական խայտաբղետ զգեստներով, տակավին շեխական հախճապակյա վազեր էին, մոխրամաններ ու լիքյորի փոքր գավաթներ, կայծն նաև ռումինական մեկ քանի ձայնագնակներ՝ ցիկան երաժտության։

Դժկամ ելավ անկողնեն, արագ հագավ տափատն ու շապիկը ու.

— Բեր սուրճը,— պատասխանեց։

Կինը գուրգուրոտ հայացքով մը վարանոտ մոտեցավ իրեն.

— Լրիվ գիշերը անհանգիստ էիր, Վազգեն,— ըսավ,— պառանցեցիր շարունակ, սա գործերուն մեջ մտնելեդ ի վեր կյանքերնիս շուտ եկավ, ջանս, ելիր հանգիստ գրասենյակ, կարգի դիր գործերդ, քիչ մը եռեռն ինկիր սա ապսպրանքներուն, երկու ամիս է դուրսերն ես, ամեն օր տաս հոգի կհեռաձայնեն, մեկը գրամ կուզե, մյուսը կհամառի հավատալ, որ Եվրոպա գացիր, վերջիվերջո ես ալ շվարեցար։ Քու ինչ գործդ էր, այ մարդ, «իմփրեզարիո»-ությունը սա քաղաքին մեջ, այսքան գայլեր քեզի հա՞ց կթողուն, որ ուտես... Ինչ լավ էինք առաջ, երբ սահմանափակված էիր փոքր գրասենյակովդ։ Գեշ էր, վատ էր, գոնե օրվան ապահով հաց մը ունեինք այն ատեն, մինչդեռ հիմա պարտքեր, պարտքեր ազգականներու, բարեկամներու արհամարհոտ նայվածքներ, ծիծաղ ու օրական տասն անգամ պարտապահանջներու հեռախոսային զանգ...

— Օ՞ֆ, Աշխեն, չհասկցած գործերուդ մի՛ խառնվիր դուն,— սաստեց ակամա ջղայնությամբ։— Մոտ օրեն կհարստանանք ու թող տեսնեն այն ատեն այդ արհամարհոտ հայացքով դիս դիտողները...

— Լա՛վ, լա՛վ, Աստված լսե քեզ,— ավելցուց կինը լուռ համակերպությամբ։

Չպատասխանեց։ Խմեց սուրճը ու արագ դուրս եկավ տունեն։

Հայրը դերասան էր Պոլսո մեջ Մնակյանի «Տրամաթիք»-ին, մայրը՝ դաշնակահար։ Երկուքն ալ կորսնցուց վաղ, մնաց որբ ու անտեր։ Մեծցուց զինք մորաքույրը, գործի տվավ ու երբ հասավ երիտասարդության սեմին, երակներուն մեջ սկսավ խոսիլ ժառանգական արյունը, մտավ «Տարյուլպետաչի», բայց շարունակեց գործը, որ շինություններու ներկարարություն էր։ Եթե թուրք ըլլար, թերևս տեղ մը հասներ բեմին վրա. բայց իր հայ ըլլալը զինքը պահեց միշտ չորրորդական, հինգերորդական դերերու աստիճանին ու կուլիսներու ետին. իր սիրտը սակայն հեռուներն էր, սահմաններեն ալ անդին։ Գիշեր ու ցերեկ կերազեր ըլլալ հայրենիքին մեջ իր վարպետներուն՝ Փափազյաններուն, Ներսիսյաններուն հետ, հայրը շատ էր խոսած անոնց մասին։ Կամ կցանկար անցնիլ Եվրոպա ու հոն փորձել բախտը, արտասահմանյան բազմաթիվ հայ դերասան ու դերասանուհիներու հետ կապ կպահեր։ Հայ մարդու համար Պոլիս թե Փարիզ նույնն էր անշուշտ, բայց խեղդվելն ետք գեթ խեղդվեր օվկիանոսի մեջ։ Օտարության մեջ ավելի հանդուգն կըլլար մարդ, ձերբազատված շրջապատի կաշկանդումներեն, ըսի-ըսավներեն։

Մորաքույրը՝

— Վաղ անցիր սա թիյաթրոճիությունեդ,— կխրատեր տևաբար,— հաց չի բերեր, օղո՛ւլ, ապերախտ գործ է, խելքդ միտքդ տուր գործիդ, դրամ շահե, տուն տեղ եղիր, հայրդ ու մայրդ տեսար իշտե, ա՜յ տղա...

Բայց եկուր ու հասկացուր դուն սա երակներուն մեջ շրջող արյունին։ Եկավ զինվորության տարիքը, պատերազմի շրջանն էր. առին բանակ տարին զինք՝ Կիլիկիա։ Բանակին մեջ թատերական խումբ կազմեց. բայց օրերը կապարի պես նստան ուսին։ Տարի մը, երկու, երեք. զինվորացրման ո՛չ մեկ լուր ու շշուկ, վատ ժամանակներ էին, վաղը անհայտ։ Խելառ մեկ քանի հայ տղաք փսփսացին իր ականջին, թե՝ կարելի էր մի անգամ ընդմիշտ ազատիլ այդ բոլորեն, մոտ էր սուրիական սահմանը, քուրդ մաքսանենգներ կային, որոնք կարող էին օժանդակել իրենց։

Երիտասարդ էին, ժամանակն էր նոր կյանքով ապրելու, միայն հարկ էր քիչ մը դրամ։

Քիչ մը դրամ ուներ ինք, բայց... ո՛չ մեկ բայց, նաև իր արյունը, օտար հորիզոններ, Սուրիա, Լիբանան, անկե՛ն ալ կամ Հայրենիք, կամ Եվրոպա։ Կըլլա՞... Երիտասարդ, խելառ մարդու համար ի՞նչ կա չըլլալիք ու... եղավ։ Եղավ, բայց ինչպես։ Տաժանելի օրերե՛ն ետք անցան Սուրիա, Քեսապ։ Հանձնվեցան սուրիական իշխանություններուն, մարդիկը չվստահեցան իրենց, խառն ժամանակներ էին, որոշեցին վերադարձնել ետ... Թուրքիա։ Բայց տեղի հայությունը միջամտեց ու միջամտությունն ունեցավ այն բարիքը, որ փոխանակ հոռեգույնին դիմելու, ընտրեցին շարյայ փոքրագույնը ու... բանտարկեցին։ Տարի մը տևեց այդ բոլորը, հասավ արաբական երկիրներու ազատագրումը։ Շունչ քաշեցին, բայց ո՛չ անձնագիր, ո՛չ պաշտոնական որևէ թուղթ։ Մնացին մեջտեղ. փորձեցին ամեն տեսակի գործ. արվեստն ու դերասանությունը թվեցան դառն կատակ, լաշակավոր կիներու հետամնացության ու ավանդապաշտության խոր ճիրաններուն մեջ թաղված այդ շրջաններուն համար։ Հիվանդացավ ինք, վարակվեցավ դեղնախտե. հասավ մահվան դուռը։ Փոապան մը զինք իր մոտ առավ, սորվեցուց հաց թխել, եփել ու անցան տարիները։ Ու երանելի օր մը, չէ՞ որ ամեն բան առաձգական է, այո՛, երանելի օր մը հավաքած դրամովը վերջապես կարգադրեցին կեղծ անձնագիր մը ու ինքզինքը նետեց Բեյրութ։ Տարիքը առաջացեր էր բավական, Բեյրութի մեջ շրջան մը աշխատեցավ որպես փոապան, հետո խոհարարի օգնական, սպասյակ ու վերջապես բռնեց իր նախկին գործը. շինություններու ներկարար։ Այս վերջին գործն ալ եղավ իր փրկությունը։ Հասավ փրկությունը, բայց դարձավ այն, ինչ արդեն էր Պոլիս գտնված շրջանին՝ սա տարբերությամբ, որ հոս գեթ հայ ըլլալով, ազատության մեջ ըլլալ կկարծեր։ Առաձգական բառ մըն ալ սա ազատությունը։ Չհասկացավ մեկ ճշմարտություն իր կյանքին մեջ, թե՝ ինչո՞ւ կյանքը մահեն ավելի լավ է։ Եվ քանի չհասկցավ լրիվ այդ մեկը՝ ամուսնացավ Աշխենին հետ։ Բացավ ներկարարի դրասենյակ մը ու շինություններու ներկի գործեր առավ

վրան։ Բանվորներ աշխատցուց, հետո ունեցավ առաջինը՝ մանչ զավակ մը, հետո երկրորդը՝ աղջիկ մը և ոչինչ։ Գործը գնաց առաջ։ Դերասանությո՞ւնը... Է՜հ, ամեն մարդ կյանքին մեջ ունի պարապ կողմ մը. իրեն հարցնեիք, կըսեր՝ դերասանությունն է միակ կյանքին իմաստը... Պարապ խոսք մըն ալ այս մեկը։ Բայց եկուր տես, որ ո՛չ թատրոն կար երկրին մեջ, ո՛չ օփերա, հայկական ակումբներ կային, ընտրեց մեկը, լծվեցավ գործի ու թատերական խումբ մը կազմեց, իսկ ինք դարձավ «ռեժիսյոր»։

— Թո՛ղ սա պարապ ժամավաճառությունդ,— ըսավ կինը օր մը։

— Օ՜ֆ, Աշխեն, չհասկցած գործերուդ մի խառնվիր դուն,— սաստեց ակամա ջղայնությամբ մը։

Ակումբ կար, բեմ չկար, բեմ կար՝ դերասանուհիներ չկային։ Բայց ինք կհարթեր ամեն ինչ. կաշխատեր մինչև ուշ գիշերներ, տունները կերթար, կհամոզեր ծնողները ու մարդիկ տարօրինակ մը կնայեին իր վրան։

— Աղջիկներս եթե բեմ ելլե, ետքեն անունը կելլե,— կըսեին։

— Ետքեն անունը ելած աղջիկը ո՞վ կնությանն կառնե։ Կխոսեր, քրտինք կթափեր։ Բայց քանի ճանչված մարդ էր, նյութապես ալ ապահով, պատվավոր ընտանիքի հայր,— այս մեկն ալ ուրիշ ողբերգություն.— կվստահեին ու մեղմ ծիծաղով մը.

— Պարոն Վազգեն վարձքդ կատար,— կըսեին։

Բայց Բեյրութը «ազատության» քաղաք է, կային վեհեր, հակառակորդներ, իր ըրածը, ընտրածը չհավնողներ. հարցեր, վիճաբանություններ, քվե և... զզվեցավ այդ բոլորեն։

Օր մը հանդիպեցավ պոլսեցի նախկին ընկերոջ մը.

— Ի՞նչ կընես Կարպիս հոս,— հարցուց զարմացած։

— Չե՞ս գիտեր։

— Ոչ, ուսկի՞ց պիտի գիտնայի։

— Իմփրեզարիոյություն, եկուր օր մը դրասենյակս, խոսինք։

Ու գնաց, խոսեցան։ Կարպիսը, իր ճանչցած Կարպիսը այժմ դարձեր էր Մուսյո Կարպո։ Հարուստ, հարգված մարդ։

Ուներ հոխ գրասենյակ, մեքենագրուհիներ, հեռախոսներ և այլն... Արդեն այսքանը ունենալն ետք հարգված ըլլալը սովորական երևույթ մըն էր։ Կը ճամփորդեր Եվրոպա, կապ ուներ դերասանուհիներու հետ, համաձայնություններ կկընքեր, կբերեր Բեյրութ, ներկայացումներ կսարքեր, միասին լավ ժամանակ կանցնեին և այս բոլորին ետք ալ ահագին գումարներ կանցներ ձեռքը...

Ու հիմա Կարպիսը ցույց կուտար ֆրանսացի, գերմանացի, անգլիացի, իտալացի դերասանուհիներու կիսամերկ նկարներ։ Հետո բանալիով մը ընկույզն գրասեղանին կենտրոնական դարակը քաշելով, դուրս կհաներ Հավանայի երկու խոշոր սիգար ու մեկը կհրամցներ Վազգենին։

— Յա՜, եղբայրս, այսպես ահավասիկ. հաճելի, շահաբեր ու բազմակողմանի արդյունքներով գործ է...

Հիացած կդիտեր Վազգեն։

— Իսկ այդ դերասանուհիներդ ինչպիսի՞ք են առհասարակ։

— Քապարեներու, սիրելիս, քապարեներու և հարուստ ամուրիներու հատուկ...

Չէ՛, ինք նման աղջիկներու ու քապարեներու հետ գործ չէր կարող ունենալ, ինք արվեստի մարդ էր, ընտանիքի հայր, հարգված մարդ ու հանկարծ...

— Կարպիս,— ըսավ,— կարելի՞ է լավ խումբեր բերել արտասահմանեն, երաժշտական, թատերական և այլն...

— Ինչո՞ւ չէ, կարելի է։

— Դուն ինչո՞ւ չես բերեր։

— Վտանգավոր գործ է։

— Ինչո՞ւ է վտանգավոր։

— Ո՞վ է հասկցողը արվեստեն, սիրելիս, արվեստը դրամ չի բերեր մեր մոտ, հոս հարգին գիտե՞ս ինչ է...

— . . . . . .

— Սրունք ու կուրծք է հարկավոր, ա՜յ, օրինակ,— ու քաշեց ընկույզենի դարակներեն մեկը. հանեց նկարներու ալբոմ մը,— ա՜յ, օրինակ,— ըսավ,— այս կուրծքերը, որ կկոչվին ֆրոյլայն Զարահ, գերմանական են, ինձի բերին երկու հազար լիրանանյան թղթոսկի, սա սրունքները, որ

ֆրանսական են և կկոչվին մատմազել Սիմոն, շահեցուցին ինձի երեք հազար լիբանանյան, մոռցա ըսելու... իտալական են։ Իսկ երաժշտություն, թատրոն, կարելի է անշուշտ։ Բայց հարկ է մեծ կապեր ունենալ, մեծ դրամապլուխ։ Ճիշտ է, շահու պարագային մեծ կըլլա ավարը, բայց հարկ է խորհիլ վնասին մասին ալ...

— Ինչպիսի՞ կապերու մասին է խոսքը։

— Ա՜յ, օրինակ, բարձր դասուն հետ։ Հարկ է խումբը բերելե ետք մեծ սրահ մը վարձել, սրահը կարևոր է, ամեն մարդ ամեն տեղ չերթար. խումբը որքան ալ ըլլա նշանավոր, վարձելիք սրահդ է նախ կարևորը, հետո հարկ է քաղաքիս ծանոթ ընտանիքները գիտնաս շարժել, որովհետև հասարակությունը պիտի գա ոչ թե բերած խումբիդ համար, այլ որովհետև այդ ներկայացման ապահով պիտի ըլլա, թե՝ ներկա պիտի ըլլան անոնք, այդ մեծահարուստ ընտանիքները... ուրեմն ինքն ալ իր կարգին պիտի հազվի, կիները պիտի երթան վարսավիրանոց, գեղեցկանան, հարկ է հանեն իրենց ադամանդներն ու զարդերը, այսինքն քու բերելիք խումբդ պիտի ըլլա միջոց այդ բոլորին։ Հետո գիները հարկ է ըլլան բարձր, անմատչելի, որպեսզի անոնք վստահ ըլլան, թե հասարակ ժողովուրդ պիտի չլեցվի ներկայացման։

— Վստա՞հ ես ըսածներուդ,— հարցուց վարանումով Վազգեն։

— Որոշ չափով այդպես է կարգը։

— Որքա՞ն դրամ է հարկավոր։

— Նվազագույն տասնե-քսան հազար։

— Շա՞հը։

— Կրկնակի, եռակի...

— Ես այդքան չունիմ,— ըսավ Վազգեն տխուր,— դուն չես մտներ գործին մեջ, եթե միասին ընենք։

— Չէ, եղբայրս, ես չկամ նման ռիսքերու մեջ, եթե կուզես, կրնամ քեզի հասցներ տալ։

— Տո՛ւր։

Մուսյո Կարպոն բացավ դարակը ու ավավ շարք մը հասցներ։

— Մեծահարուստ մարդիկ են,— ըսավ,— եթե խելքեր-

նին պառկի, կը մտնեն ընկերովի, կես առ կես հաշվով։ Համենայն դեպս դու փորձե առանձինն ընել, ընկերովի գործին մեջ խեր չկա։ Անփորձ ես, կխաբեն քեզ։

— Պիտի փորձեմ,— ըսավ Վազգենն։

Մուսյո Կարպոն բացավ դարակ մը. հանեց վիսքիի շիշ մը, երկու բաժակ լեցուց կիսով, սոդա խառնեց մեջը ու երկարեց Վազգենին։

— Նոր ծրագիրներուդ կենացը,— ըսավ։

Խմեցին, բայց Վազգենը տարված էր երազներով, նույնիսկ չտեսավ, թե ինչպես Կարպիսը աչք քթթեց իր մեքենագրուհիներեն մեկուն ու այս վերջինը շինծու հապճեպով մը ձեռքը տարավ սրունքներուն ու վար քաշեց զիստերը գրկող նեղ փեշը...

3

Այս հանդիպումեն ետք քունը փախեր էր Վազգենի աչքերեն։ Ի՞նչ էր իր կյանքը. անիմաստ պայքար մը փոր մը՝ հացի համար։ Իր գո՞րծը. չէր սիրեր իր զբաղմունքը... ներկարարություն, բանվորներուն օրապահիկը, ապրանքներուն գիները ելլելե ետք, ամիսներու աշխատանքե մը վերջ հազիվ ապրուստ մը։ Հետո սրտովը չէր։ Փոապանություն՞ն, թե ներկարարություն, նույնն էր վերջիվերջո, միջոց մը ապրիլ ու ընտանիք ապրեցնել կարենալու։

Մինչդեռ այլ բան է իմփրեզարիոյությունը, նախ գործ ուներ արվեստագետներու հետ, դերասաններ, դերասանուհիներ, հետո եթե շահեցար և առասպելային շահեր կարելի էր ձեռք ձգել, օրինակ՝ 1500 հոդինոց սրահ մը, միջին մուտք շորս ոսկիով, ըսենք՝ 6000 լիրանանյան՝ գիշերը, նախաձեռնեցիր շորս գիշեր։ Եղավ 24.000. խումբին համար ու այլևայլ ծախսերու թող երթար կեսը, երկու երրորդը, կրկին կմնար 6000 լիրանանյան, ըսե կեսը՝ 3000։ Ինք, ամիսներու աշխատանքով այդ գրամին կեսն ալ չէր կարող երազել։ Վերջապես առևտուրը առևտուր էր, բայց ուրիշ բան է տարերքին մեջ ըլլալ, միասին նստիլ, ելլել այդ մարդոց հետ. հետո տուր ձեռքդ Եվրոպա, հոս, հոն, նույնիսկ եթե չոր հաց

մը հաներ, գեթ ապրածը, զգացածը շահ կմնար։ Հետո, այլ կհնչեր իմփրեզարիո Վազգենը, ներկարար Վազգենին քով։ Նայեցավ Կարպիսին տված հասցեներուն, թող առայժմ անոնք մնային գրպանին մեջ։ Խնայողություններ ուներ, հետո վարկ ուներ շուկային մեջ։ Որմե՞ ուզեր իրեն գրամ չէին տար, այսօր շրջեր իր բարեկամներուն՝ հինգ հազար մը ափին մեջ էր։ Բարիք մը, եղակի բախտ մը եղավ սա Կարպիսին հանդիպիլը։ Պիտի նեռվեր, պիտի փորձեր բախտը, կյանքը ինք ուզե, թե չուզե կանցներ արդեն, գոնե լավ անուն մը ու գրամ կձգեր իր զավակներուն... Ի՞նչ տեսեր էր ինք կյանքեն. տառապանքե ու զրկանքե զատ, ինք սա Կարպիսին չափ ալ չկա՞ր։ Գիշերները կերազեր մերթ Փարիզին մեջ ըլլալ, մերթ Բրյուսելի, Ժնևի, Պրագայի, կդիտեր ներկայացումներ։ Մարդիկ կհարգեին, կպատվեին զինք. պայմանագրություններ կկնքեր։ Իմփրեզարիո Վազգեն։ Չէ, Վազգենը լավ չէր, վաղն իսկ հարկ է նոր թուղթեր տալ, հասցե. հեռախոսի համար։ Առայժմ կգործածեր իր համեստ գրասենյակը, հեռախոսը։ Եվրոպայի մեջ մարդիկ ի՞նչ պիտի գիտնային, իսկ անո՞ւնը... անունը հարկ է փոխել ու փոխեց։ Մուսյո Կարպոյի նմանողությամբ որոշեց դնել Վազգո և ավելցուց Վազգո ընկերություն... այսպիսով ալ ծնունդ առավ մեր պատմվածքը՝ «Վազգո ընկերության, երազի և տիկնիկներու...» տիկնիկներու մասին մենք կպատմենք տակավին...

4

Ու սկսավ պրպտել, հետևիլ եվրոպական թերթերուն, ուշի-ուշով նայիլ արվեստի պարբերագրքեր, ժուռնալներ։ Գրասենյակի հեռախոսը կհնչեր իզուր։ Վերցուցած էր ներկերը, գործերը թողած երեսի վրա։ Հարկ էր «Վազգո ընկերության» ապագային իսկ համար առաջին ձեռնարկը ըլլար աննախընթաց բան մը, հարկ էր ընդգրկեր ժողովրդային բոլոր խավերը։ Իր խելքը չէր հասներ Կարպիսին բաներուն, թե՝ հարկ է գիտնալ քաղաքին մեծահարուստ ընտանիքները շարժել։ Անիմաստ կգտներ այդ բոլորը. եթե ինքը

կարենար սապես ժողովրդային բոլոր խավերը ընդգրկող, խանդավառող, նվաշագույն պարագային հետաքրքրող խումբ մը գտնել, հաջողած կարելի էր նկատել գործին կեսը։ Բայց նյութական իր կարելիությունները կցցվեին հանկարծ. բազմանդամ խումբի մը համար, այդ խումբին Բեյրութի մեջ մնալիք օրերուն ծախսը, հյուրանոցի, ճաշի, պտույտի, հետաքրքրության տրվելիք գումարը, պետության տրվելիք շահաբաժինը, հայտարարության, տպագրության ծախսերը. տակավին նախատեսված գումարներ, հանձն առնվելիք կաշառքներ. այո՛, այս բոլորը որքանով ալ կրճատել, կհասնեին Կարպիսին նախատեսած նվաղագույն արդյունքին, տասեն-քսան հազարի։ Տակավին իր ուսումնասիրություններու առաջին իսկ քայլերուն հասած էր այն եզրակացության, թե՝ մամուլը կարևոր գործոն էր այդ բոլորի մեջ։ Ինք փորձված շուկայիկ կյանքին, գիտեր, թե մամուլը կարող էր կաշառվիլ ի հարկին։ Կարպիսն ալ բասվ վերջերս։ Խումբին որակեն ավելի հարկավոր է դրամ հասցընել մամուլի քննադատներուն գրպանը, որպեսզի լավ արտահայտվին։ Մեկնած ուրեմն նույն սկզբունքեն կարելի չէր հեռանալով թերթերու, պարբերագիրքերու ու ժուռնալներու, իսկական կարծիք կազմել բերելիք խումբիդ մասին։ Նույնիսկ եթե այդ բոլոր թերթերն ու ժուռնալները եվրոպական ըլլային։ Ամենատպահովը ոիսքեն չխուսափիլ էր. քանի վերջնականապես որոշած էր թե՝ պիտի նետվեր գործին մեջ։ Ուրեմն լավ կըլլար, որ անիմաստ խնայողություններու մասին չմտածեր, ամենավստահելի ուղին, անձամբ երթալ էր Եվրոպա, տեսնել իր իսկ սեփական աչքերով ու եզրակացության գալ։ Ճիշտ է, Եվրոպա պտույտ մը կնշանակեր նվաղագույն երկուքեն-չորս հազար լիրանանյան թղթոսկի. բայց չէ՞ որ առևտուրի գլխավոր սկզբունքը այն էր, թե՝ շահը գնման ատեն է, եթե կրցար ձեռնտու ու հարմար գիներով լավ ապրանք վերցնել. լավ՝ թե ոչ, մնաք բարյավ հաջողություն։ Իրավունք ունեին այդպես խորհողները։ Կյանքի մեջ լավ կարենալ ատելու, խաբելու համար նույնիսկ փորձառություն է հարկավոր։ Հարկավոր էր ամուր հիմքերու վրա սկսիլ գործի, հոգ չե, թե շահը մեկ քանի հազարով ըլլար պակաս

առաջին հերթին։ Գեթ «առած ապրանքդ» սեփական աչքերով տեսնելե՞ն ետք, վնասի հավանականությունը կնվազեր մեծ տոկոսով։ Հետո այլ բան է նամակագրությամբ խոսիլ, այլ բան է անձամբ սակարկել։ Չէ՛, խելացի որոշում էր անձամբ Եվրոպա երթալը, նույնիսկ ավելի շահավոր։ Ինք կարող էր համոզել խումբին զեկավարությունը, առավել ձեռնտու պայմաններ ձեռք բերել և այսպիսով հանած կըլլար իր համփու ծախսը։ Բայց ինչպե՞ս, ինչպե՞ս կարող էր հաղթահարել իր դեմ ցցված այդ բոլորը առանձին իրագործելու անկարելիությունը, իր ունեցածը, խնայողությունները, ըսենք վերցնելիք պարտքերը հաղիվ պիտի բավարարեին այդ ճամփորդության։ Անհրաժեշտ էր խորամանկել. գտնել մեծահարուստ ազնիվ մարդ մը, համոզել, որ խումբին ծախսերը հանձն առներ, կես-կեսի հաշվով։ Հետո՝ հասույթեն ինք կվճարեր իր բաժինը։ Վնասի՞ պարագային... Բայց ինչո՞ւ ըլլար վնաս, չէ՞ որ ինք պիտի ընտրեր խումբը. ալ ի՞նչ վնասի մասին է խոսքը. Կարպիսին շատ խելք ու ճաշակ ալ չուներ ինք։ Անցնող առաջին ամսվան ընթացքին հասավ այդ եզրակացության ու որոշեց դիմել ու խորհրդակցիլ Կարպիսին հանձնարարած հասցեներուն։ Հետո Եվրոպան տեսնելու իրականության այդպես «պատճառաբանված» ու «արդարացված» հեռանկարը՝ ուրախության, հուզումի մեծ ալիքով մը կպարուրեր իր էությունը։ Հարուստ ընկեր մը ունենալ, թիկունքին կովան ունենալ կնշանակեր։

Եվրոպան տեսնել, պատիլ, տարիներու իր երազն էր. պատանությունեն ի վեր գուրգուրված երազ, երա՜զ, զոր այժմ «անհրաժեշտություն» կթվեր իր աչքին ու կարդարացներ իր խենթությունը, եթե ունենար մանավանդ թիկունքին... այդ կովանը։ Գործն առանձինն ընելու ծրագիրը, երբ գրպանին մեջ շոշափելի դումար մը ըլլար առաջիկային. այն ատեն արդեն կարիք չէր մնար ընկեր որոնելու։ Չէ, առայժմ այլ ելք չկար։

Դիմեց առաջին հասցեին։ Միլիոնատեր, արաբ առևտրական մըն էր՝ Ֆուատ Զաքարիա Ապու Թանիոսը։ Հսկա հարկաբաժին մը իր գործատեղին, ուր սենյակներ էին, յուրաքանչյուր սենյակին մեջ հնչող գրամեքենաներ, պաշ-

տունյաներ, քարտուղարներ։ Վազգեն իր այցեռումն ուղարկեց ներս ու խնդրեց ունկնդրություն։ Թանիոս ընկերությունն ու Ֆուատ Զաքարիան հայտնի չէր, թե իսկականին ինչ գործով էին զբաղված։ Բազմազան ու բազմաճյուղ էին առևտրական ձեռնարկությունները այդ տան։ Ոչխարի մեծաքանակ ներմուծում Թուրքիայեն, հաղարավոր տոննա բրինձի ներմուծում Հնդկաստանեն դեպի Անգլիա, հին դրամներու ու գեղարվեստական միջազգային վարպետներու կտավներու առուծախ։ Պարսկաստանեն գորգերու ներմուծում Լիբանան։ Պտուղներու արտածում դեպի Միացյալ Նահանգներ և Եվրոպա։ Փորձված ու միլիոնատեր մարդ Ապու Թանիոսը իր դրամը կբշեր հոն, ուր շահ կար, ավար։ Նույնիսկ ուներ առանձին գրասենյակ մը, ուր բարձր տոկոսով դրամ փոխ կուտար այլ առևտրականներու ձեռնարկներուն։

Քառորդ ժամ տևեց շնորհված ունկնդրությունը Վազգենին ու եկան համաձայնության։

— Գացե՛ք, ընտրեցե՛ք, բերե՛ք մանրամասնություններ, համաձայն եմ։ Անշուշտ փորձի շրջան մը կանցընենք միասին, եթե խելքերնիս պատկի, կշարունակենք,— ու հեռաձայնեց իր տասնյոթերորդ գրասենյակի քարտուղար Ադելին, որպեսզի զբաղվի Վազգո ընկերության ծրագիրներով ու... վերջ։

Ճիշտ է, Վազգենը իր կյանքին մեջ շատ էր շփում ունեցեր առևտրականներու հետ, բայց անակնկալ էր իրեն համար մահուկենաց ու շաբաթներ տևող պրպտումներուն այսքան կարճ ժամանակի մեջ ընկալումը ու հավանության արժանանալը։

Մարդը հարցուցեր էր միայն.

— Քանի՞ հազար ծախս մը կնախատեսեք։

— Տասեն-քսան հազար։

— Լա՛վ, համաձայն ենք. փորձենք։

Այսքան։

Գործ ըսածդ այդպես պիտի ըլլար։ Դրամի մասին պիտի չխորհեր մարդ. ի՞նչ էր որ սա մարդուն համար քսան հազարը. քսան զրուշի պես բան մը։ Չէ՛, կեցցես Կարպիս, լավ է, որ ունեցեր էր նման մարդու մը ընկերությունը։ Հիմա

այլևս կրնար թռիչք տալ իր երևակայության։ Հստակ է, երբ շահը տեսնեին, անշուշտ երրորդ, առավելագույն չորրորդ ձեռնարկին ընկերությունը կլքեր զինք, բայց իր ի՞նչ փույթը. ինք մինչ այդ գեթ տերը կըլլար հիսուն, վաթսուն հազարի, ինք վերջիվերջո կարող էր առանձինն շարունակել։ Վերջիվերջո մինակ ինք չպիտի ըլլար այդ գործով զբաղող, արդեն իրմե առաջ ալ տասնյակներով կային նման գրասենյակներ։

Ուրախ ու բարձր տրամադրությամբ եկավ տուն։

Կինը թե՝

— Վազգեն, ջանս, գործդ ձգեր ես երեսի վրա, ամեն րոպե կզանգահարեն ու քեզ կփնտռեն...

— Օ՞ֆ, Աշխեն,— ըսավ,— մի հիշեցներ ինձի սա անոթի մարդու խեղճուկրակ գործիս մասին։

— Բայց, սիրելիս, այդ գործն էր մեր տունը պահողը ցարդ... վա՞զ անցիր սա մեծ երազներեդ, կզջաս վերջը...

— Օ՞ֆ, Աշխեն,— սաստեց հանկարծ իրեն համար ալ անծանոթ ջղայնությամբ մը։

— Ի՞նչ խեղճուկրակ կին ես դուն, մարդ հարկ է երազ ունենա, թռիչք... Դուն մի խառնվիր չհասկցած գործերուդ մեջ։

Ու կինը լռեց, զսպելով անսպասելի հասցված ծանր վիրավորանքը։

— Ես կմեկնիմ մոտ օրեն,— վրա բերավ Վազգեն,— կմեկնիմ Եվրոպա գործով, պիտի հարստանանք, մի վախնար, միայն աղոթե, որ աստված հաջողություն և ուժ տա ինձի։

— Աստված խելք ու կորով տա քեզի,— ըսավ կինը։— Աստված թող խղճա մեր զավակներուն։— Ու Վազգեն շաբաթվան մը ընթացքին, իր կյանքի մեջ եզակի հրճվանքի ու երազի մը մթնոլորտի մեջ, հանեց փասփոր, վերցուց իր ընկերներեն ու բարեկամներեն նկատելի գումար մը ու իր կնոջ ու զավակներուն ողջերթի, հաջողության մաղթանքներու տարափին տակ, նոր կարել տված հագուստին մեջ՝ մանուկի մը ուրախությամբը խելահեղ, նստավ զվիցերական ընկերության օդանավերեն մեկը ու մեկնեցավ Եվրոպա, առաջին կայան ունենալով Հռոմը։

5

Ապակեփեղկերու բացվածքեն ներս թափանցեց կայծակի լույսը ու ինք մանկությունեն եկող վարժությամբ մը համրեց մտովի արագ-արագ մե՛կ, երկո՛ւ, երե՛ք... շորս ու հանկարծ կարծես վիթխարի ազմուկով մը լսվեցավ որոտումը, որոտման հաջորդեց հորդառատ անձրևը: Հակառակ անոր, որ արթուն էր ժամերն ի վեր, աչքերը հառած առաստաղին, վերմակը քաշած մինչև շրթունները, կհամենար անկողնին մեջ ու կչանար կրկին քնանալ:

Երազները կշարունակվեին՝ իրար հրմշտկելով...

Վերադարձեր էր երեկ գիշեր, բայց տակավին հոն էր. Հռոմի, Փարիզի, Ժնևի, Ցյուրիխի, Պրագայի, Բուխարեստի. Աթենքի մեջ, տակավին չէր անցած այն «գինովությունն» ու հոգեվիճակը, որը ապրեր էր ու հիմա կխորհեր, թե կյանքը անիմաստ կատակ մըն էր, տակավին իր կյանքը զորշ ծաղր մը: Օդանավը ու հոն վարը բոպեներու ընթացքին սահող քաղաքները, գույն-գույն երազներով. երկիրները... յուրաքանչյուրին մեջ տարբեր կյանք, տարբեր մշակույթ, տարբեր հորիզոններ ու մարդը: Մարդը, որ ինքն էր, չես դիտեր ինչ անտեսանելի շղթաներու, ինչ անշոշափելի օրենքներու կարթի մը մեջ սահմանված: Այդ բոլորը տեսնելն ու ապրելն եթե վերադառնալու հարկադրանքին տակ գտնվիլ, այո, այդ բոլորեն եթե, այս խոշոր, այս փայլուն արևին տակ վերադառնալ տեղ մը, որ իր սրտովը չէր... հիմա ոտքերուն տակ Լեմանն էր, թիչ առաջ մեկնեցան Փարիզեն, բայց ինք վերջապես հարկ էր երթար ու ապրեր, աքներ հոն, Բեյրութի իրենց փողոցեն մինչև իր գրասենյակը գտնվող թիլոմենթը մը ճամփու երկարության վրա, աշխատեր իր սրտովը չեղած գործով, զորշ առօրյայի մը, անհրապույր տան մը ու զզվեցուցիչ գործի մը իրեն պարտադրված սեղմ շրջանակին մեջ: Ո՞վ էր թելադրեր, ո՞վ էր սահմաններ այդ կյանքն իրեն. ո՞վ էր զինք դամեր սա վիթխարի աշխարհին մեջ այդ գեղին անկյունը: Վերջապես չէ՞ որ ինչ-որ կարծր բան, ինչ-որ մարդոց ձեռքով հաստատված անառարկելի օրենքներ քաշեր էին սահմաններ, հաստատեր ու հրապարակեր էին տեարեր, շիներ կնիքներ ու տուն, հակառակ հոգվույզ

Թոիչքին, ակամա պարտավոր էիր վերադառնալ հոն, տեսնել նույն տաղտկալի, անշահ, շահամոլ դեմքերը, զգալ նույն ներկերու հոտը, խորամանկել, խարդախել տարիներե ի վեր հասարակ դարձած նույն միջոցներով, նույն բառերով, հանուն... փոր մը հացի։

— Օրիորդ, գինի մը, բոժոլե... կամ բուրկոյն։

Օրիորդը զվիցերական օդանավի հոսթեսն էր։ Ինչքան սիրուն ու գրավիչ էր ան. ան ալ չէ՞ որ դատապարտված էր, նորօրինակ բանտի մը մեջ, շուռ տալե եռք աշխարհը, վերադառնալ Զվիցերիո չես գիտեր որ մասին մեջ գտնվող, թերևս իր համար ալ հրապույրը կորսնցուցած, իր տան փոքր սենյակը... Չէ, ինչ-որ բան մը իր տեղը չէր այս կյանքին մեջ։

Առաջին այս ճամփորդությունը Վաղգենի հոգու առջև բացավ բարդ ապրումներու, վտանգավոր վերիվայրումներու վարագույրը ու ստիպեց լրջորեն կանգ առնել իր կյանքին վրա։ Օդանավի սլացքը ամպերեն վեր, անդիմադրելի երկնային գույներու երազային մթնոլորտին մեջ հուշեցին իրեն. թե — տխուր էր մարդոց ձեռքով մարդուն պարտադրված կյանքը։ Տխուր ու դժբախտ։ Բայց ինչո՞ւ չկար ընդվզող, ինչո՞ւ ամեն ինչ իր տեղն էր, ինչո՞ւ օրինակ սա ֆրանսացին ուրախ ու ժպտուն իջավ Օրլիի օդանավակայանը, ինչո՞ւ սա մյուսը սրտատրոփ կսպասե հասնելու համար Ժնև, չէ՞ որ ամեն մարդ սեփական կայան մը, տուն մը ունի աշխարհի վրա, իսկ ի՞նչը, իրը... չկար։ Տունը տուն էր հայրենի հողի վրա միայն, հոգ չէ փոքր, անշուք, բայց հիմը քու հողիդ, քու քարիդ վրա. այդ էր տխուրը Վաղգենին համար։ Իսկ սա ամպե՞ր։ Ի՞նչ փույթ այդ ամպերը, եթե անոնց ետին մեկ վայրկյանեն մյուսը իր աչքերուն առջև պարզվող լեռը չկոչվեր Արարատ։ Ինչ ըներ Լեմանն ինք. ինչ ըներ Միջերկրականը, երբ իրմե հեռու էր իր Սևանը. իսկ ինչո՞ւ էր կյանքը այդպես, բարձրացող, իր ոտքերուն տակ սահող սա քաղաքներեն, լիճերեն, ծովերեն ո՞րն էր իր սեփականը։ Ա՜խ, գեթ չըլլար ինք դաղթական ու հիմա ունենար իր տունը, աշխարհի մեջ իր փոքրիկ, սեփական անկյունը, իր հարազատ, փոքրիկ հայրենի անկյունը։ Ինչո՞ւ է Զվիցերիացի հոսթեսը

ժպտուն այժմ, ինչո՞ւ այն չունի նույն փոթորկումները։ Թքեր է ինք «իմփրեզարիո»-ության վրա։ Փոքրիկ անկյան, հայրենի փոքրիկ անկյան մը կարոտը ունի հիմա ու կուզե. կցանկա փոքրիկ բեմ մը, փոքրիկ բեմ մը հայրենական, թող միայն ինք այդ բեմին վարագույրները բանար գոցեր, թող հուշարարը ըլլար այդ բեմին ու հավատացեք, որո՞ւն հոգը կըլլար այն ատեն դրամին սպառիչ մտահոգությունը. վախ մը եկավ վրան, ձախողելու վախը։ Բաղմազան ու բաղմագույն այս հաճույքները վայելելե ետք, սնանկացած, թշվառացած մարդու վախը առօրյային։

Ու խոնավություն մը, իր մարմինեն իսկ ծորող քրտինքին տակ խոնավություն մը, տհաճ խոնավության մը նման զգաց իր ազգականներուն, բարեկամներուն նայվածքներուն արհամարհական շեշտը, Ֆուատ Զաքարիային հեգնական ժպիտը ու իր կնոջ՝ Աշխենին զինք մեղքցող, ընկճող խոսքերը կարծես լսեց իր ականջներուն մեջ։ Չէ՛, հարկ էր անպայման հաղթել, հարկ էր հեռացներ իրմե զգացական այդ ապրումները, որոնք առաջին թշնամին էին առևտուրին։

— Օրիորդ, գինի մը, բոժոլե... կամ բուրկոյն...

Մեկնեցան Հոմեն, բայց իր հաշվեսավությունը հիշեցուց իրեն թե՝ ավելի դիտած էր քաղաքին արձաններն ու թանգարանները, քան արվեստի խումբերը։ Մնաց որ առասպելական պայմաններ էին։ Փարիզը իր սրունքներուն տավավ հաճելի դող մը, հոն ալ նույնն էր պարագան. Վերսայլի պալատ, Լուվրի թանգարան, հետո թատրոններ ու առասպելային դումարներու հասնող առաջարկներ։ Զվիցերիո մեջ կհիշե փոքրիկ, խմիչքի գիշերային տուն մը ու մատուցող մանկահասակ աղջիկը, որուն հետ ուշ գիշերին մնաց առանձին։ Ինքն ալ չի գիտեր, թե ինչպես ստացվեցան այդ բոլորը։ Միայն գիտե, թե հիմա կապրի այդ աղջկա հուշերովը։ Աղջիկ մը, որ թերևս ամեն գիշեր ուրիշինն է, բայց... Բայց առևտուրի մարդ չէ ինք վերջապես։ Թեպետ այդ գիշեր իր հետ պատահածը ստոր առևտուրի փոքր գործարք մըն էր։ Նույնիսկ աղջկան նկարն ունի հիմա իր գրպանին թաքուն մեկ անկյան մեջ։ Ո՞վ էր այդ աղջիկը, ինչ հիմարն է ինք ու երբ աղջկան նկարը ուզեց, չէ՞ որ այս վերջինը տարօրինակ

մը նայեցավ իր աչքերուն։ Հետո Ռումինիա, Չեխոսլովակիա։ Բոլորովին այլ բան դուրս եկավ այս վերջին երկիրներեն... Հոն էր, որ զինք «իմփրեզարիո»-ի տեղ դրին, տրամադրեցին հատուկ մեքենա, նախ պտտցուցին քաղաքին տեսարժան վայրերը, ֆաբրիկները, թանգարանները, այդ բոլորը որպես հյուրի։ Հոն, այդ քաղաքներուն մեջ չկային եվրոպական դիշերային փոքր կրպակներ, խմիչք «սպասարկող» աղջիկներ։

Այլ էր դրված կյանքն այնտեղ, ինք լսած էր այդ բոլորին մասին, որոշ գաղափար ուներ։ Բայց չէր խորհեր, որ հոն, այդ երկիրներուն մեջ իր կյանքին մեջ առաջին անգամ ըլլալով պիտի զգար, թե առևտրական ըլլալն առաջ մարդ էր ինք։ Ու հիմա չես գիտեր ինչո՞ւ, երբ այդ մյուս աշխարհին մեջ,— այդպես ալ բաժնեց ինք, այն աշխարհը և այս աշխարհը — միշտ կշեշտեր իր առևտրականի հանգամանքը, հոս կամըշնար գրեթե։ Բայց հոս մարդիկ կզգային իր ապրումները, դյուրություններ կուտային, կվստահեին ավելի։ Նույնիսկ կազմակերպեցին հատուկ ներկայացումներ, ինք ու ինչ-որ մարդիկ դիտեցին այդ բոլորը։ Տվին ձայնապնակներ ցիկան երաժշտության, տեսարեր ու առաջարկեցին հանձնել ներկայացուցչություն փորձնական աշխատանքն մը եռք։ Նույնը Չեխոսլովակիո մեջ։ Ու ինչ-որ ապրեցավ, ինչ-որ կհիշե այժմ՝ ծանր է, անմոռանալի։ Չէ, կյանք չէ իրը։ Բայց հարկ է ընդմտնել այդ առևտուրին մեջ, դրամ շահիլ քիչ մը ու որոշել վերջնական ընթացքը իր կյանքին։ Տարօրինակ թող չթվի, նույնիսկ որոշեր է քիչ մը դրամ շահելե ետք, անցնիլ գործի, երթալ, հեռանալ այս աշխարհեն։ Երթալ հոն, այն աշխարհը ու ապրիլ մարդ ըլլալով։

Իսկ եզրակացությո՞ւն... եզրակացություն՝ իր միտքը կկենտրոնանա, չեխոսլովակյան խումբի մը վրա. Քարլովի Վարիի տիկնիկային թատրոնին... մեծ չէ խումբը, տասներկու հոգի տիկնիկներու հետ փոքր բեմի մը վրա։ Մանավանդ այդ տասներկու հոգիին մեջ կա խարտյաշ մազերով փոքրիկ աղջնակ մը, իսկ այդ աղջկան նկարը բնավ չի հեռանար իր աչքերուն առջևեն։ Փոքրիկ աղջնակը քսան տարեկան կա երբ դուրսն է բեմեն։ Բայց իր հոգերուն մաքրությունն ու սպիտակությունն ունի իր դեմքին ու իր հայրենի

երկինքին ջինջ կապույտը աչքերուն։ Երբ կխոսի տիկնիկներուն հետ, մանուկի կվերածվի ան, փոքրիկ, կապտաչյա՜, սպիտա՜կ, սպիտա՜կ դիմագիծով աղջնակի մը։

Պիտի առաջարկե Թանիոս ընկերության, եղածը մեծ գումար ալ չէ, շատ մարդկային պայմաններ էին։ Բոլորը տասնհինգ հազարի ծախս մը։ Եթե ինք ունենար այդ գումարը, չէր խորհեր նույնիսկ. գործին մեջ կնետվեր։ Բայց չունի, ինչ ընե՞լ. վնասի հավանականությո՞ւն։ Երբեք։ Սա այնպիսի բան մըն է, որ կշահագրգռե ժողովրդին բոլոր խավերը, փոքրերեն մինչև տարիքավորները։ Հետո ինք աչքով տեսավ թե՝ ինչպես Պրագայի մեջ ամեն գիշեր կհորդեր սրահը։ Թե ինչպես ծաղիկներով կողողվեր բեմը ու աղջիկը կշառագուներ ծափերուն տակ։ Հետո ինչ լավ կրնա ըլլալ ինք այդ աշխարհի տղոց ու այդ աղջկան հետ ամբողջ տասնհինգ-քսան օր։ Պատեցնել զանոնք, բարեկամանալ։ Շահեցա՞ն եթե, իր կողմե Թանկագին նվերներ կուտա յուրաքանչյուրին։ Հետո կխորհի ռումանական խումբերու մասին...

— Պիտի քնանա՞ս տակավին, թե բերեմ սուրճդ,— ձայնեց կինը։

Ելավ, նստավ անկողնին մեջ, գիտեց շուրջը, իր անփույթ նետված հագուստներն էին աթոռներուն վրա, հետո համփորդական պայուսակներն էին կիսով բացված։ Դժկամ ելավ անկողինեն, արագ հագվեցավ տափատն ու շապիկը և՝

— Բե՛ր սուրճը,— պատասխանեց։

Կխորհեր թե — ի՞նչ պայմաններով կարող էր գործի մտնել Թանիոս ընկերության հետ։ Դրամը սա երկու ամսվան համփորդության ընթացքին քաշեր էր ջուրը, պարտքի տակ էր նույնիսկ։ Եթե զգային, որ դրամ չուներ ինք, կծիծաղեին վրան ու կշպրտեին մեկ կողմ, կամ շատ-շատ փոքր շահաբաժին մը կուտային։ Մինչ հարկ էր այդքան հոգնությունեն ետք գեթ կես առ կես մասնակցեր ինք։ Իսկ նախնական ծախսե՞րը։ Հետո ինք կելլեր տակեն։ Պահանջյալ հարկին ծանոթ հարուստ ընկերության ապահովությունը ցույց կուտար անոնց, իսկ իր ընկերները անպայման ձեռք կերկարեին իրեն։

— Լրիվ գիշերը անհանգիստ էիր, Վաղդեն, զառանցեցիր շարունակ...

— Օ՜ֆ, Աշխեն, չհասկցած գործերուդ մի խառնվիր դուն,— սաստեց ակամա ջղայնությամբ մը։

Խմեց սուրճը ու արագ դուրս եկավ տունեն և ուղղվեցավ Թանիոս ընկերության հիմնարկը։

6

Ֆուատ բեկ Զաքարիա Թանիոսին տեղ դինք ընդունեց 17-րդ գրասենյակի պատասխանատու Ադելը։ Մտիկ ըրավ ծրագիրները, լսեց խումբին մասին, դիտեց Վազգենին բերած նկարները։

— Լավ դերասանուհիներ կա՞ն,— հարցուց երկիմաստ ծիծաղով մը մտերմաբար աչք քթթելով Վազգենին։

Վազգենը վիրավորվեցավ, բայց չուզեց հակաճառել,— մեկ աղջիկ մը կա միայն,— գոհացավ պատասխանելով։

Հաշվեցին նախնական ծախսերը, խումբին պահանջը շատ մարդկային էր ու ձեռնտու վերին աստիճանի։

— Հանուն պրոպագանդայի չեխերը կընեն այդպիսի գործարք,— ըսավ Ադելը։ Վազգենն առարկեց՝

— Հանուն արվեստին ու իրե՛նց արվեստի պրոպագանդին,— պատասխանեց։

— Համայնավա՞ր եք,— հարցուց Ադելը։

— Ո՛չ երբեք, չեմ ալ խորհած այդ մասին, սակայն իմ տպավորությունն է այդպես։

— Լավ, հանդիպեցեք վաղը։

Վաղը հանդիպեցավ Վազգեն։

— Ծախսերու և շահի, այսինքն շահու ու վնասի կես առ կես հաշվով պրոպագանդի աշխատանքը մեզ վրա, կառավարական գործերը՝ ձեր, ու կնքեցին պայմանագրությունը։

Հետո թե՝

— Գիտե՞ք ինչ, վստահ ենք անշուշտ ձեր պարկեշտության, սակայն հարկ է մեզի ալ ծանոթ, ճանչված ու հարուստ առևտրական մը ապահովե ձեզ, ունի՞ք այդպիսին։

— Ունիմ, անշուշտ,— ինքնաբերաբար պատասխանեց Վազգեն։

— Ուրեմն բերեք որքան կարելի է շուտ, կնքենք

շեքերը ու կանցնինք գործի։ Իսկ տիկնիկային նման թատրոնի մը համար լավագույն ժամանակը ծնունդի ու նոր տարվան օրերուն զուգադիպող դեկտեմբեր ամսվա երկրորդ կեսն է։ Տակավին ամիս ու կես ժամանակ ունինք, այնպես որ...

Վազգեն հևիհև վազեց իրենց ծանոթ բարեկամ առևտրականի մը մոտ։ Խնդրեց, աղաչեց, պատմեց ծրագիրները։ Այս վերջինը թեև դժկամ, բայց համաձայնեցավ վկայել Վազգո ընկերության նյութական կարողության մասին, շվարանելով խրատ տալ թե՝

— Լավ էր իր գործը, ներկարարության գործը մեծցներ Վազգեն, քան զբաղեր չես գիտեր ինչպիսի խաղերու կարելիություն ունեցող նման գործով մը, մանավանդ այնպիսի մեծ ընկերության մը հետ, որոնք կարող էին ուղածդ վայրկյանին ճնշել զինքը։

Չպատասխանեց Վազգեն, եկավ ու ստորագրեցին պատրաստված չեքերը։ Տաս հազար լիրանանյան ոսկի ապահովության թուղթ մը Վազգենի անունով տրված Թանիոս ընկերության։ Տաս հազար ոսկի, քսան հազար վնասի մը պարագային։ Մինչդեռ գործին նախնական հաշիվները տասնհինգ հազարի մեջ էին։ Ոչի՛նչ, մարդիկ իսկական առևտրականներ էին ու կուզեին ամուր բռնել իրենց գործը, պատահելիք, հավանական ամեն տեսակի անակնկալներու դիմաց։ Զեսական բան մըն էր վերջապես եղածը։ Չէ, նույնիսկ գործին մանրամասնությանց տեղեկանալե ետք Վազգենին բարեկամն ալ համոզվեցավ, որ շահ կա գործին մեջ ու նույնիսկ հակառակ իր տված նախնական «խրատներուն» առաջարկեց երկրորդ ձեռնարկի մը ատեն դիմել ուղղակի իրեն։

Յոթերորդ երկինքի մեջ էր Վազգեն։ Բացվեցավ իր ընկերոջ, նույնիսկ առևտրական սկզբունքներուն հակառակ՝ պատմեց Ռումանիո մեջ իրեն առաջարկված հոյակապ հեռանկարներուն մասին։ Ընկերը խանդավառվեցավ ու համաձայնեցան առաջին ձեռնարկի արդյունքեն ետք խորհրդակցիլ ու նոր ծրագիրները մշակել երկուքով։

— Կրկին միասին կերթանք Եվրոպա ու Ռումանիա,—

ըսավ ընկերը,— դուն նյութի մասին մի խորհիր, միայն լավ վերջացուր սա առաջին գործդ։

Վազգեն սկսավ ձեռնարկել կառավարական արտոնության, խումբին վիզայի ու չեխոսլովակյան դեսպանատան հետ՝ խումբին ժամանման, բնակեցման մանրամասնություններու քննարկման։

Գրվեցավ Պրագա, որոշվեցավ թվականը ըստ ծրագրվածին։ Թեպետ իր սեփական աշխատանքին, ներկարարության համար ձեռնտու ժամանակն էր, բայց Վազգեն չստանձնեց ո՛չ մեկ գործ, հինեն իր վրա առածներն ալ հանձնեց այլ ընկերներու։

Վիզաներու խնդրով դիմեց կառավարության, հոս սկսան բարդությունները։ Չեխական խումբ բերողը, ի միջի այլոց՝ հայ.

— Չըլլա կոմունիստական պրոպագանդ ըլլա,— ըսին։

— Ա՛յ մարդ, ես ու Թանիոս ընկերությունը ո՞ւր, կոմունիզմը ո՞ւր,— պատասխանեց։

— Հապա չեխերը։

— Տիկնիկային թատրոն է։

— Խոսակցություն չկա՞։

— Կա՝ անշուշտ։ Նորօրինակ տիկնիկային թատրոն է, քանամյա աղջիկ մը և մեկ քանի տղաք բեմին վրա պիտի խոսին տիկնիկներու հետ։

— Չեխե՞ր չեն այդ խոսողները։

— Չեխեր են։

— Տեսա՞ք, անոնք անպայման տիկնիկներու հետ ալ կգտնեն ձեր պրոպագանդին։

— Չե՞ք կատակեր։

— Բնավ երբեք, պարտավոր ենք խորհելու մեր երկրի շահերուն մասին։

Ուշ գլխի ինկավ Վազգեն, թե հարկ էր խորհիլ այդ մարդոց շահերուն ալ մասին ու արտոնությունը ստացավ ու փարատեց անոնց ունեցած մտահոգությունը, երբ մեկ-երկու հարյուրանոց սահեցուց այս վերջիններու գրասեղաններուն բաց ձգված դարակներուն մեջ։

Հետևյալ օրը զարկին տան դուռը, ըսին՝ ընդհանուր ապահովություն են։

Տակավին գաղտնի կամ պաշտոնական ոչ մեկ ոստիկան չէր մտած իրենց տունը։ Աշխենը դող եկավ, տեղյակ չէր գործեն, իսկ երկու «գաղտնիները» սկսան հարցափորձի։

— Ե՞րբ եք եկած Լիբանան։

Պատասխանեց։

— Անդա՞մ եք որևէ կուսակցության։

— Ո՛չ։

— Եղա՞ծ եք բնավ։

— Երբե՛ք։

— Ինչո՞ւ չեխական խումբ։

— Առևտրական գործ է ու պայմանները ձեռնտու էին։

Եվ քանի վարժ էր այլևս, հանեց քսանհինգ ոսկինոց թղթադրամ մը ու սահեցուց ատիճանավորին դրպանը։ Բայց պատահեցավ անսպասելին։ Մարդը ձեռքը նետեց դրպանը ու դուրս հանեց քսանհինգնոցը ու՝

— Կաշա՞ռք,— ըսավ որոտագին ձայնով մը,— եկ առեք ու ժամը տասներկուքին ներկայացեք ոստիկանատան կենտրոնը։

Դեմ-դեղին կտրեցավ Վազգեն. կթոտեցան ոտքերը,— ու մինչ կը մեկնեին անոնք, դողդողալով մոտեցավ փոքրավորին.

— Սիրելիս,— ըսավ,— դուն փրկե զիս, չէի ուզեր վիրավորել զինքը։

Մյուսը մեղմիվ.

— Զամչցա՞ք, — պատասխանեց, — նման մարդուն քսանհինգ ոսկի տալու, ոչինչ, դուք եկեք ժամը տասներկուքին ու... հարյուրնոց մը ավելք, կլրանա։

Ժամը տասներկուքին խիստ ատիճանավորը իր տեղը զիջած էր հեղահամբույր մարդու մը, վերցուց Վազգենի դողդոջուն ձեռքերեն հարյուրնոցն ու՝

— Հաջողություն կմաղթեմ ձեզ,— ըսավ,— անշուշտ չե՞ք մոռնար յուրաքանչյուր ներկայացման համար հրավիրատոմսերու մեր բաժինը։

— Ինչպե՞ս կարող եմ մոռնալ,— պատասխանեց Վազգեն։

Ու անընդհատ սկսվեց զարնվիլ Վազգենենց տան դուռը։ Զարմանալին՝ այդ բոլոր մարդիկ գիտեին իր հասցեն, հեռախոսի համարը, կուգային երեկոները, երբ տանը կըլլար ինք։

— Կուզե՞ք հայտարարություն տալ մեր գրքին մեջ։

— Ի՞նչ գիրք է։

— Մենք տարին երկու անգամ կկազմակերպենք գեղարվեստական բարձրորակ երեկոներ, ուր ելույթ կունենան քաղաքիս լավագույն ուժերն ու անհատները և այդ երեկոները ձրի են ու մանավանդ հրավիրյալներու համար նկատի առնված։ Հրավիրյալներ, որ նույնպես կկազմեն քաղաքիս բարձր դասը։ Այդ երեկոներուն մեր ընկերությունը հրապարակ կհանե 25.000 տպաքանակով 250 էջանոց հայտարարությունների հատորներ, որոնք նմանապես ձրի կբաժնվին հասարակության... Չէիք ուզեր օգտվիլ այդ բացառիկ առիթեն. քանի մեր գիրքը հրապարակ հանած օրերուն կղուգադիպի ըստ մեր լսածին ձեր բերելիք խումբին ներկայացումները։

— Ձեր ընկերությունը ի՞նչ շահ ունի այդ բոլորեն, քանի դուք ամեն ինչ ձրի կկազմակերպեք։

— Մեր շահը գրքին մեջ տրված հայտարարություններեն գոյացած հասույթն է։ Նկատի ունեցեք, որ մենք կվճարենք մեր երեկույթին ելույթ ունեցող խումբերուն։

— Իսկ ի՞նչ արժե այդ գրքին մեկ էջը։

— Միայն 500 լիրանանյան։

— Ահռելի գումար է։

— Եվ ձեզի համար վիթխարի պրոպագանդ։

— Դժբախտաբար, մեր գործին պրոպագանդի բաժինը կպատկանի իմ գործի ընկերոջ Թանիոս ընկերության։

— Ոչինչ, դուք ալ խոսք ունիք, չէ՞, չէի՞ք փափաքեր արդյոք։

— Ինչու չէ... բայց 500 լիրանանյան էջի մը համար ուղղակի առասպելային գումար է։

— Իսկ դուք գիտե՞ք, թե մամուլն է հիմնական աղդակը

գործի մը հաջողության, իսկ մեր գիրքը կհասնի քաղաքիս ամենահարուստ ընտանիքներուն ու հիմնարկներուն։

— Կենթագրեմ։

— Հրապարակենք ուրեմն։

— Հարցուցեք Թանիոս ընկերության 17-րդ գրասենյակի պատասխանատու պրն. Ադելին. ես ինքս համաձայն եմ։

— Ոչինչ, այդ արդեն մեզ բավական է, շնորհակալություն։

Ակամա նման վերջավորությունե մը դժգոհ, Վազգեն մտովի կհաշվեր թե՝ սա տարօրինակ մտահղացման արդյունքը ինչպիսի՞ գումար կապահովեր այդ ընկերության։ Թվաբանական պարզ հաշիվ մը շշմեցուցիչ արդյունքներ կպարզեր իր աչքին։ 500 լիբանանյան էջին։ 250 էջանոց գրքին կրերեր 125.000 լիբանանյան ոսկիի շահ մը. տարին հրկու անգամ, այդ կրներ 250.000 լիբանանյան։ Տպագրական ծախսերն ու խումբերուն տրված դրամը հաղիվ 50.000 մը ու ընկերությանը կմնար 200.000-ի վիթխարի գումար մը։ Տակավին այդ շահին վրա պատիվը հասարակության համար ձրի, որակավոր ներկայացումներ կազմակերպած ըլլալու ու շքեղ հատոր մը նվիրելու։ Ի՞նչ սատայելական առևտուրի ձևեր կային։ Մինչ ինք 200.000 լիբանանյան շահելու համար, հարկ էր դներ նվազագույն 50 տարի, այն ալ ինչպիսի տքնաջան աշխատանքով։ Ինչո՞ւ այդպես խոսք տվավ այդ մարդոց, պահ մը իր եսը շոյված զգացեր էր, երբ խոսեր էին իր հետ որպես արտասահմանյան խումբեր բերողի։ Այդ մարդիկը հոգեբաններ էին, գտեր էին իր տկար թելը. բայց Ադելը հավանաբար ճամփու կդներ զանոնք։ 500 ոսկի էջի մը համար... որո՞ւն միտքեն կացներ։

Մեկ քանի օր ետք երևացին Թանիոս ընկերության պրոպագանդայի գծով տարած աշխատանքներուն արդյունքները։ Ու այս արդյունքները ափ ի բերան թողուցին Վազգենին.

«Զեխական տիկնիկային թատրոն»։

Երկու հարյուր տիկնիկներ, հարյուր դերասան նույն բեմին վրա և այլն, և այլն... Շվարեցավ Վազգեն, կարելի՞ էր օրը ցերեկով այդպես ստել ժողովրդին։ Եղած տիկնիկները

հազիվ քսան հատ էին, դերակատարները՝ շորս-հինգ հոգի։ Վազեց Ադելին մոտ։

— Ա՜յ եղբայր, ի՞նչ ես ըրեր։

— Այդ մեր գործն է, դուն մի խառնվիր։

— Բայց չէ որ ես կխայտառակվիմ։

— Ինչ է, մենք գործի մասնակիցներ չե՞նք, հետո որո՞ւ առջև է, որ պիտի խայտառակվինք։

— Ձեխերուն և իմ։

— Է՜հ, պարոն Վազգեն, կերևի թե գործի մարդ չեք դուք։

Հետո, ցուցադրված նկարները բոլորը չէին, որ կվերաբերվեին խնդրո առարկա խումբին։

— Է՜հ, ինչ ընել, երբ բավարար նկար չկա, դուք այդ բոլորը թողեք մեզի։ Ու նկարներ կային, քաղաքի աչքառու կեդրոններուն մեջ ամենուրեք։ Նկարներ կիսամերկ աղջիկներու, որոնք կանգնած կիսոսեին տիկնիկներու հետ։ Ուրիշ՝ էին գտեր, ինչպե՞ս էին կարգադրեր, հետաքրքրական նորություններ էին այդ բոլորը Վազգենին համար։

Եվ երևացին գիները.

— Մուտք 5, 7, 10 լիրանանյան ոսկի։

Վազեց կրկին Ադելին մոտ։

— Շատ են սուղ,— առարկեց։

— Հապա ի՞նչ։

— Տիկնիկային թատրոնի մը համար շատ են առասպելային գիները։

— Տիկնիկային թատրոնը միջոց է, պարոն Վազգեն։ Հետո դուք գաղափար ունի՞ք, թե ինչ ծախսեր կատարած ենք ցարդ։

Վազգենն իր կառավարական գործերուն մեջ առիթ չէր ունեցած հետաքրքրվելու այդ բոլորով, հետո վստահություն ուներ վերջիվերջո, Թանիոս ընկերությունը իր նման խեղճի մը գլխուն խաղ պիտի չխաղար անշուշտ։ Այնպես որ միամտաբար.

— Ո՛չ,— պատասխանեց։

— Հապա, տեսա՞ք, արդեն հասեր են 5000-ի։

— Ինչպե՞ս։

— Պրոպագանդի համար։

— Բայց ինչո՞ւ առանց իմ գիտության։

— Չէ՞ որ գործի բաժանում ըրինք, դուք՝ ալ կաշառք չտվի՞ք հոս հոն։

— Տվի, բայց մեծ բան մը չեն իմ ըրած ծախսերս։

— Ոչինչ, ոչինչ, ծախսը որքան մեծ, մանավանդ պրոպագանդի գծով, այնքան մեծ շահ կապահովեմ. հարկ է տեղյակ ըլլաք այդ բոլորին։ Օճառին լավորակ ըլլալը չէ կարևորը, այլ այն, թե օճառ արտադրող ո՞ր գործարանն է ավելի դրամ ավողը պրոպագանդի համար։ Հետո դուք ինքներդ չէի՞ք համաձայնած էջի մը համար 500 ռսկի տալ...

— Բայց ես վճռելը թողեր էի ձեզի։

— Մենք չէինք կարող ձեր վարկը խնդրս առարկա դարձնել. քանի համաձայներ էիք, մենք ալ հաստատեցինք. ոչի՞նչ, լավ եք ըրեր։

Ինքզինք կորսնցուցեր էր Վաղգեն, բայց ըսելիք խոսք չուներ, հարկավ այս մարդիկը ավելի լավ կհասկնային գործը. չէ՞ որ վերջիվերջո վնասն ալ երկուքով էր, շահն ալ, այդպիսի փորձված հաստատություն մը կարող էր այդպես բացահայտորեն դրամը ծովը թափել։ Միայն թե՝

— Գիտեք, պարոն Ադել, իմ բերած խումբը որակ ունի արդեն...

— Էհ, ո՞վ է խոսողը որակի մասին, մաղթենք, որ լավ ըլլա խումբը, բայց քանի մենք չենք տեսած, ստիպված ենք կանխել անախորժությունները, կարելի չափով։ Մենք, խումբը չեկած, գոնե առաջին օրերու հաղթանակը պետք է ապահովենք, սիրելիս։ Այս է պայմանը։— Ամենուրեք տիկնիկային թատրոնի հայտարարություններն էին։ Քաղաքը հագեցած էր այդ հայտարարություններով։

Մոտեցան օրերը ու պատերուն վրա, շարժապատկերի սրահներու պատատներուն երևացին նոր հայտարարություններ.

«Երկու ներկայացում միմիայն. խումբը ստիպված է մեկնիլ Փարիզ, Բրյուսել, Լոնդոն, իր երթուղու ճամփուն վրա կազմակերպիչներու մեծ զոհողություններուն որպես պատկում բարեհոգաբար կանգ կառնե քաղաքիս մեջ»։

Կրկին վաղեց Ադելին։

— Բայց, սիրելիս, չէ՞ որ մեր պայմանագիրը տաս ներկայացման համար է։

— Է՜հ, պարոն Վազգեն, շատ խակ ես, սիրելիս։

— Իսկ ուրեմ՞ ելան Փարիզ, Բրյուսել, Լոնդոնը...

— Ելան մեր շահերեն, ի՞նչ է պետք քեզ, դրա՞մ, թե՞ ճշմարտություն։

Չէ, Վազգենը ինքն ալ հասկցավ, որ խակ մարդ է տակավին առևտուրի մեջ։

Ու բացվեցավ տոմսարկղը։ Առաջին օրն իսկ սպառեցան տոմսերը։

Ուրախության չափ ու սահման չկար Վազգենին համար։ Երաշներուն պսակումն էր։ Նույնիսկ չկարողացավ հրավիրատոմսեր վերցնել։

— Պարոն Ադել, որոշ մարդոց խոսք էի տված։

— Ոչինչ, կստանաք հաջորդ ներկայացումներուն համար։ Այժմ խումբեն կախված է ամեն ինչ, թե որ լավ խումբ դուրս եկավ, զարկինք, թե ոչ, հանցանքը ձերն է։ Մենք ըրինք մեր ձեռքեն եկածը։

— Ծախենք մյուս օրերուն ալ։

— Այդ արդեն անկարելի է, չէ՞ որ հայտարարած ենք երկու ներկայացման համար միայն, հիմա պատվի հարց կա։

— Ինչպե՞ս։

— Առաջին ներկայացումեն ետք միայն կարող ենք հայտարարել թե՝ «Աննախընթաց հաջողությունեն քաջալերված, ընդառաջելու համար ժողովրդային բուռն փափաքին, կազմակերպիչները հեռագրած են Փարիզ, Բրյուսել, Լոնդոն ու խնդրած որոշ հետաձգում այդ քաղաքներու մեջ կազմակերպված ներկայացումներուն համար։ Առ այդ մեծ զոհունակությամբ կծանուցանենք մեր հարգո հասարակության թե՝ ի դին մեծ զոհողություններու խումբը կմնա շարաթ մը ևս՝ տալու համար ութը հավելյալ ներկայացումներ»։

Արդեն պատրաստել տվեր եմ հայտարարությունները,— վրա բերավ Ադել ու ավելցուց,— իսկ երրորդ ու չորրորդ ներկայացումներեն մինչև տասներորդը կապ չունի կատարված պրոպագանդին հետ, այդ պրոպագանդը պիտի ընեն առաջին, երկրորդ ներկայացման ականատեսները։ Թեպետ

Ես վարձած եմ որոշ մարդիկ, որ անընդհատ խոսին հոս հոն, հետո մամուլը միշտ մեր բարեկամն է, լույս տեսնելիք հոդվածները առաջին ներկայացումեն ետք արդեն ծանոթ են մեզի ու շատ լավ են գրված։

Չէ, մեծ գաղտնիքներ ուներ գործը։ Կարպիսը իրավունք ուներ։ Առևտրական ամեն ձեռնարկ ուներ իր հաջողության գաղտնի բանալին ու ինչ լավ եղավ, որ Վազգենը ղոհ չգնաց իր անփորձության։ Միայն կմտածեր, թե՝ ինչպես պիտի ընկալեր հասարակությունը, երբ հարյուր դերասանի տեղ տեսներ չորսը, երկու հարյուր տիկնիկներու տեղ՝ բանը։ Միամտաբար կրկին հարցուց այդ մասին։

— Է՜հ... Մեր դեմ դատ պիտի չբանան, յա...

Ադ ալ դարձավ հասկնալի։

— Երկա՞ր ատեն է, որ կաշխատիք Թանիոս ընկերության մեջ...— հարցուց։

— Ժամ մը իսկ չէի կարող աշխատիլ, եթե մտածեի ձեզի պես,— եղավ պատասխանը։

Հեռանկարը շատ էր փայլուն։ Առաջին և երկրորդ ներկայացումներու լրիվ ծախված տոմսերը արդեն կփակեին եղած արտակարգ ծախսերը։ Կմնար խումբին 15.000-ը ու ութը ներկայացում։ Նման ձեի տոմսերու սպառման պարագային շոշափելի շահ կար ու Վազգենը սկսավ ապրիլ այդ շահի հաշվույն։ Հանրակառքը իր տեղը դիջած էր ինքնաշարժին. կեսօրվան ճաշին, փոխանակ տուն երթալու, կերթար քաղաքին լավագույն ճաշարանները ու կխմեր ալ և տակավին մերթ ընդ մերթ կխորհեր Զվիցերիո գիշերային կրպակի մը մեջ խմիչք վաճառող աղջկան... հարստանալու հեռանկարն իսկ կարծես իր ալ գիտակցության հակառակ իր երևակայության առջև կբանար ինչ-որ մութ հաճույքներու ճամփաներ.... Ի՞նչ ըսիր, Վազգեն։

— Է՜հ, ինչ կուզես տղաս, ի՞նչ է պետք քեզ, դրա՞մ, թե՞ ճշմարտություն...

Առաջին երեկոյին, երբ բացվեցավ վարագույրը, սրահին մեջ կիներ կային հոլանի ուսերով, շողշողուն ու աղամանդակուռ լանջազարդերով։ Այրեր զուգված-զարդարված։ Կային պատանիներ։ Վազգենը նստած էր առաջին շարքին, չէր բերած կինը, որովհետև կարգին գիշերազգեստ չուներ, նույնիսկ իր զավակները բացակա էին։

— Ոչինչ, հետագա ներկայացումներուն,— ըսած էր անոնց։

Պահ մը մոռցած էր, թե ինք մեկն է «իմփրեզարիո»-ներեն, տարված դիտեց ներկայացումը լրիվ։ Մանկացավ տիկնիկներուն ի տես ու սիրահարվեցավ քսանամյա խարտյաշ շեխուհին։ Քսանամյա այդ աղջիկը, որ այնքան զգայուն, այնքան բյուրեղյա սրտով կխոսեր տիկնիկներուն հետ, կերգեր։ Վազգեն հիշեց իր գորշ մանկությունն ու անհրապույր պատանությունը, հետո զինվորության ու փախըստական մարդու ծանր տարիները, մարդկային արժանապատվությունը ոտնակոխող հազարումեկ հուշ իր սրտին մեջ։ Ու կարմիր մը, ամոթի կարմիր մը պատեց իր մարմինն ու դեմքը։ Քսանամյա այդ շեխուհին ու տիկնիկները. հնչող երաժշտությունը վերափոխեցին, դարձուցին զինք իր իսկականին։ Մտքով վերապրեցավ, թե ինչպես տակավին երեկ, առջի օր կրցած էր խորհել մութ հաճույքներու ճամփաներուն։

Ի՞նչ ըսիր, Վազգեն։ Դրա՞մ, թե ճշմարտություն։

Հարցումը սխալ էր դրված՝ դրամ թե ճշմարտություն. կյանքի ապահովություն և գեղեցիկը, արվեստը։ Այս երկիրներուն մեջ, ինչպե՞ս, ասված իմ, ինչպես կարելի էր երկուքին միատեղ ընթացքը, ու հիշեց.

— Անոնք, այդ շեխերը տիկնիկներուն հետ ալ կը գտնեին ձևը պրոպագանդին։

Պրոպագա՞նդ... Իրենք ալ օրերե ի վեր կընեին նույնը. իսկ այժմ բեմին վրա տիկնիկներն էին, խարտյաշ շեխուհին ու երաժշտությունը. ի՞նչ պրոպագանդի մասին էր խոսքը... Բայց չէ՞ որ իր մեջ փոխվեցավ ինչ-որ բան. հիմա կարմիր մը, ամոթի կարմիր մը պատեր է իր մարմինը ու դեմքը և չես

գիտեր ինչ կապ կար այդ բոլորին մեջ. ինք ձեռքը տարավ գրպանը ու ստուգեց, որ Զվիցերիայի խմիչք մատակարարող աղջկան նկարը կմնա՞ այդ թաքուն ծալքերուն մեջ. այդ նկարը գինք շարշարող, տանջող ավելորդություն մըն էր հոն, սրտին վրա։ Հապա եթե անցած ըլլար Աշխենին ձեռքը. չէ, պիտի ոչնչացնել, ի՞նչ փոքրոգություն. ինք պատվավոր ընտանիքի հայր... Տիկնիկնե՞րը, շեխուհին ու կուլային տիկնիկները, շեխուհին կերգեր. փակվեցավ վարագույրը որոտընդոստ ծափերու տարափին տակ։

Աղելը մոտեցավ իրեն։

— Վազգեն,— ըսավ,— լավն է խումբը, միայն չէ՞ կարելի հասկցնել այդ աղջկան, որ հետագա ելույթներուն ընթացքին ցույց տա իր սրունքները...

Շառագունեցավ Վազգեն, գող մը պատեց մարմինը.

— Չէ կարելի,— պոռաց կարծես,— անամոթություն է...

— Լա՛վ, լա՛վ, եթե կուզես, ես խոսիմ վարիչին հետ։

— Ըլլա որ փորձես։

— Ուրեմն վախնամ հասարակությունը չըմբռնե խաղը։

— Ինչպե՞ս։

— Մեղք է այդ գեղեցիկ աղջիկը այդ ձևով հանել հասարակության առջև, չցուցադրել գանձերը, եթե քիչ մը ավելի թեթև հագնվեր...

Վազգենին համար առիթ չեղավ փաստելու, թե ո՞վ ուներ իրավունք. ի՞նք, թե՞ մյուսները։ Որովհետև լսեց այլոց կարծիքն ալ թե՝

— Հոյակապ է խումբը, բայց հետաքրքիր է մանուկներուն, պատանիներուն համար միայն։

Զքնացավ ամբողջ գիշերը. իր աչքերուն առջև շեխուհին էր ու տիկնիկները։

Առավոտ վաղ ելավ տունեն, երբ կքնանար կինը։

Դռան առջև ոստիկաններ կեցուցին զինքը։ Հարցուցին անձնագիր, ստուգեցին վրան գլուխը ու՝

— Ազատ եք,— ըսին։

Շվարած ու սարսափահար փողոցներուն մեջ տիրող լռությունեն, իջավ քաղաքի կենտրոնը։ Տանկեր էին երախ-

ները ցցած, զրահապատ ինքնաշարժեր. զենք, զենք ու զինվորականություն ամենուրեք։

— Ի՞նչ է տեղի ունեցեր,— հարցուց շշմած անցորդի մը։

— Զախողած պետական հարված։

— Ովքե՞ր են։

— Ֆաշիստները։

Շշմորած անցավ փողոցներեն, փակ էին ամեն կողմ. բազմաթիվ անգամներ խուզարկեցին զինքը, հարցաքննեցին ու երբ տեսան, որ հայ է, թողուցին ազատ։

Թանիոս ընկերության գրասենյակները նույնպես փակ էին, երեկոյան պարապ էր սրահը, հակառակ լրիվ վաճառված տոմսերուն։

Ադելը եկավ մթագնած դեմքով։

— Բախտ չունինք եղեր,— ըսավ,— հարկ է ջնջել պայմանագրությունը, այսօրվան տոմսերը առնել ետ։ Արտասովոր կացություն է, խառնակությունները կշարունակվին շրջաններու մեջ։ Թեպետ կառավարությունը տիրեր է կացության, բայց 15—20 օր ոչինչ կարելի չէ ընել. իսկ խումբը սպասեցնել անորոշ ժամանակով ձեռնտու չէ։

— Հապա ծախսերը, վնա՞սը։

— Ոչինչ, կվճարենք, մեծ բան մը չէ, տասնհինգ, քսան հազարի վնաս մը. կես առ կես չնչին քանակ մը կրոնեն։ Այդպես է որոշումը Ֆուատ Զաքարիային։ Դուք կարող եք շմտահոգվիլ, ձեր բարեկամին շեքը մեր մոտ է, հաշիվներուն համար անցեք տասնհինգ օր ետք։ Մենք, եթե վերադարձնելիք գումար ունենանք, կհանձնենք ձեզի. դուք ձեր բարեկամին հետ կարգադրեցեք հետո։ Ի՞նչ ընել, սիրելիս, ամեն գործի մեջ քիչ մըն ալ բախտ է հարկավոր. այս անգամ չեղավ, թող ըլլա երկրորդ անգամ։ Նոր ծրագիրներով կսպասենք ձեզի...

ԳՐԱՏՈՒՆ «ՐԱՖՖԻ»

Սերունդի մը, որ քայքայեց ինքզինքը
աստղերուն հասնելու անկարելի երազով...

1

— Դրամը, մանչս, երջանկություն չի բերեր, ձեռքի կեղտ է, հասկցա՞ր։

Չէ՛, չհասկցավ։

Այսինքն ոչ թե չուզեց հասկնալ, ընդհակառակը, իր կյանքի սկզբունքն էր այդ։ Սկզբունքն էր գիտակցության հասած առաջին օրեն, որովհետև համոզեցին, ավելի ճիշտ կյանքը համոզեց, թե «դրամը երջանկության նախապայմաններեն մեկն է, առաջինը։ Առանց դրամի մարդս խեղճ է, ձախողած մարդ...» Բայց պատասխանեց.

— Հասկցա՛, այո՛... Իհարկե հասկցա, վաղուց գիտեմ այդ ճշմարտությունը ես, բայց, սիրելիս, դրամի անհրաժեշտ կարիք ունիմ...

— Դրամի կարի՞ք... Ի՞նչ բանի համար։

Չէ, համբերությունը սպառելու վրա էր, դրամի կարիք, իհարկե, շա՜տ, նախ ապրիլ կարենալու համար, հետո տան խախտված ներդաշնակությունն ու սերը վերականգնելու համար, հետո, սիրելիս, գրականությունը շարունակելու սիրույն, այսինքն, մեկ խոսքով՝ «երազներով» ապրելու համար...

Այս բոլորը, անշուշտ, չարտասանեց բարձրաձայն, այլ գոհացավ ըսելով.

— Ծրագրած եմ խանութ մը բանալ...

— Խանո՞ւթ։ Ինչի՞ խանութ։

— Գրավաճառատուն։

— Հա՜, հա՜, հա՜,— խնդաց մարդը,— ա՜յ տղա, տակավին խելքդ գլուխդ չեկա՞վ... Վազ անցիր սա գիրքերեն։

— Գիրք պիտի չկարդամ,— պատասխանեց, — այլ պիտի ծախեմ։

— Հասկցա, հասկցա, բայց ի՞նչ առևտուր է այդ գիրքի առևտուրը, ո՞վ է այս դարուն գիրք կարդացողը, ո՞վ է գիրք գնողը, որ դուն գիրք կարենաս ծախել... Վազ անցիր, տղաս

Անշուշտ, ինքը այդ մարդուն տղան չէր, նույնիսկ հասակակիցներ էին։ Բայց մյուսը դրամ ուներ և ինքզինքին իրավունք էր վերապահած այդպես խոսելու, ու «տղան» խեղճցավ...

Գիտես, սիրելիս (պիտի ուզեր ըսել՝ խոզին մեկը), ստիպված եմ... Եթե կարող ես քանի մը հազար փոխ տալ, երախտապարտ կմնամ քեզի։

— Տալը հե՛չ, դյուրին է, բայց, տղաս, տակավին շուկային անփորձ ես, մեկ քանի հազարով ի՞նչ կարող ես ընել դուն, հետո իմ խելքս չպառկեցավ այդ գրքի գործին։

— Իսկ ի՞նչ գործ կհանձնարարեիր... սիրելիս։

— Նախ ինչո՞ւ կհեռանաս ուսուցչությունեն։

— Ակամա, հեռացուցին։

— Ա՜յ, այդ արդեն վատ է, բայց ուրիշ տեղ մը գտիր, դպրոց կպակսի՞։

— Դիմեր եմ, բոլորն ալ մերժեցին։

— Ա՜յ, այդ արդեն ավելի վատ է, տեսա՞ր, տեսա՞ր, այդ գիրքերու երեսեն կրած փորձանքներդ, չէ, չէ՞ պիտի սկսիս փոքրով։

— Այսինքն...

— Ունեցած դրամովդ, ինչ ըսեմ, փոքր, շատ փոքր անկյուն մը վարձե, դիր հաց ու պանիր, կարագ, երշիկ ու սանդվիչ և ծախե, գիտե՞ս ինչ շահ կա այդ գործին մեջ, հսկայական։ Օրինակ, ա՜յ ըսեմ, ի՞նչ արժե հացը... հինգ ղրուշ, քսելիք կարագդ՝ երեք ղրուշ, դնելիք պանիրդ՝ երեք կամ չորս ղրուշ, եղավ տասնմեկ կամ շատ-շատ տասներկու, իսկ քանիի՞ կծախեն, ուղիղ քսանհինգի, այսինքն, տղաս, հարյուր առ հարյուր շահ։ Ըսենք, օրական ծախեցիր հազար

հատ. ի՞նչ եղավ, հարյուր քսանհինգ ոսկի, առի՞ր... հարյուր քսանհինգ ոսկին քո ուսուցչությանդ մեկ ամսականն է, եղա՞վ... Եվ մեկ տարիեն դարձար մեծահարուստ, ահա, ե՛լ ու գնա՛ մամայիդ բարև ըրե...

— Այդ իմ գործը չէ, սիրելիս։

— Է՛հ, արդեն այդ շատ վատ բան է, գործին, առևտուրին ամոթը չկա, սիրելիս, պիտի վարժվիս, իհարկե, կարող ես և նպարավաճառի խանութ մըն ալ բանալ. բայց ավելի մեծ դրամ է հարկավոր, այնպես կերևի, որ չունիս...

— Ոչինչ ունիմ ձեռքս, նույնիսկ օրապահիկս ապահովված չէ... Եթե ունենալի, ինչո՞ւ պիտի դայի քովդ, մնաց, որ օրական հազար հատ սանդվիչ ծախելու համար կենտրոնական տեղ մը խանութ պիտի ունենալ, իսկ այդպիսի տեղի համար տասնյակ հազարներ են պետք։

— Ճիշտ է, այնպես կերևի, որ շատ նեղն ես։ Ես քեզ կարող եմ մեկ քանի ղրուշ տալ սա քանի մը օրվան համար, մինչև որ դուն վերջնական գործարար ելք մը խորհիս։ Իսկ հազարներ, դժբախտաբար, չեմ կարող տալ, բոլոր ունեցածս գործիս մեջ եմ դրեր. վաղը կսորվիս, երբ շուկայի մարդ դառնաս, ես հիմա, պիտի ըսել, ավելի նեղն եմ, քան դուն։ Երևակայե, օր կըլլա, հաց գնելու դրամ չեմ ունենար դրպանս, համենայն դեպս առ սա տաս ոսկին...

Տաս ոսկին չառավ, նույնիսկ բաժնվելու առեն ծիծաղեցավ ու ձեռքը սեղմեց ընկերոջը։ Մյուսը թե՝

— Ա՛ռ, ա՛ռ, կվերադարձնես, երբ ունենաս։ Կին ունիս, զավակներ, վերջապես այդ բոլորը հաց կուզեն, ուտել կուզեն, ոչի՛նչ, չէ՞ որ մենք ընկերներ ենք, վաղը ես ալ քեզմե կուզեմ, ինչ կա, որ տղաս... Ու դրամը դժվարավ սահեցուց ընկերոջ դրպանը։

— Խորհե՞, լավ խորհե, կամ սանդվիչ կծախես, կամ նպարավաճառի խանութ մը կբանաս, եթե անշուշտ դրամ գտնես. իսկ տվածիս մասին մի խորհիր. ընկերներ ենք չէ՞, չըլլա որ խորհիս. ամեն ինչ կարգի կմտնե, կեցիր, չերթա՞նք տեղ մը շիշ մը գինի խմենք։

Շշմած էր տղան։

— Երթանք,— ըսավ։

Գացին։ Կեսօր էր։ Առաջին բաժակը պարպեցին ապագա հաջողություններուն կենացը։

— Ինչպե՞ս է կինդ։

— Ոչի՛նչ, լավ է։

— Պիտի լավ խնամել։

— Իսկ մորդ հիվանդությո՞ւնը...

— Նախկինին նման. վատ է, շատ վատ։

— Դժվար ու ծանր է կյանքդ։ Քանի՞ զավակ ունիս։

— Երեք։

Կեցցե՜ս։ Արժանավոր գործ է... Խմենք առողջության կենացը։

— Խմենք,— ըսավ «Ողան»։ Խմեցին։

— Իսկ ի՞նչ եղավ հայրենիք երթալու հարցդ։

— Որոշեր եմ, եթե կարելիություն ըլլա...

— Գնա՜, գնա՜, քու տեղդ է...

Չէ՛, համբերությունը հոս ևս սպառելու վրա էր. բայց երրորդ բաժակները խմեցին... հայրենիքին կենացը։

— Է՜հ, դրա՜մը, դրամը ամեն ինչ չէ դեռ, դրամը ձեռքի կեղտ է, հասկցա՞ր... եթե երթաս հայրենիք, կազատիս այդ բոլոր մղձավանջներեն։ Զբերե՞նք շիշ մըն ալ...

Բերին և չորրորդ բաժակները պարպեցին ապագա այն հասարակարգին կենացը, որ դրամը և այլն, և այլն...

Զույգեր կային մոտակա սեղաններուն շուրջը. սերը կար անդիտությամբ երջանիկ և զույգեր կային, որոնք դներ էին զայն գիտակցված խաբուսիկ երջանկության մը համար։ Հետո այդ բոլոր դերակատարներուն քովն ի վեր կապույտն էր միջերկրականին և արևի ցրված, անփույթ ոսկեղեն վարսերն էին, որոնք կջանային ծածկել սեղանին դրված արցունքը խաղողի ողկույզներուն...

— Սա դիմացի աղջիկը դեղեցիկ է, չէ՞...

«Տղան» չկարողացավ պատասխանել, որովհետև մշուշված էին աչքերը։

— Ինչ է, հուզվեցա՞ր։

— Արևեն է։

— Փոխենք տեղերնիս։

Փոխեցին և հինգերորդ բաժակը խմեցին գեղեցիկ աղջիկներու կենացը...

Վեցերորդ բաժակը դատարկվեցավ ի պատիվ ամուրիներու և այն «իմաստության», թե «ամուրիությունը թագավորություն է»:

— Չբերե՞նք շիշ մը ևս...

Բերին և երրորդ շիշի սկզբին խաժակ Լևոնյանը համոզվեցավ, որ կյանքի մեջ ամեն տեսակի գործ կարելի է և պետք է ընել, որպեսզի կարելի ըլլա փրկել տան խախտված սերը, որպեսզի մարդ գլուխ չխոնարհե ուրիշներու առջև և որպեսզի կարենա համառիլ տակավին գրելու մասին և որպեսզի տակավին գեթ կարողանա խմել ու մոռնալ սա սրիկա, սա անիմաստ կյանքը...

Իսկ ընկերը պնդեց, որ խաժակ Լևոնյանը ի դեպ չմոռնա գրելը:

— Խաժակ, սիրելիս (այդպես ալ ըսավ), սիրելի խաժակ, այդ բոլորին հակառավ պիտի շարունակես գրել...

— Վա՜յ,— ըսավ տղան,— դուն գրականությունեն ալ բան կհասկնա՞ս...

— Հապա ի՞նչ կարծեցիր դիս, տղաս, ատենին դպրոցին մեջ ես ալ փորձեր եմ գրել, բայց... կյանքը:

— Կյանքը, համենայն դեպս, հակառակ իր տխուր կողմերուն...

— Ճիշտ այդ տխուր կողմերն են գեղեցկացնողը կյանքը:

Վերջին բաժակը խմեցին կյանքին կենացը:

— Սպասյա՛կ, հաշիվը:

Հաշիվը տասուկես թղթոսկի էր: Սեղանին վրա ինկավ հարյուրնոցը:

— Մանր չունի՞ք:

— Մա՜նր, մա՜նր... դժբախտաբար...

— Ես ունիմ,— ըսավ խաժակ Լևոնյանը և գրպանեն հանեց տասը թղթոսկին ու բաճկոնի վերի աջ գրպանեն դուրս քաշեց շորսի ծալված իր վերջին մեկոսկինոցը:

— Ահա և տասնմեկ:

Սպասյակը տնտնաց կես ոսկին վերադարձնելու համար:

— Ոչի՛նչ,— թող մնա,— ըսավ մյուսը՝
— Շնորհակալություն, պարոններ, կրկին հրամմեցեք։
Ու գացին։

2

Երբ տուն հասավ, ուշ գիշեր էր, աննպատակ թափառեր էր քաղաքի փողոցներուն մեջ։ Դիտեր էր հագուստեղենի խանութներու ճոխ ցուցափեղկերը ու մտածեր էր իր մաշված հագուստին մասին, կանգ էր առեր արանց ու կանանց ներքնազգեստներու, մետաքսե և բրդե գուլպաներու մեծ վաճառանոցներուն առջև և հանգեր էր շատ տխուր եզրակացություններու, մանավանդ երբ զգացեր էր, որ գուլպաներուն ներքանները ու քիթերը ծակծկված էին։ Ասեղնագործված կնոջական այդ երփներանգ ներքնազգեստները մի՞թե քիչ մը ավելի երջանկություն չէին, եթե ըլլային իր տանը. հիշեց, որ ահա ամուսնությունեն ի վեր անցեր էր հինգ տարի և օր մը օրանց զույգ մը մետաքսե գուլպա տարած չէր կնոջը։ Կինը կհոգար իր կարիքները։ Ինչո՞ւ օրինակ ինք չէր խորհած սա ամենահասարակ հաճույքին մասին։ Սիրտ չէր ունեցած խորհելու. կյանքի պայմանները ոտնատակ էին ըրեր զինք, ամեն ինչ դարձած էր սովորական, տհաճ երեկին կրկնությունը։ Անցեր էր ծուռումուռ քաղաքի փողոցներեն և լայն պողոտաներեն և տեսեր էր ամեն ձևի ճարտարապետական ամենաշքեղ հղացումներեն մինչև ամենաայլանդակ ոճերով շինված շենքերը։ Շենքեր, որոնց մեջ որևէ առեն բնակելու հեռանկարն ալ չէր ունեցած իր համեստ ուսուցչի պաշտոնին բերմամբ։ Տեսեր էր ճոխ ու այլազան ինքնաշարժեր, ծառաներ, տանտիկիններ, որոնք կարծես իր աշխարհին մարդիկը չէին։ Բայց ո՞րն էր իր աշխարհը, չէ՞ որ իր աշխարհը նույնինքը այն էր, որուն մեջ այժմ կշրջագայեր ինք այդպես տխուր ու այլանդակ հոգեվիճակով։ Չէ՞ որ ինք ծնած ու մեծցած էր նույն մթնոլորտին մեջ։ Անցավ գիշերային զվարճությունները ու մութ գոհերեն, հոն ևս գույնզգույն մազերով աղջիկներ տեսավ փողոցները, որոնք գիշերային այս ուշ ժամին նոր կելլեին իրենց քունեն ու կպատրաստվեին աշխատանքի։ Սա ևս իր աշխարհը չէր,

անոնք ևս իր աշխարհին մարդիկը չէին։ Ո՞ւր էր կանգնած ինք. ի՞նչ բանն էր, որ մեռցուցեր էր խիզախությունը իր մեջ ու դարձուցեր էր զինք լուսանցքի մարդը այս հասարակարգին։ Մարդու մը, որ կխորհեր իր օրապահիկը փրկելու մասին և իր ընտանիքի նվազագույն ապրուստին հոգը կդարձներ մղձավանջի։ Չէ՞ որ ինքն ալ ատենին, թեպետ չէր ճանչցած իր հայրը. բայց անվանի առևտրականի մը զավակն էր եղած և ունեցած էր այդ շենքերուն նման հսկա շենքի մը սեփականությունը, բայց խենթի հովերով իր կյանքը պատճառ էր եղած, որ վաճառեին ամեն ինչ, գաղթեին Լիբանան և ինք իրր թե նվիրվեր իր սիրած գործին։ Այդ գործը գրականությունն էր, իսկ ապրուստի միջոցը՝ ուսուցչությունը։ Ինչո՞ւ էր բոներ գրականություն կոչված այդ անշահ ու հայ մարդու, սփյուռքահայ մարդու համար «ծիծաղելի» գործին պոչեն։ Ինչո՞ւ, որովհետև չէր կարող շրջանել։ Որովհետև այդ իր տարերքն էր, իր իսկ կյանքին իմաստը։ Իրմե վեր էր այդ բոլորը։ Իսկ իր կամքեն վեր որևէ բանի դերի դարձող մարդը լուսանցքի մարդ է, ինչպես սերը, ինչպես դինին, ինչպես խաղը. և գրականությունը սեր էր, դինի ու բախտախաղ... Այն մյուսն ալ փորձեր էր գրականությունը, երբ... դպրոցական նոտարաններու վրա էր դեռ, և ո՞ր մեկ հայը չէր փորձած ու ո՞ր մեկ մարդը տակավին չէր քաշված ըսելու, թե՝— հա՞, գրականություն, ես ալ փորձեր եմ, երբ... փոքր էի։

Իր դժբախտությունը, համառիլը տակավին, երբ անդին, այն մյուսները բոլորը վաղ հասկցած կյանքը դարձեր էին... խանութպաններ։ Ինք չկարողացավ իր սիրած գործին խանութպանը իսկ դառնալ։ Եվ քանի գրեց, այնքան փորձանքները շատցան գլխուն։ Վերջինը... արձակվիլը ուսուցչական պաշտոնեն։

Ու հիմա, որ անգործ էր ու փակ էին բոլոր դռները իր առջևը, կառաջարկվեր, որ սանդվիչ ծախեր։ Բայց ինքը ինչպե՞ս կարող էր այդպիսի գործի մը ձեռնարկել։

Ըսենք, դատավ խանութի համար անհրաժեշտ դրամը։ Հետո՞, չէ՞ որ այդ իր գործը չէր, չէ՞ որ կարող էր իր աշակերտներեն կամ աշակերտուհիներեն մեկը գալ ու կանգնիլ իր

առջև և խնդրեմ... կես սանդվիչ... Մահ էր այդ իրեն համար։ Տակավին այն մյուսները, այն բոլոր իրեն ծանոթ ու անծանոթ գրչի փերեզակները, որոնք կարող էին չարախնդորեն ժպիտ մը իրենց դեմքին գալ ու ըսել.

— Տղա, հատ մը պանիրով,— և հետո,— վա՜յ, դո՞ւն ես, խաժակ։ Իսկ ի՞նչ կգրես այս վերջերս։

Չէ, և կարելի էր ընել այդ բոլորը և գրել. բայց նպարավաճառեն ի՞նչ գրող։ Պանիրի ու հացի առուծախեն ետք հոգեկան ի՞նչ թռիչք... Գրավաճառությունը գեթ կփրկեր ողբերգության արտաքինը։ Վերջիվերջո, առևտուր, բայց գիրքի։ Բայց արդյո՞ք իրավունք չուներ այն մյուսը, որ ըսավ.

— Ո՞վ է այս դարուն գիրք կարդացողը, ո՞վ է գիրք գնողը, որ դուն գիրք կարենաս ծախել... Վազ անցիր, տղաս...

Գիրք կարդացողներ կային անշուշտ, բայց առևտուրի մեջ դրամ բերողը գրականության այն մյուս տեսակն էր, վատը, պոռնոգրաֆիկ բովանդակություն ունեցողները, սեռային սանձարձակության բուլվարային հատորները։ Ինքը կարո՞ղ էր այդպիսի գիրքերու գոյությունն իսկ հանդուրժել իր խանութին մեջ։ Բնա՛վ։ Տխուր էր հեռանկարը, մութ, իսկ ինչպե՞ս պիտի ապրեցներ կինն ու մայրը, երեք զավակները։

Գնա՛, գնա, քու տեղդ է,— այսպես ըսավ ան հայրենիքին համար։ Ինչո՞ւ համար էր իր տեղը, որովհետև ինք պարտված մըն էր կյանքեն, որովհետև այս իրավակարգին մեջ իրենպեսները տեղ չունեին։ Բայց չէ, ինք կարո՞ղ էր երթալ հայրենիք և ըսել նույնիսկ մտովի. եկա, որովհետև ոչինչ կարող էի ընել հոն ապրելու համար։ Եկա և հաց ավելի ինձի։ Այդպիսի տրամաբանություն։ Չէ՛, սխալ էին այդ բոլորը։ Ինք գրող էր վերջապես, մարդիկ իր ըմբռնումներուն համար զրկել էին զինքը ապրուստեն ու հիմա հրամմեցեք. ես պիտի երթամ հայրենիք։ Ո՛չ, չկարողացավ հաշտեցնել այդ մեկը իր ըմբռստ երիտասարդի հոգիին։

Պիտի տոկալ, պայքարիլ, ի հարկին պանիր ու հաց ծախել. փաստել, որ այն պարագային, երբ մարդ զիջի մարդկայնորեն ապրելու իրավունքին, կարող է և ապրիլ այստեղ ևս։ Պիտի հաղթեր և վերջը պիտի դներ հարցը. երթալ հայ-

բենիք։ Այն պարագային, հայրենիքի մեջ գեթ ինքն իր առջև գլուխը բարձր պահած պիտի շարունակեր գրել այդ բոլորի մասին։ Եկած էր ո՛չ թե անկարողությանը համար, եկած էր հավատքով, եկած էր, որովհետև չէր կարող չգալ, որովհետև ինք հավատք ուներ հողին ու հողին վրա սավառնող գաղափարին մասին։ Եկավ ու եթե չգար, կապրեր նաև հոն, բայց եկավ, որպեսզի ապրի մարդավայել, ապրի որպես մարդ։ Իսկ հայրենասիրությո՞ւնը... Է՜հ, չշարաշահել բառը, չշարաշահել կյանքեն իրապես պարտված գաղափարի խանութպաններուն վերջին ապավենը... խնդրեմ։

Մայրն էր դուռը բացողը։ Կինը քնած էր վաղուց։

— Ի՞նչ ըրիր, ինչո՞ւ ուշացար այսքան, կրկին խմե՞ր ես... Մեղք չէ դրամը, տունը այսքան նեղություն ունինք ու դուն ունեցած վերջին ղրուշներդ իզուր կուտաս այդ կործանիչ հեղուկին...

— Մայրիկ, կբավե,— կրցավ ըսել միայն ու անցավ սենյակը։ Մայրը չթողուց սակայն զինք.

— Ի՞նչ ըրիր, զավակս։

— Ոչի՛նչ,— ժպտեցավ,— հյուրասիրվեցա...

— Գիտե՞ս ինչ խորհեցա...

— Ո՛չ։

— Գոտա անհրաժեշտ դրամը։

— Ինչպե՞ս, մա,— ու ցատկեց տեղեն։

— Տղա՛ս,— ըսավ մայրը,— հայրդ մեծ առևտրական էր, ես վստահ եմ, որ դուն իր արյունեն բան մը ժառանգած ես անպայման և եթե խելքդ գլուխդ հավաքես, կրնաս տեղ հասնիլ։ Նախ, սիրելի զավակս, գեթ ժամանակավորապես թո՛ղ սա գրականությունը ըսվածը հիմնովին։ Ընտանիք ունիս, զավակներ ունիս, կին ունիս։ Կինդ և ես տկար ենք, կտեսնես արդեն։ Իսկ մենք ամեն ինչ ծախեցինք, ոչինչ ունինք։ Կարող ենք սովամահ ըլալ, եթե այսպես շարունակես։ Շատ խորհեցա, որդիս, գիտեմ թե սրբապղծություն է ընելիքս, սակայն մեր ընտանիքի, քու և զավակներուդ ապագան է խնդրս առարկան։ Եթե ըմբռնես, թե ինչ եմ առաջարկելու, վստահ եմ, պիտի ցնցվիս, բայց և վստահ եմ, պիտի փարիս գործին, որովհետև այդ մեր վերջին ապավենն է և քու հորդ երեսուն

տարիներ եւոք իր հեռավոր գերեզմանեն կատարելիք վերջին բարիքը քեզ...

— Ինչպես, մայր...

— Որոշեցի վաճառել իր գերեզմանի հողը։

— Վաճառել հայրիկի գերեզմանը, երեսուն տարի եւոք, անհանգստացնել իր աճյունները և հեռավոր այս ափերեն հանդգնիլ այդ, ա՜յդ... ո՛չ,— մայրիկ։

— Մեղքը իմ ճտին, արդեն հեռացեր ենք իրմե և վերադառնալու չենք։ Մեր վերջին կայքը հայրենիքն է. ի՞նչ ընել, երեսունեւութ սիրելիներ անգերեզման թաղեր եմ անապատի ավազներուն։ Վերջին իմ հիշատակն ալ հալալ թող դառնա քու ճամփուն։ Բայց տես, պիտի գուրգուրալ և այդ վերջին առիթը իզուր չվատնել ինչ-որ հիմարութիւններու երեսեն...

— Մայրիկ, բայց շատ է այսքանը...

— Ես վերջերս այդպիսի առաջարկ ստացա և հավանութիւնս հայտնող նամակը ուղարկեր եմ որին որ պետք է։ Այսօր իսկ հանձներ եմ փոստին։ Թող հայրիկի հիշատակը հավետ ապրի մեր հոգիներուն մեջ։ Վաղը եթե այդ դրամով կարողանաս բանալ վաճառատունդ, իր հիշատակը հարգած կըլլաս ավելիով։

Զքնացավ ամբողջ գիշերը. հիշեց իր մանկութեան անթիւ օրերը, թե ինչպես ամեն մեռելոցի իր մորը հետ կայցելեր իր հորը գերեզմանին, որը բավականին ընդարձակ հողաշերտի մը վրա կանգնած շքեղ հուշարձանի մը ստվերին էր. ընկուզենիներ և ուռենիներ կային այդ հողին վրա և ինք և իր մայրը կնստեին անոնց հովանիին տակ ու կուլային։ Առաջինը, իր սիրած մարդու հետ անցուցած կարճ, շատ կարճ երջանկութեանը համար։ Ինք, իր անծանոթ հոր կիսանդրին իրեն նայող տխուր աչքերուն ի տես...

Հիմա այդ կիսանդրին պիտի վար առնեին մարդիկ ու դրամով պիտի գնեին այդ սրբութիւնը, տեղը դնելու համար ուրիշի մը տխուր նայվածքը։

Իր հոր գերեզմանին վաճառքով, իր հոր աճյունին գնով պիտի ինք բանար իր վաճառատունը։

Խաժակ Լեոնյանը այդ գիշեր միայն ատեց գրականութիւնը։

Բայց երբեմն սրբազան ատելություններ կան, որոնք մեծ, խոր ու անընմբռնելի սերերու հետագա պոռթկումին ծիլերն են։

Անընմբռնելի՜ սերերու...

3

Բացված խանութը գրավաճառատուն մըն էր քաղաքի երկրորդական թաղամասերեն մեկուն մեջ, իսկ դրամը հագիվ էր բաված խանութի կմախքին։ Գունավոր դարակներ, հետո երկու ապակեպատ ցուցափեղկ և ներքին... ամայություն։ Գրավաճառատուն էր այն իմաստով, որ խանութի ճակատին գրված էր «Գրավաճառատուն Բաֆֆի»։

Մայրը առավոտ կանուխ արթնցուց զինքը։

— Ե՛լ, տղաս, և շտապե։

— Բայց, մայրիկ, երթամ և ի՞նչ ընեմ հոն։

— Ոչինչ, գոնե բաց փեղկը, մտիր խանութ, նստե գրասեղանիդ առջև, չես գիտեր ուրկե կծագի լույսը, գեթ անցնող դարձողը թող տեսնե, որ ինչ-որ նոր հաստատություն է հիմնված, հետո կխորհիս թե ինչ պիտի ընես։

— Բայց դատարկ խանութին մեջ նստիլը ծիծաղելի է, մայրիկ...

— Ոչի՛նչ, որևէ մեկը առաջին օրեն ապրանքներով չէ լեցուցած իրը։ Հայրիկդ ոտկյա շղթայով մըն է սկսեր գործը, առեր է տաս-տասնհինգ մետր կերպաս, ծախեր է, շահովը գներ է նորը. այս անգամ քսան մետր և օր մը տաս մետրը դարձեր է հսկա խանութ իր հարակից պահեստանոցներով։ Այդպիսին է առևտուրը, պիտի համբերություն և հարատևություն ունենալ։

Հայրիկի անունն իսկ իր պարտությունն էր։ Ելավ ու գնաց։ Խաժակ Լևոնյանի ամենադառն օրերեն մեկն էր այդ։

Երբ բացավ խանութի փեղկը, դատարկ դարակներու և պատերուն ու առաստաղին տակավին չչորացած ներկի հոտը զարկավ ռունգերուն։ Մտավ ներս ու անմիջապես փակեց մուտքի դուռը։ Տեսակ մը գողի և մարդոցմե փախչելու հոգեբանություն։ Քրտինքը պատեր էր ամբողջ մարմինը.

ստորակայության սուր զգացում մը կճնշեր ամենաշատ սրտին ու կարծես կանգնեցուցեր՝ էր իր ամբողջ բանականությունը։ Վերջիվերջո հաղթեր էր կյանքը ու երազի մարդուն ստիպեր էր, որ չի շեղի ընդհանուրի շարքեն դուրս ու դառնա սովորական Մարկոս մը, սովորական մանր ատորական մը։ Մնաց, որ այդ մեկն ալ հարց էր տակավին։ Նայեցավ ժամացույցին, տակավին ութը չկար և սլաքները կանգ էին առեր կարծես։

Խորհեցավ զբաղիլ որևէ բանով. ըսենք, կարող էր լվալ հատակները. որոնք կեղտոտ էին և ամենուրեք կկրեին շորացած ներկի և ցեխոտած կոշիկներու քայլերու հետքեր։ Գնաց ու մեկ քանի խանութ ցած դանվող նպարավաճառեն գնեց ավել մը ու փոխ ուզեց դույլը։ Եկավ ու պարպեց ջուրով լեցուն առաջին դույլը, հետո երկրորդը, երրորդը, չորրորդը և սկսավ ավելով շփել հատակը։ Նույն պահուն մեկ քանի մարդկային գլուխներ երևացին ցուցափեղկին առջև և մոտեցան դռան։

— Բարև, դրացի։

Հայերեն էր բարևը։

— Բարև ձեզ,— կրկնեց խաժակ դողդողացող ձայնով մը։

— Գրատո՞ւն եք բացեր։

— Այո՛։

— Հաջողություն ձեզ, թեպետ դժվար է քիչ մը։ Սրտանց կցանկանք, որ հաջողիք, շրջանը կտրված է ընդհանուր շուկայեն, առհասարակ արհեստանոցներ են այստեղ, ձերինին նման կոկիկ խանութ չկա մեր շրջապատին մեջ, բայց ոչինչ։ Իսկ առաջ որտե՞ղ էր ձեր վաճառատունը։

— Նոր կսկսիմ ատուրի,— պատասխանեց Լեոնյան, իր զբաղումին մեջ ջանալով թաքցնել դիմագիծն ու ներքին հուզումը։

— Նոր կսկսի՞ք... ոչի՛նչ, նախապես այստեղ մսավաճառ մը կար, երեք ամիս չդիմացավ, հետո նպարավաճառ մը եկավ, ան ալ նույնպես, քաղաքը ամբողջ ծածկվեցավ գրեթե նպարեղենի խանութներով, մնաց, որ կեղտոտ մարդ էր, չկարողացավ հաճախորդ շահիլ։ Ոչի՛նչ, հանդուգն եղեք և

և եթե ինձի կհարցնեք, գիտեք ինչ, միայն մի բավականանաք դիրքերով։

— Ի՞նչ ընեմ հապա,— հարց տվավ խաժակ վարանումով։

Այդ հարցն արդեն շուկայի վարժ մարդոց աչքեն չխուսափեցավ և հաստատեց այն կասկածը, որ լրիվ նորեկ և անփորձ տղու մը հետ գործ ունին իրենք։

— Ըսենք, խմիչք վաճառեցեք։

— Խմի՞չք...

— Ինչ կա որ, լավ խանութ է, անկյուն մը սապես կարող եք օղի, գինի, վիսքի և զանազան աղանդերներ վաճառել, շատեր կուգան և լավ կաշխատիք։

— Բայց գիրքի հետ ինչ կապ ունի օղին...

— Է՜հ, այդ արդեն հեշ, տղաս, դուք նայեցեք, որ դրամ շահիք և այդքան, մնացյալը հեշ... Եվ գիտեք ինչ, ես կարող եմ օգնել ձեզ։

Օգնություն խոստացողը տարեց, վստահելի արտաքինով դրացի խանութպան մըն էր.

— Ես շատ լավ ծանոթ եմ մեծաքանակ խմիչքներ վաճառող առևտրականի մը, այս երկրին մեջ կարևորը խանութ ունենալն է և վստահություն վայելելը։ Ունի՞ք մեկը շուկայի վրա, որ ձեզ վստահեցնե, այսինքն կոնակ կանգնի ձեզի. միայն իր ստորագրությունը տալով։

— Ունիմ,— կմկմաց խաժակ։

— Դե՜, ուրեմն վերջացավ, ե՛լ երթանք, ի հարկին սկիզբը շշերով կվաճառեք, հետո կտեսնեք ու դուք անձամբ կորոշեք, թե որն է շահավետը, գի՞րքը թե խմիչքը և ըստ այնըմ կփոխեք գործին ընթացքը, որովհետև, տղաս, գիրքի գործին իմ խելքս չի պառկիր շիտակը, օրինակ վերցնենք զիս, ես տարվա մեջ դժվար թե հատ մը իսկ գիրք կարդամ, բայց թե օղին... ամեն օր չխմած չեմ կարող... այ տեսա՞ր։

— Բայց ես դրամ չունիմ խմիչքի կապերու համար, առայժմ բոլոր ունեցածս գիրքի եմ պառկեցուցեր,— ջանաց ստել Լևոնյան։

— Ոչի՛նչ, ըսի չէ՞, եթե ձեզ ծանոթ առևտրական մը կվստահեցնե ձեզ, գործը կարգին է...

— Իսկ այդ մարդիկը ապառիկ կուտա՞ն...

— Հայերեն կխոսիմ, տղաս, ինչու չէ, անշուշտ ոչ ծանոթ և հրապարակի վրա շրջանառության մեջ գտնվող տեսակները, այլ Եվրոպայեն և Ամերիկայեն նոր հրապարակ հանված, ասենք նույն որակի, բայց անծանոթ անուններով տարբերակները և այդտեղ ձեր շահը ավելի կըլլա։

Խաժակ Լևոնյանը վերածվեր էր շարժուն մեքենայի մը, տրամաբանությունը չէ որ կիշխեր այդ պահուն իր վրա, այլ իր խանութի մերկությունը առժամապես ծածկելու ձգտումը, մինչև գիրքերու հարցին մեջ նորություն մը մացնելը։ Իր հոր գերեզմանի վաճառքեն գոյացած դրամը հաղիվ էր բավեր խանութի կանխիկ վճարված տարեկան վարձքին և ներքին կահավորման։ Այնպես որ ուրախացավ այդ անակնկալ առաջարկեն. նախ գոնե այսօրվա համար կհեռանար սա տանջող հոգեվիճակեն, հետո գիշերը կուրախացներ տունը։

Եկողները երկիմաստ ժպիտներով հեռացան խանութեն, տարեց հայը.

— Աճապարե,— ըսավ,— քանի գործերը տակավին եռուն ընթացքի մեջ չեն, երթանք ու վերցնենք որքան որ կարենանք։

Գացին նախ Խաժակ Լևոնյանի ծանոթ առևտրականին մոտ։

— Բարև, Խաժակ ջան,— ըսավ ընկերը,— լսեցի, որ արդեն բացեր ես խանութը, ինչպե՞ս ըրիր, ժառանգ ինկա՞վ ինչ է։

— Վերջը կպատմեմ,— ընդհատեց Խաժակ ընկերոջը,— չցանկանալով իր դրացիին մոտ հայտնի դարձնել իր ողբերգությունը։

— Գիտես ինչո՞ւ ենք եկեր...— ու պատմեց։

— Ա՜յ, ապրես, բարեկամ,— խոսքը տարեց հային ուղղեց ընկերը,— ա՜յ ապրես, լավ եք խորհեր, հապա գիրքն ի՞նչ բան է, ապրե՞ս, ապրե՞ս, լավ սկիզբ է...

— Իսկ, Արտո, դուն ինձի համար ապահովություն կուտա՞ս այդ վաճառականներուն մոտ։

— Ինչո՞ւ կանխիկ չես գներ,— վարանումով և տարակուսանքով հարց տվավ ընկերը։

Խաժակ Լևոնյան անգիտակցաբար կատարեց իր առևտրական ակամա կյանքի առաջին հաջող գործառնությունը։

— Ունեցած ամբողջ դրամս պառկեցուցեր եմ գիրքերուն... ապսպարանք եմ տվեր Եվրոպա, այնպես որ...

— Ա՛յ, ուրեմն մեծաքանակով պիտի զբաղվիս, ա՛յ, այդ արդեն լավ է, այդ բանին տես մի քիչ խելքս կպառկի, ես չէ՞ ըսեր քեզի, այդպիսին է առևտուրը, տեսա՞ր, հիմա քովդ դրամ չունի՞ս չէ՞։

— Չունիմ,— խեղճցավ Խաժակ, բայց մյուսը ինկավ ծուղակը։

— Ա՛յ այսպես, շուտ սկսար գործի մարդ դառնալ, գինիեն դարձող քացախը բարկ կըլլա, ջանս, լավ, սիրելիս, ամենայն սիրով, ընկերը թե որ ընկերոջը չօգնե, ալ ի՞նչ ընկերություն...

Եվ եկավ ոտքի, առանց նույնիսկ կասկածելու, թե Խաժակի «չունիմը» բառին իսկական իմաստով էր ըսված։

Երեքով գացին մեծաքանակ խմիչքներու «Ճոնվաթ» ընկերությունը։ Զիրենք ընդունեց հաստատության տնօրենը, որ հայ էր և մտերիմը կերևեր տարեց հայուն։ Արտոյի անունը և ստորագրությունը բավ էր գործառնությունը կնքելու համար։ Խաժակը ափ ի բերան մնաց, երբ կազմվեցան ֆակտյուրները և տեսավ, որ իրեն վստահեր էին անծանոթ և նույնիսկ շրջանառության մեջ գտնվող խմիչքներու մոտ երեք հազար լիրանանյանի հասնող գումարով ապրանք։ Վիսքիի, գինիի, կոնյակի բազմազան տեսակներ և լիքյորներ։ Տարեց հայը վերջավորության պատճառ դարձավ, որ Խաժակի հանդեպ վստահությունը կրկնապատկվի, երբ հաղորդեց թե հին ծանոթներ են Լևոնյանի հետ, ընտանեկան սերտ հարաբերություններով կապված։

— Երկու ժամ չանցած բոլորը ձեր մոտ կըլլան,— վստահեցուց հաստատության տնօրենը և որպես հյուրասիրություն շորս բաժակ սուրնոց ֆրանսական կոնյակ բերավ սեղանին։ Խմեցին հաջողության կենացը և ելան դուրս։

— Խաժակ ջան,— կրկնեց Արտոն,— երեկոյան կուգամ խանութ և կթրջենք։

Խաժակ Լևոնյանի հոգեբանության մեջ իրեն անծանոթ ինչ-որ բեկում էր ստացվեր։ Երբ մտավ խանութ, ներկի հոտին խառնվեր էր հատակի խոնավության հոտը, բայց չես գիտեր ինչու, բացավ խանութի դուռը մինչև վերջ ու առաջին անգամ ըլլալով բավականին երկար կանգնեցավ դռան սեմին, ձեռքը տափատին դրպանը, զննեց շրջապատը ու ակնարկները չթաքցրեց գաղտագողի զինք դիտողներեն։

Հսվածին նման երկու ժամը չլրացած մեծ ինքնաշարժ մը կանգնեցավ «Բաֆֆի» գրատան առաջ, և բանվորներ սկըսան ներս կրել շիշերով լեցուն արկղները։

Երփներանգ շիշեր էին, որոնք գրավիչ տեսք մը տվին խանութին, երբ կիսով լեցուցին զայն։ Երկար ատեն Խաժակ դասավորեց բոլորը և երբ նստավ իր գրասեղանին առջև, չխորհեցավ նույնիսկ, թե արդյոք չէ՞ր շտապած «Գրատուն Բաֆֆի» դնելով իր վաճառատան անունը։

Բավական հոգներ էր և ժամը արդեն կանցներ երկուքը։ Արևը կկիզեր ցուցափեղկին ապակիները և ամայացեր էին փողոցները։ Կրկին դույլով ջուր թափեց ու կրկին ավլեց բանվորներու թողած ոտքի հետքերը։

Հաղիվ վերջացուցած ներս մտավ թուխ դիմագծով, կարճահասակ առաջին հաճախորդը, որը նայելի ետք խանութին շորս բոլորը, կանգ առավ շիշերու դարակներուն առջև և սկսավ խոսիլ արագ-արագ այնքան հապճեպ արաբերենով մը, որ չկարողացավ հասկնալ Խաժակ, թե հաճախորդը ինչ կցանկար։

Մարդը ինքը վար առավ վիսքիի շիշ մը, հետո ճին մը, հետո փոքր կոնյակի շիշ մը և պահանջեց հաշիվը։ Խաժակ արդեն մտովի ըրած էր գումարը և ներքին ուրախություն մը կալեկոծեր ողջ էությունը։ Տասը թղթոսկիի շահ մը կիսստանար թոպեական այդ առևտուրը։ Իր ուսուցչական առօրյա վճարին երկու և կես անգամը։

Մարդը հանեց հիսունոց մը և ուզեց, որ Խաժակ ծրարե ապրանքները։ Ընդամենը երեսունհինգ ոսկի էր հաշիվը։ Բայց ինք մանր դրամ չուներ։

— Խնդրեմ մի բոպե։

— Լա՛վ, բայց արագ,— ըսավ մարդը։— Եթե պիտի ուշանաք, ես ուրիշ խանութ վերցնեմ։

— Չէ՞, չէ՞, խնդրեմ, մեկ րոպե միայն, խնդրեմ...

Հապճեպ վազեց դուրս, դրացի տարեց հայուն, մարդը ժպիտը դեմքին, որու մեջ ակներև ուրախություն կար խաժակի կատարած անսպասելի այս առաջին գործառնության համար. ըսավ, թե «ինք չունի քովը դժբախտաբար, բայց ոչինչ,— տուր փորձեմ նպարավաճառեն մանրելը։ Եվ ինք անձամբ առավ դրամը խաժակեն ու տարավ նպարավաճառին։ Այս վերջինը հաճախորդ ուներ, տնտնաց քիչ մը։ Խաժակի համբերությունը սպառելու վրա էր։ Բայց մարդը տաս հատ հինգ ոսկինոց փոխանցեց և խաժակ վազելով, հևիհև մտավ խանութ ու երեսունհինգը դրավ իր գրասեղանի դարակին մեջ ու մնացյալը երկարեց մարդուն։

Հաճախորդը կանգնած կսպասեր տակավին...

— Իսկ ինչպե՞ս եմ տանելու, թուղթ չունի՞ք։

Ու խաժակ կրկին դուրս խոյացավ խանութեն, ներողություն խնդրելով հաճախորդին ու կրկին գնաց նպարավաճառին քով՝ թուղթ ու թել խնդրելու։ Վերադարձավ արդեն քրտնած, ծրարեց հապճեպ, կապեց թելով։ Բայց զգաց, որ կդողդողային ձեռքերը։ Այդ դողին մեջ կար և՛ առաջին շահի հաճույք, և՛ ուրախություն, և՛ ցավ, որ ապիկար էր դուրս եկած առաջին իսկ հաճախորդին առջև։

Երկարեց ծրարը և ակնածանքով ու թեթև ժպիտով մը.

— Շնորհակալություն, կրկին հրամմեցեք,— կմկմաց։

Մարդը փոխադարձ ժպիտով հանդիսաս դուրս եկավ խանութեն։

Հիմա կզգար թե ինչ կնշանակե առևտուրը։ Օրվան մեջ եթե ես մեկ հաճախորդ ունենար, ինչպես այս մեկը, իրեն համար բավ էր, որ կարենար ապրեցնել տունը և... դրեր։ Ինք հարստության պետք չուներ, իր ուզածը որպես ամուսին կարենալ ապրեցնելն էր իր կինն ու զավակները ու հոգալ մորը։ Իսկ օրական քսան ոսկի շահը կբավարարեր իր փափաքները։ Ա՜հ, այդ հրճվանքը, իրավունք ուներ Արտոն։ Ի՞նչ բան էր գիրքը։ Երևակայե, տասը հաճախորդ էր հարկավոր նույնքան մը շահի համար։ Մայրը որքան պիտի ու-

բախանար, եթե իմանար երեկոյան ոչինչով սկսված առաջին օրվան հասույթին մասին։ Հետո, հրաշքի նման բան սա խմիչքի գյուտը։ Դրամը կմնար որոշ շրջան մը քովը. կգներ գիրքերը, կծախեր անոնք ևս և մեկ ընդ մեկ կփակեր իր պարտքերը... Չէ՞ որ ինք գոնե երկու-երեք ամիս ձևով մը տերն էր երեք հազար ոսկիի։ Հետո, երկրորդ գործառնության մարդիկ կվստահեին ավելին... Կեցցե՜ կյանքը և լավ էր կյանքը. մարդ ինչքան փոքր բանի պետք ունի երջանիկ զգալու համար ինքզինքը։ Օրապահիկի մը, ապահով, վաղվան մղձավանջեն ձերբազատված օրապահիկի մը և առ քեզ սեր, առ քեզ գրականություն... Գնաց ու նստավ գրասեղանին առջև, երբ ներս մտավ կինը։ Եվ ան կուգար հիմա հաճույքի իր գերագույն պահուն։

— Ինչո՞ւ եկար,— հարցուց անտարբերություն կեղծելով։

— Մաման ղրկեց...

— Իսկ ինչո՞ւ։

— Ըսավ թե թերևս պետք ունենաս ինձի, թերևս դուրսը գործ ունենաս և ես մնամ հոս...

— Որպեսզի հսկե՞ս այս դատարկության,— հարցուց ժպտալով։

— Իսկ ի՞նչ բաներ են... խմի՞չք...

Եվ պատմեց։ Կինը, թե՝

— Խաժակ, ինչ գործն է քուկին խմիչքի առևտուրը...

— Ահա թե իմ ինչ գործն է,— բացավ դարակը լսելու համար և լսելի դարձնելու համար քիչ առաջ հոն ինկած իր նոր կյանքին առաջին ղողանջը. դրա՛մը։

— Դրամը, մանչս, երջանկություն չի բերեր, ձեռքի կեղտ է, հասկցա՞ր։

Չէ՛, չհասկցավ։

Խնդաց։ Արտոն նույնիսկ մանչը փոխեր էր ջանի, բայց դրամը... դրամը չկար... չկա՞ր դրամը։

Վազեց փողոց և փողոցին մեջ չկար մարդը... Մա՞րդը չկար։ Թյուրիմացությո՞ւն... Նայեցավ դրպաններուն... զանգի ղողանջներ ականջներուն մեջ, մարդը... Դրամը։ Դրամ՝ կարդաց հակառակ կողմեն՝ մարդ, մարդ՝ կարդաց հակառակ

կողմեն դրամ. ու չկային երկուքն ալ... Կար կինը աչքերուն մեջ արտասուք և իր ականջներուն մեջ զողանջը։

— Կեցիր այստեղ, մինչև դամ,— պոռաց կնոջ ու վազեց դրացիին։ Հասավ նպարավաճառը։ Հետո կհիշե, թե գացին ոստիկանատուն, հետո ոստիկանները թե՝

— Գիտենք, գիտենք, այդպիսի խումբ մը սրիկաներ կան, որոնք գիտեն, լավ գիտեն նոր խանութ բացող մարդու հոգեբանությունը։ Ինչպիսի մարդ էր...,— ու խնդացին։

— Դե՝... մարդ մըն էր, ինձի պես, ձեզի նման... — ու չկարողացավ խոսիլ, ականջներուն մեջ կզողանջեին զանգերը։

— Ուրիշ առթիվ ուշադիր եղեք։

— Բաժնեկից են,— ըսավ տարեց հայը։— Բոլորը լավ կճանչնան զիրար... Շահաբաժին ունին։

— Խեղճ խաժակ, քու ինչ գործն էր առևտուրը։ Հանգիստ կենայիր տեղդ ու շարունակեիր ուսուցչությունդ։

Կինն էր այդպես խոսողը. և այդպես ալ պիտի խոսեր որևէ մարդ, որ անկեղծ է իր դիմացինի նկատմամբ։

Բայց կինն էր այդպես խոսողը ու ինքը զգաց, որ այդպես պետք չէր խոսեր իր կինը։ Ինչո՞ւ, չի գիտեր. սերը իր ընթացքին և դարերու ամբողջ տեղեկության և՞բ է տրամաբանության տակացեր։

— Գնա՛ տուն,— ու կինը գնաց։

Ուրիշ հաճախորդ չեկավ այդ օրը։ Երեկոյան միայն Արտոն էր, որ եկավ թրջելու նոր բացված «Գրատուն Բաֆֆին»։

— Չէ, ինչ կարիք կա դուրս երթալու և ավելորդ ծախսեր ընելու։ Բաց շիշ մը, ջանս, և լավ տեսակեն, ոչինչ, այդքանով ալ կզոհանամ։

Բացին վիսքիի լավ շիշ մը. դինը՝ տասնյոթուկես ոսկի։ Խոսակցության ընթացքին.

— Անփորձ ես, ջանս,— ըսավ Արտոն,— ինչ տեղը կար. այդ դրացիդ հետդ բերելու,— գայիր միասին կերթայինք և այդ շահը մեզի կմնար։

— Ո՞ր շահը։

— Դրացիինդ. չէ՞ որ ան միջնորդ հանդիսացավ հարյուրին երեք շահաբաժինով։ Երեք հազար ոսկիի ապրանք,

իննսուն ոսկի մաքուր շահ, մաքուր,— ու մաքուրը երկարեց ու խմեց վիսքին։

— Գնա քիչ մը պիստակ միստակ բան բեր, չանս...

Արտոն գնաց ու նպարավաճառեն պարտքով պիստակ վերցուց։

— Է՜հ, ախպերս, կսորվիս, հատե՜, հատե՜ բաց շիշ մըն ալ, մաքուր իննիսուն ոսկի, ոչինչ, այս անգամ աժանոց հատ մը բաց։ Բայց ուշադիր եղիր, ուրիշ առիթով չխմես։

Խաժակ Լևոնյանը այդ գիշեր ատեց կյանքը ևս։

Բայց երբեմն սրբազան ատելություններ կան, որոնք մեծ, խոր ու անըմբռնելի սերերու հետագա պոռթկումին ծիլերն են։

Անըմբռնելի՜ սերերու...

Չէ՜ որ Խաժակ Լևոնյանը խենթի նման կսիրե կյանքն ու գրականությունը։

4

Ըսված է, թե ձախորդություններուն ու դժբախտություններուն կհաջորդեն հաջողությունները, թե անսպասելի տեղե մը կնայիս օր մը անակնկալ հաղթանակի դուռ կարող է բացվիլ և վերիվայր ընել ամեն ինչ։ Այդպես ըսված է և թող տարօրինակ չթվի, որ կյանքի շոր ու մերկ առօրյային վերցված մեր վիպակի հերոսին հետ պատահեցավ նույնը։ Անցեր էին շարադուշակ ու մութ ամիսներ. շարժման հետքն անգամ չկար խանութին մեջ. Խաժակ Լևոնյանի կյանքը դարձեր էր խոր մղձավանջ և անտանելի առօրյա։ Քանի-քանի անգամ ան հազիվ զսպեց ինքզինքը խանութի մերկ պատերուն մեջ չխելագարվելու համար, քանի-քանի անգամներ դժվարավ ետ պահեց բռունցքները, որպեսզի ջարդուփշուր չընե իր վաճառատան ցուցափեղկին ապակիները։ Քանի-քանի անգամներ զսպեց ներքին անդուսպ պոռթկում մը, գլուխը առնել երթալ, ո՞ւր, ինքն ալ չի գիտեր, երթալ, երթալ հեռու մարդոցմեն, աշխարհեն։ Ամիսներ էր անցեր ու ձեռքը գրիչ չէր վերցուցած. ինչպե՞ս կարող էր

վերցնել, երբ օրվա դժոխային հոգեվիճակին ետք քավարանի մը տեսքն իսկ չուներ տունը։

Տան մեջ իր նկատմամբ, իր անճարակության նկատմամբ ցուցաբերված լուռ արհամարհանքը, մոր թաքցուցած արցունքոտ աչքերը, մանավանդ մոտալուտ վաղվան գորշությունը՝ խանութին ու տունեն դուրս շպրտվելու շոշափելի դարձած իրականությունը սկսեր էին խանգարել իր ջիղերը և իր երազին խառներ էին երկու սև աչքերու խոժոռ նայվածք, որը իր հորն էր, հորը աչքերը՝ անկյան, անգերեզման մնացած կմախքի մը սարսափեցնող գանկին։ Խոռոչներեն զինքը դիտող։ Որոշեց կողոպտել մեկը. վրեժը լուծելու համար իր կողոպտված կյանքին։ Ու ծրագիրներ մշակեց խանութի առանձնությանը մեջ. բայց հարկ չմնաց ծայրագույնին դիմելու։ Մնաց, որ այդ իր ամենախոշոր, ամենամեծ ողբերգությունն էր ըլլալու։ Չէ՞որ ինք կարող չէր մրջյունի մը կյանքին սպառնալու, ուր մնաց իր նմանին։

Այո, հարկ չմնաց, որովհետև իր հետ միասին կատարվածին համար շշմեր մնացեր էին շրջապատի խանութպաններն ու թաղը ամբողջ։ «Գրատուն Բաֆֆին» դարձավ ո՛չ միայն իր շրջապատի, այլև քաղաքի լավագույն առևտուրն ընող հաստատություններեն մեկը։ Հիմա, առավոտ կանուխ, տակավին ինք խանութ չհասած, կանգնած, իր ժամանման սպասող, հաճախորդներ կային. և փեղկին բացվելեն մինչև փակվիլը գնումներու ընթացքը ընդհատում չէր ճանչնար գրեթե։ Վերցվեր էին, ավելի ճիշտ շորս— հինգ հարյուր ոսկիի վնասով ետ էին վերադարձվեր բոլոր խմիչքի երփներանգ շիշերը և բոլորին տեղը, նույնիսկ կրկնապատկված դարակներու շարքերուն վրա լեցվեր էին գիրքերը։ Իսկական գրատուն։ Վաճառված գիրքերը ոչ բուլվարային գրականություն էին, ոչ ալ սեռային սանձարձակության թեման որպես փրկություն ընտրած հաստափոր վեպեր։ «Գրատուն Բաֆֆի»-ն պայմանագրություն էր կնքած արաբական ծանոթ հրատարակչական տան մը հետ և այդ հաստատությունը իր վերջերս ստանձնած սովետական գիրքերու ներկայացուցիչի հանգամանքը վստահած էր Խաժակին։ Հիմա վաճառվածը Չարենցի, Բակունցի, Պարոնյանի և մեր դասական գրողներու

բազմագույն և բազմերանգ հատորներն էին և մարդկային հոսքը դադար չուներ գրեթե։ Շաբաթը մեկ անգամ երկու, Լևոնյանի խանութին առջև կանգ կառներ պետական փոստի մեքենան և տասնյակ տոպրակներու մեջ լեցված հարյուրավոր գիրքեր ջրվեժի մը նման կհոսեին ներս, անկե ալ իրենց լույսը սփռելու համար սփյուռքահայ գրասեր մարդոց հոգիին։ Խաժակ Լևոնյանի աստղը սկսավ փայլիլ, բայց հիմա կրկին ան չէր կարող գրել, օրվա հոգնությունը կսպառեր զայն, բարեկամներ և «հարազատներ» որքան ուզես և տակավին բոլորին բերնին մեջ ծամծմվող իր գրողի հանգամանքը։ Դադրած էր վաղուց գրելե և այդ իր գլխավոր տառապանքն էր. հիմա կար սակայն այդ տառապանքին բալասանը։ Խաժակ Լևոնյանը իր հարազատներու կարծիքին հակառակ առաջին անգամ ատեց նաև գրամը և զարմացավ, երբ նկատեց, թե կյանքի մեջ-կան նաև, թեև քիչերու տրված, բայց կան նաև... անբմբռնելի ատելություններ...

«Գրատուն Բաֆֆի»-ի հաղթանակի օրերը չունեցան երկար կյանք. իջավ նախանձի և կիրքի, քաղաքական կիրքի սև թաթը։ Այդ կիրքը նաև երևան եկավ փոքր խափանարարական արարքներով, հետո ստացավ առավել մեծ բնույթ։ Անձնական սպառնալիքներու, քուլիսային բամբասանքներու թափը փոխեց ուղղություն և հայրենասիրության անունով շարաշահության ելած մարդիկ սկսան հայ գիրքի և ամսաթերթերու սպառման դեմ տեղեկանքներ և ամբաստանագրեր տեղացնել պատկան իշխանություններուն։ Խափանվեցավ վաճառքը «Սովետական Հայաստան» պատկերազարդ ամսագրին, «Գրական թերթ»-ին և օրաթերթերուն, տակավին սկսան արգելք դնել գրական որոշ գիրքերու վրա։ Այդ բոլորը կրձգտեին սարսափի առաջին սերմերը ցանել Խաժակ Լևոնյանի հոգվույն մեջ, որպեսզի ձեռք քաշե գործեն։ Բայց պիտի ըսել առևտուրը այս ձևի, ստացավ ավելի հաճելի ընթացք. պայքարը ապրուստի համար դարձավ պայքար մը, որ ուներ հաճույքներու ամենագեղեցիկը. իմաստալից դարձնել առհասարակ առևտուրով սկսած իր «պարտությունը» կյանքեն։ Ու անձը լարեց իր ջիղերը դավերուն դեմ։

Առավոտ էր. կեցավ փոստի մեքենան և ըստ իր սովորութեան պարպեց իր համար տհաճ, բայց Լևոնյանի և իր հաճախորդներուն սիրելի բեռը։ Օգոստոս ամիսն էր, լիբանանյան ամռան այն անտանելի օրերեն մեկը, երբ արևը շիկացած կուպրի մը նման կնստի սալահատակներուն և հագեցած օդը անզոր է ծծելու մարդկային աղի քրտինքը։ Խաժակը փակեր էր դուռը և կքանդեր ծրարներն ու կդասավորեր գիրքերը։ Բաֆֆու հատորներն էին։ Կեսօր էր եղած և ինքը ուժասպառ էր արդեն։

Հարկ էր տուն երթալ և քիչ մը հանգստանալ։ Հիշեց մանավանդ, որ տանը այդ օր առանձինն էր մայրը։

Հազիվ էր հասեր տուն և լվացվեր, երբ հնչեց դռան զանգը։ Իր դրացի տարեց հայն էր։

— Պաշարեր են խանութը. վեց-յոթը ոստիկանական մեքենաներով և քեզ կփնտրեն...

— Ի՞նչ բանի համար։

— Չգիտեմ...— ու մեկնեցավ։

Մորը դեմքը սպիտակեր էր և ահագնած կդիտեր տղուն։

— Ոչինչ, մայրիկ, լեցուր ճաշը։

Զարկին դուռը. մարդկային հսկա շուքեր կային դռան առջև։ Բացավ։

— Դո՞ւք եք խաժակ Լևոնյանը։

— Այո՛։

Հրեցին կոպտաբար ու մտան ներս։ Կարծես դիտմամբ ընտրված բազմութիւն մըն էր խոժոռ դեմքերու, թիկնեղ ու լայն ուսերու, հուժկու բազուկներու և... կապտած շրթունքներու։ Ինքը կրցավ հաշվել տասնըհինգը։ Հետո թալան մըն էր կարծես։ Բացին իր գրադարանը։

— Հը՞... Լենին։

— Արտոնված գրքեր են։

— Լռե՛, հայի կտոր, ո՞ւր են քու գրածներդ...

— Հոս են։

— Տո՛ւր։

— Բայց բոլորն ալ տպված են և արտոնված։

— Լռե՛ ըսինք։

Եվ խաժակ Լևոնյանը հասկցավ ամեն ինչ, սկսավ

ծիծաղիլ... Խառնշակեցին անկողինները, դուրս թափեցին բարձերու բուրդերը, խոհանոցի առարկաները ու տոպրակներու մեջ լեցուցին այն ամենը, ինչ որ դիր էր ու գրականություն։

Մայրը ուշաթափվեցավ...

— Երթա՛նք։

Ու գացին, թողած մայրը այդպես ուշաթափ տան բարերուն։ Թաղը ոտքի էր, ավելի ճիշտ զգալի էր, որ ոտքի է, որովհետև Լևոնյան զգաց իր խանութը բացած առաջին օրվա գաղտագողի նայվածքներու շարանը և զգաց հեքը դիտողներուն։ Տեսավ նույնիսկ գոհունակություն բաղմաթիվ ակնարկներու, որոնք չկային այդտեղ...

Խանութը ստացավ այն տեսարանը, ինչ որ տանն էր...

Բայց ինչ որ տարօրինակ էր, գտնվեցավ ծրար մը, որ չգիտես ինչու առավոտյան բերված ծրարներու մեջեն վրիպեր էր Լևոնյանի ուշադրությունեն...

Բացին և արգիլված... «Սովետական Հայաստան» ամսագրի տասը օրինակներ էին...

— Երթա՛նք։

Ու գացին։

Հետո կհիշե, թե ինչ-որ հսկա շենքի մը գետնահարին էր, ուր մնաց առանց հարցուփորձի երկար, շատ երկար ժամանակ։ Ինչ-որ մարդիկ կային այդ գետնահարի խոնավ փոքր սենյակին մեջ, ուր չկար անհրաժեշտ պետքերու համար ո՛չ մի միջոցառում և ուր կային, սակայն, ուտիճներ, ուտիճներ... երկու մատի հաստությամբ։ Հաճախ կտանեին իրենցմե մեկն ու մեկին ու տեղը կբերեին երկուսը, երեքը։ Չկար նստելու տեղ նույնիսկ։ Երբ գինքը հանեցին վեր, զարմանքով իմացավ, որ միայն հինգ օր էր անցեր ձերբակալության օրեն։

— Ի՞նչ կապ ունիս արաբական այդ հաստատության հետ։

— Առևտրական։

— Տեսնենք վճարումներդ։

— Խանութին մեջն են տետրերս։

— Գացե՛ք ու բերե՛ք։

Ու որպեսզի երթան, նախ տարին այլ սենյակ մը ու ածիլեցին երեսը. հետո այդ հսկա ու հաղթանդամ մարդոցմե մեկուն հետ նստեցուցին ինքնաշարժ մը։

Խաժակ Լեոնյանը երբ հասավ իր վաճառատան առջև, հիշեց, որ մայրը այն օրը մնաց ուշաթափ տան քարե հատակին և հետո իրեն թվեցավ, թե այդ ամենը կատարվեր էին ինչ-որ երազի մեջ։ Բացավ փեղկը և տեսավ ավերակ կացությունը խանութին, գնաց քաշեց իր դարակը և վերցուց անհրաժեշտ վճարման թուղթերը...

Կրկին վերադարձան ետ. քննվեցան թուղթերը և առաջնորդեցին այլ սենյակ մը, ուր մայրն էր և իրեն անծանոթ մարդ մը։

Արտակարգորեն փոխվեր էր մայրը, նիհարացեր, դժգուներ ու կը դողար...

— Ջավա՜կս...

— Լավ եմ, մայրիկ, շլաս, կխնդրեմ...

— Չէ՜, չէ՜, յավրուս, պետք եղածին չափ լացեր եմ, ա՜հ, կոտրեր ձեռքս ու այդ նամակը չգրեի. քու ինչ գործն էր այդ բոլորը... թող հասարակ պաշտոնյա մը ըլլայիր որևէ տեղ...

Խաժակ Լեոնյանը իր մորը ներեց այդ խոսքերը, չէ՞ որ միայն մայրական սերն է անշահախնդիր, այդտեղ բացառաբար կործանարար ըլլալու աստիճան արժանապատվություն չի ճանչնար սերը... Բայց բան մը փլավ իր ներսիդին։

— Ո՞վ է այս մարդը։

— Իմ փաստաբանն է. ան ազատեց քեզ։

Ու փաստաբանն էր։

— Հուսամ կազատվիս հիմա, եթե համոզվին, որ միայն առևտրական կապերու համար ես մտեր այդ առևտուրին մեջ։

Համոզվեցան, բայց փաստաբանն էր կրկին։

— Հիմա ալ կըսեն, թե ինչ-որ արգիլված ամսագրեր են գտեր խանութիդ մեջ ու դատի պիտի տան քեզ...

— Իսկ հիմա տուն կարո՞ղ եմ երթալ...

Դժբախտաբար, պիտի երթաս բանտ, բայց ես երաշխավորագին վճարելով կազատեմ քեզ...

— Ե՞րբ...

— Ամենաուշը մեկ ամիսեն։

Մեկ ամիսեն ելավ բանտեն երաշխավորագրով, իսկ նոր ամբաստանությունը ծիծաղելի, բայց վերջիվերջո իրականություն էր...

Նապաթիեի, այսինքն Իսրայելյան սահմանին մոտ՝ արաբական այդ գյուղին մեջ համայնավարական թռուցիկներ տարածել...

Ինք Նապաթիեին ուր ըլլալն ալ չէր գիտեր, բայց ամբաստանված էր այսպես, որովհետև այդ գյուղը Իսրայելյան սահմանին մոտ զինվորական գոտի էր...

Ինք կարգին, կամ առհասարակ արաբերեն ալ չէր գիտեր, բայց պետք էր, որ գիտնար, որպեսզի համայնավարական թռուցիկներ ցրվեր և զինվորական խիստ պատժի ենթարկվեր։

Ծիծաղելի և ծիծաղելիեն անդին բաներ էին այդ բոլորը, բայց վճիռը կայացվեցավ... երեք տարի բանտարկություն։

— Իսկ հիմա ես ի՞նչ կարող եմ ընել...

— Ոչինչ առայժմ, կերթաս բանտ, ես կաշխատիմ բարձրագույն ատյանին դիմել, այս խայտառակությունը ոստիկանության սարքած խաղն է և այդպես չի կարող շարունակվիլ... լեռան գլուխը չենք. վերջիվերջո պետություն և կառավարություն կա այս երկրին մեջ։

Ինք գնաց բանտ ու մինչև որ փաստեցին, թե այս երկրին մեջ պետություն և կառավարություն կա և բարձրագույն ատյան, որը վերջիվերջո կրնա ստուգել, թե խաժակ Լևոնյան կոչեցյալ մարդը չի գիտեր նույնիսկ Նապաթիյեին ուր ըլլալը, «Գրատուն Բաֆֆի»-ի տնտեսական հաշվեկշիռը դադարեցավ գոյություն ունենալե և վաճառվեցան այն ամենը, ինչ կարող էր արդարության հետ չափվիլ։

Խաժակ Լևոնյանին վճիռը որոշվեցավ հետսկոչել և վերաքննել...

Փակ էր «Գրատունը», պարտքի տակ, մեծ տոկոսով վերցված հավելյալ գումարներու երեսեն։

Վերաքննության շրջանին Խաժակ Լևոնյանը կրկին ազատ արձակվեցավ երաշխավորագին վճարելով։

Արտոն խզեր էր իր կապերը։ Ինքը կշարունակեր իր

առևտուրը, որը չուներ նախկին թափը, արաբական այդ հաստատությունը, որ կապ ուներ Լևոնյանի հետ առավել կենտրոնացեր էր իր հրատարակչական տան վրա։

Ընդհանուր ներկայացուցչությունը ստանձներ էր ոստիկանության շատ մոտ անձնավորություն մը, որը գիտեր իր առևտուրին կերպերը և փաստ, որ բոլոր արգիլյալ ամսագրերն ու թերթերը արտոնված էին վերստին։

Խաժակ Լևոնյանը մեղավոր նկատվեցավ արգիլյալ «Սովետական Հայաստան» ամսագրեր վաճառելու համար միայն և մեկ տարի բանտարկության դատապարտվեցավ՝ վճիռը իրագործելի՝ նման դեպքի մը կրկնման պարագային։ Դատարանեն վերադարձին Խաժակ Լևոնյանը գնեց հրապարակ հանված «Սովետական Հայաստան» ամսագրի նոր համարը և տխուր ժպիտ մը սահեցավ շրթներեն։

Այդ տխուր ժպիտի մասին հաճախ է խոհեր ինք, տխուր այն ժպիտը, որ մնաց իր շրթներուն տարիներ ամբողջ, տխուր այն ժպիտը «Սովետական Հայաստան» ամսագրին համար։ Ինքն էր վաճառողը այդ ամսագիրը և իջավ նախանձի ու քաղաքական կրքի սև թաթը. որովհետև ինք հայ էր և ոստիկանությունը հայանուն մարդոց զրպարտագիրները ուներ իր ձեռքին։

Ինքն էր գնողը այդ ամսագիրը հիմա, բայց ծախողը դորավոր մարդ է, արաբ, մեծ առևտրական, ուր անզոր է հայանուն մարդու զրպարտագիրը. պետություն կա, կառավարություն և բարձրագույն ատյան։

Առուծախի մեջ ոչ մեկ փոփոխություն. թերևս այդ առուծախի փոփոխության համար հայ մարդը օգնեց մյուսին և հիմա տես ամենաշատ այդ ամսագիրն է վաճառվողը։

Հուդան պետք ունի իր հայրենասիրության ապացույցը հրապարակով պատցնելու և «Սովետական Հայաստան»-ը պատկերազարդ է, մեծադիր և գունավոր...

Իսկ հայրենասիրությո՞ւնը... Է՜հ, չչարաշահել բառը, չչարաշահել կյանքեն իրապես պարտված գաղափարի խանութպաններուն վերջին ապավենը... Խնդրե՛մ։

5

Խաժակ Լեոնյանի մայրը մահացավ սրտի կաթվածն...

6

Չփակեց իր խանութը, պարպված գիրքերուն տեղ դրավ կնոջական շրթունքի ներկեր, անուշահոտություններ և զանազան մանր ու թեթև առարկաներ, որը կտարածեր իր նման անգործության դատապարտված գրող տղա մը։ Վերցուցեր էր նույնպես ապառիկ, այլևս վարժ էր շուկայի անցուդարձին։ Կառներ այն բոլորը, որ հաստատություններ կվստահեին իրեն։ Գրենական պիտույքներ, մանկական խաղալիքներ, տեսակ մը բարձր ոճի փերեզակի խանութ դարձնելով «Գրատուն Բաֆֆի»-ն և կծախեր այն բոլոր գիրքերը, որոնք կվարանեին վերցնել այլ գրատուներ, քաղաքական վտանգ նախազգալով պարունակությունեն։ Ինքն ալ հրատարակեր էր նոր հատոր մը և կիրքով, լրիվ օրը փակված իր խանութին մեջ, կկարդար ու կգրեր համառելով զսպել բռունցքներուն դողը և չչարդել իր խանութի ցուցափեղկին ապակիները... Առօրյա ապրուստի հոգն էր զինքը գամողը իր նստարանին, բայց սիրտը դուրսն էր, ծովափին ու լեռներուն վրա էր իր սիրտը... Հաճախ հաճախորդ մը կխանգարեր իր մտորումները և երբ ինքը հակված կըլլար ընթերցումի մը սիրտը վերիվայրող փոթորկին կամ պատմվածքի մը կամ հոդվածի մը հոգին տարուբերող ալեկոծումին, ներս կմտներ մանկամարդ կին մը...

— Ի՞նչ արժեն շրթունքի ներկերը...

Առանց գլուխն իսկ շարժելու, հակված գիրքին կամ գրած պատմվածքին վրա։

— Չունի՛նք,— կպատասխաներ ջղագրգիռ շեշտով մը։

— Բայց, պարոն, չէ՞ որ լեցուցեր եք ցուցափեղկը...

— Հա՜, ներողություն, շրթունքի նե՞րկ ըսիք։

— Այո՛,— կկմկմար մանկամարդուհին շվարած այս տարօրինակ առևտրական մարդուն արտակարգ աչքերու փայլեն։

— Խնդրեմ, դուք ինքներդ վերցուցեք։

— Բայց արդյոք ունի՞ք կարմիրի թիվ երեքը։

Կարմիրի թիվ երեքը, գետնի տակն անցներ այդ կարմիրի թիվ երեքը, որուն մասին ինքը գաղափար անգամ չուներ։

— Թիվ երեքը... ա՜հ, այո՛, դժբախտաբար սպառեցավ, տիկին։

Ու կինը դուրս կելլեր կրկնակի զարմացած, կհամենար ցուցափեղկին առջև և թերևս աչքովը, իր սեփական աչքովը հաստատելն ետք, թե ահագին կարմիրի թիվ երեքներ կային շարված այնտեղ, դանդաղ ու վարանոտ քայլերով կվերադառնար դռան, անդամ մը ևս զննելու համար այդ տարօրինակ մարդուն կերպարը...

Իսկ մարդը, որուն սիրտը ծովափին էր և լեռներուն վրա էր սիրտը, կդայրանար ինքն իր վրա, որ եթե զոհը չդառնար զգացումներուն և զոհացներ սա տիկնոջ փափագածը արդեն հացի մը, քիլո մը հացի դրամ շահած կելլար այսօր։

Ու կնայեր ժամացույցին. կարծես ո՛չ թե սեփականատերը ելլար այս խանութին, այլ ընչին ամսականով մը շահագործվող պաշտոնյան, որ պիտի ժամ առաջ ուզեր վերջացնել աշխատանքը և ազատիլ սա շորս պատերու մարդս այլանդակող զորշությունեն։ Մինչդեռ գունագեղ էին միշտ պատերն ու դարակները և՛ առաստաղեն, և՛ ցուցափեղկերեն փայլող նեոնի լույսերը կրոցավառեին խանութը։ Ելլար ժամը յոթը ու փակեր սա բանտը. ժամը վեցն էր տակավին, բայց կար նպարավաճառին փրկարար շիշերը... դինիի շիշերը։

Ու դինին կվերականգներ իր ջիղերու անզորությունը։ Հիմա կերևակայեր, որ պիտի ելլար այն օրը, երբ պիտի իրականանար իր երազը ու ինքը պիտի երթար հայրենիք, պիտի տաներ իրեն մոռնալ այդ բոլոր տեսակի շրթունքի ներկերուն համարներն ու համը՝ իր շրթներուն ու երբ բոցավառ երազներու հաճախանքեն գինով կրկին կուգար նստիլ նստարանին, վերցնելու համար խանութին կղպանքն ու բանալիները, ներս կմտներ բանվոր տղա մը, իր ափերուն ջերմ կոշտությունը դնելով իրենինին մեջ։

— Ընկեր Խաժակ, ձեր վերջին գիրքեն կուտա՞ք հատ մը...

Կդողային ձեռքերը ու կշառագուներ ամբողջ մարմնով, երբ դարակներեն կվերցներ հատ մը իր նոր ստեղծագործութենեն։ Այդ դողին մեջ կար հպարտությունը իր հոգվույն ու երախտագիտությունը իր ձեռքերուն, որոնք գրիչը չէին լքած հակառակ ամեն տեսակի զրկանքներու, իսկ շառագունիլը մարմնին ու դեմքին իր հանգամանքեն էր առևտրականի, որը ստիպված էր իր գիրքը ինք ծախելու։

— Ի՞նչ արժե։

Երկու ոսկի էր գինը, բայց ինք գինով էր երջանկությամբ։

— Տվեք կեսը, մեկ ոսկի։

Կրնար ըսել մեկ ու կես և այդ պարագային գեթ չէր վնասեր ինք. բայց ըսած կգտնվեր մեկ. արդեն տալով կես ոսկի ալ վնասով։ Այդ իր ներքին ստորակայության զգացումն էր, բոպեական անհավասարակշռության տակ ինքնզինք փրկել ջանալը սա բանվորին առջև վաճառականի հանգամանքով հանդես գալեն։

Իսկ եթե մնար իր գիրքին վրա, իր իրավունքը եղող և ո՛չ մեկ շարաշահության հեռանկար ունեցող իր իսկ ստեղծագործության իսկական վաճառման գինին վրա, գեթ, այո՛, գեթ կես քիլո հացի մը դրամը տարած կըլլար տուն...

Իզուր երազ. երբ էր պատահեր, որ հեղինակի մը գրքին վաճառքը փակեր իր ծախսը։ Է՜հ, թող սա հատավաճառությունն ալ տաներ իրմե մյուս կեսը։

Ու ամբողջ «փերեզակի» այդ խանութեն օրվա մեջ վաճառված իր իսկ գիրքին վնասով վաճառքեն զոհ, կելլեր դուրս Խաժակ և կիջներ ծովափ։ Եվ երբ կխորհեր, թե հիմա այդ բանվոր տղան իր օրվա հալումաշող աշխատանքեն նոր հակած է գլուխը իր՝ Խաժակ Լեոնյանի հոգվույն և կիարդար զայն, այո՛, այդ մտածումն իսկ ուժ կուտար իր ջիղերուն։ Չէ՞ որ նույնիսկ մեկ հատիկ ընթերցող հայու մը համար կարժեր այդ պայքարը. մնաց, որ անոնք մեկը չէին, տասն էին, հարյուրը, հազարը ու այդ արդեն կյանք էր։ Տակավին անոնք հոն էին, հեռուն իր հայրենիքին մեջ. մեկով, հարյուրով և միլիոնով։ Միլիոնո՞վ... ահա, ո՞ւր միլիոնները.

հոն պիտի ըլլար գրողին կայքը։ Խաժակ Լեոնյանի աչքերը միջերկրականյան կապույտին էին, այդ կապույտին, լազվարթ տեսք ստացած գիշերային երանգին մեջ խառնված էին մութ զվարճավայրերեն ցոլացող լույսերը, խաղավայրերու և պոռնկատներու երփներանգ ստվերները. չէ՞, այդ կապույտին մեջ իր սիրտը չէր կարող լող գալ, իր աչքերը կարոտ էին բարձունքներու, Խաժակ Լեոնյանի սիրտը լեռներու վրա էր և լեռներեն ալ վեր։ Արարատի տարագիր հարազատն էր ինք, իսկ հոս չկար Արարատ։ Շատ-շատ Արարատի ձյունասպիտակ գագաթի կրկնացոլացումն էր այս Հարդագողի ճանապարհը միջերկրականյան կապուտակ ու բազմամիլիոն աստղերով պլպլան երկնակամարին վրա... Խաժակ Լեոնյանը աչքերը բարձրացուց վեր աստղերուն և այդ աստղերուն մեջ տեսավ իր հոր ու մոր պատկանողը, որոնք իրեն այնպես թվեցան, թե ներողամտաբար կնայեին իրեն։ Այդ աստղերը ինկան իր աչքերուն մեջ ու փոխվեցան արցունքի...

Անցորդները չտեսան իր աչքերուն փայլը...

Խաժակ Լեոնյանը այդ գիշեր տան դուռը բացող իր կնոջ հացի տեղ աստղեր տարավ երկինքեն...

— Դրամը, մանչս, երջանկություն չի բերեր, ձեռքի կեղտ է հասկցա՞ր։

Իսկ աստղե՞ր...

Աստղերը... ա՜հ, կոտտացող կրակ սրտին վրա, կոկորդի մեջ զսպված կանչ խելագարի, ա՜հ, ինչ կըլլար աստղերը դառնային թող տաք-տաք հացի բույր, թող դառնային պանիր, կարագ, թող դառնային մեկ-մեկ սանդվիչ ու թող ինք ծախեր անոնք հատը քսանհինգական ղրուշի. տես ա՜յ ըսեմ, ինչ արժե՞ հացը՝ ձրի աստղ. քսելիք կարագդ, ձրի աստղ, գնելիք պանիրդ ձրի աստղ, քանիի՞ կծախեն, հատը ուղիղ քսանհինգի, այսինքն տղաս, մաքուր շահ բոլորը, մաքուուո՜ւուր, հասկցա՞ր։

Ա՜հ, թե ըլլար այդպես, ո՞վ կարող էր խոսք ըսել Խաժակ Լեոնյանին, չէ՞ որ այն ատեն Խաժակ Լեոնյանը կըլլար էֆենդի, կըլլար ազգային գործիչ, հայրենասեր մարդ, այսինքն... կարգին մարդ, հոգ չէ, թե աստղերը հատնեին իր սրտին, հոգ չէ աչքերուն մեջ, աշխարհի վրա ապրող մարդոց

բազմությունները նման ըլլային մեկական քանհինգանոց-ներ, աշխարհը դիտեր դրամի ցուրտ բիբերով ու թող տաներ այն ատեն սեր, եթե կարենար, չէ՞. թող այդ գիշեր տան դուռը բացող իր կնոջ աստղերու տեղ հաց տաներ ինք. ա՜խ, թող ըլլար տոպրակ մը հաց ոսկիե շինված, այո՛, ոսկիե շինված, զարներ կռնակին. կանգներ ու թե եկավ Արտոն։

— Ա՛ռ,— ըսեր անոր,— ա՛ռ, խոզին մեկը, կշտացիր, կեր, աստղերեն ես ոսկի եմ քամեր, ա՛ռ կեր ու կշտացիր...

Թե եկավ իր ծանոթ խանութպաններեն մեկը. հոգ չէ, թե ան ըլլար խանութպանը գաղափարի թե որևէ այլ բանի. ըսեր.

— Առե՛ք, կերե՛ք, աստղերը ծախեր, ոսկի եմ շիներ, առե՛ք... ու հանգիստ թողե՛ք հանգիստ ինքս ինձ հետ։

Առե՛ք ու կշտացե՛ք. ու թող տար յուրաքանչյուրին մեկ-մեկ ոսկիե հաց, թող ուտեին, հագենային, թող ուտեին. թող ուտեին, ուտեեե՜ին։

Բայց այդ մարդիկ թողեին թող խաժակին. աչքերուն մեջ աստղեր, ձեռնունայն տուն գալ ու իր պարապ, իր դատարկ ափերով սեղմել իր սերը կրծքին, բայց... անցորդները չտեսան իր աչքերուն փայլը...

Խաչակ Լեոնյանը այդ գիշեր տան դուռը բացող իր կնոջ հացի տեղ աստղեր բերավ երկինքեն...

7

Հացի տեղ աստղե՞ր...

Այս վիպակը ուշացած հատուցում մըն է ավերված հոր մը շիրիմին և օտարության ցուրտ հողի տակ անտեր թաղված մոր մը հողակույտին հանդեպ։ Տակավին այս վիպակը վրեժի կանչ մըն է արդար, անթև մանկության մը հաջորդող անխարխափ պատանության մը և իղուր վատնված և անհնար կորած երիտասարդության մը ամենագեղեցիկ տարիներուն համար։ Վերջապես այս վիպակին Լեոնյան Խաժակը այլ մեկը չէ, եթե ոչ ինքը՝ հեղինակը, որի համար օտար մայթերուն վրա ինկող արևը իր ուսերուն իջած էր կուպրի մը այրող ու խանձող թեժությամբն ու կպչունությամբը. և

տակն, թերևս, որ մինչև այժմ ալ ան ավելի է կապված աստղերուն և աշնանային դալկության, քանի տակավին արևը աշխարհի մեջ ապրող բոլոր մարդկանց չէ որ կշերմացնե նույն չափով և չէ՞, որ ան այդ նույն արևը այնտեղ շփոթահար կշանա իր անփույթ ցրված ոսկեթել վարսերով ծածկել իրենց առօրյան գորշ սեղաններու առջև խեղդել աշխատող տղոց, այդ նույն սեղաններուն դրած արցունքը խաղողի ողկույզներուն և այդ բոլորը իր խակ քնքշությամբ հասունացնելե ետք այդ ողկույզները։ Թող այս վիպակը ըլլա նաև ձոնված սերունդի մը, որ քայքայեց ինքզինքը աստղերուն հասնելու անկարելի երազով, որ ծնած էր գրող, եղավ խանութպան, բանաստեղծ էր ծնած, բայց կյանքն ստիպեց, որ իր առօրյան մաշեցնե մութ ու խոնավ առևտրական հիմնարկներու ստորացնող պայմաններուն տակ։

8

Խաժակ Լևոնյանի աչքերուն մեջ մարդիկ աստղեր տեսան Երևանի մեջ՝ աչքեր, աստղերու փայլով մշուշված...

ԿԱՊՈՒՅՏ ՄՈՐՄՈՔ

Արևը վարագուրվեց արևմուտքում, շղարշվեցին մղկիթների գմբեթները, աշնանային մեղմ անձրևը կարծես միլիոնավոր ասեղներով սկսեց ծակոտել ծովի հայելանման մակերեսը։ Նավի ցոուկին, ուր կանգնել էի, դատարկվեցին նստարանները, մարդիկ հապճեպով ներս փախան, մնացի մենակ։

Անթարթ նայում էի մոտեցող քաղաքին, քաղաք՝ ուր ապրում էին միլիոնուկես մարդեր, իսկ ես, ինքս ինձ, մարդկային այդ բազմության մեջ, սաստիկ առանձին էի զգում։ Ուզեցի սիգարեթ վառել, չհաջողվեց։ Անվարժ էի, նոր էի փորձեր անում ծխելու և... սիրահարվելու։

Թեպետ այն օրերին յուրաքանչյուր աղջիկ, մանավանդ երբ դալկադեմ էր լինում, թվում էր իդեալային, յուրաքանչյուր շենք դիշերները, պլպլացող լույսերի տակ ինչ-որ երազի դղյակ, բայց դարձյալ, հակառակ այդ բոլորին, առավել մենակ էի աշխարհում, մենակ և սիրահարված, թե ո՞ւմ՝ չգիտեի։

Թերևս աշխարհն էի սիրում, մարդկանց, թռչուններին, ծովերն ու լեռները, համենայն դեպս ոչ կոնկրետ բան, և այդ պիտի լինի պատճառը՝ պայթում էր սիրտս։ Պայթում էր սիրո տանջող անորոշությունից և բեռնվածությունից։

Մի տաս-տասնհինգ րոպե հետո նավը կանգ էր առնելու նավամատույցում, և ես խառնվելու էի հազարավոր մարդ-

կանց հոսքին, գնալու էի մեթրո: Այն օրերին Խաթամբուլի մեթրոն նույնպես ինձ թվում էր տարօրինակ բախտավորություն, իր՝ թերևս աշխարհում գոյություն ունեցող մեթրոների ամենակարճ և նախնական երկաթգծով և սարքվածքով: Աշխարհի մասին գաղափար չունեի, թե չէ, կարելի՞ էր միթե սիրել բոլոր մարդկանց, նույնիսկ ասենք՝ թռչուններին...

Եվ հիմա, ոչինչ, մտածում էի սատակացող անձրևի տակ արդեն լրիվ թրջված, քիչ հետո կլինեմ կինոների մուտքի մոտ, կդիտեմ սիրահար զույգերը, կնախանձեմ, կքայլեմ և կանգ կառնեմ վաճառատների ցուցափեղկերի առաջ. շքեղ ու ճոխ զգեստներ կընտրեմ իմ ապագա սիրածի համար: Ի՞նչ անել, որ ոչ սիրած ունեմ և ոչ էլ շքեղ իրեր գնելու փող...:

Երազը չէ՞ որ ձրի էր այն օրերին էլ...

Հետո կընկնի մութը, երևի անձրևի տակ կքայլեմ փողոցներով անփույթ ու անտարբեր և կնայեմ պատուհաններին: Լույսեր կվառվեն, և կհանգեն ուրիշները, ես լաց լինելու չափ երջանիկ, ծիծաղելի լինելու չափ դժբախտ կզգամ ինձ:

Հիմար,— մտածում էի հետո,— կլինի՞ կյանքում մեկը, որ անձրևի տակ հանույթ կզգա քեզ հետ ման գալով, կպրկվի՞ սիրտը ծովի կարոտով և հիմարություններ որոնելով երջանիկ կզգա՞ ինքն իրեն: Կլինի՞ երբևէ այդպիսի մեկը և մարդիկ չե՞ն խաթարի այդ երջանկությունը, չե՞ն ասի,— խելառի մեկն է,— դրամի այս դարուն, չե՞ն ծիծաղի քո վրա...

Ծովն էր, որ փոթորկվեց ցավից, հյուսիսից մրսեցնող քամի էր փչում, ի՞նչ կլինի վերցնի նավն և իր փրփրալի բաշերի վրա տանի հետո՞ւ, հետո՞ւ աշխարհներ: Ինձ թվում էր, որ հետու աշխարհներում ամեն ինչ հեշտ կլինի, կլինի արև, կլինեն մարդկանցից՝ լավերը, թռչուններից՝ ծիծեռնակները, ծովերից՝ աչք առնող կապույտովը, լեռների մեջ՝ մայրիներով, կանաչով և բարդիներով ծածկվածները... Ի՞նչ իմանայի, որ բուերին հարկ էր հանաչել, հրաբուխները տեսնել, խելառ օվկիանոսները, բանսարկու, զգեհիկ և ստոր մարդկանց ծանոթանալ էր հարկ, գնահատելու համար երջանկությունը:

Հասարակ, ամենից դյուրին և ամեն բանից դժվար երջանկությունը...

Է՜հ, պատանի էի, երիտասարդության հաղիվ սեմին՝ էն օրերին։

Դարձա ետև, և ի՞նչ, ինձանից մի տաս քայլի վրա, դատարկ նստարաններին նստել է մի աղջիկ, հավանաբար սկզբից այդտեղ էր եղել, ածխանման երկար վարսերի կրակը հանգել էր անձրևաջրից, կպել էր քունքերին և հետաքրքիր ու հարցական նայում էր ինձ։

— Թրջվել եք լրիվ,— ասում եմ ես և զարմանում իմ անիմաստ խոսքերի, բայց մանավանդ հանդգնության վրա... առաջին անգամն է կյանքումս դիմում եմ անծանոթ և ինձանից տարիքով մեծ աղջկա։

Իր հույն լինելը մատնող թրքերենով և զրնգուն ծիծաղով ձեռ է առնում ինձ։

— Իսկ շատ զարմանալի, դուք...,— ասում է,— Ձեր վրա ոչ մի հետք անձրևից չկա, ո՞ւր էիք թաքնվել...

Միամտությունս է բռնում։

— Ձեզ տեսել,— պատասխանում եմ,— այստեղ էի. ձեր առաջ, հաղիվ տասը քայլի վրա։

Զարմացած կկոցում է աչքերը։

— Ի՞նչ եք ասում,— շարունակում է,— իսկապե՞ս, և ինչո՞ւ համար, խելագարիկ...

— Որովհետև սիրում եմ ծովը և թրջվել անձրևից...,— ամոթահար ասում եմ ես։

Խնդում է լիահագագ, և ասել, որ խնդալու ոչ մի բան չկա։ Ծիծաղում եմ ես էլ, և կարծում եմ, որ այդ բոլորը տեղի են ունենում երազում։

— Աշնանային առաջին անձրևն է,— հանգստացնում է ինձ,— բախտաբեր է, ոնց որ ոսկի լինի, ես նույնպես սաստիկ, սաստիկ սիրում եմ թրջվել անձրևից։ Գիտե՞ք դաշտերում, հողի վրա, անձրևի պահին և մանավանդ դադարելուց հետո զորավոր ես զգում ծառերի ու ծաղիկների, խոտերի և հողի բույրը, իսկ այստեղ ծովում, ես մեկ-մեկ յուրաքանչյուր ձուկի առանձին համն եմ զգում նույնիսկ...

Ես զարմանք հայտնեցի։

— Հապա ի՞նչ կարծեցիք, ասում է,— հապա ի՞նչ կարծեցիք, խելագարիկ։ Նստեք, նստեք, չե՞ք նստի մոտս...

— Նստել, ինչո՞ւ չէ, կնստեմ։— Բայց դողում եմ ամբողջ մարմնով և դա ցրտից չէ, ոչ էլ անձրևից։

Ուզում եմ մտածել ասածների անհեթեթության վրա, ծիծաղել իմ կարգին, թե ձուկերը, լինելով արդեն իսկ ծովի մեջ, ինչպե՞ս են լվացվում անձրևի ջրով, ինչպե՞ս են մաքրվում, բայց լռում եմ այդ մասին և.

— Որտեղի՞ց եք գալիս,— հարց եմ տալիս։

Կապույտ, մուգ կապույտ աչքերը հառում է աչքերիս, ես նրա աչքերի մեջ ամպի ծվեններ եմ տեսնում, կարծես ինչ-որ ուրիշ աշխարհներ են բացվել իմ դեմ, ամպի ծվեններ, որտեղ թաքնված արևի այրող ջերմությունը կա։ Ինձ թվում է այնպես, որ իսկապես նավը վաղուց բարձրացել է ծովի ալեկոծ բաշերի վրա ու ինձ հասցրել հեռու աշխարհներ։ Կարելի՞ է միթե, որ մի պահում ամեն ինչ հստակ դառնա մարդու համար։ Կարելի՞ է միթե, որ մի բոպեում, սրտիցդ ընկնի անորոշության քողն ու ամբողջ բեռնվածությունդ... բայց նա պատասխանել է արդեն։

— Բուրկազից.

Բուրկազը հունական կղզի է, իշխանաց կղզիների մեջ, երազի և սիրո, հունական երգերի և փոթորկուն կրքերի կղզի։ Ես թեպետ շատ եմ ջահել, բայց զգում եմ, որ երբ անձրև է գալիս Բուրկազում և դադարում, զուլգեր կոխոտելով մայրիի թափված շյուղերի վրա անհետանում են թփերի ու ծառերի մեջ։ Անձրևից հետո ծագող արևի տակ ինչ-որ տեսանելի գոլորշի է բարձրանում ծառերի գագաթներից։ Սրճարաններում մնացող հույն բալիքարյանները[1] կիթառի վրա նվագում են սիրո մերժված կարոտից ծնած տառապանքի քաղցրությունը և նա... գալիս է Բուրկազից։

Կանաչ, ծաղկավոր զգեստ է հագել, ամեն ինչ պարզ ու գրավիչ է իր վրա, կարծես մի փոքր, վայրի հոտավետ ծաղիկներով ծանրաբեռ պուրակ լինի, որ վաղուց կարոտել է ջրի և հիմա այնպես հագենալով անձրևից գունավառվել է։

---

[1] Լոթի տղաք (հունարեն)։

Նայում եմ դեմքին, շրթները՝ վրան ջրի ցիրուցան կաթիլներով, շաքարի մեջ թաթախված ելակ լինեն կարծես, սպիտակ թե սրճագույն բծեր կան այտերին, աչքերի վրա շուք անող արտեւանունքներ ունի, որոնք մեխերի նման խրվում են սրտիս։ Իսկ իմ ափերը, սպանիր ինձ, մայրիկ, ինչ-որ այրվում են անհայտ ու անորոշ կարոտից և իմ կամքից անկախ փնտրում են և գտնում նրանը։ Նա հանգիստ, լուրջ, մի ներքին անիմանալի անձնատվությամբ իր ափը թողնում է իմինի մեջ։

— Շատ եք ջահել,— ասում է,— որտեղի՞ց կյանքի այսքան սեր ձեր մեջ...

Այն օրերին չգիտեի, բայց այժմ լավ եմ իմանում, և բոլորը չէ, որ գիտեն այդ մասին։ Խոսքեր կան, որ չպիտի ասվեն երբեք, պետք չէ ասվեն. ես զգում էի այդ, քաշեցի ափս և մատներս տարի աչքերիս։ Նայում է մի վեհացնող թախիծով, իսկ ես չեմ խոնարհում նրանք, գիտեմ, որ լաց եմ լինում, բայց չեմ ամաչում, չեմ ամաչում, որովհետև վիրավորված եմ և նոր եմ դուրս գալիս պատանությունից, թող իմանա, որ իմ սիրտը հեռո՜ւ, հեռո՜ւ աշխարհներում է...

— Ելնե՛նք,— ասում է ինք ու կանգնում ոտքի։

Չգիտեմ ինչքան տևեց այդ ամենը, բայց ես նոր եմ նկատում, որ վերևից ժպտուն և բաղմանշանակ, հայրական հասկացող հայացքով մեզ դիտող թուրք նավապետը աջ ձեռքը ինչ-որ բարձրացրել և բռնել է մի կաշեփոկից... սուլում է նավի շշակը։ Հասել ենք արդեն։

— Չգիտեմ հարկ կա՞ր այդքան հնչեցնելու նավի սուլոցը, չգիտեմ, բայց ես արդեն լավ եմ զգում ինձ։ Տարօրինակ է թերևս, անցել են տարիներ, մոտ քառորդ դար, և ինձ այժմ շատ են հուզում նավերի սուլոցները, հակառակ նրա պարզված երբեմնի խոր ու կազդուրիչ տպավորությանը։ Եվ այդ պիտի լիներ պատճառը, որ ես հարցրի համարձակությամբ.

— Ինչպե՞ս է ձեր անունը։

— Ինչը կփոխի. և դա ոչինչ է նշանակում, խելագարի՛կ,— ծիծաղում է դարձյալ և ձեռքը ուրախ թափահարում ոգում։ Քարափում լիքը մարդիկ են, նայում եմ,

երկաթյա վանդակորմի ետին, դեպի կղզիները կրկին ճանապարհ գնալու պատրաստվող նավի հաճախորդներին հատկացված բաժնում՝ երիտասարդ մի տղա է, բարձրահասակ, թուխ, որ ժպտում է և մարդկանց հրելով անհանգիստ ետ ու առաջ գնում գալիս: Նա մեկնելիս նույնիսկ մոռացավ ինձ, վազեց ընդառաջ և հաղիվ տոմսը հանձնած ստուգող պաշտոնյային, փարվեց տղային:

Նա մեկնելիս նույնիսկ մնաս բարով չասաց ինձ:

Տեսնում եմ նրանց, հիմա ինձանից բավականին հեռու, երջանիկ ու մոռացած աշխարհը ու մարդկանց քայլում են երկուսով:

Ես նստում եմ մեթրոն և ուզում եմ, ուզում եմ, որ մութի մեջ խրված կառաշարները դուրս չգան այնտեղից և գնա՞ն... գնա՞ն ինչքան կարելի է...

Հիմա այդ երկարահասակ, թուխ տղան նրան կինո կտանի և երբ մարվեն լույսերը իր այրող շրթների վրա կղզա շաքարի մեջ թաթախված ելակի համը...

Իմ ափը սակայն այրվում է մի անբանաձևելի, անդիմադրելի կարոտից:

Անցնում են տարիներ, մոռացվում են շատ բաներ ու մեկ էլ հանկարծ անձրև, և մեկ էլ հանկարծ երիտասարդ մի աղջիկ, որի ածխանման մազերը կպել են քունքերին... Գրանըված տեղդ էլ անպատեհ, ավտոբուսում՝ լիքը մարդիկ, նստել է քեզանից մի քիչ հեռու, և չգիտես ինչու նայում ես ու ուզում ես հիշել մի բան, մի լավ ու գեղեցիկ բան: Մարդիկ հրում, հրմշտկում են քեզ, իսկ դու լինելով հանդերձ ավտոբուսի մեջ, արդեն բացակա ես: Անթարթ աչքերդ մեխվել են նրան, չես էլ զգում, որ անհարմար է, չես էլ նկատում: Միայն գիտես, որ նրա դեմքի սրճագույն բծերը, նրա երիտասարդ բերնի ալիքավորված շրթների ալ գույնը ինչ-որ պտուղի է նման և չգիտես որտեղից, «դատարկվում» է ավտոբուսը, ոտնգերիդ գալիս է հեռու ծովերի և լեռների բույրը... դրսում անձրև է: Զգում ես, որ լավն է աշխարհը, մարդիկ, բոլոր ծանոթներն ու անծանոթները. լինեն նրանք ծովերում թե լեռների վրա, դաշտերում թե հանդերում և

ափերդ այրվում են... այո, քառորդ դար առաջ էր, առաջինը կյանքում, ո՛չ շրթերիդ վրա հետք ունես նրանից, ո՛չ էլ մարմնիդ վրա իր մարմնի ջերմությունն ես զգացել. բայց հիմա արդեն գիտես, որ նա ավել է քեզ ավելին, անձնավորությունների ամենաթանկը: Չէ՞ որ նա հանդիսա, լուրջ ու լուռ, առանց ճանաչելու քեզ, անիմանալի մի վստահությամբ ափը դրեց քոնի մեջ և զգաց քո սիրտը, հավատաց, որ դու ևս սիրում ես և հավատում կյանքին...

Երջանի՞կ է արդյոք նա, չգիտեմ, բայց ուզում եմ, որ հիմա երջանիկ, անպայման երջանիկ լինի սա, որ դեմս է նստել և նայում է ինձ. բայց կարո՞ղ է հասկանալ միթե այս ջահել աղջիկը, թե ինչո՞ւ եմ իրեն նայում այդպես, ղո՞ւմ է միթե իմ նայվածքի խորքը... Իսկ եթե ոչ... չէ՞ որ դեռևս շատ, շատ է ջահել նա, և ահա վեր կացավ տեղից, ես հայացքս փախցրի արդեն, բայց ուսիս վրա հանգչել է ափը և մի լեզվով, որ իմ ականջին այնքան հարազատ է հնչում, աչքերի մեջ որդիական զուրգուրանք.

— Հայրիկ,— ասում է,— եկե՛ք նստեք իմ տեղը...

ԲՈՒՐԴՈՅԻ ՏՂԱՆ

Գեւորգի

Արտասահմանի մեջ Բուրդոյի տղան իմ ընկերն էր։ Անշուշտ, ես զինք չէի ճանչնար այդպիսին. հոն իր անունը Սարիկ Արաբյան էր։ Գրող տղա, որուն հայրը, գիտեի, որ սասունցի էր, փոապան ու վաղուց մահացած։ Հպարտ, ազնիվ ու լռակյաց տղա մըն էր, չէի այցելած իրենց տունը, բայց գիտեի, որ մայր, եղբայրներ և քույր ուներ։ Քաղաքներու մեջ մարդիկ այնքան ալ չեն հետաքրքրվիր մանրամասնություններով։ Մենք իրարու հետ լավ ընկերներ էինք, ու այդքան։ Ես եկա հայրենիք վերջնականապես, ու Սարիկը մնաց հեռու։ Մեկ հատ նամակ գրեցի իրեն ու ստացա պատասխանը։

Անցյալները մեր տան հեռախոսը հնչեց.

— Ո՞վ է խոսողը։

— Հասկցիր նայիմ ո՞վ է։

— Կատակելու և հանելուկներ լուծելու տրամադրություն չունիմ,— սաստեցի տհաճ ձայնով մը։

— Ես Սարիկն եմ։

— Ես Սարիկ չեմ ճանաչում,— շարունակեցի նույն խստությամբ։

— Սարիկ Արաբյանը...

— Վա՜յ, տունդ չքանդվի, ո՞ւրկե ուր, տղա։

— Տուրիստ եմ տասը օրով, Արմենիա հյուրանոցն եմ, թիվ 725։

Շարունակությունը գիտեք բոլորդ, որովհետև հայ եք ու հայ մարդը, մանավանդ Երևանի մեջ ապրողը, գիտե, թե ինչպե՞ս կհանդիպին Արմենիա հյուրանոցի մուտքին կամ սրճարանում նման զանգ ստացողները։ Բայց ես հիմա արտակարգորեն կհուզվիմ, երբ լսեմ, թե դիս փնտրողներ կան և այս վերջերս հաճախ կուգան ընկերներ, և ես իմ անցյալես վրեժ լուծելու կիրքով մը կվազեմ ու կհյուրասիրեմ զիրենք։ Որովհետև յուրաքանչյուր այդպիսի հանդիպում ինձի համար անգամ մը ևս փաստ է, թե՝ ես վերջնականապես հոս եմ, թե տանտեր եմ այլևս, երևանցի եմ մեկ խոսքով։

Հետո, ինձի համար մեծ հաճույք է խոսիլ ընկերներուս հետ պողոտաներու, փողոցներու, հիմնարկներու անուններով՝ որպես հին, շատ հին երևանցի։ Վերադառնանք ընկերոջս։

— Հարկ է լուր տանք մերոնց,— ըսավ Սարիկ, երբ երկուստեք սպառեցան նախնական մեր հետաքրքրությունները։

— Ո՞ւմ։

— Հորեղբորս ընտանիքին։

— Ի՞նչ ես ասում, ուրեմն բարեկամնե՞ր ունես հայրենիքում։

— Այո՛,— ըսավ,—հարկ է տեսնեմ Անդրոյին, Տոնոյին, քեռի Օհանին, հորքուր Խանեին, Գալոյին, Էկո բիձային, Սեպուհին, Մկրեին, Խոյին, Դավթի տղոց, Սասունին, Աննամանին...

— Ա՜յ տղա,— ընդհատեցի,— այս որքա՞ն բարեկամ։

— Գյուղ մը ամբողջ, սակայն ես չեմ ճանչնար և ոչ մեկը...

— Հապա այդ շարածդ անունները...

— Լսեր եմ հորմես։

Իսկ ինչպե՞ս է կոչվում այդ գյուղը։

— Թալինի շրջանի մեջ, Շղարշիկ գյուղ։

— Կերթանք վաղը։

Ու մենք գացինք։ Բայց նախքան երթալը, երբ ես հասա Արմենիա հյուրանոցի առջև, տեսա, թե ինչպես գյուղացիներ շրջապատել են զինքը։

— Մանոթացիր, հորեղբորս տղան է, Անդրոն և իր ընկերները։

— Արդե՞ն...

— Լսեր է երեկ, սասունցիները գանգ են տվեր և ինք վազեր, եկեր է։

Մանոթացանք։

— Դուք էլ գալիս եք, չէ՞...

— Եթե ծանրություն չի լինի...

— Ի՞նչ ես ասում, այ բալա, մենք սասունցի ենք հե՞ն...

Ես առհասարակ հայրենակցական նեղ ապրումներ չունիմ։ Քաղաքի մեջ մեծացած տղա եմ, և ինձի տարօրինակ կթվին նման մոտեցումները։ Ճիշտ է, ինչպես ըսի, քաղաքի տղա եմ, բայց կսիրեմ գյուղը, կսիրեմ բուռն ու անբացատրելի սիրով. թե ի՞նչ բանը կսիրեմ, հստակ չեմ կարող ըսել. կսիրեմ, օրինակ, աթարի հոտը, կսիրեմ լիաթոք շնչել գոմերու բարկ օդը, կսիրեմ գյուղական ծուռումուռ փողոցները, գյուղական լավաշն ու պանիրը, տակավին՝ օջախը գյուղական տան... Հետո, հետո՝ գյուղացիական ջերմ հյուրասիրություն, գեղջուկ մարդու անկեղծությունը, գեղջկուհու ամոթխածությունը, մանավանդ մեր հայ գյուղացու անցյալի և ներկայի կյանքի մասին զրույցները և... իմաստություն։ Հայրս չեմ ճանչցած, բայց մայրս, իր ողջության, որքան կհիշեմ, շատ էր պատմած իրենց գյուղի մասին, սիրտս ինչ-որ թելով կապված է այդ բոլորին, հետո, շատ հաճելի է լսել, թե՝

— Մեր գյուղը ուրի՞շ էր...

Յուրաքանչյուր գյուղացու գյուղն ուրիշ է... ամենալավը, ոչինչ, չէ՞ որ բոլորն էլ են լավ։

Բայց զիս խրտչեցնողը գյուղացի չըլլալս է. օրինակ, կարող են հարց տալ անուն ազգանուն և ցավ է ինձի համար, որ ես չեմ կարող ըսել, թե՝ օրինակ, ես այսինչ գյուղի, այսինչ տան՝ Համոյի կամ Լևոնի որդի Գեղոն եմ։ Ստիպված ճշմարիտ անունս կուտամ՝ Գեղամ Սևան։ Ու նկատեր եմ, որ կնային տարօրինակ հայացքով մը.

— Էդ ի՞նչ հայկական անուն է...

Էհ, հիմա ելիր ու բացատրե, թե՝ Սևանը մեր կապույտ

Սևանն է հայրենի, Գեղամը՝ Գեղամա լեռներն են, անշուշտ իրենք ալ գիտեն, թե այդ այդպես է, բայց...

— Ոնց որ չինական անուն լինի... Երկու անուն քով քովի, ինչո՞ւ «յան» չկա վերջում։

Ու իրավամբ կստացվի այնպես, որ տեղ մը ազգանունս կգրեն Գեղամ, տեղ մը անունս։ Տակավին ավելի տարօրինակը կա, զարմանալին. ես չեմ գիտեր, թե հայրս ո՞րտեղացի էր և անգամ մը չեմ գիտեր ինչո՞ւ, ասեր եմ՝ «արաբկիրցի» ու այնպես ալ գացեր է։ Թե ինչո՞ւ «Արաբկիր» շիտակն ըսած, չեմ գիտեր. հավանաբար, այդ օրերուն Արաբկիրի մասին լավ բաներ լսած էի։ Մնաց, որ հիմա, դիպվածով Երևանի մեջ կբնակիմ Արաբկիրի շրջանը։ Այլևս ես ալ կհավատամ, որ հայրս... արաբկիրցի է եղեր։

Այնպես որ, երբ սասունցիներեն մին դիմեց Սարիկին ու՝ Է՞հ՝ Բուրդոյի տղա, Սարո ջան,— ըսավ, ես մեղմ ձայնով մը հարցուցի ընկերոջս։

— Ո՞վ է Բուրդոյի տղան։

— Ե՛ս եմ,— պատասխանեց Սարիկը զգալի հուզմամբ և հպարտությամբ մը։ Ես խեղճացա ուղղակի, առանձնություն ավելի շեշտվեցավ կարծես. ոչինչ, ես կըլլամ՝

— Բուրդոյի տղուն ընկերը։

Հետո թե՝

— Հիմի կերթընք մըր երկիր։

«Մըր երկիր», ա՜ռ քեզ բան. կարծես ինչ-որ սահմաններ պիտի անցնենք, ինչ-որ երթանք՝ հեռու, հեռու...

Ընդամենը մեկուկես ժամ տևեց ճամփան։ Արագածի լանջերուն, բարձրացանք վեր, 1800 մետրի վրա և ահա՝ Շղարշիկը։

Ինքնուն տնտեսություն ունեցող, վեց հարյուր շունչով՝ հայացքը Արարատին դամված գյուղ մըն է ան, ավելի ճիշտը՝ Սասնա ծուռ տուն մը իր ամբողջությամբ։ Բոլորն ալ հեռավոր, մոտիկ բարեկամներ են մեկզմեկու։

Գյուղը ոտքի է մեծով, պզտիկով ու երբ մեզ գյուղ հասցընող ինքնաշարժը, գյուղի ութամյա դպրոցը շրջանցելով, մտավ դեպի գյուղական նեղ փողոցներեն մեկուն մեջ, մենք

ստիպվեցանք դանդաղեցնել ընթացքը և իջնել վար։ Շրջապատեցին մեզ, և լսելի դարձավ ընդհանուր կանչը.

— Բուրդոյի տղան ի՞նչ է։

Առաջինը մոտեցավ իննսունամյա ծերունի մը. բոլորը համփա բացին։ Կարմրակալած աչքերով, պարթևահասակ, կարմրաթուշ, որը երիտասարդական ավյունով մը գրկեց Սարիկին.

— Իմալի՞ս, լաո։

— Էկո բիձան է,— ձայն տվին շրջապատեն։

Հետո, ութսունամյա կին մըն էր, տան մայրը, Սարիկի հարեղբոր կինը... Իմ աչքի առջև պատկերացավ կերպարը սասունցի հայ մոր, որուն առհասարակ, ես ծանոթ եմ գիրքերու նկարներեն։ Լեռներու մեջ հասակ առած, իր ամուսնի կողքին կապար ու վենք կրած ու կոփված հայ կնոջ կերպար մը՝ իր տարիքին մեջ առույգ ու առնական։

— Իմալի՞ս, լաո։

Ու կառնե հիմա ձեռքը իր թոռներուն հասակով երիտասարդ ընկերոջս ու կտանի... շրթներուն։ Ուշ է արդեն, Սարիկը չհաջողեցավ քաշել ձեռքը, բայց զգացի, որ դեղնեցավ։

Հետո եկան այրերը ու սեղմեցին Սարիկը իրենց կուրծքին, ու կիները առին անոր ձեռքը՝ համբուրելու։ Սա ընտանեկան օջախի հիմը, տան սյունը նկատվող առնական բազկի առջև տրված անցյալի տուրքն էր հայ գեղջուկ կնոջ, որ տոկացեր է ժամանակին։ Հակառակ անոր, որ հիմա հավասարվեր էին իրենք ամեն տեսակ իրավունքներով։ Հազիվ անցանք տան սեմեն ներս՝ սենյակներ մեջ մեջի, սենյակներ՝ իրենց մաքրությամբ ապակու պես թափանցիկ, սենյակներ՝ սպիտակ ու լավաշի քաղցր հոտով։ Քառասուն էին, թե՞ վաթսուն, յոթանասուն, թե՞ հարյուր, առնական դեմքեր, անհարթ ու մկրատ չտեսած պեխեր սև, պեխեր ճերմակ, թավ հոնքեր ու աչքե՞ր, աչքե՞ր արծվաբիբ։

— Իմալի՞ս, լաո։

— Իմա՛լիմ։

Լռություն։ Սարիկ Արարյանը իմ ընկերն էր, լռակյաց, հպարտ տղա մը... հիմա, լռության մեջ ձայն մըն է հնծ-

կոլտուքի, որը կփոխվի հորդահոս լացի, վարակիչ է, բայց լուռ են իրենք, կուլա ընկերս...

— Ճիշտ չի՞...

Հարցումը ինձ է ուղղված. բայց ի՞նչ բանն է, որ «ճիշտ չի՞»։ Շղարշիկ գյուղի կոլտնտեսության նախագահն է հարց տվողը։ Ինչո՞ւ համար է օդեն ինկած այդ հարցը, ինչպիսի՞ ապրումներու որպես հետևանք։

— Ճիշտ է, աղբերս։

Ու գոհ է ինքը։ Ճիշտ է, որ լացավ ընկերս։ Ճիշտ է, որ սպիտակ լավաշի պես կբուրեն սենյակները։ Բայց ճիշտ է նաև՝ այն, որ մոտ հիսուն տարիներու կարոտի, թանձր կարոտի պատմություն մը կա այստեղ և հիսուն տարիներ նաև, Մարաթուքի գագաթի կարոտը աչքերուն, օր մը հեռացած Բուրդոն իր զավակն է «ուղարկեր» հիմա... Արագածի լանջերուն, իր հետ ուղարկելով նաև Բուրդոյի տղուն խակ անծանոթ տխուր հուշեր։ Հուշեր թալանի և կոտորածի, ավերի ու ավարի։ Բայց չլացին իրենք, լալու կարիք չունին։ Հեռո՜ւ, հեռո՜ւ անցյալ է այդ բոլորը։

Տալվորիկցի են բոլորն ալ։

— Զավկրներ ունի՞ս։

— Ունեմ,— կպատասխանե Սարիկ,— ես ունեմ երեք զավակ, Աղատ ունե չորս, Վարդան ունե երկու, Հակոբ ունե չորս, քույրս ունե հինգ։

— Վա՜յ, լաո, վա՜յ, էդ ինչ լավ ի։

— Աշնան գնաց Բուրդոն, գարնան սկսեց կոտորածը,— կսկսի պատմել իր հուշերը ութսունամյա Խանե մայրիկը։ Այո, գարնան սկսեց կոտորածը. Սասնա կոտորածը։ Առաջինը չէր այդ, առաջինը եղավ 1894-ին, երկրորդը՝ 1904-ին և վերջապես՝ 1915... կրակ տեղաց, ավեր էր ու ավար, արյուն ու մահ։

— Մը բանա ղըմ տարտիր,— բայց, կխոսի ինք։— Կրակ թափավ մըր երկիր։— Ու կրակ կա հիմա Խանե մոր սրտին մեջ, բայց իր դեմքի գծերը այնքան են սառն, այնքան ահարկու։ Եվ դիմագիծերը բոլորին՝ այնքան են զուսպ ու պրկված, որ սարսուռ կանցնի իմ մարմնեն։— Եկավ ռուսաց զորք ու մնացորդը անցավ Հայաստան։

Եկավ Տոնեն ու մոտեցավ Սարիկին։

— Իմա՞լիս, լառ։

— Իմալիմ...— ու գրկեց հուզված։

Մինչև 1920, չորս տարի է Շղարշիկի մեջ էին. գյուղը կկոչվեր «Սխաճի» և պարսկաբնակ էր։ Իրենք վերցուցին 1916-ին, բայց չդրին քար քարի վրա, մինչև եղավ խորհրդային իշխանություն, այսինքն մինչև անցավ սարսափը թալանին ու կրակին. որովհետև մահ ու արոր բռնել չէին գիտեր այդ ձեռքերը, որովհետև ղենքե ուրիշ բան չէին տեսած իրենք։ Ու սկսավ բարձրանալ տան ծուխը. որովհետև երկիր բսածդ խաղաղություն է, հալալ վաստակ, անհոգ ու աղատ մեծցող թոռներ ու ծոռներ։

— Իսկ թե մի օր...

— Չէ, աղբերս, էկո բիձան է, իր իննսունամյա հայ գեղջուկի իմաստությամբ,— չէ, աղբերս, ալ կրակ չենք ուզի, թե որ լինի, խաղաղությամբ թող լինի։ Հիմի թող գան մեր աղբրտիք օտարությունից, թող գան, շատ գան, լցվի՛նք, լցվի՛նք էնքան, որ տեղ չմնա, հորդի ու հորդի Արարատից։

— Մուրազ մը ունիմ, ըմ մուրազ չառնըմ, չըմ մեռնը...

Էկո բիձայի, Տալվորիկի հին զինվորի փափագն է այդ։

— Էնքան լցվին մեր աղբրտիք, որ հորդի մեր երկիրը։

Ու այդպիսին է արդեն Շղարշիկի Սասնա նոր տունը։ Խանե մայրիկը ունի 22 թոռ. Դավիթն է, Սպարտակը, Օհանը, Սեպուհը, Տալվորիկը, Գալեն, Անդրանիկը, Վանիկը, Հակոբը, Սահակը...

— Փառք էս օրվան։

— Ճիշտ չի՞։

Կոլտնտեսության նախագահն է։

— Ճիշտ է, աղբերս։

Աշնան գնաց Բուրդոն, գարնան սկսեց կոտորածը... Բուրդոն վերջին ակնարկը հառած Մարաթուք սարին, անցավ Աջեմիստան ու վերջ։

Հիմա կսկսի Սարիկի պատմությունը։

Մնաց երկար Աջեմիստան, հետո անցավ Հալեբ, Արաբիստան, բացավ փուռ, ամուսնացավ և աշխարհ բերավ չորս մանչ զավակ ու մեկ աղջիկ։ Նոր անձնագիր էր պետք ու

քանի Արաբիստանի մեջ էր, աղգանունը դրավ Արաբյան, բայց կըսեր միշտ.

— «Երկրի ջուր ուրիշ ի...»։

— Մեղքուկ է,— լսվեցավ շորս կողմեն։ Սարիկը շարունակեց.

— Մարաթուք սարը տասնվերկու ամիս տուման է, բուք ու բորան է, կըսեր, հոս սար չկա. անապատ, ավազ ու փոշի՞...

Ու սարի սովոր մարդը չդիմացավ անապատին, գնաց իր երկրի բարձր սարի կարոտով, վաղ բաժանվեցավ կյանքեն, թողելով որբ ու անտեր իր զավակները։ Մայրը, սակայն, ճիշտ է, սասունցի չէր, բայց այլ գյուղեն եկած հայ կին էր, իր տառապանքով, բայց պատվով մեծցուց իր ձագերը։ Իր տղաները առին բարձրագույն ուսում, ու Սարիկը դարձավ գրող, գրեց գրքեր։ Հիմա այդ պատմության սկիզբեն անցեր է կես դար։ Բայց կան հարցումներ...

— Սպաղանաց Օհանը ո՞նց է։

— Մեռավ անցյալ տարի։

— Հալեբո՞ւմ։

— Այո՛։

— Պելավգի Սմո՞ն։

— Կապրի Բեյրութում։

— Խնձորիկցի Մկրե՞ն։

— Մեռած է վաղուց։— Ու կշարունակվի շարքը։

Կարգը կուգա Սարիկին.

— Անդոյի աղբերը հոս չի՞։

Զոհվել է ֆիննական ճակատում։

— Իսո՞ն։

— Ինկավ Կերչում։

— Չէ՛, աղբերս, չէ՛, կրակ չենք ուզի. կռիվ չենք ուզի. ամեն ինչ, թե որ պիտի լինի, խաղաղությամբ թող լինի։

Ես կսիրեմ իմաստությունը հայ գյուղացու։ Բայց զգացին, որ «օտար» մարդ կա սենյակին մեջ և այդ «օտարը» ես եմ։

— Դու ո՞րտեղացի ես, բալա։

— Ես տեղ չունեմ, հայրիկ...

— Ո՞նց թե տեղ չունես։

Այ եկուր ու պատասխանե...

— Այսինքն, հայրս արաբկիրցի էր, հայրիկ։

— Ոչինչ, էդ էլ լավ երկիր ի։

Ա՜խ, ա՜խ, որքան կուզեի, հոգ չէ թե լավ, գեթ մի տեղ, իսկական հասցե ունենայի ես ալ։

— Ճիշտ չի՞։

Կոլտնտեսության նախագահն է. ա՜յ, ապրես դու, ա՜յ, մատաղ քեզ, ինձ փրկեցիր լաց ըլլալե։

— Ճի՜շտ է, աղբերս, էն էլ ո՞նց։

Էհ տեսնո՜ւմ եք էդ դեմի տունը, էդ տան մեջ Իսահակյանը ապրեց ու աշխատեց մի ամիս...

Տունը կնայի Արարատին, Հայկական պարն է, ու վարը հարթ տարածություններ են։

— Գնացեք էս սև ջրի ափով։

Ու մենք կբարձրանանք վեր։ Դաշտավայրեն զանգակիկներու ձայնն է ու մայունը ոչխարներուն։ Գյուղին փողոցները լեցված են փոքր տղաներով ու աղջիկներով, որոնք կվազեն դիմավորելու արոտավայրեն վերադարձող հոտը։

Ինչ-որ մեկը, ինչ-որ տեղ պատմել է ինձ այդ բոլորը, բայց այդ ամենը մնացեր է հեքիաթ։ Ինչպես հեքիաթի էր նման Անդոյի մառանը, թոնիրը, օջախը տունն ու գոմը, հորթուկը և ճիշտ իր քով դրված բնկալը, թարմ, հերմակ, մարգարտանման հավկիթներ, հետո կար աթարի հոտը, հետո գոմի բարկ օդը, որը ես ծծեցի անհագ տենչով։

Հեքիաթ էր. չէ, հեքիաթ չէ, քանի ես հարցուցի.

— Էլեկտրականություն ունե՞ք։

— Ունե՛նք, աղբերս։

— Հեռախո՞ս, ռադիո՞։

— Ունե՛նք, աղբերս։

— Անգրագետ մարդի՞կ։

— Ութանասունից վերերը։

Ես Անդոյի տան մեջ տեսա հարյուրավոր գրքեր և ի՞նչ՝ Բալզակ, Շիլլեր, Բելինսկի, Գերցեն և դասական մեր ամբողջ

շարքն ու նորերը։ Չէ՛, հեքիաթ չէ, էլ ռադիոյով և էլեկտրականությամբ, Բալզակով ու Բելինսկիով ի՞նչ հեքիաթ։ Հեքիաթը սև ջուրի ափն է, սև ջուրը զուլալ այն ջուրն է, ուր կարող ես նայիլ ու դիտել ժամերով ամպերուն վազքը։ Եվ ամպերը ոսկի են Շղարշիկի կոլտնտեսային դաշտերուն համար. չե՞ս հավատար, հարցուր սերմնացանին։

Սերմնացանը էկո բիձայի թոռն է, թերևս, այն բիձայի, որուն շձգեցին, որ արոր ու մաճ բռնե ձեռքին։ Չե՞ս հավատար, լսե Սասնա երգերը։ Ու հիմա ան հաղթահասակ սերմնացանն է, որ կապեր է գոգնոցը մեջքին, մեջը լիքը ցորենի հատիկ, ինքը՝ ոնց որ Դավիթ Սասունցի, բայց թուր կայծակին հիմա իր ափեն դուրս ցայտող հրեղեն հատիկներն են։ ցորենի, որոնք խշշալով կիյնան սև ջրի ափերը եղերող սև հողերու տարածքին։

— Կանգնի՛ր, սերմնացան։

Ընկերս՝ Սարիկն է։ Կմոտենա ու կվերցնե բուռ մը ցորյան։

— Հավասար շաղ տուր, լաո,—կըսե սերմնացանը։

Խըշ՛շշ... Խըշ՛շշ... Խըշ՛շշ...։

— Սերմնացան, էս մեկը Բուրդոյի հոգուն...։

Ու տրակտորի ձայնն է, որ կպոկե ժայռոտ սարերեն հեքիաթի քարը. բայց քարի հետ ի՞նչ հեքիաթ. է՛հ, իմ հայրենիքի մեջ քարն ալ հեքիաթ է... Մե՛տաքս։

— Խանջյանը, երբ դուրս գար Երևանից, առաջին անգամ ելնում էր էս սարերի վրա, գալիս էր մըր երկիր։

— Անդրանիկն էլ ապրել է մեր գյուղում, հյուր է եղել տաս օր իր ընկերներով։

Ու հեռուներեն արձագանքող երգ մըն է հիմա... քրդերեն երգ մը՝ «Մուշմիլաբուտա» (Մուշը այրվում է)։ քուրդն ու հայը եղբայրներ են, կըսե այդ երգը. խաղաղության ձոն է «Մուշմիլաբուտա»-ն։

... Կվերադառնանք սև ջրի ափով, շամփուրներ են խորոված։ Կրակին վրա թարմ հացն է նոր թխվող տաք-տաք լավաշի և հետո եռացող կաթսան խաշլամայի ու հոսող գինին, կոնյակը, օղին...։

Կուգան տակավին հարևան գյուղերեն, կուգան աշքալուսի։

Գիտե՛ք ինչ, ընկերներ, գիտե՛ք ինչ...

— Մուրազ մը ունիմ, մուրազ չառնիմ, չիմ մեռնը...

Ու կը հնչե զուռնան, դհոլը։

Գիտե՛ք ինչ, ընկերներ, գիտե՛ք ինչ...

— Հիմի թող դան մեր աղբրտիք օտարությունից, թող դան, շատ գան, լիքը, լիքը, էնքան, որ տեղ չմնա, հորդի՜, հորդի՜... Աբարատից։

— Բերքն ինչպե՞ս է այս տարի։

— Որ հասնի ցորենը, դառնա ալյուր, այնպիսի հաց թխենք, որի հոտը բռնի հարևան գյուղերը, չէ թե ի՞նչ հաց... ճիշտ չի՞։

— Ճիշտ է, աղբերս։

Հիմա Երևանի մեջ ենք կրկին։ Կռունկներ ամենուրեք, վերամբարձ կռունկներ, հետո ծուխը հսկա ֆաբրիկներու։ Գանգատ չունիմ ես այդ ծխից։ Թող այդ ծուխը պատե ամբողջ Երևանը։ Ամռան մեջ ենք, բայց անձրև է Երևանում։ Ես կպատմեմ քաղաքին մասին։

— Դե՛, տեսնո՞ւմ ես, Սարիկ ջան, էս փողոցը նոր են բացել, իմ օրով...

Ա՛յ մարդ, լավ է ասել՝ «իմ օրով»։

Ու կբարևեմ անցորդներեն շատերուն։

— Արի՛, ծանոթացիր։

— Ե՞րբ եք վերադառնալու։

— Չորս, հինգ օրից։

Ինչ լավ է, ա՛յ սիրելի, որ ես հոս եմ, ընդմիշտ, հավիտյան. մի օրով էլ չեմ կարող բաժանվել հայրենիքես։

Չէ՜, մի օր իմ զավակներուն ու թոռներուն եթե հարց տան.

— Ո՞րտեղից եք, բալա։

Անոնք կպատասխանեն.

— Քաղաքից։

— Ո՞ր քաղաքից։

— Մայրաքաղաքից...

— Երթա՛նք գինովնանք,— կըսե ընկերս,— երթանք գինովնանք։ Չէ՞, պիտի երթանք գինովնանք։ Թե հարցնեն՝ ինչի՞ համար, ավելի լավ, կըսենք.

— Տիգրան Պետրոսյանը դարձավ շախմատի չեմպիոն։

— Ճիշտ չի՞։

Երևան, մայիս 1963

ՔԱՂԱՔԻ ԼՈՒՍԲԱՑԸ

Ռաֆիկին

Արևը նախ գունատվեց մայթերի վրա ու բարձրացավ տների պատուհաններին։ Ամենուրեք բռնկվեց հրդեհը։ Հետո պատուհանները գունատվեցին, և օրը հևաց լեռների գագաթին, իջավ ձորերն ու կուլ գնաց։ Մթնեց։ Եթե չլիներին նեոնե լույսերը պողոտաների և էլեկտրական լամպերը փողոցների, խավարը կլիներ համատարած։ Բացվեց գիշերը Երևանի վրա։ Ամռային թովիչ, վառվռուն մի գիշեր։

Խաղաղ, գրեթե արվարձանային մի ռեստորանի անկյունում խմում էինք միասին։ Սեղանի շուրջը ծառեր էին, այգու գեղին լույսով ողողված ծառեր։ Երազ էր կաթում տերևներից։ Հեռվից, մեզ թվում էր շատ հեռուներից, գալիս էին կարուսելներում ճոճվող պատանիների ուրախ կանչերը։ Կյանքի ուրախ այդ հևքը հոսում էր գինու բաժակների մեջ և դառնում թախիծ ու տրտմություն։ Ավելի ճիշտ՝ ես տխրում էի նրա՛ համար, նա՛ էր մտահոգում ինձ։ Նոր էինք ծանոթացել։ Ճիշտն ասած, ճանաչում էինք իրար, բայց մեր մտերմությունը արմատացել էր այս վերջին երկու օրում։ Թերևս այդպես թվո՞ւմ էր մեզ։ Չգիտեմ։ Ինքը պատմում էր անվերջ, ես լուռ լսում էի։

— Երեկ քեզնից բաժանվելուց հետո որոշեցի անձնասպան լինել...

Ուզում էր զարմացնել հավանաբար։

— Գնացի քաղաքի Ք... ռեստորանը, վերջին ռուբլի-

ներով ուզեցի էլի խմել։ Ասում էի՝ հարբեմ ու մի բան կանեմ. կկտրեմ երակներս ու վերջ...

Արդեն չէի հավատում, հարբելե ետք անձնասպանություն գործելու դասական ձևը չի զարմացնում ինձ։

— Բայց ինձ փրկեց մի աղջիկ, իսկական, մաքուր ռուս մի աղջիկ, նա տեսել ու կռահել էր իմ վիճակը, հասկացել, որ մի մեծ, շատ մեծ վիշտ ունեմ։ Մոտեցավ, խոսեց երկար, շատ երկար, կշտամբեց ինձ։ Ասաց թե ատում է տկար մարդկանց, ինչո՞ւ եմ ես տկարացել այդքան, թե՝ չե՞մ ամաչում արդյոք արածներից։ Ա՜խ, ինչքա՜ն լավն էր նա, իսկական մարդ։ Հավատա, ինչ որ պատմում եմ՝ ճիշտ է, կարծում ես սո՞ւտ եմ խոսում... Հետո, լսիր, մենք ման եկանք փողոցներով, ես մի քանի ժամվա ընթացքում սիրահարվել էի նրան, իսկ նա այնքան, այնքան գեղեցիկ էր... Հետո...

— Երևանի՞ց էր։

— Ոչ, Մոսկվայից, ճարտարապետ, եկել էր ընկերներով ինչ-որ խորհրդակցության մասնակցելու։ Երեկոյան ուշ, շատ ուշ ես ուղեկցեցի նրան մինչև հյուրանոցի իր համարը։ Մի պահ տխուր նայեցի աչքերի մեջ, չէի ուզում բաժանվել, լացս գալիս էր։ Հասկացավ... Բայց մերժեց ու փակեց դուռը երեսիս, կողպեց։ Վիրավորվել էի և գիտե՞ս ինչ արեցի, եթե պատմեմ՝ չես հավատա։ Թակում եմ իր համարի աշակողմյան դուռը՝ փակ է, կողպված։ Փորձում եմ երկրորդ, երրորդը... Երրորդում մարդ չկար, և դուռը բացվեց։ Մտնում եմ ներս ու խոյանում պատշգամբ։ Գինով եմ, գրեթե հարբած, գտել եմ անձնասպանության կերպը։ Պատշգամբների հեռավորությունը իրարից գրեթե մեկ մետր է, թերևս մեկ ու կես։ Վճռում եմ ցատկել մեկից մյուսը ու հասնել նրա պատշգամբին։ Պատկերացնո՞ւմ ես, չորրորդ հարկում եմ, իսկ եթե սայթաքե՞մ, եթե չկարողանամ ցատկել։ Բայց խորհում եմ, սա կլինի մահերից ամենալավը։ Պատկերացնո՞ւմ ես, ինչ լավ կլինի։ Ջախջախված մի մարմին մայթերի վրա և այդ բոլորը հանուն աշխարհում մի լավ աղջկա...

— Չգիտեմ, թերևս...

— Ու ցատկեցի առաջին պատշգամբը։ Դողում էին ոտքերս, հետո երկրորդը, երրորդը։ Գլուխս պտտվում է.

ծնում եմ պատուհանը, նա սարսափահար կանգնում է իմ դեմ, կիսամերկ վիճակում: Աչքերը բացել է մեծ, շատ խորը, ու ես այդ կապույտ աչքերի ահի մեջ մի պահ կարծում եմ, թե արդեն մահացել եմ վաղուց, կարծես ջախջախված ուղեղով դիտում եմ երկինքը: Նա նայում է պատշգամբներին, նայում է երեսիս ու սարսռացող մատներով դիպչելով ինձ զգույշ ներս է քաշում: Իսկ ես, հավատո՞ւմ ես, բարձրացել եմ իմ աչքին: Ես վարվեցի հերոսի նման, նա հասկացավ, որ ես փոքր մարդ չեմ, և ես դեռ շատ բան կարող եմ անել կյանքում: Նայում է ինձ ընկճված, հիմարն ես դու, ասում է, խելագարի մեկը, հապա եթե մահանայիր, կարծում ես հերոսություն էր արածդ: Ես չեմ սիրում աննպատակ զոհաբերումները կյանքում, դա սոսկ տխմարություն է, ուրիշ ոչինչ...

Ցնդուամենայնիվ, ես դուրս եմ գալիս սենյակից հպարտ և ասում եմ.

— Սիրելի Վալյա, թող լինի տխմարություն, իսկ եթե ցանկություն ունես տեսնելու խելագարիս, գուցե հանդիպե՞նք վաղը...

Նա շփոթված կանգնել է դռան սեմին, աչքերի մեջ արցունքներ...

Հուզվել էր ինքն էլ, նայում էր աչքերիս մեջ, հավանաբար իր պատմածի տպավորության խորությունը չափելու համար: Ես չէի հավատում իր պատմածներին, բայց այդ բոպեին զգացի, որ սիրում եմ նրան, այդ հսկա, գեղադեմ տղային: Սիրում եմ, որովհետև իր երևակայության թափը գրավեց իմ սիրտը: Այս պատմվածքը գրելուց առաջ ես ստուգել եմ հիշատակված հյուրանոցի պատշգամբների տարածությունը և համոզվել, որ այդպիսի բան երբևէ չէր կարող անել: Սարքեց, կարգին սարքեց, բայց լավ էր. ճաշակ կա, խենթություն և ռոմանտիկա: Զարկի ուսին և.

— Ելենք,— ասացի:

Նա սեղանից բարձրացավ արծվի խոյանքով, տարածեց իր հուժկու մարդու բազուկները, շնչեց խորը և...

— Ես խելագարի նման սիրում եմ իմ հողը,— ասաց:

Մանուկ է, հսկա կազմվածքով մի մանուկ և ի՞նչ հիմար

գործերի մեջ է խառնվել տակավին... Երրորդ օրն է այսօր տուն չի գնացել, թափառում է փողոցներում հոս ու հոն, խմում հանդիպողի հետ։ Ինձնից քաշվում է մի քիչ, դրա համար էլ ուզում է հավանաբար մթնոլորտը թեթևացնել երգներով։

— Տուն չգնա՞նք,— հարց տվի իրեն։

— Ոչ,— պատասխանեց,— ուզում եմ այս գիշեր էլ չգնալ տուն...

— Բայց այդպես շարունակել չի կարելի։

— Այս գիշեր էլ, իսկ վաղը, վաղը ես գիտեմ, թե ինչ կանեմ...

— Իսկ գիշերվա համար ի՞նչ ես առաջարկում։

— Դո՛ւռ ասա։

Ես հեռու եմ նման դեպքերում կամքի ուժից, մանավանդ, որ նա ինձ վերին աստիճանի հետաքրքրում էր։ Հետո ես գիտեի, որ նա նախորդ գիշեր նույնպես անկարգություններ էր թույլ տվել և ընկել միլիցիա։ Այնտեղ նրան չէին հասկացել և վերջապես հասկանալու էլ պետք չունեին։ Եվ պատահել էր անխուսափելին։ Նա վերին աստիճանի վատ էր դրսևորել իրեն։ Ակտ էին կազմել, ստորագրել, կնքել և ուղարկել հիմնարկ։ Պարտականություն էին կատարել։ Նա լավ գիտեր, թե ինչ էր սպասում իրեն, և վստահ էր, որ ակտից հետո չէին կարող ներել, ուրեմն կանխել էր. գնացել էր նույն վիճակով հիմնարկ և տվել հրաժարականը։ Դիրեկցիոն հաստատել էր և վերջ։ Ամեն ինչ կատարվել էր բոպեական ճշգրտությամբ, օրենքի և կանոնի սահմաններում։ Ես նույն օրն էլ հանդիպեցի նրան և ահա «նշանավոր» գիշերից հետո էլ շարունակում էինք միասին։ Օրվա ընթացքում, ասացի նրան, որ կաշխատեմ բարեխոսել։

— Իզուր է, հարկ չկա,— պատասխանեց։

Ինձ ուրախացրեց իր մերժումը. մերժման մեջ ափսոսանք կար, ցավ, վիշտ, որ հեռացրել էին։ Բայց ինքը չէր ուզում խոստովանել։ Ես բոպեապես հիշեցի, որ բավական օրեր առաջ հանդիպել էի մի անգամ նրան փողոցում, էլի հարբած վիճակում, գործի ժամին էր, իսկ նա առաջարկում էր խմել։

— Հապա հիմնա՞րկը։

— Թո՛ղ,— ասաց։

— Բայց չի կարելի այդպես...

Հետո ինձ համար էլ անսպասելի, նա խորհեց բարձրաձայն.

— Ինչո՞ւ են ինձ ներում հաճախ։

Այդ նախադասությունն ինձ ստիպեց մտածել երկար։ Երբ առավոտյան գնացի հիմնարկ խոսելու, ասացին, որ իղուր է իմ միջամտությունը, ծանր տեղեկանք կա նրա մասին, և լավ է շխառնվեմ գործին։

— Նա լավ տղա է,— ասացի։

Նրանք նայեցին ինձ զարմացած։

— Իհարկե, լավ տղա է, մենք հո տարիներ աշխատել ենք նրա հետ, ծածկել իր սայթաքումները, ներել միշտ, բայց նա շհասկացավ, նա մեղ ամոթով թողեց։

Ես այդ բոլորը, իհարկե, չպատմեցի նրան, բայց այժմ վստահ էի, թե նա գիտեր, որ վերջացած էր ամեն ինչ։ Նրա «անձնասպանության» առասպելը ծագում էր հենց նույն հուսաբեկումից։ Նրան առաջին անգամ կյանքում, մեղմ ու անուշ խոսքերից հետո միանգամից դուրս էին շպրտել շարքից, թերևս խղճահարվելով, թերևս անզոր միջամտելու, չէ՞ որ ինքն էր գրել իր հրաժարականը։ Հարվածը իջել էր շեշտակի։ Ես հասկանում էի նրան, նա շփացել էր այնքան, որ նույնիսկ չէր ուզում հավատալ կատարվածին։ Վալյան խիստ էր խոսել իր հետ, կշտամբել՝ և նա սիրել էր նրան, այդ ռուս աղջկան։ Հետագայում, դիշերվա ընթացքում, նա պատմեց այդ աղջիկ անզիջող, առնական բնավորության մասին և ասաց Անյան, մի այլ անգամ Անուշկան,— շփոթում էր,— իսկ ես համոզվեցի, որ գոյություն չէր ունեցել այդ աղջիկը. նա երևակայում էր իր համար, քնացնում խիղճը, իր երազի մասին էր պատմում։

— Ինչո՞ւ էին ինձ ներում հաճախ...

Այդ նախադասությունը մեխվել էր ուղեղումս։ Աշխատում էի վերլուծել. Վալյան մերժել էր ու փակել դուռը երեսին, և այստեղից ծայր էր առել նրա «հերոսությունների» ու

«ասպետությունների» շարքը. «ես դեռ ինչե՞ր կարող եմ անել կյանքում, բարձրացել եմ իմ աչքին»,— ասում էր նա։

— Ասա, ի՞նչ ենք անելու գիշերը...

Ես վճռեցի մնալ, խոսել և հանգստացնել նրան.— եթե ուզում ես, կարող ենք գնալ գերեզմանատուն, կայցելենք մեր մեծ մեռելներին։ Այնտեղ հետաքրքիր է։

— Խմիչք վերցնենք,— ասաց։

— Կարելի է։

Ու մենք գնացինք։ Ճանապարհին.

— Ինչ լավ կլինի,— շարունակեց,— մինչև առավոտ լաց կլինենք։

Ես, պիտի ասել, լավ չէի ճանաչում նրան, չգիտեի նույնիսկ իր կյանքի ամենասովորական մանրամասնությունները, այնպես որ ուշացումով հարց տվի.

— Ամուսնացա՞ծ ես։

Հեկեկում էր և չէր պատասխանում։

«Չլինի,— խորհում էի, իսկապես անհույս սիրով սիրահարվել է մեկին»։ Բայց և սխալվեցի շարաշար։

Ոսկի կին ունեմ։

— Ուրեմն ի՞նչ է պատահել քեզ... Ինչու համար են այս պատմությունները...։

— Ինչո՞ւ է նա այնքան լավը։

— Ո՞վ։

— Իմ կինը։

— Երեխաներ ունե՞ս։

— Այո՛, և նրանք այնքա՞ն շատ են սիրում ինձ։

— Ուրեմն...

— Ուզում եմ աճնասպան լինել...

— Մի՛ զարմացրու քո անձնասպանությամբ, դու այդ անողը չես։

— Ինչո՞ւ,— հարցրեց շփոթված։

— Որովհետև շատ ես սիրում կյանքը, չարչարում ես շրջապատդ և չարչարում ինքդ քեզ։ Շփացրել են քեզ...

— Գիտես,— ասաց, կինս այնքան է սիրում ինձ, որ եթե գիտենա, որ նույնիսկ սիրում եմ մեկ ուրիշին, իմ երջանկության համար կհեռանա ինձանից։

— Դե, ուրեմն ի՞նչն է կապում քեզ...

— Խիղճս, ոսկի շղթաներով կապել են ինձ, բանտել ազատությունս...

— Այն ազատությունը, որ շնորհել ես ինքդ քեզ, արդեն շատ է: Դու տառապում ես ազատության առատությունից. անարխիստ ես դարձել, դու կործանում ես ինքդ քեզ...— Ես կյանքում չեմ սիրում խրատներ տալը: Դա ամենադյուրին բանն է աշխարհում, զզվում եմ, երբ մարդիկ բարոյախոս են դառնում, մանավանդ դրականության մեջ. ո՞ւմ է պետք խոսքի առատությունը: Թե ուզում ես քեզ լսեն՝ ապացուցիր կյանքովդ, աշխատանքովդ:

— Խոսիր,— ասաց,— խոսիր, քանի լսում եմ քեզ, հանգարտվում է սիրտս, ինձ լավ եմ զգում, խոսիր... Հետո նստենք լաց լինենք, չէ՞...

Պիտի նստենք ու լա՞ց լինենք, տարօրինակ, անհասկանալի բարդ մեքենա է մարդը: Մի ուրիշ օր կարելի է և ծիծաղել, խնդալ այդ բոլորի վրա, բայց իր առաջարկը, նույնիսկ կանխամտածված լաց լինելու մասին, ինձ դուր է գալիս:

— Նստենք, լաց լինենք, չէ՞...

Դեբեզմանատանը մենք մնացինք ամբողջ գիշերը:

Կիսախավարը, սոճիների և ուռիների տավերները դամբարաններին և հանդչած, մարած կրքերի պատմություն հողի, հարուստ է և ուսանելի նրանց համար, ովքեր աչք ունեն ու կարող են թափանցել կանաչից և հողի մոխրագույնից դենը: Ես սիրում եմ դեբեզմանատները: Առելությունները ու մանրուքները նսեմանում են այդտեղ: Մարդը մաքրվում է իր փոքրություններից: Պիտի լաց լինել մեռելների առաջ ոչ թե նրա համար, որ ոչինչ կարող են հասկանալ մեր արցունքներից, այլ պիտի լաց լինել հենց ապրողների հաշվին, այն ապրողների, որոնք մոռանում են կյանքի հոծանքի մեջ և հաճախ... դեբեզմանատները: Ինձ այնպես է թվում, թե դեբեզմանների առաջ ես կանգնած եմ լինում դատաբանում՝ հաշվետվության:

Ես ակնածում եմ հողից, առավել դեբեզմաններից: Ես սիրում եմ կյանքը իր մահով հանդերձ:

Նա լուռ էր...

— Գինու շշերը,— ասացի,— պարպենք հողակույտերի վրա։

Նա հնազանդվեց, շշերի լրիվ պարունակությունը ծծվեց հողի կողմից, թարմ վարդերի տերևներին մնացին կարմիր, պսպղուն ադամանդներ...

Անակնկալորեն սկսեց ամռան հորդառատ անձրևը։ Մենք կանգնել էինք լուռ, անձրևի կաթիլները սահում էին մեր հակատներից։ Բնությունը լալ չկարողացող մարդուն պարգևում էր արցունքներ... Վարդերը, կանաչը պետք ունեն անուշ կաթիլների... Բնական և անխարդախ։

Անձրևախառն արցունքներով լալիս էինք մենք լուռ ու գլխահակ։

Առավոտը բացվեց Երևանի վրա, արևը նախ հենվեց շենքերի պատուհաններին, շիկնեցին ապակիները, և գիշերը հևաց լեռների ստորոտին, մառավ կիրճերը, քարայրների մեջ ու աներևութացավ։ Եթե չլինեին նեոնե լույսերը հրապարակների ու էլեկտրական լամպերը փողոցների, որոնք չգիտես ինչու համառում էին դեռ մնալ իրենց դիրքերում, մենք կարող էինք կարծել, որ ապրել ենք ինչ-որ հեքիաթի աշխարհում։

Բացվեց առավոտը Երևանի վրա։ Ամառային զով, խայտաբղետ մի առավոտ։

Քաղաքի լուսաբացն էր...

Ռելսերի վրա զնգաց առաջին տրամվայի անիվների ձայնը։ Հացի խանութի առաջ թարմ, տաք հաց էին բեռնաթափում։

— Գնենք մի հատ։

Տաք հացի բուրմունքը թվաց ամենահաճելի բանը կյանքում, ու սոված մարդու նման անհամբեր կիսեցինք այն։ Խնայում էինք նույնիսկ փշրանքները։

Փողոցներն ավլող քուրդի մի աղջիկ ապշած դիտում էր մեզ։

— Բարի լույս քեզ, քույրի՛կ։

Նայում է մեզ, բայց չի պատասխանում։ Տարօրինակ է։

Տրամվայում, առավոտ վաղ գործի շտապող բանվորներ են։ Մի հսկա տուն է դարձել քաղաքը, ուր յուրաքանչյուր

անդամ ունի իր գործն ու աշխատանքը։ Թվում է, թե մեկի անփութությունը կարող է և խանգարել սկսվող սիմֆոնիան։ Դիմագծերը լուրջ են, հանդիսավոր։ Յուրաքանչյուրի մտքում օրվա ծրագրեր, հաշվումներ...

Մի տարեց մարդ է նստած մեր դեմ, նրա մոտ՝ թարմատի մի աղջիկ։

Ո՞ւր է գնում այդպես առավոտ վաղ։

— Աշխատանքի։

Թրջված, չսափրված, անքնությունից կարմրած մեր աչքերը վստահություն չեն ներշնչում տարեց մարդուն։

— Որտեղի՞ց եք գալիս... Գիշերային հերթափոխի՞ց...

Արևը դիպավ տրամվայի պատուհաններին։ Ես խոնարհում եմ աչքերս. ընկերս շփոթվել է։ Հանեց գրպանից մի գլանակ։ Մեր դեմ նստած մարդը պոռթկաց.

— Ընկեր, չի՛ կարելի...

Ձայնը հատու է և խիստ, բազմիմաստ։

— Հասարակական վայրերում չի՛ կարելի, ընկերներ,— մեղմ, բայց անզիջող շշնջում է աղջիկը։

— Իջնենք,— ասում եմ ես ընկերոջս։

— Իջնե՛նք։

Ամենուրեք աշխատանքի շտապող մարդիկ են, աղջիկներ։ Յուրաքանչյուր քայլափոխի հարցապնդող հայացքներ կան մեզ ուղղված։ Գուցե նրանք հասկանում են, թե դու ինչոր մնացորդ ես երեկվանից, և այդ հաճելի չէ նրանց համար։

— Լավիկն էր, չէ՞,— հարց է տալիս։

— Ո՞վ։

— Բանվորուհին։

— Ո՞ր բանվորուհին։

— Տրամվայում մեր դիմաց նստողը։

— Նա դեռ շատ երիտասարդ է։

— Աշխատանքի էր գնում։

— Այո՛։

— Իսկ հացը շատ համեղ էր, չէ՞։

— Այո՛։

— Ես կյանքումս այդքան համեղ հաց կերած չէի։

— Ես էլ։

— Իսկ ի՞նչ ես անելու հիմա։

— Գնում եմ տուն, քնեմ։ Երեք գիշեր է, չեմ քնել։

— Իսկ տանը ինչպե՞ս կընդունեն քեզ։

— Հիմա հավանաբար նա կանգնած է դռան սեմին և սպասում է ինձ, նրա աչքերում կլինի արցունք և թախիծ, նա ոչ մի բան չի ասի ինձ, նա շատ է սիրում, կների...

— Ցտեսություն։

Ցտեսություն և շնորհակալություն։

— Ի՞նչ բանի համար։

— Գերեզմանների և գերեզմաններին հաջորդող քաղաքի լուսաբացի համար։

— Շատ ես ռոմանտիկ։

— Երբեք այսքան իրապաշտ չեմ եղել կյանքում։

Լավ տղա է իմ ընկերը։ Բայց ի՞նչ ասել, որ միայն լավ լինելով՝ կյանքում տեղ չես հասնի, սրտին քով մի քիչ էլ ժիլաք է հարկավոր, չէ՞։

«ՀԱՐԵՎԱՆ ՋԱՆ»

Սեղայիր

Մեր Տիգրանյան փողոցի բնակարանի հարևանը բանակին նոր վերադարձած բանվոր տղա է։ Առհասարակ մեր շենքը նոր հանձնվեցավ շահագործման։ Բոլոր եկվորներն ալ երևանցիներ են, այսինքն՝ գոնե տասը-քսան տարի առաջ Երևան եկած ընտանիքներ, բացի մեզմե, որ տակավին տասնհինգ օր է միայն, որ մեր նոր տան մեջ ենք, և հաղիվ երկու ամիս կընե հիմնական մեր վերադարձը պանդխտութենեն։

Մեր տունը, ըսի չէ՞, Տիգրանյան փողոցի վրա է Աբաբկիրի մեջ։ Հասցեն եթե կուզեք՝ ահավասիկ. շենք 5-րդ, 4-րդ մուտք, բնակարան 47, թեպետ, եթե շենքի թիվն ալ չգրեի, կարող էիք գտնել, որովհետև բնակարան ստացողները մեծ եռուզեռի մեջ են ու անհուն եռանդով սկսած են վերանորոգման գործը։ Ամենեն անճարակը ես եմ, ո՛չ աղոց բռնել գիտեմ, ո՛չ ալ նույնիսկ կարգին մեխ մեխել, մնաց որ հարկ է էլեկտրական ներքին սարքավորումները կրկին վերակազմել, լոգարանի ծուխի ճամփան այլ տեղ անցկացնել, խողովակները հարմարեցնել, ջարդված ապակիներուն տեղ նորերը ճարել, կրկին ներկել, ինձի համար յուրաքանչյուրը առանձին խնդիրներ են։ Հարցը պատմվածք գրելու նման չէ, ու մինչ մեր տան բնակիչները, մեծ մասով ըլլալով բանվոր մարդիկ՝ այդ բոլորին վարժ են, գիտակ, ես դլուխս վար կախած կվազվզեմ այստեղ-այնտեղ, տեսակ մը հանցավորի նման՝ մարդի՞կ ճարելու։ Հետո, եթե դուք ալ իմ տեղը

ըլլայիք, հակառակ այդ բոլորին պիտի ուզեիք կրկին տալ ձեր հասցեն, որովհետև տարիներ-տարիներ օտարության մեջ թափառելն ետք հասցե ունենալ, սեփական հասցե, դուք ինչ կուզեք ըսեք, երջանկություն մըն է, որուն դժվար թե վարժվինք զոնե մենք՝ անմիջապես։

Ծիծաղելի բան մը ըսեմ, ստիպված եմ զեղումներս զսպել, տարօրինակ բաներ կպատահին ինձի հայրենիք գալս ի վեր, հուզումներս հասած են ծայրահեղ աստիճաններու, ավտոբուս կնստիմ, լալս կուգա, բարեկամի մը հետ կխոսիմ, հիմար պոռթկումներ կունենամ. բարեկամուհիի մը կհանդիպիմ, սիրահարված կկարծեմ ինքզինքս։ Մեկ խոսքով շտեսմը։ Հայրենիքի մեջ եմ, բայց չեմ հավատար, հայրենասիրության շտեսություններ բաներ է։ Չեմ դիտեր, որքան պիտի տևեն այդ բոլորը։ Այդ երազի, շատ հաճելի երազի իրական ըլլալը ամեն առավոտ ու իրիկուն հուշողը մեր հարևանն է, բանակին նոր վերադարձած այդ տղան։ Մեր շենքի բնակիչներուն հետ եթե ես հանդիպիմ որևէ տեղ, այսինքն՝ մեր տան շրջակայքը կամ սանդուխներուն վրա. կբարևեմ սիրով. կան, որ նույն ջերմությամբ կփոխադարձեն բարևս, կան, որ անտարբեր են, հազիվ իրենց քթին ծայրով բաներ մը կմռմռան ու վերջ։ Ոչի՞նչ (ես այս «ոչինչը» շատ սիրեցի, համենայն դեպս)։ Բայց վերադառնանք. դիս կամ կինս տեսնելուն պես տապես ինչպես սովոր եք ըսել «ճիդյարով».

— Բարև՛, հարևան ջան,— պոռացողը միշտ այդ բանվոր տղան է։

Ըսի պոռացողը, որովհետև ինչպես իր յուրաքանչյուր շարժուձևին մեջ, նույնպես ալ իր ձայնը անտաշ, բայց վերին աստիճանի համակրելի բան մը ունի։

— Հարևան ջան, ո՞նց ես։

Կըսեմ թե՝

— Լա՜վ եմ, հարևան ջան։

Ու «հարևան ջան» վեր, «հարևան ջան» վար, մեր մտերմությունը կզորանա օրե օր։ Առաջին օրը եկավ, տեսավ, որ մեր տան մեջ ոչինչ ունինք։

— Արտասահմանից ոչինչ չե՞ք բերել,— հարցրուց։

Ես թե՝

— Հարևա՜ն ջան, փառք տանք, որ գոնե կարողացանք գալ, կամաց-կամաց կունենանք ամեն ինչ, կաշխատենք, կառնենք։

Զգացի, որ ուրախացավ, գնաց իր բնակարանն երկու աթոռ բերավ։ Աթոռները տալու ստեն հայարտություն մը կշողար իր դիմագծին վրա թե՝

— Ահավասիկ, հարևա՜ն ջան, ես տանը չորսն ունեմ, երկուսը տալիս եմ ձեզ, մինչև որ դուք կունենաք ձերը.— հետո թե՝ ժամանակավոր դժվարություններ բոլորս էլ ունեցել ենք, չհուսահատվեք...— ու շարունակեց իր քաղաքական ճառը, միշտ մեկնելով հավանական մեր կարիքներու բավարարման հեռանկարներն։ Անշուշտ, այս բոլորը առանց հարցնելու, թե որի՞ հետ է գործը, թե ես ի՞նչ գաղափարի մարդ եմ և այլն, և այլն։ Բայց ինչ որ հետաքրքրական էր ինձի համար, այդ զրույցի վերին աստիճանի հուզիչ թվիլն էր. «հարևան ջան»-ը քանի կխոսեր ու քանի կխորանար իր պրոպագանդին մեջ, ես այնքան թեթև ու ուրախ կըզգայի ինքզինքս։ Իր անկեղծությունը կգրավեր զիս, ու ես կըզգայի իմ Հայրենիքին ուժը։ Հետո թե՝

— Ինչպե՜ս է բաղնիքը, ինչպե՜ս է ջուրը, ծորակները լավ անցկացրի՞ն, իսկ լո՞ւյսը։ Հոգ մի արեք, վաղը ամեն ինչ կարգին կլինի, պակաս բան չեք ունենա, ու եթե մինչ այդ, հոգուդ մեռնիմ, հարևան ջան, մի բանի կարիք ունենաս, արի ինձ մոտ, մի՛ քաշվիր, ասա։ Մենք, որ չօգնենք իրար, ո՞նց կլինի։

Հարցուց իմ աշխատանքի մասին. ըսի թե՝ գրականության ինստիտուտ կաշխատիմ։ Հավանաբար, չհասկցավ գործիս բնույթը. բայց ձևացուց, թե լրիվ ըմբռնեց։ Նույնը պատահեցավ իմ պարագայիս. ես ալ հարցուցի իր աշխատանքը, պատասխանեց ինձի համար անհասկանալի ինչ որ մասնագիտական բան. ռուսերեն բառերով։ Հետո ես թե՝

— Հարևան ջան, չհասկացա։

— Էլի...— ըսավ ու բացատրեց մեկ ուրիշ ձևով, կրկին ռուսերեն բառերով։ Ես ստիպված.

— Հա, լա՜վ է, շա՜տ լավ է եղեր,— ըսի, որովհետև երրորդ անգամ եթե կրկին հարցնեի, կարող էր շատ տար-

օրինակ թվիլ իրեն ու կրկին սկսեր իր ճառերեն մեկը. արտակարգ կամեցողություն մը ունի ինձի հասկցնելու, պատմելու իր գիտցածները։

Անունն ալ չեմ գիտեր դեռ, հակառակ, մոտ տասնհինգ օր կընե մեր գալը. ինքը սորվեր է իմը. կըսե՝ Հարեան Գեղամ ջան, ես չեմ գիտեր, բայց կամենամ հարցնելու, որովհետև շատ կսիրեմ զինք, անդամ մը չհարցուցած եղա, ու հիմա կվախնամ, որ անտարբերություն վերագրե անձիս, մանավանդ իմ նկատմամբ։ Ուրեմն տեղի անտեղի կկրկնեմ.

— Հարեա՛ն ջան։

Առավել զարմանալին կա տակավին. անցյալ օր «Սովետական գրականության» 9-ի մեջ տպվելիք վիպակիս հաշվին հոնորար ստացա։ Գացի աթոռ, սեղան, գրադարան ու գրքեր գնեցի ու բերի տուն։ Լավ որ «Հարեան ջան»-ը տուն չէր. ինչո՞ւ մի ըսեք.. արտակարգ զգայնություն մը կար մեջս. չելլե խորհի, թե այլևս կարիք չունիմ իրեն. ու մտածածիս պես ալ եղավ. առավոտուն, երբ սովորականին պես եկաք մեր մոտ, տղաս անզգուշաբար.

— Հարեա՛ն ջան,— ըսավ,— աթոռներդ առ ետ. պապաս երեկ տասներկու հատ բերավ։

Տեսակ մը ամոթխածությամբ.

— Շնորհակալությո՛ւն, հարեան ջան,— կրկնեցի։

Ուրախացավ, մեկ-մեկ գնածներս քննեց, որակի մասին զոհ մնաց, բայց դիմագծեն կռահեցի, թե չէի սխալած զգուշությանս մեջ։ Հաստատվեցավ մտահոգությունս։ Երեկ առավոտ վաղ զարկին մեր դուռը։ Գիշերը ուշ էի պառկած, չկամությամբ իջա թե՝

— Ո՞վ է այս ժամուն։

— Ես եմ, հարեա՛ն ջան, բաց դուռը։

— Գիտե՞ս, ուշ էի քնացած։

— Ինչո՞ւ աշխատեցիր այդքան, հարեան ջան, հանգիստ արա մի քիչ, նոր ես եկեր Հայրենիք,— հիմա եկուր ըսե թե՝ բարեկամներով նստա՛ծ էինք, խմեցինք և այլն...

Ամչցա ուղղակի այդպես ըսելու, որովհետև կարող էր պատասխանել թե՝

— Այ մարդ, ի՞նչ քեֆի ատեն է հիմա, նախ՝ տունդ տեղդ հոգա, վերջը՝ քեֆ շա՜տ...

Սա «Հարեան ջան»-ը գլխուս անուշ փորձանք կտրեցավ։

— Լավ, ըսե, Հարեան ջան։

— Արի, արի ինձ մոտ, ես պրիմանիք գնեցի։ Դու դեռ չես կարող գնել։ Արի տամ քեզ մինչև դու կունենաս քո սեփականը։

Ես թե՝

— Հարեան ջան, հոգիդ ուտեմ, ցավդ տանեմ, շատ ուրախ եմ, բայց դու քո նոր գնած պարունիքդ ինչո՞ւ ես ուզում ինձ տալ,— շիտակը չհասկցա, թե պրիմանիքը ինչ ըսել է. արդեն սխալ ալ կրկնեցի. ռուսերեն չեմ գիտեր տակավին։

— Եկ, եկ, Հարեան ջան, մերոնք հիմա քաղաքում չեն. կինս ու զավակս գյուղում են. արի, միասին քեֆ անենք։

Սոխակված գացի, որպեսզի հասկանամ թե բանն ինչ է. տեսա, որ նոր ընդունիչ ու բիբաշ է գներ։ Շատ ուրախացա, իսկ ինքը թե՝

— Արի, Հարեան ջան, մի բլասթինքա գնեմ, մտիկ արա, ասա քույրիկս ալ թող գա։— Գացի կանչեցի։ Մենք տակավին անլվա, առավոտվա ժամը վեցին նստանք իր մոտ ու սկսանք մտիկ ընել իր... բլասթինքաները։ Հազար անգամ լսած աշուղական և ժողովրդական հայկական ու ադրբեջանական երգեր էին։

— Հարեան ջան, շատ էի ուզում մի պրիմանիք գնել, առիթը եկավ։ Քանի դու չունես, առնեմ բերեմ ասացի. լա՞վն է...

— Սքանչելի է,— լեցվեցան աչքերս,— երգն ալ հոյակապ է. կարծես առհասարակ ամեն ինչ նոր է ինձ համար։— Տկարացան ջղերս, կրկին շտեսությունս բռնեց ու սկսա լալ։

— Ինչո՞ւ ես լաց լինում, ա՜յ Հարեան ջան։

— Մայրս հիշեցի, Հարեան ջան, նվագդ դպավ սրտիս։

Երգը Աբովյանի մասին էր.

Երանի թե մի օր հանկարծ
Քանաքեռից իջնեիր...

Մայրս կերգեր այդ երգը. մահվնե ետք ես խուսափեցա լսելու այդ մեկը. այդպիսին եմ. եթե շատ սիրեմ որևէ բան, կխուսափիմ միշտ, զգացումի հավասարակշռություն չկա մեջս։

Իսկ «Հարևան ջան»-ը կրարձրացնե ձայնալիքը.

Հիմակ ալ չեմ կրնար ըսել, թե՝ մեղմ ձայնով լսելը ինձ համար առավել հաճելի է։

— Ե՛կ, նստենք պատշգամբում։

Արարատն է մեր դեմը. Արարատեն անդին մայրս կա, կան հայրս, քույրս ու եղբայրս. յուրաքանչյուրին գերեզմանը այլ հողի, այլ երկրի վրա։

Երանի թե մի օր հանկարծ...

— Ութ տարեկան էի, երբ Թավրիզից եկա Հայրենիք։ Աղքատ էինք, թշվառ, մի եղբայր ունեմ, կույր է։ Բայց հիմա տեսնո՞ւմ ես, Հարևա՛ն ջան, ամեն ինչ ունեմ, մոտ օրերս թելեվիզոր էլ կառնեմ։ Դու չառնես. մեր տանը կնստենք, բալիկներդ էլ կգան, կմիացնենք քեֆ կանենք...

Ու քո սիրած նորքում կանգնած
Երևանին նայեիր...

— Հարևա՛ն ջան, գիտե՞ս,— կըսեմ,— ես ու զավակներս գոնե հստակ գերեզման պիտի ունենանք։

Կնայի ապշած աչքերուս.

— Ա՛յ մարդ,— կըսե,— ի՞նչ ես ասում, խոսե կյանքի՛ մասին, ապրելո՛ւ մասին, երիտասարդ, հուժկու տղա ես։

— Կյանքի մասին խորհեցա,— կըսեմ,— շատ, շատ սկսա սիրել կյանքը։

Հոս արդեն բաժնվեցանք «Հարևան ջան»— են։

— Հիմար տղա է, հե, ա՛յ քույրիկ,— կըսե կնոջս.

Կինս վաղուց գիտե արդեն իմ ինչ պտուղ ըլլալս ու «Հարևան ջան»-ը խորհելով թե՝ ինչ-որ լավ չատացվեց այսօր.

— Վաղը կիրակի է,— կշարունակե,— լրիվ օր մը ինձ մոտ կլինենք, միս կբերեմ, քույրիկս թող սարքե, մինչև գիշեր բլասթինքաներ կլսենք։ Ես խմողը չեմ, բայց մի շիշ էլ գինի կառնենք, ի՞նչ ասացիր...

Ի՞նչ ասեմ, հոգո՛ւդ մատաղ, ի՞նչ ասեմ, ընթերցո՛ղ, դուն ուզես ծիծաղե, ուզես՝ մի ծիծաղիր. մենք վաղը կիրակին պիտի անցնենք «Հարևան ջան»-ին մոտ բլասթինքաներ մտիկ ընելով։ Գիտեմ, կան որ, մեր տան մեջ մանավանդ՝ բարևս կփոխադարձեն իրենց քթին ծայրով, իրավունք ունին թերևս, բայց մենք վաղը, կիրակի օրը առավոտվանից մինչև ուշ գիշեր պիտի առնենք մեր սիրտերը Արարատին դեմ, ով ի՞նչ կուզե թող ան ըսե ու պիտի ժողովրդական հաղար անգամ լսած մեր երգերը կրկին լսենք, իրարու պրոպագանդ պիտի ընենք ու փառք, հաղար փառք պիտի տանք մեր վերածնած Հայրենիքին։

Այդպիսին ենք մենք մեր «Հարևան ջան»-ին հետ. ես առարկա մը կբերեմ տուն, ինքը կուրախանա, ինքը կբերե՝ ես կուրախանամ։ Մենք մեր տները կամաց-կամաց կկահավորենք երկուքով։ Մեր հասցեի մասին գրեցի արդեն, Տիգրանյանի փողոց, 5-րդ շենք, մուտք 4, հարկ 4, բնակարան 47։ «Հարևան ջան»-ինը՝ թիվ 45, թեպետ կարիք ալ չկա, վաղը առավոտվանից մինչև երեկո դուք կարող եք Կոմիտասի փակ շուկայի առջև կանգնիլ ու «Հարևան ջան»-ի պրիոմնիքեն հստակ գիտնալ մեր հասցեն։

Օգոստոս, 1962

ՎԱՐՍԵՐԸ

Կաուրային

Քաղաքների մեջ մեծացած տղա եմ, սակայն գյուղացիներին ավելի եմ սիրում։ Նրանց հետ կարծես առավել անկեղծ, առավել սրտաբաց եմ լինում։ Հոգեկան ինչ-որ անասելի կապ ինձ դեպի նրանց է ձգում, դարձնում հարազատ, մոտիկ մարդ։ Զգացումների, ապրումների չքողարկված նրանց թափը մոտ է իմ սրտին, էությանը։ Ես էլ եմ այդպիսին։ Տղամարդկանց հոգեկան նուրբ ապրումներին հակասող անտաշությունը ինձ համար սիրելի մի առնականություն ունի, որ միշտ հուզել է ինձ ու շարունակում է հուզել։ Բայց ամենից շատ սիրում եմ գյուղացի աղջկա լեռնային կուսությունը, ամոթխածությունը։ Այս վերջինի առաջ ես էլ ինչ-որ կորցնում եմ ինձ, դառնում տարօրինակ։ Օրինակ, ես չեմ կարող նրանց հետ խոսել այնպես, ինչպես խոսում եմ քաղաքի ինձ ծանոթ աղջիկների հետ, չեմ կարող ազատ կատակել նույնիսկ, ինչպիսին է առհասարակ իմ բնավորությունը։ Մի թաքուն վախ ինձ միշտ ետ է պահում այդ բոլորից։ Կատակներին նրանք կարող են վերաբերվել այլ կերպ. մի ակնարկ, մի խոսք կարող է խոր փոթորկումներ առաջացնել նրանց ջինջ հոգիներում, որից դու անտեղյակ լինես։ Չէ՛, ինչ էլ լինի, իմ սիրտը կապված է գյուղին, ես սիրում եմ գյուղացիներին։

Կյանքն ստիպեց, որ ես այսպես հասուն տարիքում դառնամ ուսանող և հեռակայեմ համալսարանում։ Նա իմ ընկերուհիներից էր, եկել էր մեր հայրենիքի ծայրամասային

մի գյուղից։ Հեռակա համալսարաններում մեծամասնությունը շրջաններից է, շատ քչերն են քաղաքից։ Բայց ինձ համար անսովորը նրա արտաքինն էր. հավատացեք, «գրականություն անելու» համար չէ, որ ասում եմ, թե նա՝ այդ աղջիկը, ուներ թախծոտ, աշնանային թախծոտ ու գրավիչ մի տեսք։ Նիհարակազմ էր, կանաչ աչքերով և երկա՜ր, երկա՜ր ածխանման վարսերով, որոնք իջնում էին մինչև մեջքը։ Հավանաբար գեղեցիկ հյուսքերով այդ վարսերն էին, որ իմ դասընկերուհուն տալիս էին գեղջկուհու տեսք և իմ ակնարկները տեսաբար կապում իրեն։ Սիրահարվե՞լ էի, թե... ինչ իմանալ, սիրտը նման հիմարություններին ե՞րբ է հաշիվ ավել կյանքում։ Բայց գիտակցում էի, որ ավելորդ մի խոսք կամ շարժում զանազան անպատեհությունների առիթ կտա և վատ կացության կմատնի ինձ։ Թեև իմ կամքից անկախ, դասերի ընթացքում աչքերս չէին պոկվում իրենից և տեսաբար հանգչում էին ածխանման այդ հյուսքերի ծալքերի մեջ։ Ներեցեք իմ համարձակությանը. երևակայությանս մեջ ես նույնիսկ քանդում էի դրանք, քակում մեկ-մեկ, հետո կրկին հավաքում, ձնծաղիկներ ամրացնում, կարմի՜ր, կարմի՜ր կակաչներ կապում յուրաքանչյուր թելին և այս բոլորը... դասերի ընթացքում։ Անշուշտ, իմ «հանցանքի մասին» ոչ դասախոսը գիտեր, ոչ ընկերներս և ոչ էլ... նա։ Լավ էր այդպես, և հավատացեք, նրա վարսերն ինձ կապել էին համալսարանին։ Ինքս ինձ հազարումի կրակե թելերով կապված էի զգում ամեն ինչի, բայց մանավանդ անհետ կորած մի երիտասարդությանն։ Ջահելացել էի, խորհում էի տեսաբար գարնան ու լավ բաների մասին։

Իմ կյանքի անցած ուղու, գրող լինելուս հանգամանքի մասին իմացան դասարանում։ Դասախոսներից մեկը հրապարակով հայտնեց այդ, ակնարկելով իմ գրած պատմվածքները։ Այդ բոլորը իմ վարկը միանգամից բարձրացրեց բոլորի աչքում։ Ես և՛ գոհ էի, և՛ դժգոհ։ Թե ինչու էի գոհ՝ կարիք չկա ասելու, բայց դժգոհ էի, որովհետև աղջիկները կարծում էին, որ ես, որպես գրող, ավանդված բոլոր նյութերից արդեն վաղուց պետք է գաղափար ունենամ, և ամեն առիթով դիմում էին ինձ։ Նրանք հաշվի չէին առնում իմ տարիքը,

դպրոցական նստարանից ավելի քան քսան տարիներ կտրված լինելու հանգամանքը և այլն... Իսկական փորձանքի մեջ էի ընկել ու խուսափում էի տեղի անտեղի տրված հարցերից: Այդ բոլորի արդյունքը, սակայն, եղավ այն, որ տղաներից մի քանիսը ինձ հետ մտերմացան, և ես խոր սիրով կապվեցի նրանց հետ: Բոլորն ուզում էին ունենալ հրատարակված գրքերիցս: Հակառակի պես, ոչ մի ավելորդ օրինակ չունեի տանը: Դե, քաղաքից քաղաք, երկրից երկիր թափառական իմ կյանքը առիթ չտվեց նույնիսկ հատորներիցս մի քանի ավել օրինակներ պահելու: Բայց չգիտես որտեղից, ինձ համար անբացատրելի մի զգացման ճնշման տակ ես գտա այդ գրքերից մեկը և բերի համալսարան: Ի՞նչ էի անելու: Ես ինքս չէի ուզում խոստովանել աննելիքիս մասին: Բայց տեսա, որ արդեն մակագրել եմ նրա անունով և սպասում եմ պատեհ առիթի... Ասել, որ մենք ոչ մի բառ չէինք փոխանակել. ավելին, չէինք էլ բարևում: Այդ օրը ես չկարողացա հետևել դասախոսություններին, ամբողջ ժամանակ խորհում էի, թե ինչպե՞ս անեմ, որ անհարմար կացություն չստացվի: Հետո, ամենակարևորը, ուրիշները չիմանան իմ «նվերի» մասին: Թեպետ ոչ մի անսովոր բան էլ չկար իմ արարքի մեջ: Ուզում ես նվիրել գիրքդ՝ նվիրիր, ո՞վ է բռնել ձեռքիցդ:

Անդադար նայում էի նրա վարսերին, քանդում, սանրում ու... երազում: Լավն էին մազերը, բայց առավել լավ էին իմ երազները: Եվ ես հիշում էի իմ կորցրած քրոջը. նա իր նկարներից միշտ այդպիսի մազերով է նայել ինձ: Երանի,— ասում էի ինքս ինձ,— երանի քույրս ողջ լիներ, լիներ տանը, և ես ամեն երեկո, քանդելով հյուսքերը նրա խարտյաշ խոպոպների, ջղայնացնեի նրան, ցավացնեի, չարանալի ու չարացնեի: Ինձնից մեծ էր նա: Հիշում էի մայրիկիս... Մի խոսքով, նրա վարսերը ինձ ետ էին տանում դեպի անցյալի իմ պատանությունը, առաջին սիրույս... Թեպետ իմ սիրածը երբեք էլ այդպիսի հյուսքեր չի ունեցել: Նրա մազերը... Ես սիրահարվել էի նրա մազերին: Երկար մազերն իմ տկարությունն են եղել: Այդ հարցում ես ավելի քան հիվանդագին ձգտում եմ հանդես բերել նույնիսկ վաղ

երիտասարդ հասակում։ Հիշում եմ, ժամերով հետևել եմ մի աղջկա, առանց նպատակի հետևել եմ միայն նրա մազերի հյուսքերով ապրելու համար, թեկուզ մի քանի ժամ։ Մինչև գիսաները հասնող երկար մազերը օտարության քառուղիներում ինձ միշտ հիշեցրել են իմ հայրենիքը, ես նույնիսկ Մասիսներին, նրանցից փոքրին պատկերացրել եմ որպես մի դեղեցկուհի, որի գլխին ամուսնական սպիտակ թագ է և մինչև սրունքները հասնող մազերի ծալ-ծալ հյուսքեր։ Մեծին նայել եմ որպես փեսայի, որ դարերի անդավաճանությամբ գնում է հարսանեկան առագաստ, գնում է և նա անաղարտ կպահի իմ հայրենի օջախը։ Ես չեմ սիրում, երբ երևում է աղջկա ծոծրակը. մանավանդ իմ վրա հոսի տպավորություն են թողնում ճակատի վրա ինչ-որ կեղծ ու շինծու ձևավորումներով ուռած արտակարգ, անսովոր գույներով ներկված ծամերը։ Այդ հարցում, թող ինձ ներվի ասել, մի քիչ «պահպանողական» եմ։ Մեր ժողովրդական պարերի մեջ ինձ ամենաշատ դուր եկողը մեր կաքավող աղջիկների մազերն են, մինչև կրունկները հասնող վետվետումը յուրաքանչյուր քայլափոխի։ Ի՞նչ անել, սիրում եմ ամեն տեսակ պար, բայց հուզվել կարող եմ միայն առաջիններից։ Հեռացանք նյութից։ Ո՛չինչ։ Եվ քանի հեռացել ենք նյութից, միանգամից ասեմ ասելիքս և պոկվեմ իմ սրտի տաղնապից։

Ես գիրքս տվի նրան և ասացի.

— Ձեզ համար եմ բերել, իմ միակ օրինակն էր...

Ի՞նչ կարիք կար այդ բոլորին։ Տալու ես՝ տուր, սովորական ձևով, ինչո՞ւ այդ հանգամանալից և իմաստալից, ոչ անկեղծ արտահայտությունը... «Իմ միակ օրինակն էր» և այլն...

Նա կարմրեց. ավելին, նույնիսկ շառագունեց։ Թախծոտ իր դիմագիծը պարուրող կարմրությունը դարձրեց նրան առավել գրավիչ, առավել անմեղունակ։ Ես արդեն զղջում էի արածիս համար։ Դողում էին ձեռքերս։

— Շնորհակալություն,— ասաց գրեթե շշնջալով,— շատ շնորհակալություն ուշադրության համար։— Եվ այսքան։ Էլի մենք շարունակեցինք չբարևել իրար և չփոխանակել ոչ մի բառ։ Բայց նա պահել էր գիրքս, ցույց չէր տալիս ոչ

որի։ Այս անգամ արդեն նրա սովորական լռությունն ինձ համար անսովոր էր դարձել։ «Չլինի՞,— խորհում էի,— վատ բան մտածի իմ մասին, չլինի՞ կարծի, թե ես ինչ-որ ուրիշ բաներ եմ մտածում, չլինի՞ կարծի, թե ես ուզում եմ ինչ որ...»։

Տագնապն սկսեց ծայր առնել իմ մեջ։ Կորավ նույնիսկ ինձ վերին աստիճանի հուզող մաղերի գրավչությունը։ Ես, այո՛, ճիշտ և ճիշտ դարձել էի Իվան Դիմիտրիչ Չերվյակով և մաղ էր մնում վերադառնայի տուն, պառկեի բազմոցին և նույնիսկ... մահանայի ամոթից։

— Ա՜յ տղա,— ասում էի ինքս ինձ,— ի՞նչ արեցիր դու։ Հիմա, որ նա սկսի հետաքրքրվել քեզանով, լսի, որ ամուսնացած ես, ի՞նչ կմտածի քո մասին։ Ա՜յ հիմար,— կշտամբում էի ինքս ինձ,— քո ի՞նչ գործն է ուրիշի մաղերի հաշվին երազելը։ Անշուշտ, թե նա չի խոսի քեզ հետ։ Ո՞վ գիտի, ինչի տեղ է դնում քեզ։ Ուղղակի հիմար կացության էի մատնվել։ Գնացի, խնդրեցի ինձ ծանոթ ընկերների, խնդրեցի նրանցից իմ գրքերը։ Ծրագրում էի բերել համալսարան, նվիրել ուրիշներին ևս և այդպիսով հակակշռել թույլ ավածս սրխալը։ Եվ այդպես էլ արեցի։ Բայց պատահեց մի նոր դեպք։

Հայոց լեզվից դրավոր էինք գրել, դասախոսը բերել էր թերթիկները և բաժանում էր։ Կարդում էր յուրաքանչյուրիս անունը, սխալների մասին խոսում, անում դիտողություններ, ուղղումներ, վերջում հայտնում գնահատականը։

Կանգ առավ նրա անվան դիմաց։ Նա գերազանց էր ստացել։ Նայեց ինչ-որ կասկածանքով և...

— Աղջիկս,— ասաց,— դու չե՞ս օգտվել որևէ տեղից։

Այ քեզ տարօրինակություն, որտեղի՞ց որտեղ իմ բերանից ակամա թռավ մի նախադասություն, որի մասին, եթե մտածած լինեի, դժվար թե պատասխանեի նույն ձևով.

— Նա,— մեջ մտա հանկարծ, ինձ համար էլ անհասկանալի մի հանդգնությամբ և բարձր տոնով,— նա այդպիսի բան չի՛ անի։

Բոլորը դարձան դեպի ինձ, դասախոսը նույնպես։ Իսկ նա շառագունել էր և նույնիսկ չէր շարժվում տեղից։ Ինձ

ընկճում էր նրա այդ զուսպ վարմունքը։ Այս բոլորը հաստատում էին իմ կասկածները...

— Իսկ դու որտեղի՞ց գիտես, ընկեր,— այս անգամ խոսքն ինձ ուղղեց դասախոսը, ձայնի մեջ դնելով հեգնանքի այն շեշտը, որից խուսափում էի ամենաշատ։ Բայց նեան արդեն ելել էր աղեղից...

— Նա լավ աղջիկ է,— այս անգամ արդեն մեղմ հաստատեցի իմ միտքը։ Հասավ կործանիչ պատասխանը։

— Իսկ մյուսները վա՞տն են, միայն նա՞ է լավիկը...

Ա՜յ քեզ բան, հիմա էլ... «լավիկը»։ Նշմարեցի, որ որոշ ընկերներ քմծիծաղ ավելցին և երևանցի մի քանի ընկերուհիներ զարմանք արտահայտող ակնարկներով չափեցին ինձ.— վա՜յ, դու՞ էլ, Բրուտոս...

Դե, ինչ պատմեմ ավելին։ Այլևս ես էի խուսափում նրանից դասամիջոցներին։ Երբ բակում կամ մի այլ տեղ հանդիպում էի նրան, ձևացնում էի, թե չեմ տեսնում, շատ եմ զբաղված և նման հիմարություններ։ Աչքերս ակամա փախչում էին նրա աչքերից, և ստեղծվում էր այնպիսի մի դրություն, որից ամենաշատ վախենում էի ես։

Լրացավ շրջանը։ Գյուղից եկածները վերադարձան իրենց գյուղերը, մենք էլ մնացինք քաղաքում։ Մտածում էի մեկ-մեկ եղածների մասին և համոզվում, որ այդ բոլորի պատճառը միայն նրա... ածխանման մազերն էին։

Զարմանալի զուգադիպություններ կան կյանքում։ Մի անգամ ես գնացի գործուղման, և դիպվածով գնացածս շրջանը մոտ էր նրա գյուղին։ Հանդիպե՞լ նրան, թե չէ,— մտածում էի։ Մտածում էի և ջղայնանում ինքս ինձ վրա։

— Ինչո՞ւ չգնալ։ Որ լսի, թե եկել եմ ու չեմ հանդիպել, ի՞նչ կմտածի իմ մասին, չի՞ ասի թե անտաշ մարդ եմ, հետս մեկնաբանություններ չի՞ տա չգնալուս համար։

Որոշեցի գնալ։ Հավանական կասկածներից լրիվ խուսափելու համար վերցրի մի ընկերոջ, հարցրինք, գտանք նրանց տունը, և ահա թե ինչ պատահեց.

Մայրն էր տանը, ընդունեց սիրով։ Հասկացրի, թե ես իր աղջկա ընկերն եմ համալսարանից և զարմանք... հանդիպեց անմիջապես ու որպեսզի փաստի՝ գնաց ու ներսից բերեց...

նվիրածս գիրքը։ Նա՞։ Նա տանը չէր, գնացել էր հեռավոր մի գյուղ գործով։

— Ես հենց այսօր կզանգահարեմ նրան,— ասաց մայրը,— նա կգա անպայման։

— Կարիք չկա անհանգստացնել, մայրիկ,— ի զուր փորձում էի համոզել։ Նա մնում էր անդրդվելի։ Վերջապես ես ստիպված էի ասել։— Ստիպված եմ մեկնել այսօր իսկ, արդեն տոմսը վերցրել եմ, այնպես որ...

— Բայց, տղաս, ո՞նց կլինի այդպես, ամոթ չի՞, այսպես վերջին րոպեի՞ն կգան ընկերոջ տունը։ Ոչ, ոչ,— առարկում էր մայրը,— տոմսը ետ կտաք։ Նա ձեզ շատ է հարգում, սպասեցեք մի օր էլ... Կզրուցենք, գիշերը կմնաք մեզ մոտ։ Աղջիկս ասում էր, որ դուք շատ երկրների մարդկանց եք տեսել։ Բայց ոչինչ, այս էլ հայկական օջախ է, գոհ կմնաք...

— Մայրիկ,— կրկնեցի հաստատակամ,— հասկացեք խնդրում եմ, աշխատանք ունենք, անկեղծ եմ ասում, չենք կարող։

Վիրավորվեց, բայց զիջեց։

— Դե ինչ արած, եթե այդպես եք ուզում... Գոնե նստեցեք, մի-մի բաժակ օղի խմեք, մեր շրջանի օղին միակն է ամբողջ Հայաստանում, խմած կա՞ք...

Ու առանց պատասխանի սպասելու՝ գնաց։ Բայց մինչ այդ բերավ ու տվեց ընտանեկան նկարների մի ալբոմ, որպեսզի զբաղվենք։ Շտկում էր սեղանը և մեկ-մեկ դալիս ու բացատրություններ տալիս։

— Սա մեր հայրիկն է, կորցրինք անցյալ տարի։ Աղջիկս շատ ազդվեց, պառկեց ամիսներով, տեսնո՞ւմ եք, ոնց է նիհարել։

Եվ իսկապես, նկարներից նայում էր լիքը թշերով մի աղջիկ, բայց... նա էր, կային և իր ածխանման, երկար մազերը, մի տեղ լրիվ արձակված և տարածված ուսերն ի վար, մի այլ նկարում՝ վերցրած ափերի մեջ, մի այլ նկարում ուղղակի, այո՛, ուղղակի ձնծաղիկների շարաններ սև խուրձերի մեջ։ Բայց ես զգաստացա. շատ էի տարվում։ Զգաստացա, երբ ընկերս ասաց.

— Է՜հ, տղա, չլինի՞ դու ինձնից ինչ-որ գաղտնիք ես պահում։

Փակեցի ալբոմը, նստեցինք սեղանի շուրջ, խմեցինք մի քանի բաժակ, գյուղական թարմ լավաշի, պանրի, կարագի, մեղրի հետ և պետք է ասել՝ դժվարությամբ պոկվեցինք։

— Շնորհակալություն, մայրիկ,— ասացինք ու բառի իսկական իմաստով՝ փախանք դուրս։ Ճանապարհին ես ու ընկերս ոչ մի խոսք չփոխանակեցինք։

Եկավ համալսարանի նոր շրջանը։ Նա ուշ վերադարձավ գյուղից։ Խոստովանում եմ, որ բացակայությունը ընկճում էր ինձ. կարծես իմ շրջապատում բացակայում էր շատ մոտ մի հարազատ։ Չլինի՞ էլի հիվանդացել է, մտածում էի ես։ Բայց եկավ։ Նույնն էր։ Սակայն այս անգամ, բացի մազերից, որ առաջվա նման սիրուն էին ու խենթացնող, փոխվել էր արտաքինը։ Ավելի քաղաքի աղջկա էր նման։ Չկար նախկին ջերմ պարզությունը։ Ինչ-որ մոդայիկ շեշտ կար հագուստ-կապուտի ու մարմինն առավել գեղեցկացնող նրբակրունկ կոշիկների մեջ։ Քաղաքի ու գյուղի մի տեսակ խառնուրդ էր ստեղծվել և պիտի ասել, այդ բոլորից շահել էր ինքը։ Կորավ իմ մեջ հաստատակամությունը. ես էլի դարձա լռակյաց իր նկատմամբ։ Խորհում էի, թե տարօրինակ աղջիկ է նա, չի ասում, որ գնացել եմ իրենց տուն, ոչ մի բառ այդ առթիվ։ բայց տանն իմ մասին պատմել է ու պատմել։ Իսկապես, տարօրինակ աղջիկ։ Հետո մտածում եմ. չէ՞ որ բարդությունն ստեղծում եմ ինքս ինձ. գնամ ու խոսեմ, ինչո՞ւ եմ այսպես դժվարացնում ամեն ինչ։ Հավանաբար, նա խուսափում է հենց իմ սառնությունից։

Տարվել եմ այդ մտքերով և կրկին նայում եմ նրա մազերին։ Հանկարծ ամեն ինչ կատարվեց մի ակնթարթում։ Նա ետ դարձավ և մի շատ կարճ պահ, որ ինձ թվաց երկա՞ր, շատ երկա՞ր... նայեց ուղիղ աչքերիս մեջ և... ինչ տխմար վիճակ. ես կարմրեցի խեցգետնի պես։ Հիմա էլ ու դուրս արի դրությունից. դասի ժամին, ամեն ինչ թողած՝ նայում ես նրան և նա քեզ բռնեց հանցանքի վայրում։ Կարծես այսքանը բավական չէ, տակավին կարմրում ես՝ տալով մեղքիդ անհերքելի փաստերը։ Դե հիմա ասա, որ նստած

ետևի շարքում սոսկ պատահմամբ ես աչքերդ մեխել նրան։ Չէ, այլևս չես պրծնի, ո՞ւմ կարող ես հավատացնել։ Դե, եթե կարող ես, հավատացրու նախ ինքդ քեզ...

Հիմարությունները հաջորդում են միմյանց։ Դասամիջոցին հանդիպում ենք իրար, դեմ-դիմաց։ Ես մոտենում եմ և...

— Ներիր,— ասում եմ,— ներիր, քո մազերը...

Նա, սակայն, չի լսում, նույնիսկ չի թողնում, որ ասեմ ասելիքս ու ազատվեմ մղձավանջից, հեռանում է։ Ես վազվում եմ ամոթից, մտնում եմ դասարան և սպասում, թե երբ կավարտվի իմ այս դժոխային տագնապը...

Երեկոյան հապճեպ իջնում եմ Արովյանով։ Ամռան շոգ օր է։ Խայտաբղետ ուրախ մի բազմությամբ են լցվել պողոտաները, Լենինի հրապարակը եղերող մայթերը, ամենուրեք։ Մեկը տվեց իմ անունը։ Կանգնեցի, նայում եմ ապշած... Նա է։

Կարմրել են այտերը, վառվում են։ Ճակատին քրտինքի կաթիլներ կան։ Անթարթ նայում է աչքերիս մեջ, պատասխանի է սպասում, թեպետ ոչինչ չի հարցրել։ Իսկ ես կարծես մեխվել եմ մայթին և նայում եմ բարացած. ինչ-որ խայթոց ցավ անսանձ մտրակում է հոգիս։

— Ինչպե՞ս է, հավանեցի՞ք...

Չեմ հավատում աչքերիս. նա՞ է, թե՞ մեկ ուրիշը։ Ապշել եմ, շշմել ուղղակի, աչքերս խոնարհվում են. այո, տեսնում եմ սպիտակ, բարձրակրունկ կոշիկները, հետո կանաչ ծաղկավոր փեշը, հետո սպիտակ վերնաշապիկը և սև... ածխանման մազերը, որոնք ճակատի վրա հսկա դեղ են կազմել ու կիսով իջել վար, այնտեղ կարմիր մի լայնեղր ժապավենի սեղմումի տակ հորդելով մինչև քունքերը... Կարմիր այդ ժապավենը շրջանցում է ականջները և դառնում կապ ծոծրակի վրա, ուր և ընդհատվում են մազերի հաղարավոր կրակե թելեր՝ հանված ածխի տեսքով։

— Չհավանեցի՞ք,— տխուր կրկնում է հարցումը, աչքերի մեջ՝ խոնավություն։

— Ամաչում եմ նայել ձեզ. գոնե մի բառ ասեք...

— Ինչո՞ւ արեցիք դա,— շշնջում եմ վերջապես ուշքի

գալով։ Ինչո՞ւ Թողեցիք, որ կտրեն..., և առաջին անգամ տալիս եմ անունը։

— Նա էլ էր ուզում այդպես,— խոսում է մեղմ,— բայց երկար համառում էի։ Բայց այս առավոտ գուք ևս... երբ...

— Իսկ ո՞վ է նա,— հարցնում եմ՝ ըմբռնելով ահավոր թյուրիմացությունը։

— Չգիտե՞ք,— ասում է,— նշանածս, նա էլ է արվեստի աշխատող...

ՊԱՏՄՎԱԾՔ՝ ՊԱՏՄՎԱԾՔ ԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տառապում էր օրերից ի վեր, ավելի ճիշտ՝ մի տեսակ անտրամադրություն շոքել էր ուսերին և քարշ էր գալիս իր հետ, ծանրացել էր մարմինը, մտքում հազարումեկ խոհեր, չէր իմանում որտեղից սկսի, որտեղից դուրս գա։

Առավոտը ուշ արթնացավ, բայց և այնպես մնաց մեխված անկողնում, քաշեց վերմակն աչքերին ու թաղվեց երազների մեջ։ Հետո միանգամից մտաբերեց, որ երեկ դիշերը ինչ-որ կարգին չպահեց—իրեն, վիրավորեց մի ծանոթի։ Այս վերհիշումը ստիպեց, որ ողնու պես ամփոփվի վերմակի տակ, ասես փորձելով ջնջել դեպքի պատճառած անախորժ տպավորությունը։ Բան դուրս չեկավ սակայն։ Ելավ, հագնվեց ու գրեթե նետվեց փողոց։ Փետրվարյան ցուրտ օդը մի քիչ ուշքի բերեց թմրած բանականությունը։

Տրամվայում հետզհետե ավելացող բազմությունը սկսեց իր հորձանքի մեջ վերցնել նրան. նախ մարմինը պատող հաճելի տաքությունը, հետո մարդկային կոնակների պատնեշը ջնջեցին իր մեջ ծառացող ամոթը։ Տոմսավաճառի «փոխանցեք ընկերներ»-ը նույնիսկ մի թեթև ժպիտ գծագրեց շրթներին ու ինքը ներքին ինքնաբեր մի մղումով սկսեց գործի լծել ինքն իրեն ու շեշտված հապճեպ ցուցաբերեց առաջից հասնող երեք կոպեկանոցների նկատմամբ։ Կարծում էր այդպիսով, թե ինչ-որ հասարակական գործում իր մասնակցությունն է բերում։ Հիմար բան է, բայց երբ սրտումդ ինչ-որ ճնշում կա, ճնշում, որի բնույթը և՛ ծանոթ է, և՛ անծանոթ

քեզ, կարծես այդպես է ստացվում։ Իջավ օպերայի առաջ։ Հանդիպեց խմբագիր մի ընկերոջ։

— Սպասում ենք, սիրելիս։

— Ինչի՞ եք սպասում։

— Պատմվածքներիդ։

Մատը դրվեց վերքի վրա, ու վերքը բացվեց ժպիտի տեսքով.

— Կլինի։

— Ե՞րբ։

— Այս օրերին։

Ու որպեսզի ժպիտը ցույց չտա իր իսկական խորքը, հարցրեց.

— Քանի՞ էջի սահմաններում։

— Հինգ կամ վեց էջի...

Խնդաց՝

— Կաշխատեմ,— պատասխանեց ու սկսեց քայլել։

Հինգ կամ վեց էջի սահմաններում գրելու համար այն, ինչ որ սրտումդ հավաքվել է հինգ հարյուր էջով՝ տաղանդ է հարկավոր։ Հինգ հարյուր էջ գրելը առավել դյուրին է, բայց չի իմանում ինչից սկսի, որտեղից դուրս գա։ Ոչ առաջին պատմվածքն է, ոչ էլ առաջին գիրքը, բայց միշտ այդպես է լինում իր հետ։ Վերջացնում է մի ստեղծագործություն, և լրանում է ամեն ինչ. հանդարտ է, երջանիկ, կարգին մարդ։ Մեկ էլ տեսար՝ նոր նյութ մտավ գլխի մեջ, կորցնում է հավասարակշռությունը, փոխվում է, ապրում անսովոր կյանքով, սկսում է խմել և մեկ էլ՝ անկարգություններ է թույլ տալիս իրեն։ Վախենում է չկարենալ դուրս գալ նոր նյութի տակից։ Մինչդեռ նման տասնյակ գործեր է տվել։ Յուրաքանչյուր անգամ կարծես սկսնակ է, կարծես իր առաջին աշխատանքն է. անցյալի մասին մոռացել է արդեն։ Անցյալն իրենը չէ, տպվել, գնացել է ընթերցողին։ Հիմա սկսվում են նոր փորձանքներ։ Ջղայնանում է, հայհոյում ինքն իրեն։ Ինքն իր աչքում մի տեսակ վատ է երևում։ Հետո տեսար՝ ստացվեց։

Մանկանում է, բյուրեղանում և այսպես շարունակաբար։ Բայց սա ինչ-որ շատ է հոգնեցնում իրեն, մաշվել են

ջղերը, սպիտակել մազերը, այնինչ երիտասարդ է դեռ։ Երբեմն ասում են, թե գրականությունը հեշտ գործ է, եթե ձիրք ունես գրելու՝ պրծավ։ Իրեն որ հարցնեին՝ կնախընտրեր նույնիսկ հանքափոր լինել, միայն թե սրտում այդպիսի հիմար զգացումներ չառաջանային։

Կյանքը եռում է, յուրաքանչյուր քայլափոխիդ մի հերոս, կյանքի մի սիրահար։ Անցնում են մարդիկ, տղաներ ու աղջիկներ, յուրաքանչյուրի մեջ՝ մի աշխարհ, մի վեպ, թե կարող ես՝ գրիր այդ բոլորի մասին... հինգ էջում։

Սահնակի վրա պառկած մի փոքրիկ տղա սահեց իր մոտից, գլուխը վեր բարձրացրած՝ նայում է ծառերի ճյուղերից կախված ձյուներին։ Ձյունը տերևների տեսքով է իջել երկնքից։ Սահնակը կարող է խփվել մի ծառի բնի, շուռ գալ, բայց նա նայում է վերև, ձյունե տերևներին... Ու երազ կա աչքերում, տակավին շատ ջինջ, ձյունեղեն մի երազ։

Ինքն էլ էր այդպես, երբ մանուկ էր. այժմ, սակայն, գիտե, որ երազներին պետք է նայել ուղիղ, շեշտակի, թե չէ կբախվես ու սայթաքելը վատ կլինի։ Մանկան համար կվազեն մարդիկ, բայց քեզ վրա կծիծաղեն...

Տարօրինակ է, շատ տարօրինակ, որտեղից որտեղ հիշեց, որ մի քանի օր առաջ թաղեցին իրենց հարևանի կնոջը։ Տակավին շատ էր երիտասարդ։ Նա էլ էր իր սպիտակ անկողնում, մետաղյա կարմիր ու դեղին վարդերի մեջ՝ խաչաձև ձեռքերով, նայում երկնքին, ու երկնքից ձյուն էր իջնում։ Ձյունն իջնում էր տրտմությամբ՝ դժգունած և կյանքից տակավին կարոտ բաժանված այդ աղջկա աչքերին։ Իսկ դագաղի եռևից քայլում էին երկու որբուկներ. ձյունը նրանց արցունքները սառեցրել էր մարգարիտի նման... թափվում էր ձյունը. ու ինքը հիշում է, զարմանալի հիշում, ու թեև փակ էին դեռատի կնոջ աչքերը, բայց նա նայում էր երկնքին։

Քայլում է ինքը... Ոչ, պետք է ուղիղ, շեշտակի նայել երազներին, թե չէ... թե չէ, սահնակում չես, մարդիկ կարող են ծիծաղել քեզ վրա։ Ոչինչ, կսովորես, կյանքում ձյունը միշտ կա ու կա. թափվում է և այսօր, ինչպես թափվում էր երեկ։ Բայց ինքը այդ բոլորի մասին չէ, որ ուզում է գրել, իր մտքում օրերից ի վեր այլ նյութ է խմորվում։ Վերջերս

լսեց Հայրենական պատերազմում զոհված մի պարտիզանի մասին, անունը Գուրգեն Հովսեփյան։ Թշնամիները նրան ձերբակալել ու այրել են ողջ-ողջ։ Տակավին շատ երիտասարդ է եղել նա, գրել է բանաստեղծություններ։ Բանաստեղծությունների տետրերը, ճակատից գրված նամակներն իր մոտ են։ Վերջերս ինքը գնաց Մարտունի ու հերոսի մոր մոտից վերցրեց այդ բոլորը։ Մայրն իր վեց որդիներից հինգին զոհել է. Գուրգենի նամակներից բաժանվեց դժվարությամբ, մորմոքով, բայց վստահեց իրեն ու հանձնեց։ Սա նրա հերոս զավակից երկրորդ բաժանումը եղավ։ Հայրենիքի ու կյանքի սիրույն հերոսական մի ամբողջ վեպ է. հանդիպեց նրա ընկերներից մեկին, պարտիզան ընկերներից։ Նա պատմում էր երկար, երկար։ Մինսկում է զոհվել Գուրգենը, այնտեղ հազարներին են գնդակահարել, թաղել ողջ-ողջ, և իմանո՞ւմ ես.

— Ձյուն էր գալիս, ձյունը իջնում էր հանդարտ, ծածկել էր շարագործների հետքերը, բայց այն փոսերում, ուր թաղել էին հարյուրավոր մարդկանց ողջ-ողջ, հողը հևում էր երեք օր անընդհատ... Հողը հևում էր, մարդկային կրծքի նման շնչում...

Այդպես նկարագրեց Գուրգենի՝ այժմ կոլտնտեսական ընկերը՝ Վազգեն Մատուրյանը։ Նա ասաց այդ բոլորը մի տողի մեջ, այն, ինչ ինքը կգրեր էջերի մեջ։ Այդպիսին է կյանքը, պիտի ապրել, տառապել, և արդեն ստացվում է բանաստեղծը։ Սենյակում նստած չի կարելի գրել կյանքի մասին, թեկուզ հինգ հարյուր էջով. դե, շափվիր հիմա կոլխոզնիկի հետ։

Ինքը գնալու է տակավին Մինսկ, հանդիպելու է Գուրգենի ռուս կնոջը, ընկերներին, բայց կհաջողվի՞ արդյոք մոր ձեռքից հերոս որդուն երկրորդ անգամ խլելուց հետո կյանքի կոչել նրան, կհաջողվի՞ այդ մեկը... Եվ նրա համար էլ տառապում է օրեր շարունակ, կորցնելով հավասարակշռությունը. փոխվել է, ապրում է անսովոր կյանքով...

Գնաց ու նստեց «Արագիլ» սրճարանում, դիտում է դուրսը...

Սահնակի վրա պառկած փոքրիկը շրջանցեց ծառը. նրան մոտենում է մի կին... Երիտասարդ է, գեղեցիկ և նա կանգ-

նեցրեց սահնակը։ Մայրիկն է անպայման և հավանաբար ասում է.

— Բավ է այսքանը։

Իսկ տղան լաց է լինում, ուզում է էլի քշել... անցորդները ծիծաղում են, ինքն էլ է ծիծաղում։ Ինչ լավ է, որ նա նրա մայրիկն է, փոքրիկ տղայի մայրիկը։ Չէ՞ որ նա կանգնել է ծառի տակ, իսկ տղան սահնակը ձեռքին բարձրանում է մայթը։

Գեղեցիկ է կյանքը, խելագարեցնելու չափ գեղեցիկ ու նման մի օր, հարկ է, որ ոչ մի վատ արարքի հետք չունենաս սրտումդ։ Չէ, հարկավոր է վերցնել մի երկու կոպեկանոց ու զանգ տալ այն անծանոթին, որին վիրավորեց երեկ գիշեր։

Իսկ ձյո՞ւնը... Ձյունն իջնում է հանդարտ, հանդարտ, խփվելով ծառերին, շենքերին, էլեկտրասյուներին ու մարդկանց...

Ձյունը իջնում է...

ԽՈՀԵՐ՝ ԲԱՑ ԵՐԿՆՔԻ ՏԱԿ

(էսքիզներ)

Գարուն է...

Գարուն է, թափառում եմ աննպատակ։ Տնից քայլելով իջա մինչև Սևան հյուրանոցի մոտերը։ Բավականին երկար ճանապարհ է, գրեթե մի ժամ։ Շրթներիս վրա ժողովրդական մի երգի առաջին տողն է, երկրորդ տողը առանց բառերի. եղանակով շշնջում եմ երկար ժամանակից ի վեր։ Ուղղակի հիմարություն, ուրիշ եղանակ չեմ հիշում այս բոպեին։ Կրկնում եմ, հա կրկնում նույնը։ Գարուն է, ամաչում եմ նույնիսկ արտագրել առաջին տողը, հավանաբար այդ միակ տողն էլ հիշա չդիտեմ։ Հիշում եմ բանաստեղծ ընկերոջս խոսքերը... «Հիսուն տարեկան եմ,— ասում էր,— մասնակցել եմ Հայրենական Մեծ պատերազմին, այսինքն կարող էի զոհվել երեսուն տարեկան հասակում։ Դեռևս առանց պատերազմ գնալու էլ կարող էի վաղ մեռնել։ Ի՞նչ ունեմ շնորհակալ չլինելու համար կյանքից։ Չէ՞ որ կարող էի և ծնված չլինել։ Շնորհակալ եմ, որ աշխարհ եմ եկել նախ, ապրել այս վիթխարի գարում, կռվել, պայքարել, բանաստեղծ եմ դարձել, շնորհակալ պիտի լինել այն հողին նույնիսկ, որ մի օր իմ մարմինը պիտի դրկի իր մեջ։

Ես էլի նույն ժողովրդական երգի հետ եմ. «շնորհակալ պիտի լինել նույնիսկ այն հողին, որ քո դիակը պիտի գրկի»։ Գարուն է, հողը թվում է սիրելի, այնքան սիրելի, որ մահն իսկ իր գրկի մեջ ինչ-որ արտակարգ բան է դառնում։ Կյանքի ահեղ, սարսափեցնող սիրո ուժգնությունից է բխում բոլորը։

Շե-կիկ, շե-կիկ մազերդ, ջան, ջա՜ն,
Նա նա՜յ, նա նա՜յ, նա նա՜յ...

Ի՞նչ եք խորհում, հա, ամո՞թ չէ այսպես, նույնիսկ առաջին տողն իսկ լրիվ չիմացած, արտագրել մի երգ, որը մի ժամից ի վեր տանջում է ինձ: Գարուն է: Ընկերս խոսում էր ձեռքի լայն շարժումներով, ոտքերը դոփում էր գետնին...

Նաիրյան դալար բարդի...

— Հայրենական Մեծ պատերազմի օրերին էր,— շարունակում է ընկերս,— Վոլգայի ափին հերթապահում էի ռազմական նավում. դեմը գերմանացիներ էին: Երեկո էր: Հեռուն մի մենավոր բարդի կար և հանկարծ ինձ հետ պատահեց տարօրինակ, շատ տարօրինակ մի բան: Մենավոր այդ բարդին մեծացավ, մեծացավ, ընդգրկեց իմ նավը, աշխարհը, դարձավ Հայաստանը իմ, հայրենիքս կարծես հսկա, վիթխարի մի բարդի էր ամբողջ, և ես գրեցի, ավելի ճիշտ գոչեցի ամբողջ կոկորդով.

Կմեռնեմ, միայն թե դու դարերում ազատ խշշաս,
Իմ հեռո՜ւ, հեռո՜ւ, հեռո՜ւ, նաիրյան դալար բարդի...

Այսօր, «Սովետական Հայաստան»-ում Վարդգես Պետրոսյանը գեղեցիկ մի ակնարկ ունի. հարց է տվել Կահիրեից հայրենադարձ «սևուկ, մասրենու թփի նման» մի աղջկա.

— Իսկ ո՞րն է ավելի գեղեցիկ քաղաք՝ Կահիրե՞ն, թե՞ Կիրովականը...

Ես մի քիչ տագնապով նայում էի աղջկան,— գրում է հեղինակը,— ի՞նչ կպատասխանի նա, որ լինի և՛ ճշմարիտ, և՛ անկեղծ, և՛ մանկական:

«Գեղեցիկ է Կահիրեն, մեծ խանութներ ունի, պողոտաներ, բարձր տներ, բայց... բայց մերը չէ, Կիրովականը մերն է...»:

Ինձ որ հարց տային՝ ես կասեի. Կիրովականն է գեղեցիկ, քան Կահիրեն, Երևանն է գեղեցիկ, քան Փարիզը և Լենինականը, քան... Նյու-Յորքը: Ճիշտ է, չէր լինի ճշմարիտ: Բայց ի՞նչ է ճշմարտությունը: Ես մի մայր ունեի. վաղուց է վախճանվել: Նա գեղեցիկ չէր, մանավանդ հասուն

տարիքում։ Նիհարել էր հիվանդություններից, վաթսուն տարեկանի մոտ կշռում էր ուղիղ երեսուն կիլո։ Կմախք ուղղակի։ Ես գիտեմ, որ շատ գեղեցիկ կանայք կան աշխարհում, մայրեր կարմիր թշերով, բայց իմ մայրն ինձ համար կանանց մեջ գեղեցիկն էր գեղեցիկների։ Ես նրան եմ պարտական իմ ծնունդն ու կյանքը։ Ես կյանքում մոքովս անգամ չեմ անցկացրել, որ կարելի է և հարց տալ, թե Ժանի՞ մայրն է գեղեցիկ, թե իմը։ Անշուշտ՝ իմը։ Հակառակ, որ իմ մայրը նկատել ամենագեղեցիկ կինն աշխարհում՝ կլիներ և՛ ոչ հշմարիտ, և՛ ոչ անկեղծ, թերևս միայն լիներ... մանկական։

Մանուկները, պատանիները անկեղծ ու հշմարիտ են լինում կյանքում, իսկ մեծերը նույնը լինում են հաճախ, երբ... մանկանում են։ Մոր ու հայրենիքի առաջ լինում է այդպես... Իմ շուրթերի վրա նույն երգն է միշտ... կարդին հիմարություն։

Իմ հայրենի մանուկների հետ...

Փոքր աղջիկս պիտի դասերը գրի, բայց սպառել էր թանաքը. ասում էր.

— Հայրիկ, ինձ թանաք գնի շուկայից։

Իջնում եմ փողոց ու շվարել եմ, չգիտեմ որտեղից հարեմ։ Դա իմ գործը չէ, ես առհասարակ ահավոր անճարակ եմ որևէ բան գնելու հարցում։

Դիմացից փոքրիկ պիոներներ են գալիս, մի փոքրիկ աղջիկ ձեռին թանաքի լիքը շիշ կա.

— Ձե՞ս ասի, փոքրիկ, որտեղի՞ց կարող եմ ճարել այդ թանաքից։

— Հիմա չեք ճարի, ուշ է, փակել են խանութները...

— .....

— Բա, վերցրեք իմը ձեզ։

— Չէ, չի կարելի, իսկ դու ի՞նչ կանես։

— Ես տանը էլի ունեմ։

— Գոնե վերցրու արժեքը։

— Բա՛ ամոթ չի՞...

Իհարկե, ամոթ է, բալիկ, տանջվում եմ ճանապարհին,

չվիրավորեցի՞ նրան, ես և՛ ճշմարիտ էի, և՛ անկեղծ. «վերջնում ես մի բան, պիտի վճարես փոխարժեքը, բայց իմ առաջարկությամբ մանկական այդ հոգում մի բան չխանգարեցի՞... Ինչի՞ է պետք այդ անկեղծությունը։

Բանաստեղծ ընկերս շքանշան ստացավ վերջերս։ Ասում էր, թե՝ շնորհավորում են չորս կողմից, հայտնում շնորհակալություն տված գործերի համար։ Հետո շարունակում էր,— Բայց ախր ինչո՞ւ են շնորհակալություն հայտնում, չէ՞ որ այդ բոլորի համար ես եմ պարտական իմ ժողովրդին, չէ՞ որ ես եմ շնորհակալ կյանքին, բա ամո՞թ չի...»։

Մանրուքներ

Խռովել են իրարից, հայտնի է, չեն խոսում քսան բոպեից ի վեր, մինչդեռ ավտոբուսը ուր որ է կհասնի էջմիածին և նրանք կբաժանվեն։ Ճանապարհին ես նայում էի չորս բոլորս։ Պատկերացնում, մտածում Երևանյան հսկա լճի մասին, հետո ապագայում ստեղծվելիք նոր, հսկա թաղամասերի... Մի քանի տասնամյակ ևս, և Երևանը կդառնա Կահիրեից, Փարիզից էլ լավը։ Եվ սա ֆանտազիա չէ... Իսկապես էլ կդառնա։ Ավտոբուսի առաջին մասում մի ծերունի սրինգ է նվագում, նվագում է մեղմ, շատ մեղմ, տխո՞ւր։ Սկզբում կարծում էի, թե ռադիոյից է, հետո նկատեցի։ Կորավ իմ օրվա երգի մրմունջը և լավ եղավ, պոկվեցի։ Սիրտս պարուրվեց ինչ-որ տխուր զգացմունքով, ինչ-որ մելամաղձություն չոքեց սրտիս։ Մտածում ես հսկա, վիթխարի հեռանկարների մասին և մեկ էլ եղեգնյա մի սրինգ կարծես հին, հին ցավերից ինչ-որ բան է հուշում քեզ։ Նախնադարյան տխրության մի երանգ կա այդ բոլորի մեջ, եթե չլիներ ավտոբուսի արագ ընթացքը, կարող էիր խորհել, որ ոչինչ էլ չի փոխվել կյանքում։ Սրինգ, այն էլ ավտոբուսի մեջ և ֆաբրիկաներ, որոնք մտածող մեքենաներ են արտադրում։ Ե՞կ ու հասկացիր։ Իսկ նրանք խռովել են իրարից, որովհետև սիրում են... Խռովել են շատ, հավանաբար սովորական մի բանից։ Աղջիկը առատ, հորդուն վարսեր ունի, որոնք կարմիր մի ժապավենի սեղմումի տակ կիսով թափվել են հակատին

ու քունքերին, ուղան՝ ջղուտ ու առնական դիմագծով։ Նախ խոսեց աղջիկը... Բայց նա շուտ եկավ։ Ձպատասխանեց։ Անցավ մի տաս բոպե, զղջաց հավանաբար ու դարձավ աղջիկա կողմը, ինչ-որ բան շշնջաց, այս անգամ էլ աղջիկը չի պատասխանում։ Խռովել են։ Ի՞նչն է պատճառը։ Հավանաբար կամ աղջիկը տղային դուր գալու համար մոդայիկ է սարքել մազերը և բարկացրել նրան, կամ ուշացել է մի տաս բոպե ժամադրությունից։ Բայց որ հիմա միասին են, չեն զգում, որ կարճ է ճանապարհը ու տարվել են մանրուքներով։ Չեն խոսում։ Բաժանվելու են և զղջալու երկուսով։ Անհամբեր սպասելու են նոր ժամադրության, սրտի դողով, մտավախությամբ։ Չլինի՞... Թերևս սա էլ լինի վերջին հանդիպումը, շատ են սիրում իրար, հայտնի է, խորն են խռովել։ Ուզում եմ հակվել նրանց ականջներին և հուշել մեղմիվ. ախր չէ՞ որ դուք... սիրում եք իրար։

Զարմանալի բան է կյանքը, երբեմն նույնիսկ ավելորդ մի հուշաբարի պակասից ինչքան բաներ ենք կորցնում կյանքում... և տարօրինակն այն է, որ տարվում ենք մանրուքներով, երբ մի բան շատ ենք սիրում։

Անցյալ օր մի ընկեր ինձ ասում էր. «Սիրելիս, դու գլխավոր մի հանցանք ունես... խորհում ես առավել սրտով, քան մտքով, իսկ սրտով խորհելը վնասում է քեզ, հասկանո՞ւմ ես, հարկ է մտքով, մտքով խորհել կյանքում»։

Ճիշտ էր ասում... Բայց ես ինչո՞ւ եկա էջմիածին...

Արթուր Բիմպո...

Այսօր առավոտ մի ընկեր ինձ ուզում էր հաղորդակից դարձնել Արթուր Բիմպոյի մի բանաստեղծության։ Նոր էր կարդացել. «Մեծ բանաստեղծ է,— ասում է,— շատ մեծ բանաստեղծ, սիրելիս, լսիր՝ թարգմանեմ ...«Տափատս ծակ է և գրպաններս էլ են ծակ, իսկ ես ձեռքերս ծակ գրպաններիս մեջ մտնում եմ գալիս փողոցներով։ Հարուստ եմ ես, իմ հյուրանոցը երկնքում Մեծ արջն է...»։ Ընկերս թարգմանում էր եռանդով, աղմկալից, ցույց էր տալիս երկինքը, հետո էլի կրկնում նույնը. «Տափատս ծակ է, և գրպաններս էլ են ծակ,

բայց...»։ Ես զարմացած նայում եմ նրան։ Ոչի՛նչ, լավ է, շատերը ասել են նույնը կամ արտահայտել նույնանման զգացումներ։ Թե Բիմպոն ի՞նչով է մեծ, ես չեմ հասկանում ընկերոջս բացատրածից։ Իսկ նա շարունակում է ասել, կրկնել։ Ուրիշ տղաներ էլ միանում են իր ասածին. կանգ են առնում. «ծակ տափաս»-ի նկարի վրա հիանում։ Մեծ է,— ասում են,— հիանալի է, հոյակապ։ Հավանաբար չեն ուզում խախտել ընկերոջս տրամաբանությունը։ Ես մի քիչ էլ ձանձրացած դուրս եմ գալիս։

Բայց ես ինչի՞ եկա էջմիածին... Ձեռքերս դնում եմ գրպանս ու թափառում եմ կրկին աննպատակ։ Ականջներիս մեջ սրինգի նվագն է, տխո՞ւր, մելամաղձոտ։ Մթնում է օրը, երկնքում աստղեր են, գլուխս բարձրացնում եմ վեր... Լի՞քը, լի՞քը աստղեր, տրոփում է սիրտս, խեղդում ինչ-որ զգացում կոկորդս։ Իմ տունն այստեղ է, հայրենին, ես չեմ փոխի նրան աշխարհում ոչ մի բանի հետ, իսկ աստղերն աշխարհում իմ հյուրանոցն են։ Բայց ես կարծես լսել եմ նման խոսքեր, ինչ-որ մի տեղ, ո՞վ է ասել այդպես։ Ձեռքերս գրպանումս՝ մանեմ գալիս, գրպաններս ծակ են, տափաս էլ է ծակ»։ Հիշեցի, այո՛, Բիմպոն է ասել։ Ճիշտ է, բայց ինչո՞ւ առավոտ վաղ ես չհասկացա իմ ընկերոջ... ներաշխարհը։ Բարդ, շատ բարդ մեքենա է մարդը։ Չէ՛, ես չեմ կարդացել ֆրանսիացի բանաստեղծին, նա կարող է և իսկապես մեծ, շատ մեծ բանաստեղծ լինել, բայց ես, ես հարկ է չլինեի այնքան մանր, գոնե դուրս չգայի, չէ՞ որ նա՝ ընկերս, կարիք ուներ լսելի դարձնելու ինքն իրեն չէ՛, ես առանց կարդացած լինելու, հարկ է անպայման կրկնեի, գոնե կրկնեի թե՝ Բիմպոն ամենամեծ բանաստեղծն է, և ես ուղղակի հիանում եմ նրա զգացմունքների երանգին, նրա կյանքի հանդեպ տածած սիրուն, մարդկայնությանը...

Իսկ ես Բիմպոյին կկարդամ անպայման և գիրքը կվերցնեմ նրանից։

— Յուրաքանչյուր մարդ մի քիչ բանաստեղծ է,— ասում էր ընկերս։— Մայրս,— շարունակում էր,— ամուսնացրել էր իր սիրած, ամենից շատ սիրած աղջկան և ամիսներ շփոթից նամակ չէր գրում։ Մի օր քրոջիցս կշտամբանքի նամակ ստացա թե՝ ինչո՞ւ չես գրում, մայրիկ, մոռացե՞լ ես ինձ։ Ես պատահմամբ կարդացի մորս պատասխան գրությունը։ Անգրագետ կին է մայրս, բայց գրում է ոլոր-մոլոր տառերով։ «Ա՜յ, բալա ջան, ես գրում եմ քեզ ամե՛ն օր, ամե՛ն ժամ, ամե՛ն րոպե։ Գրում էի առանց թղթի ու թանաքի... Բա դու չէի՞ր զգում...

— Ես կարդացել եմ ինչ-որ մի տեղ նման բան,— պատասխանեցի ընկերոջս և գրգռեցի միտքս.

Ես գրում էի ամբողջ երկար,
Եվ ամբողջ գիշեր ես գրում էի,
Ձայրանում էի, զարմանում էի,—

վերջապես ասացի ես, բանաստեղծը ասում էր. «Ես մեռնում էի, ապրում էի, ժպտում էի, հորդում էի և մեկ էլ տեսա՝ թղթեր չկային, և թանաք չկար, և գրիչ չկար...

— Գիտեմ,— ասաց ընկերս,— քո բանաստեղծ ընկերն է թարգմանել Տագեուշ-Ռուժեվիչից, «Գրական թերթ»-ում էր։ Բայց իմ մայրը նման միտք վաղուց է հայտնել. երևում է, որ իմ մայրն էլ կարոտի հարցում կարդին բանաստեղծ էր... Իմ ծիծաղը բռնեց, ընկերս թե՝

— Ինչո՞ւ ես ծիծաղում։

— Ծիծաղում եմ, որովհետև հիշեցի, որ թարգմանությունն իր ստորագրությամբ լույս տեսնելուց առաջ բանաստեղծ ընկերս իր իսկ թարգմանած այդ տողերը չես գիտեր ինչո՞ւ, սեփականացրել էր և ասում էր թե՝ ինքն է գրել...

— Հե՞տո։

— Հետո հրապարակեց և հանդես եկավ որպես թարգմանիչ։ Ես հանդիպեցի հաջորդ օրը բանաստեղծ ընկերոջս, նայում էի զարմացած նրա աչքերին, ոչինչ չկար այնտեղ։ Հետո մենք կարծես անտեղյակ այդ բոլորից ման էինք գա-

լիս։ Խոսում էինք գրականության մեջ զգացմունքների, կրքերի մասին և հիշում մի այլ բանաստեղծի, որ միշտ պնդում է, թե հայրենասիրության ինչ-որ թեմա, այդ մասին ինքն է գրել առաջին անգամ, սիրո և ինչ-որ զգացո՞ւմ... Ինքն է այդ թեմայի խոր մեկնաբանությունը տվել առաջին անգամ...

— Վերջապես մեծ բանաստեղծ է, սակայն փոքր մարդ,— եզրակացրեց բանաստեղծ բարեկամս...

— Իսկ ինչո՞ւ։

— Այդ բոլորը, ինչպես ասել, նույնիսկ կա օդում։ Մթնոլորտի մեջ է բոլորը, ինչպե՞ս կարող է պատահել, որ մեկն ասի, թե ինքն է հայտնաբերել առաջին անգամ։ Ես նայում եմ նրան, նայում այս անգամ տարօրինակ մի ժպիտով. չասե՞մ նրան, թե.

Ես գրում եմ ամեն օր, ես գրում եմ ամեն ժամ, գրում եմ տրամվայում, փողոցում, նույնիսկ, նույնիսկ... խորտկարանում, բայց ո՛չ գրիչ է լինում, ո՛չ թուղթ, ո՛չ էլ թանաք։

Իսկ եթե ասեմ, որ այդ ես եմ գրել, հո չի ասի նա, թե՝ հիմարի մեկը, ես ինքս եմ թարգմանել այդ բոլորը և ոչ թե քեզանից, այլ այդ մասին առաջին անգամ երգել է Տադեուշ Ռուժևիչը։

— Չէ՛, վստահ եմ, չի ասի իմ բանաստեղծ ընկերը, մարդ է, իսկականը, նա գիտի, որ իմ ընկերոջ անդրագետ մայրն էլ է բանաստեղծ, չէ՞որ այդ բոլորը կա... մթնոլորտում։ Լավ է, երբ բանաստեղծ ես ու անդրագետ։ Լավ է, երբ մեծ բանաստեղծ ես։ Բայց ամենավատը գրագետ լինել, լինել բանաստեղծ ու մեծ չլինելն է, այդ է ցավը։ Միջակությունը մի քիչ լավ չի, էլի։ Բայց գրականության մեջ միջակությունը... ամենից վատ տառապանքը կյանքում։ Ես առավել մեծ ցավ չեմ կարող պատկերացնել...

Գրականության մասին

Փոքր հարցեր չկան կյանքում, բոլոր հարցերն են մեծ, հարցը խանդավառության մեջ է, այն, թե դու ինչպես ես մոտենում յուրաքանչյուրին, ինչ խանդավառությամբ։ Սիրտս պայթում է,— սեղմվում է կոկորդս, ձեռքերս գրպաններիս

մեջ ման եմ գալիս փողոցներով։ Ասում եմ՝ նստեմ մի պատմվածք գրեմ, սրտովս չի։ Ծրագրել եմ վեպ գրել. տարիներից կուտակված վշտեր կան, դառնություններ, սերեր սրտումս։ Ընկճում են, ցավացնում սիրտս։ Սկսել եմ, բայց չեմ կարող կազմակերպված առաջ տանել աշխատանքս. լինում են օրեր, կարծում եմ, թե գրականության հետ կապ չունեմ ես, ոնց որ սիրածդ աղջկան ասես թե՝ վե՛րջ, էլ չենք տեսնվելու։ Հանգստանում ես մի պահ, թե վերջիվերջո պոկվեցիր ինչ-որ վիթխարի մի տանջանքից, բայց անցնում է մի ժամ, կարոտում ես խելագարի նման, խփում գլուխդ դես ու դեն ու միջոց փնտրում հաշտվելու։ Այդպես էլ գրականությունը։ Ինչպե՞ս թե՝ կարծում ես կապ չունե՞ս նրա հետ։ Մտել է արյանդ մեջ, ուզես պոկվել էլ՝ չես կարող։ Սիրա՞ծդ աղջիկը... Նրա վարսերը շեկ են ու թե չկա նա, նրա վարսերի շեկությունը անցնում է հայրենական դաշտերին ու հասկերին, աչքերը կապույտ են, բայց չէ՞ որ երկինքն էլ է կապույտ։ Գարուն է, խռովել ես, դե ուրեմն գնա ու կրկնակի սիրով սիրի հայրենիքդ... Ո՞վ է ասել, ով կուզի թող ասած լինի, ես էլ եմ ասում այժմ։ Բանաստեղծ ընկերս իրավունք ունի. սերը, կյանքը, օգում է, մթնոլորտում։ Դու ուզում ես խռովիր այդ բոլորից, չէ՞ որ կա հայրենիքը, հողը, որի վրա ոտքերդ են, դո՛ւ։ Հո չե՞ս կարող բոլորի տեղ, բոլորի սերը բարդել հայրենիքի վրա, պիտի մեկնել հակառակից։ Դաշտերն ու հողը դեղին են ու կարմիր, ինչ-որ խառնուրդ շեկի մոտ, և այդ նրա վարսերին է նման։ Երկինքը կապույտ է այսօր նրա աչքերի պես, ուրեմն սիրիր և հայրենիքդ, և նրան։ Իսկ նա ու հայրենիքը գրականությունն է։ Այդ բոլորին ավելացրու տակավին կյանքը, պայքարը վաղվա լավագույն օրերի համար ու ե՛կ ու մի գգա, որ ուսերիդ վրա ճնշել է մի վիթխարի բեռ, որ ընկճում, ընկճում է քեզ։ Գրականության մեջ մեծ պիտի լինել, թե չէ ի՞նչիդ է պետք այդ տառապանքը։ Կցկտուր ու խառնիխուռն ապրումներով մի բան կարո՞ղ է դուրս գալ... ընթերցողը չի՞ ասի, թե ինչ բան է սա, ակնա՞րկ է, հոդվա՞ծ, դիմանկա՞ր, թե վերջիվերջո՞...

Բանաստեղծ ընկերոջս կարդացի գրածներս։

— Գրողներ կան,— ասում է,— ծրագրում են, նստում,

աշխատում, ապրում են կյանքը սպիտակ թղթերի դեղերի առաջ, կան և գրողներ, որոնք ապրում են կյանքը, տառապում և գրում իրենց կյանքով, տառապանքով:

Այդպիսին է, երկրորդների նման, իմ բանաստեղծ ընկերս:

Նրան պարգևատրեցին Պետական բարձր պարգևով, սա առաջին պարգևատրումը չէ իր.

«Ես բախտավոր եմ այս աշխարհում,

Որ հավատում եմ իմ հավատին»—արտասանում եմ ես:

— Իմ գրածն է,— ասում է նա:

Ես ծիծաղում եմ մանկական անխարդախ ծիծաղով: Նստում ենք նրա հետ, նայում ենք երկնքին, վե՞րը, ծառերից այն կողմ: Ես սիրում եմ նրան, բայց նախանձում եմ, որ արձակով եմ կարողանում գրել միայն և բանաստեղծ էլ չեմ կարող լինել երբևէ:

Գարուն է... Ամպեր են կուտակվում, քիչ հաց նա՝ իմ հայրենի երկինքն էլ պիտի բանաստեղծություն գրի, մթնոլորտում պոռթկումից առաջ զգացվող զսպվածություն է... գիտեմ, առա՞տ, շատ առատ, անպայման բարերեր անձրև կլինի...

Անձրևի տակ քայլելիս...

Վերջիվերջո մի մխիթարանք ունի գրողը. ասում ես՝ լույս եմ ընծայել այսքան պատմվածք, այսքան չգիտես ինչ, բայց մխիթարում ես ինքդ քեզ: Ոչի՛նչ, ինչ որ ուզում ես գրել, ինչ որ կուտակվում է տարիների ընթացքում կպայթի մի օր, և դու էլ գոհ կլինես, այսինքն թե սրտովդ եղած ստեղծագործությունը, այն, որ դու կուզեիր, որ գրած լիներիր, պիտի գրես ու կգրես անպայման: Ապագայի երազը, վաղվա հավատը գործիդ նկատմամբ փրկում է քեզ: Թե այդ վաղը ե՞րբ է լինելու... հորդառատ անձրևի տակ հանդարտ քայլելիս այդ մասին այժմ խորհելու... կարիք էլ չկա:

Պատռում ես, պատռում ես թղթերը, մանր-մանր տառերով, երբեմն հանդարտ ու հստակ, երբեմն հապճեպ ու խծբծված տառերով գրված թղթերը, քո թղթերը: Այդ թղթերի կույտերի մեջ ինչքա՞ն, ինչքան ապրումներ ես դրել, ինչքան կործանված երազներ կան այդ թղթերի մեջ, ինչքան կորած, անհետ կորած ապրումները, որ քոնն են եղել մի ժամանակ և հիմա չկան: Կյա՞նքն է խլել այդ բոլորը քեզանից, թե՞ դու ես փոխվել, չես իմանում: Բայց երբ կարդում ես, պրկվում է սիրտդ, փոթորկվում հոգիդ... Պատռե՞լ, թե թողնել: Դե՛, պատիր, թող գնա: Ինչքա՞ն, ինչքա՞ն շատ ես պատռել յուրաքանչյուր անգամ, երբ անցել ես քաղաքից քաղաք, երկրից երկիր, երբ փոխադրվել ես տնից տուն, իսկ... երբեմն էլ քո կամքից անկախ հարկ է եղել այրել դրանք:

Մարդկանց ու աշխարհի, սիրո ու երազի մասին ինչքա՞ն, ինչքա՞ն տողեր են եղել այնտեղ, և ամեն տեղ չէ, որ հաշտ աչքով կարող էին դիտել այդ բոլորը, թղթերը պատռել ես հաճախ, որպեսզի ավելորդ բեռ չլինեն ճամփիդ, պատռել ես, որպեսզի ավելորդ հարցերի առիթ չտաս կյանքի ու սիրո թշնամիներին... Ինչքա՞ն, ինչքա՞ն կործանված երազներ եղել են այնտեղ, ինչքա՞ն, ինչքա՞ն անհետ կորած մարդկային ապրումներ: Իսկ հիմա այլ է հարցը: Պատռում ես անցյալդ, սովորական ուղիով ընթացող սովորական կյանքիդ պատմությունը, ուզում ես շուտ տալ, և ի՞նչ... տեսնում ես, որ հեշտ չի այդ բոլորը: Մարդիկ կան կանգնած ճամփիդ, շեղ ու շիլ նայվածքներ կան ամենուրեք, ինչո՞ւ ես պատռում, ոչնչացնում, ասում են, թե թղթերը պատռելը ոչինչ, սակայն սովորական կյանքի ընթացքին, ընդունված բարոյական նորմաներին դեմ քայլել չի լինի: Դու գրող մարդ ես, թղթերիդ հետ սրա ինչ ուզում ես, բայց... բայց զգույշ քո կյանքի համար, ուրիշների կյանքի հետ խաղալուց: Է՜հ, ինչ անել: Դժվար բան է կյանքում լինել մարդ, սիրել մարդերն ու կյանքը, սեր ցանկալ կյանքում, դժվար է, հավատացե՛ք...

Ինչքա՞ն, ինչքա՞ն սովորական մարդիկ կան կյանքում, ինչքա՞ն ինքնակոչ դատախազներ, որոնք դեմ են անսովորին,

թեկուզ այդ անսովորը նրանց ոչնչով չի խանգարում։ Առիթ են գտել իրենց զրկանքների, իրենց ձախողած մարդու երջանկության վրեժը լուծելու քեզանից, չէ՞ որ երջանկության գինը թանկ է, ինչքան քիչ մարդիկ են ըմբռնում, թե կյանքում կարելի է և խախտել ընդունված նորմաները, ելնելով ստոր ու տմարդի շարժառիթներից, բայց և լինում են դեպքեր, որ խախտվում են այդ նորմաները ի՞նչ ծանր ապրումների ի գին, վեհ ու բարձր, մարդկային խոր տառապանքների և վսեմ ապրումների գիտակցությունից։ Ինչքա՞ն, ինչքա՞ն բարոյական անգիր օրենքներ կան, դժվարհասանելի սովորություններ կան մարդու համար։

—Պատռում ես թղթերդ, դե՛, պատռիր, դժվար թե հետագայում այդ բոլորը քո անցած կյանքի ուղին բնորոշելիս, ինչ-որ անհրաժեշտ լինեն։ Կյանքում, աշխարհում հետք են թողնում, հիշվում են մեծությունները և մեկ էլ մեծ... ստորությունները։ Դու միջակություն եղար երկու հարցում էլ... Սովորեցիր կյանքում ապրել որպես այդպիսին, աշխատիր սովորել ես ամենամեծ տառապանքին, կյանքիցդ հետո որպես միջակություն մոռացվելու տառապանքին։ Սովորեցիր, վարժվեցիր առաջինին, հեշտ կլինի երկրորդը։ Բայց երբ գտնվում են մարդիկ, թեկուզ քիչ, բայց երբ գտնվում են մարդիկ, որոնք ունեն խոհեմությունը բոլոր դավերի, ցավերի, տգեղությունների միջից պոկելու այրվող մի կյանքի շիճուկը, խորքը, հավատա՛, որ կարժե ապրել իսկապես, թեկուզ որպես միջակություն, կարժե ապրել իսկապես, ապրել գլուխը բարձր պահած, հպարտ, լիաթոք։

Պատռում ես, պատռում ես թղթերդ, դե՛, պատռիր, գրողի խոսքը պետք է կարճ լինի. կարճ ու ամփոփ հեռագրի նման, պատռիր ու գրիր, թե դու սիրում ես կյանքը, մարդկանց ու... նրան։

Ամեն տեղ նույնն է մարդը...

Բայց ամեն տեղ նույնն է մարդը... երբ սիրում է։ Գլխումս ամպեր են, սպիտակ, կապույտ։ Աչքերիս մեջ, մարմնիս՝ ծովն է, ծովը, իմ Սև ծովը։ Միայն, միայն

սիրտս է կարմիր, իմ հավատքի դրոշին նման։ Մայրամուտ է, հորիզոնում արևը կլանվեց ծովի կողմից։ Նախ շիկացած լամպի էր նման, ապա թոնիր դարձավ, հետո փոքր, փոքր կրակի մի գունդ, որ լողում է դեպի քեզ, հետո մի բոց և վերջ։ Տիրեց մոխրագույնն ու դեղինը։ Լացս է գալիս, որ ի՞նչ... որ մի օր էլ պիտի թողնել այդ բոլորը և պիտի մեկնել։ Նավի վրա ամեն ինչ հստակ է հիմա։ Ճայեր կան նավի շուրջը, որոնք ճախրում են հանդարտ, մի փոքր թևաբախում և կարծես սահում են կամ կարող են սահել անվերջ, անվախճան։

Երջանի՜կ ճայեր... թևի մի փոքր հարված երկնային անհուն տարածության մեջ և մտածում ես... ինչքան քիչ բան է հարկավոր երջանկության համար։

Բաթումիից մի հայ մարդ է նստած կողքս, շեշ դիտեր որտեղից որտեղ, թե՝

— Երբ երիտասարդ տղա էի, դդումը ձմերուկի տեղ կուտեի, տղաս...

Շեշտը արևմտահայերեն է, Տաճկահայաստանից է եկած վաղուց, շատ վաղուց։ Փաստ, որ իր կյանքի փիլիսոփայությունն իսկ հիմնված է ստամոքսի վրա։ Ծիծաղս է գալիս։ Լավ մարդ է, երկար պատմում է իր կյանքի դառնությունների ու ներկայի երջանկության մասին։ Թոնների ու ծոնների տեր է։ Մանկացել է, դիտում է ծովը ու պատմում, ստիպում է լսել։

— Հայրիկ ջան, ես քո կյանքին մատաղ։

— Է՜հեյ...

Ծովն ու երկինքը հագել են լաջվարդ շորեր։ Մոտենում ենք Սուխումին։ Չէ՛, նույնն են մարդիկ աշխարհի յուրաքանչյուր անկյունում... Երբ սիրում են։ Նույնն է սա զույգը, որ համբուրվում է նավի ցուցակին, նույնն են գիշերները յուրաքանչյուր նավահանգստում, նույնն են մարդերը աշխարհի, երբ խմած են, երբ խմել գիտեն, նույն մտերմությունը գինովի, նույն եղբայրացումը անծանոթ, օտար մարդու հետ, նույն գեղումները։ Աշխարհի յուրաքանչյուր քարափին նույն ձևով են խփում ալիքները, նույն խելագարեցնող փրփուրներն են գժվում ծովափներին, նույն կիրքով ու սիրով են համբուր-

վում սիրահար զույգերը Սև ծովի այս ու այն ափին, նույնիսկ, նո՞ւյնիսկ հեռավոր օվկիանոսների սահմանագծում։

Մարդիկ տարբերվում են, երբ սկսում են մտածել...

Ես սիրում եմ ճայերին... Նոր աչքերով եմ դիտում կյանքը և զարմանում։ Ինչքա՞ն, ինչքա՞ն անգամներ նոր աչքերով եմ դիտել կյանքը, ինչքան քիչ բան է հարկավոր երջանիկ լինելու համար։ Տարածության մեջ մի փոքր թևաբախում և սահում ես անկաշկանդ, անհոգ, առանց նույնիսկ նվազագույն ճիգի։ Ինչ-որ գյուտ կարծես արած լինեմ և նորությունը սերն է, ծովի առթած, ծովից եկած անսահման սերը մարդոց նկատմամբ։ Ահա թե ինչ բան է նորը, նորոգվողը դարեր շարունակ։ Երգում է մի ռուս տղա իր կիթառի խոլ տեմպով, հիմա հեռու, այլ ափերում հավանաբար այլ տղաներ կան՝ թախծոտ երգեր իրենց շուրթերին...

Ինչ լա՜վ կլիներ մարդիկ երգեին միայն ու քիչ խոսեին...

Չէ՞ որ երբ ծովն է աչքերիդ մեջ, և երբ երգում ես, նույնն են մարդիկ բոլոր մայր ցամաքներում։ Թե ասեին, ի՞նչ կուզենայի կյանքում, կասեի՝ ձուլվել, հալվել ծովի հետ, լինել փրփուր ու ժեռ գալ աշխարհի բոլոր ափերին։

Չէ՛, ես երիտասարդ չեմ այլևս, կամ գրեթե չեմ, բայց որ լիներ դդում, ես այն կուտեի կարմիր-կարմիր, սև-սև կուտեր ունեցող, իմ հայրենիքի արևահամ խոշոր ձմերուկի տեղակ։ Կուտեի ու շերտ-շերտ կբաժանեի հանդիպող այն բոլոր մարդկանց, ինչպիսին էլ որ լիներին նրանք։ Բայց ինչպիսի՞ն էր արևը, որ կլանվեց ծովի կողմից, նախ արևը կարծես արևի էր նման, հետո շիկացած լամպ էր կարծես, ապա թոնիր դարձավ, հետո փոքր, փոքր կրակե մի գունդ, որ լողում է դեպի քեզ, բայց... չի հասնում։ Հետո մի բոց, վերջին մի հեք կյանքի խելահեղ սիրո և վերջ...

— Լսեցի՞ր, տղաս, իշտե այդպես։

— Է՜խ, հայրիկ, է՜խ...

Այսօր հոկիկեյի մրցման գնացի... Մոսկվայում։ Հոկիկեյը ո՞ւր, ես ուր։ Կյանքումս առաջին անգամ էր։ Մոսկովյան երկու խմբեր էին հակատում։ Ես ուրախանում էի, երբ գոլ էր խփում ախոյաններից մեկը և տխրում միաժամանակ պարտվողի հաշվին։ Կարճ տևեց հետաքրքրությունս, բան չհասկացա։ Միայն ուզում էի, որ շատ խփվեին գոլեր։ Հոկիկեյում երբ գոլ են խփում, ցանցի մոտ վառվում է կարմիր լույսը, և կարմիր լույսը ինձ տալիս էր խարկանքը Սև ծովում մայր մտնող արևի։ Արևը հոն կարոտ էր, այրող կարոտ։ Հոկիկեյը խաղում են ձյան վրա, սառցակալած ձյան վրա։ Թե ասեին ի՞նչ կուզենայի էլի կյանքում, ես կասեի, ես սիրում եմ, հավատացեք, սիրում եմ աշխարհում գոյություն ունեցող բոլոր ծովերը, Սև ծովն ու Միջերկրականը, Բալթիկն ու Մարմարան, տակավին նույնիսկ խաղաղ օվկիանոսն ու Ատլանտյանը։ Բայց ներեցեք ինձ, ես կուզեի հալվել, ձուլվել, Մոսկվայից հեռու մի փոքր, սահմանավոր լճի մեջ, հակառակ այն բանին, որ սիրտս տառապում է անսահմանությունների այրող կարոտից, այո՛, ներեցեք ինձ, ես կուզեի հալվել ու ձուլվել իմ հեռու հեռավոր կապույտ Սևանում, կուզենայի խփվել իմ Սևանի կապույտ ժայռերին, լինել նույնիսկ տափաքակ մի քար տափունքին։ Մի տղա մի օր կարող էր և գալ և շպրտել ինձ լճի մակերևույթին, կոստոստեի հրճվանքից... Բայց գոլ խփեցին հոկիկեյում... Ես խելագարի նման ծափահարում եմ արդյունքը։ Ես էլ չգիտեմ ինչո՞ւ, չէ՞ որ, ո՛չ խմբերի մասին գաղափար ունեմ և ո՛չ էլ գոլ խփողների... Կյանքումս առաջին անգամ եմ հոկիկեյի մրցման գնացել։

Վառվում է կարմիր արևանման լույսը ցանցի մոտ, վառվում ու մարում, իմ սիրտն է հալվել հեռու-հեռավոր Սևանում, և լույս է դարձել սառցակալած դաշտի ցանցերի նման։

Երևակայեցեք, հոկիկեյի մրցումից ես չէի կարող պատկերացնել, որ այսքան տարօրինակ, հաճելի հաճույք կարող եմ բաղել...

Մրջյան հայտագիրը բոլորը գնում էին խաղասկզբից...
Ես դուրս գալուց գնեցի մի հատ ու մակագրեցի... նրան։

Մոսկովյան աշուն...

Մոսկովյան խորը աշնանային առավոտ, բակում սրսփում են բարդիներն ու ծառերը, որոնք ունեն տարօրինակ տերևներ։ Պլպլում են մեկ կանաչ, մեկ արծաթագույն։ Երկինքն ամպել է, տխուր։ Թախծոտ, սիրտ պրկող առավոտ է։ Ուզում եմ քայլել փողոցներով, բայց նստել եմ սենյակում մենակ։ Շոգ է ներսում։ Բակում հսկա բնակելի շենքեր են։ Պատշգամբներում կապույտ, կանաչ թիթեղյա ծածկերով։ Մի շարք պատուհաններում դեռ համառում է էլեկտրական լույսը։ Դուրսը, օդում՝ ինձ այնպես է թվում, թե ինչ-որ խմիչքի բույր է։ Մոսկովյան այս առավոտ խմիչքն է թափվում մայթերի եզրին ու բակերի մեջ, դեղին, դեղին ինչ-որ խմիչք, որ խշշում է ոտքերի տակ և դիպչում սրտիդ և հարբեցնում մարդուն։ Թե չէ ո՞րտեղից ծառերի տերևները պիտի լինեն մի երեսով արծաթագույն, մի այլ երեսով կանաչ...

Չգիտեմ ինչու, ես Մոսկվայում միշտ ինձ մի տեսակ եմ զգում։ Շատ քաղաքներ եմ տեսել, շատ քաղաքների մեջ ապրել, բայց Մոսկվան ուրիշ է, ինչ-որ արբեցուցիչ մի բան կա մթնոլորտի մեջ, ինչ-որ արտակարգ խորհուրդ։ Օրինակ, Փարիզում միշտ ինքս ինձ թեթև եմ զգացել, Պոլսում հաճախ սիրտս ծանր է թվացել ինձ։ Ինչ-որ մի բան խեղդվել է կոկորդումս, շնչելը դժվարացել ինձ համար։ Բեյրութում կպչուն շոգ էր, ուզում էիր ազատվել մի բանից, չէիր կարողանում։ Աշխարհի այլ քաղաքներում, ի՞նչ իմանալ, հյուրի նման եմ զգացել ինքս ինձ, իսկ Մոսկվայում տանտեր եմ, ես ինքս եմ դարձյալ, բայց ինչ-որ զգացում, արտասովոր մի ներքին ձայն ստիպում է, որ ոտքս զգույշ դնեմ մայթերին, պողոտաներին նայեմ երկյուղածությամբ։ Խորհրդավոր, պատկառանք ներշնչող մի բան կա օդի մեջ, փողոցներում։ Լրջություն, արտակարգ մի լրջություն է պարտադրում ինձ Մոսկվան։ Երկյուղախառն մի հարգանք։ Միշտ աշնանն եմ եղել այնտեղ և չգիտեմ, զգացել եք, թե Մոսկվա-

յում ինչ-որ առանձին մի բույր կա նույնիսկ օդում, բայց մանավանդ տների մեջ, հյուրանոցներում։ Օճառի մի հատուկ բույր, որ Մոսկվային է հատուկ։

Նայում եմ պատշգամբներին. ձմեռային հագուստներ, հաստ բրդյա վերարկուներ կան կախված, հետո սավաններ սպիտա՜կ, սպիտա՜կ, ձյունեղեն քնքշությամբ ու մաքրությամբ։ Սավաններ եմ տեսել՝ կախված աշխարհի բաղում քաղաքներում, բայց երբ այժմ դիտում եմ այստեղ, ուզում եմ, որ մարդիկ երջանիկ, թեթև քնեն այդ սպիտակությունների վրա, լինեն ուրախ։ Ուզում եմ, որ ամենուր և ամեն տեղ նրանք լինեն ձյունեղեն սպիտակությամբ։

Սավանների սպիտակությո՜ւնը...

Հիշում եմ, գնացքում՝ Խարկովից-Մոսկվա, մի մարդ էր նստած դեմս։ Սիբիրից էր, վերադառնում էր Յալթայում հանգստանալուց։ Իր հետ իր քառասունի մոտ կինն էր և միակ զավակը, հաղիվ վեց-յոթ տարեկան։ Կապուտաչյա մի փոքրիկ տղա։ Կատակում և երգում էր սիբիրցին, երգում էր լրիվ օրը։ Գիշերը կինը փռեց սպիտակ սավանները և քնեցին։ Ես վարժ չեմ գնացքում և այն էլ վերևի շարքերում քնելու։ Խորհրդածում էի ուշ գիշերին և հանկարծ... մի զիլ կանչ էր, մի մղձավանջային երազ կարծես, տառապանքի անզոր մի ճիչ։ Դողահար նայեցի շուրջս։ Նա էր, սիբիրցի մարդը. գալարվում էր սպիտակ սավանների վրա, որի կեսը ընկել էր հատակին, փոշիների մեջ ու կեղտոտվել, իսկ կինը հակվել էր վրան և աշխատում էր իր ափով խեղդել ամուսնու անմարդկային ճիչը... լրիվ զարթնեց նա, բայց հանդիստացավ բոպեներ անց։ Վագոնում շատերն էին արթնացել և նայում էին ձայնի ուղղությամբ։ Կինը շիկնել էր ցավից ու ամոթից, ինչ-որ թաքուն ցավ զգալի էր, որ ճնշում էր նրան, կարծես հանցավոր լիներ ինքն այդ բոլորի մեջ։ Փոքրիկը, նա քնած էր անտեղյակ այդ բոլորին, նա հաղիվ վեց կամ յոթ տարեկան կլիներ։ Քնում էր խորը քնով, սպիտակ սավանների ձյունեղեն քնքշության մեջ։

Առավոտյան պարզվեց ամեն ինչ։ Հայրենական Մեծ պատերազմի հետքերն էին, քսան տարիներ անց շարունակվող տակավին...

Սավանների սպիտակությունը...

Նայում եմ անթարթ երիտասարդ սիբիրցուն: Չէր խոսում, կորել էր երեկվա ուրախությունը, կինը պատմել էր հավանաբար նրան գիշերվա մասին, և նա կարծես ինչ-որ հանցավոր լիներ, ամաչում էր իր հասարակությանը պատճառած ակամա անախորժության համար: Նա այլևս երեկվա մարդը չէր, պարզվել էր գաղտնիքը: Նա հիվանդ էր, խոցված մարդ:

Նայում եմ բակի սավաններին, ուզում եմ, որ մարդիկ երջանիկ լինեն, ա՜խ, ինչքան եմ ուզում:

Թափառում եմ Մոսկվայում, թափառում եմ փողոցներով, աշուն է: Բակերում փոքրիկ տղաներ ու աղջիկներ են, նման այն շեկլիկ տղային, որի հայրը տառապում էր գնացքում: Շուրջս ծառեր են, ծառեր պլպլան տերևներով, մի երեսով արծաթագույն, մյուս երեսով՝ կանաչ...

Առանձինն չեմ, և նա է կողքիս... Քայլում ենք ու չենք խոսում:

Որտեղից որտեղ հիշեցի, որ մի ընկեր ունեի Պոլսում, պատանության մի ընկեր, քայլում էինք նրա հետ դաշտերով ու մաքլցում լեռները: Քայլում էինք ժամեր ու ոչ մի բառ չէինք փոխանակում: Պատահում էր, որ մեկ-մեկ նայում էինք իրար և հասկանում ամեն ինչ: Հետո երեկոյան, բաժանման պահին.

— Լա՞վ էր, չէ,— հարց էր տալիս նա:

— Հոյակա՛պ,— պատասխանում էի ես:

Ինձ այնպես էր թվում, թե մենք զրուցել ենք ժամերով, վիճել ու վիճելուց էլ սպառվել: Հաճախ և պատահում էր, որ իմ աչքերում կամ նրա արցունքներ էին երևում և լռում էինք, սեղմվում իրար: Ինչո՞ւ եմ հիշում այդ բոլորը, չէ՞ որ ընկերս օտարության քառուղիներում է, հեռո՜ւ-հեռո՜ւ երկրներում, ուր կարծես ինչ-որ մի բան խեղդում է կոկորդը ու շնչելը դժվարացնում մարդու համար: Ինչո՞ւ եմ հիշում այդ բոլորը.

— Տես, ասում եմ ես նրան,— երեկվա քեզ նվիրած հայատպիս մեջ այսօրվա համար նախատեսված նոր հոկտեմբերի մրցում չկա՞:

— Մոռացա՞ր,— պատասխանում է,— այս գիշերվա համար այնքան թանկ գնված տոմս ունենք։

— Ո՞րտեղից...

— Կարապի լճի համար, Կրեմլի համագումարների պալատում։

Ի՞նչ կասեք, մարդկային սիրտը կարո՞ղ է տոկալ այսքան ապրումներից հետո, մի անգամ էլ «Կարապի լիճ» դիտելու և այն էլ... Կրեմլի համագումարների պալատում։

Չէ՛, լավ զգացմունքների համար անսահման կարելիություններ ունի մարդկային սիրտը, բայց ասացե՛ք... ասացեք խնդրում եմ որոշ մարդկանց, որ ինչ-որ մեծ ստորությունների և նույնիսկ, փոքր, փոքր, աննշան մանրուքների համար չարժե պղտորել կյանքում սեր ու երջանկություն ցանկացող մարդկանց հոգիները։ Ասացե՛ք նրանց, թող չաղարտեն սպիտակ սավանների ձյունեղեն քնքշությունը։ Թողնեն, որ ծառերը սրսփան աշնան և տերևների, փողոցներում թափված տերևների խշշոցից մարդիկ «հարբած» ման գան կյանքի քառուղիներում։ Չե՞ն իմանում մարդիկ, որ անսահման բեռնվածություն տանել կարողացող մարդկային հոգին չի կարող տանել նույնիսկ աննշան մի մարդու, աննշան ու անշահ շար ժպիտները, երբ սիրում է կյանքը, սիրում է այնքա՞ն։

Վերջաբանի փոխարեն

Զարակամ մարդիկ փսփսում են հաճախ,— ման է գալիս իր ինքնակենսագրությունը պատմելով, ուրիշ անելիք չունի նա գրականության համար։ Չեմ ժխտում, ինձ մոտ հաճախ է պատահում այդպես, բայց ի՞նչ անել, երբ ես ջիղերով եմ կապված կյանքին, երբ ես քայլում եմ առօրյային մերված։ Ես չեմ գրում իմ ինքնակենսագրությունը։ Կյանքն է ստիպում ինձ գրել այն։ Ես յուրօրինակ ինքնակենսագրող եմ և լավ չի լինի ինձ համար և իմ գրականությանը, երբ դադարեն իմ ինքնակենսագրական էջերը։ Առանց այրվելու կյանքում, առանց վերածնվելու իր իսկ մոխիրներից, էլ ի՞նչ գրականության մասին է խոսքը, պիտի այրվել կյանքում, թեկուզ այրվելով կարճվի կյանքը։ Ապրելուց հետո, պիտի ապրել այդպես...

ԽՈՀԵՐ ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ

Տերյանական տխուր եղանակ է, օդում՝ հակասություն։ Գարուն է իբր թե, բայց ջերմաստիճանը մոտեցել է զերոյին, սրտիս մեջ արևի կարոտ կա, բայց հաճույք եմ զգում մազվող անձրևից։ Ընկերս, որի հետ ուզում էի փոքր-ինչ խմել, լուռ քայլում է ինձ հետ, ասենք երկուսիս տրամադրությունն էլ լավ չէ, թեպետ առանձին պատճառ չկա լավ կամ վատ լինելու։

— Գիշերները,— պատմում է ընկերս,— ես հաճախ չեմ քնում և մտքիս մեջ բանաստեղծություններ եմ մշակում, բայց երբևէ չեմ մտածել թղթին հանձնել այդ բոլորը։ Երբեմն լինում է, անցնում են ժամերը, նույնիսկ ծագում է առավոտյան լույսը և ես տարված եմ բանաստեղծություններ գրելով...

— Իսկ ինչո՞ւ չես գրի առնում...

— Հիմար բաներ են, այնքան լավ ու մեծ բանաստեղծների կողքին ի՞նչ նոր բան պիտի ասեմ ես...

— Թե այդպես է, ուրեմն ինչո՞ւ այդ բոլորը։

— Ինձ համար, սիրելիս, իմ մեջ իմ սիրած կյանքի գոյության փաստի համար...

Ընկերս լավ, բարձր ճաշակ ունի պոեզիայի մասին, ռուս գրականությունից հայերեն և հայերենից ռուսերենի իր կատարած թարգմանությունները վկայում են լավ բանաստեղծը իր մեջ, մնաց, որ ժամանակին ինքն էլ է գրել և բավականին հաջող, հետո անհատի պաշտամունքի ծանր

զոհերից է, տասից ավելի տարիներ հեռու է ապրել իր հայրենիքից, տնից։ Տառապած, կոփված հասուն տղամարդ է, հիսունի սեմից արդեն անց։ Մտածում եմ իր վերջին խոսքերի վրա, մտածում, և մթագնում է հոգիս։ Երբ նոր բան չես գրում, մի անասելի վախ չլատում է նույնիսկ ապրելու տենչդ, ծանրանում է հոգիդ, միտքդ են գալիս կյանքում արած սխալներդ, գործածդ մեղքերդ, պարտաղանցություններդ և փոքրանում ես ինքդ քո աչքին։ Եթե մի անգամ էլ աշխարհ գալու լինեի, չէի ուզի գրող լինել, եթե ասենք Չեքսպիր պիտի չլինեի, իսկ Չեքսպիրից, Դոստոևսկուց, Տոլստոյից հետո մի քիչ ծիծաղելի է, անշուշտ, գրող եմ ասելը, մանավանդ երբ տերյանական տխուր եղանակ է և օդը՝ հակասություններով լի...

— Չխմե՞նք մի-մի բաժակ...

— Խմենք,— պատասխանում է,— բայց գիտե՞ս ինչ, մի նոր ձևով։

— Ինչպե՞ս...

— Այսինքն, փոխանակ բաժակները իրար խփելու, մեղմիվ մոտենանք իրար և մեր գլուխները խփենք մեկմեկու։

Ես ծիծաղում եմ. բա՞ն ասաց։ Բայց տարօրինակ կերպով հաճելի ու գրավիչ է թվում ինձ նրա առաջարկը։

— Հետաքրքիր կլինի,— շարունակում է,— եթե մեզ նկատեն մարդիկ և նայեն թե ի՞նչ ենք անում...

Իսկապես հետաքրքիր կլինի. նա հիսունն անց է, ես քառասունի մոտ, ընտանիքի, զավակների տեր, գրքերի հեղինակ։ և խմելիս, հրապարակով մոտենում ես և գլուխդ խփում ընկերոջդ գլխին։ Մի տարօրինակ հաճույք է պատճառում այդ նոր հեռանկարը ինձ.

— Թե ոչ,— ասում է,— խմելն ի՞նչ իմաստ ունի... բոլոր խմողներն էլ բաժակները խփում են իրար։

Հետո մենք լուռ շարունակում ենք մեր ճանապարհը։ Եվ ես մտածում եմ նմանօրինակ նորությունների մասին։

Ասենք, իմ առջևից գնացող այս պատկառելի մարդու քայլվածքը ինչո՞ւ է այդքան լուրջ, ինչո՞ւ նա այդքան հանդարտ, խոհուն ու ասես ծանր բնավորություն ունի։ Նա, հավանաբար, հիմնարկում չի ծիծաղի իր ստորադասների մոտ,

Նրանց առօրյան թեթևացնող մի խոսք չի ասի, թեպետ կարող է և պար գալ տան մեջ իր կնոջ ծամածռությունների առաջ։ Ի՞նչ կլինի, եթե, ասենք, ես հիմա հանկարծ բռնեմ նրա անճաշակ գլխարկի երկու ծայրերից և իջեցնեմ ականջներին, այնպես, որ ծածկվեն և՛ նրա ականջները, և՛ աչքերը... Ի՞նչ կստացվի, իսկապես, ի՞նչ արդյունք կտա իմ շատ պարզ, մանկական այդ բաղձանքը։ Անշուշտ դա կլինի մաքուր խուլիգանություն և ես կարող եմ ինքս ինձ գտնել միլիցիայում, հասարակական կարգը խանգարելու արդարացի ամբաստանությամբ. ինձ կտան ընկերական դատարանի և զսպված ծիծաղների տակ ես կստանամ իմ պատիժը. թեպետ եթե այդ արարքս հայտնի լինի իր ստորադասներից շատերին, նրանք կծիծաղեն կուշտ ու կուռ...

Ես սկսում եմ ծիծաղել։

— Ինչո՞ւ ես խնդում,— ասում է ընկերս,— առաջադի՞ս համար, բայց գիտես,— շարունակում է,— հիսունն անցել եմ արդեն, բայց իմ միջի երեխան միշտ, միշտ խանգարում է ինձ։ Կյանքի այսքան բեռնվածությունից, դառնություններից հետո նույնիսկ իմ միջի երեխան... միշտ խանգարում է ինձ. հազիվ ես սկսում խելքը գլխին մի գործ անել և հանկարծ, այդ անտանելի, այդ անզսպելի երեխան...

— Մինչդեռ,— ասում եմ ես,— նա լուրջ, խոհուն ու ծանր մարդ է...

Ո՞վ։

— Նա,— և ցույց եմ տալիս առաջից գնացող մարդուն։— Նրա միջից երեխան վաղուց է հեռացել։

Մենք բաժակները բարձրացնելիս դիտում ենք շրջապատը, հետո մեղմիվ մոտենում իրար և վստահ, թե մեզ դարպասող չկա, խփում ենք մեր գլուխները մեկ-մեկու։ Բաժանվելիս իմ խոնավ աչքերի միջից արցունքներ եմ նշմարում նրա աչքերում...

***

Մի ընկերուհի ունեմ, Ագնիվ Արարյանը, հանաչում եմ Հալեպից, այժմ նա սփյուռքահայ առաջին ուսանողուհին է մանկավարժականում։ Մենք վերջերս երեք ընկերներով հյու-

բասիրեցինք նրան։ Ընկերներից մեկը՝ Գրիշա Գրիգորյանը, Լենինականի Ղուկասյանի շրջանի Թագնալի գյուղից է, հեռակայում է ինձ հետ միասին Հայկական պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետում, նա էլ էր մեզ հետ։ Երեկոյան Գրիշան ընկերացավ Ազնիվին հանրակացարան տանելու համար։ Մենք ուրախ բաժանվեցինք իրարից։

Առավոտյան վաղ զարկին մեր տան դուռը. Գրիշան էր։

— Սիրելի՛ս,— ասաց,— ես մեկնում եմ այսօր, բայց եկել եմ, որ քեզ մի հուզիչ նյութ հաղորդեմ, անպայման մի պատմվածք կգրես և կհիշես ինձ էլ...

— Ասա,— խնդրեցի ես։

— Գիտե՞ս, որ Ազնիվը մի պապիկ ունի Հալեպում։

— Գիտեմ։

— Ուրեմն այդ պապիկը, անցյալ ամառ, երբ Ազնիվը սփյուռքահայ պիոներներին բերել էր հայրենիք, խնդրել է, որ վերադարձին իրեն՝ ծերուկին, միայն մի բուռ հաց ու մի ափ հող բերի հայրենիքից...

— Հետո՞,— ընդհատեցի ես։

— Հետո Ազնիվը մոռանում է տանել հացը, կամ մտածում է թե մինչև տեղ հասցնի կշտանա և Ծաղկաձորից հետո է վերցնում մի բուռի տեղ մի փոքրիկ տոպրակ հող միայն։ Հին երգ է, հին պատմություն, ինձ վաղուց ծանոթ, ես էլ երբ 1957-ին եկել եմ հայրենիք և վերադաձել, մի շոշափելի քանակ հող եմ տարել հետս Օշականից և բաժանել շատերին։ Ես չասացի, անշուշտ, այդ բոլորը, միայն կրկնեցի.

— Հետո՞.

— Հետո, պապիկը դառնացած, որ իր թոռնիկը մոռացել է հացը, հողը առնում է ափի մեջ, քսում աչքերին և մասմաս գցում բերանը։ Նա դանդաղ ծամում է և ուտում հողը, հասկանո՞ւմ ես, պապիկը լրիվ ուտում է հողը՝ մոռացված հացի ու անհագ կարոտի տեղակ...

Լցվել էին Գրիշայի աչքերը։ Ես շարունակում եմ լսել անտարբեր։

— Ես խոստացա Ազնիվին մեր շրջանային թերթերում մի բան գրել այդ մասին, բայց անշուշտ դու ավելի լավ

կանես այդ բանը։ Եկա մեկնելն առաջ հաղորդելու քեզ, կգրե՞ս...

— Տեսնենք...

— Ի՞նչ ասել է «տեսնենք»...

— Նման բաներ շատ եմ գրել։

— Բայց սա ուրիշ է. սիրելիս, չե՞ս զգում, պապիկը հացի տեղակ հող է ուտում։

— Կաշխատեմ, թե որ կարենամ։

— Եթե ուզես անպայման կստացվի, բայց տեսնում եմ անտարբեր ես։

— Անտարբեր չեմ։

Գրիշան հանկարծ վեր կացավ տեղից ու մեկնեց։ Ես՝ թե.

— Գրիշա...

— Հիմա գալիս եմ։

Եվ եկավ, ձեռքում մի շիշ օղի...

— Սա ի՞նչ է առավոտ կանուխ։

— Թուքս ցամաքում է կոկորդումս, երբ հիշում եմ պապիկին, հողը ուտել հանդարտորեն, ափ-ափ... բայց դու բոլորովին չհուզվեցիր։

Ես լուռ լցնում եմ բաժակները.

— Եկուր, Գրիշա,— ասում եմ,— եկուր խմենք Աղնիվի պապիկի կենացը, բայց ոչ սովորական ձևով, դե, ահա այսպես, և մոտեցնում եմ գլուխս իրենին...

Ինք ապշած նայում է ինձ։

— Հետո՞։

— Այսինքն փոխանակ բաժակները իրար խփելու, մեղմիվ մոտենանք իրար և մեր գլուխները խփենք մեկ-մեկու։

Մոտեցնում է գլուխը և ուժով թափ տալիս իմինին, անակնկալ ցավը ուշքի է բերում ինձ. մինչ նա, զգացված իր պատճառած ցավից, ուզում է արդարանալ...

— Անլուրջ ես,— ասում է,— այսօր անլուրջ ես, ներիր ինձ. երևակայիր, ես չեմ քնել լրիվ գիշերը, դու ինձ ձեռ ես առնում... Դե, ես գնացի, տոմս եմ վերցրել ավտոբուսի համար, գնացի,— ու դառնացած հեռանում է Գրիշան...

Ես պատմվածք չգրեցի, և չեմ էլ կարող գրել, ինչ-որ

չի հաջողվում գրել այդ մասին։ Ես չեմ կարող լրջանալ, այդքան լրջություն չի կարողանում տանել իմ սիրտը։ Կարոտի ու պանդխտության դառնության բոլոր երանգները ապրած ու տեսած իմ սրտի համար բաժակը խմելով լուրջ կենաց խմելը այլևս շատ է ինձ համար, սիրելի Գրիշա, իմ անուշ լենինականցի ընկեր, Թագնալի գյուղից։

Հետևյալ օրը բանաստեղծ ընկերս զարմանքով նայեց իմ ճակատին։

— Երեկ լավ քեֆ ես արել, երևում է,— ասաց մեղմ։

Մենք կոտորվեցինք ծիծաղից։

Է՜հ, շատ բաներ շուռ են եկել մեր կյանքում, ուզում ես լաց լինել, ծիծաղում ես ամբողջ հոգով, երբ կոտորվում ես ծիծաղից, ո՞վ կասի թե լաց ես լինում սրտի խորքից։

***

— Ախր, դու լավ տղա ես,— ասացի ընկերոջս,— և դիտես, կյանքում ամենալավը մարդու ընկերն է, ընկեր մարդը, դա կնոջից էլ, զավակից էլ թանկ է...

— Ես չեմ հավատում ընկերոջ,— ասաց մեղմ,— ես հուսախաբվել եմ այդ բոլոր պատմություններից...

— Բայց ինչո՞ւ։

— Մի ժամանակ, —սկսեց պատմել,— մի շատ լավ ընկեր ունեի, տարիների փորձառության բովից անցած մի ընկեր։ Մենք նրա հետ խմում էինք, կիսում մեր ցավերն ու տառապանքները, նա իմ տանն էր միշտ, ես՝ իր տանը։ Է՜հ, վատ օրեր էին, մի քիչ կորցրել էի ես ինքս ինձ, խմում էի և կինս դժգոհում էր իմ վիճակից, խրատում, բարկանում, աշխատում ի դին ամեն ինչի ետ պահել ինձ այդ կործանարար փորձությունից, բան դուրս չէր գալիս։ Վերջիվերջո որոշեց գնալ իմ ընկերոջ մոտ և ասել, համոզել նրան, որ դոնե ետ կկանգնեցնի ինձ այդ մոլությունից։ Չէ՞ որ ես նրան կարող էի լսել...

— Հասկացա,— ընդմիջեցի նրան։

— Ի՞նչ հասկացար։

— Կինդ գնացել է և սակայն... Է՜հ, այսինքն, հավանաբար...

— Ինչ հավանաբար։

Ես չուզեցի շարունակել.

— Պատմե,— ասաց։

— Դե ինչ պատմեմ, սիրելիս, գնացել և հավանաբար ստացվել է այլ բան.

— Ճիշտ է,— ասաց տխուր,— ես այդ բոլորը շատ ուշ լսեցի։ Երբ ամիսներ հետո էլի գովում էի նրան, կինս ասաց, թե ես իզուր եմ այդ կարծիքին, նա այդ մարդը չի, նա մարդ չի առհասարակ։ Եվ ես այլևս չեմ հավատում ո՛չ մարդուն և ո՛չ էլ ընկերության...

Հանկարծ մեզ կանգնեցրեց ինձ անծանոթ մի մարդ, բարևեց ընկերոջս, և սկսեց միասին քայլել մեզ հետ. ես մեղմիվ թե՝

— Սիրելիս, լավ կլինի ճանապարհես այդ մարդուն։ Հո խոսում ենք, զրուցում, հիմա էլ խմելու ենք։ Ինչո՞ւ մի օր էլ ազատ չլինենք մենք մեզ հետ, հասկացրու, և գնանք։

— Հենց էս բոպեիս,— ծիծաղեց ընկերս և դառնալով ընկերոջը՝

— Վատ կացության մեջ եմ,— շարունակեց տխուր շեշտով,— ախր մի հիսուն ռուբլու կարիք ունեմ, հիսուն ռուբլին ի՞նչ է որ, բայց եկուր տես, որ չենք կարողանում ճարել, հո դու մի բան չէի՞ր կարողանում անել...

Ես շշմած նայում եմ ընկերոջս, չէ, վատ խաղ է սարքում, ի՞նչ կարիք կա այդպիսի կողմնակի ճամփաների, ասա միանգամից, թե երկուսով տեղ ենք գնում և վերջ։ Կանգնեցինք երեքով. նա, որից ուզում էինք պոկվել կանգնել է լուռ և.

— Ո՞ւր եք գնում,— հարց է տալիս մեզմ.

Ընկերս թե՝

— Ուզում էինք մի տեղ գնալ և խմել մի քիչ, բայց փող չունենք։

Սա էլ մի ուրիշ սուտ, որ ավելի է ջղայնացնում ինձ, չէ՞ որ ավելորդ են այս բոլորը.

— Գնացեք անկյունի կաֆեն, ես մի տաս բոպեից կգամ,— և բաժանվեց։

— Ահա,— ասաց ինձ ընկերս,— պոկվելու լավագույն

ձեր, և ես քեզ վստահեցնում եմ, նա չի՛ գալու, ես իմ կյանքովս եմ վստահեցնում քեզ, իմ տարիների փորձառությամբ։ Ուզո՞ւմ ես մի մարդու փորձել, ամենից առաջ խոսիր փողի մասին։ Եվ դու դեռ ինձ խոսում ես ընկերությա՞ն և ընկերոջ մասին... Ի՞նչ կասես։

— Ախր,— ասացի ես,— բայց այդ մարդու հետ քո մտերմությունը ի՞նչ աստիճանի է։

— Սովորական, մեկ-մեկ զրուցում ենք, նստում, հիմարի մեկն է։

Մենք քայլեցինք դեպի սրճարանը։

— Մտնե՞նք։

— Մտնենք,— ասաց ընկերս։

— Թե որ գա։

— Նախ նա չի գալու, իսկ երկրորդ, ես քեզ կյանքում փաստած կլինեմ ես մի ճշմարտություն։

— Բայց դու իրավունք չունես այդպես խոսելու, հանդիպում ես մի մարդու և միանգամից նրան վատ կացության ես մատնում։ Նա ինչո՞վ է հանցավոր, եթե ասենք այդքան փող չունի...

— Ուրեմն թող ասեր իրականությունը։

— Այն ժամանակ էլ պիտի պնդեիր, թե տեսա՞ր հիսուն ռուբլին ինչ էր, որ մերժեց, մնաց, որ հիսուն ռուբլին մի բան է ներկայացնում, չէ՞...

Մենք նստել ենք սրճարանում, զրուցում ենք. անցել է տաս րոպե և անցնում են րոպեները, մարդը չկա ու չկա։ Բայց մեկ էլ՝ եկավ քրտնած և հևալով.—

— Ախր,— ուզում է շքմեղանալ, ես միշտ սև օրվա համար գրադարանի գրքերիս մեջ այդքան փող պահում եմ, և գաղտնի կնոջիցս։ Մոռացել էի տեղը, թափ եմ տալիս է՛լ Բալզակի հատորները, է՛լ Բաֆֆու տասհատորյակը, չկա ու չկա, վերջում գտա մի հին հավաքածուից։ Ներեցեք, ձեզ շատ սպասեցրի, չէ՞...

Ես նայում եմ ընկերոջս, նա աչքերը խոնարհել է ցած. չի նայում իմ կողմը։ Ես ակնարկս հառել եմ ինձ անծանոթ մարդու դեմքին տարօրինակ, բայց ուրախ մի ժպիտ

շրթներիս. նա երկարել է կանաչ հիսուն ռուբլիանոցը և սպասում է, որ վերցնի ընկերս.

— Վերցրու,— ասում եմ կամաց,— անհարմար է...

Ինձ անծանոթ մարդը մեղմիվ հիսունանոցը սահեցնում է նրա գրպանը և ուրախ դառնում է ինձ.

— Ի՞նչ կխմեք:

— Սուրճ,— պատասխանում է հանկարծ ընկերս,— միայն սուրճ:

— Միայն սուրճով չի լինի, մի շիշ կոնյակ, մի՛ քաշվեք, ես փող ունեմ:

— Ոչ,— կրկնում է ընկերս,— դեմքը այլայլվում է,— ինձ չի կարելի, կնոջս խոսք եմ տվել և առհասարակ չեմ էլ ուզում խմել, խմիչքն ի՞նչ բան է որ...

Մարդը շվարուն նայում է մեզ.

— Բայց,— ասում է,— չէ՞ որ ասացիք, թե խմել էիք ուզում և փող չունեք: Հետո, հանկարծ կարծես ինչ-որ գլխի է ընկնում և նայում ժամացույցին,— վա՜յ,— շարունակում է,— մոռացա ես էլ մի ժամադրություն ունեի... լավ, ոչինչ. դուք խմեք ձեր սուրճը, ես գնացի, կներեք ինձ: Կանգնում է ոտքի, մեկնելիս մեղմիվ աչք է քթթում, թե՝ ոչինչ, դուք ինչ-որ գործեր ունեք, ես չխանգարեմ, և հեռանում է արագ ու կորչում մթության մեջ...

Իսկ ես մտածում եմ, մտածում, գոհ կյանքիցս, մտածում եմ տխուր բաների մասին... Աշխարհում ցավով ու վշտով ապրելը, դառնացած ապրելը լավ բան չի, բայց առանց ցավի ու վշտի, առանց դառնության ապրելն էլ բանի նման չի, իսկի բանի նման չի...

Հաջորդ օրը ուրախ գնացի ընկերոջս մոտ: Արթնացել էր իմ էլ «միջի երեխան»: Տեսա թե չէ, ասացի.

— Խփենք գլուխ-գլխի:

Ինքը թե՝

— Խնդրում եմ լուրջ լինես, ընկեր, ամեն բոպե չի կարելի կատակել, լրջացիր վերջիվերջո:

Ա՛յ, ինչ մարդ ես դու...

ՀԱՅՈՑ ԹԱՂԸ

Զոհ՝ քրոջս Եպրաքսեին, որը հապիվ ութ տարեկան էր, երբ անցավ անապատի ավազներով, իր վեց տարեկան եղբոր՝ Մինասի հետ: Ես՝ նրանց հարազատը, լսեցի այդ բոլորը շատ ուշ, ես ուշ ծնվեցի և այդպես էլ ինձ համար իմ քրոջ ու եղբոր ճակատագրերը մնացին անհայտ...: Ուրեմն, ասում են՝ սիրուն մի խալ ուներ ձախ այտի վրա...

Գեղամ Սևան

Զէ՛, տարօրինակ չէ, ես դարձել եմ Թուրքական բանակի պահեստի ենթասպա և գնում եմ Դարգանել... Անկարայում, զինվորական ուսումնարանից, երեք հազար Թուրքերի մեջ հազիվ մի տասը հայեր այդպիսի կոչում ստացանք: Եվ սա պատահում է երկար տարիների ընդհատումից հետո, առաջին անգամ: Հույս չունեինք բնավ: Ութ ամիս է, դասավանդման ամբողջ ժամանակաշրջանում տառապում էինք, թե արդյոք մի բան չի՞ պատահի մեզ հետ: Երևակայեցեք չպատահեց:

Թեպետ պարտավորիչ զինվորական ծառայություն էր, բայց որպես համալսարանականների, օրենքի սահմաններում իրավունք էր տրվում մեզ պահեստի ենթասպա լինելու:

Այդ օրենքը գրքում կար վաղուց. բայց ո՞վ էր նկատի ունենում: Մեզանից նախորդ սերունդները նույնիսկ չէին խորհում այդ մասին: Հասավ զինվորական տարիքդ, շալակում էիր սպիտակ տոպրակդ, սափրում գլուխդ և գնում բանակ: Ինչքա՞ն էիր մնալու, այդ էլ «աստծու» գործն էր. երե՞ք տարի, երեքուկե՞ս, թե՞ չորս... Բայց ամեն ինչ փոխվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, Սովետական բանակի հաղթանակով: Կասկածելի տարր նկատվող հայերը և առհասարակ փոքրամասնությունները դարձան լիիրավ քաղաքացիներ: Այժմ ես լիիրավ քաղաքացի եմ, այսինքն առաջվա նման պիտի վճարեմ իմ ուղղակի և անուղղակի տուրքերը պետությանը, պիտի կոչվեմ տեղի-անտեղի գյավուր, և երբ բանակ գնամ, որպես համալսարանական,

որոշ ժամանակաշրջանից հետո, իրավունք ունենամ սպայի զգեստ կրելու։ Նախապես զենք էլ չէին տալիս իմ ազգակիցներին, այլ բահ ու բրիշով երեքից-չորս տարի համփա էիր սարքում, ձրի աշխատում հանքահորերում և եթե ողջ մնայիր, փառք տալիս ալլահին։ Հակառակ այն բանին, որ անձնագրում ազգության դիմաց գրվում էր Թուրք, իսկ թե ես, օրինակ, ի՞նչ կրոնի հետևորդ էի, մահմեդակա՞ն թե քրիստոնյա, այդ մասին ոչինչ չկար նշված անձնագրիս մեջ։

Կրո՞նը... գրվում էր անձնագրում, և դիմացը պատասխան սյունակում լրացվում՝ հայ։

Այդ այդպես էր Թուրքիայում իմ ծնած ժամանակ՝ 1926-ից... մինչև 1949-ը, այդպես է և հիմա 1965-ին։ Բայց թե հարց տային՝ ի՞նչ է իմ կրոնը, ես անմիջապես պատասխանում էի՝ քրիստոնյա։ Չէի կարող ասել, թե մահմեդական եմ, իսկ քրիստոնյա չեմ ասելը, մի տեսակ անպատեհ էր, որովհետև այդ կարող էր նշանակել, թե անկրոն ես։ Հո վերջիվերջո բուդդայական չէի՞ կարող լինել։ Իսկ անկրոն լինել նշանակում էր, այո, նշանակում էր, ոտով գլխով ընկնել փորձանքի մեջ։ Անկրոն ես, ուրեմն կոմունիստ ես։ Իսկ կոմունիստ լինել, նշանակում էր բանակի շարքերից ուղիղ գնալ... աքսորավայր։ Անկարայում նույնիսկ ֆաշիստ փաշաների տղաները պարտավոր էին ապացուցել, որ իրենք կոմունիստներ չեն։ Իսկ ինչպե՞ս էինք ապացուցում այդ մեկը, առանց բացառության բոլորս։ Նախ որևէ մեկը մեզանից բեխ չէր թողնում, հետո ազգային քայլերգից կամ զինվորական հայտնի մարշերից այլ որևէ մարտական երաժշտություն հիշեցնող նույնիսկ խաղ չէինք թողնում մեր շրթներից։ Ասում էին, ինչ-որ «Ինտերնացիոնալ» խորագրով քայլերգ կա, և որևէ անծանոթ երաժշտություն, կարող էր նկատվել... Ինտերնացիոնալ։ Հակառակ այն փաստին, որ մեզանից և ոչ մեկը նվազագույն գաղափարն իսկ չուներ այդ երգի մասին։ Տակավին լիաթոք բղավում էինք «սաղ օլ» և լրիվ օրը մեր զինվորական հաստ կոշիկների ներբանները դոփում գետնին։ Այդ բոլորի մեջ մի փոքր զանցառություն կարող էր ջղայնացնել վերադասը, և պատրաստ էր ահավոր սարսափը... Հո դու կոմունիստ չե՞ս... Եվ եթե զենք մի ան-

գամ քո հասցեին ասվեց նման ահարկու բան, դե եկ ու տակից դուրս եկ։ Փաշայի, մինիստրների տղաները սարսափում էին այդ ամենից, ուր մնաց մենք... «լիբերալ» քաղաքացիներս։ Երևակայեցեք նույնիսկ Սև ծովի ափերից եկած տրապիզոնցի տղաները կտրում և արմատից ածիլում էին իրենց բեխերը, բեխը որքան էլ լիներ առնականության նշան, բանակում նկատվում էր կոմունիստական։ Թե որտեղի՞ց էր գալիս այդ, ես իմացա հետագայում. դա այդ օրերին Ստալինի բեխերի սարսափն էր, մինչև... Անկարայի ապայից ուսումնարանը հասած։

Միայն մի հայ տղայի չհաջողվեց մեզ հետ լինել, նրան ձախողեցրին քննություններից և այլ «ձախողածների» հետ տարին... աքսորավայր։ Նա «կոմունիստ» դուրս եկավ։ Մի անգամ Պոլիս յուրայիններին նամակ էր ուղարկել և իր ճարազատ մորը գանգատվել էր բանակում տիրող «սննդառական» պայմաններից։

Հետագայում ես հասկացա, որ այդ բոլորը կատակաողբերգություններ էին, մեր մեջ կոմունիստներ, իսկական կոմունիստներ լինել չէին կարող։ Նրանք Թուրքիայում, Պոլսում, Սանասարյան խանի զնդաններում էին, Անատոլիայի պարսպապատ խուլ բանտերում և կամ լավագույն պարագային խորը, խորը ընդհատակում։

Եվ երբ մի օր հնչեց ահազանգը և մեզ բոլորիս հավաքեցին ընդարձակ մի սրահում, այն էլ գիշերային ուշ ժամերին և ընթերցեցին կենտրոնական շտաբից ուղարկված գաղտնի հրամանը, ես թեպետ վախով, բայց շատ թաքուն ծիծաղեցի։ Հրամանում ասված էր. «Զգուշացեք կոմունիստներից, նրանք սիրիական սահմաններից մուտք են գործել մեր աննման երկիրը, ճանաչեցեք նրանց և հանձնեցեք իշխանություններին։ Արտաքին նշանները՝ դիմագծի վրա հաստ բեխ և շրթներին ...«Ինտերնացիոնալ»։

Միայն Տրապիզոնից եկած մի տղա մեզմ շշնջաց... «Ջասես, մեր Տրապիզոնում բոլորը կոմունիստներ են»։— Բայց նա ասաց շատ մեզմ, հազիվ լսելի։ Այնուհանդերձ նա խիզախ տղա էր...։

Հիմա տեսնում եք, թե «տարօրինակ չէ», որ ես դարձել

եմ թուրքական բանակի պահեստի ենթասպա և գնում եմ Դարդանել... Այստեղ պիտի ասել, արդարությունը լիիրավ գործադրվեց։ Մեր նշանակումները կատարվեցին անաչառ կերպով։ Յուրաքանչյուրս շարքով մոտենում էինք ամբիոնում թուրքական դրոշով ծածկված ու նրա վրա զետեղված տուփերին, ու դուրս քաշում նշանակման մեր բախտը։ Օրինակ՝ իմ առաջից գնացող տղան քաշեց և կարդաց բարձրաձայն՝ Էրզրում։ Իմ սրտից անցավ անասելի մի դող։ Ես մոտեցա և... կարդացի Էզինե։ Չէի իմանում, թե որտեղ էր գտնվում ինձ անծանոթ այդ քաղաքը... Ետևիցս լսեցի... Սարըղամիշ։

Գնում եմ հսկա քարտեզի մոտ և փնտրում։ Ուշադրությունս կենտրոնացել է արևելյան նահանգների վրա. Էրզրում, Սարըղամիշ, Էզինե... Իզուր եմ Էզինեն ման գալիս արևելքում։ Ես ընկել եմ արևմուտք, Դարդանելից բավականին ներս, ինչ-որ խուլ մի անկյուն։ Դե, ինչ անել, գեթ մոտ կլինեմ ծննդավայրիս. թեպետ պիտի ասել, Պոլսից, իմ նստած շոգենավով մինչև Դարդանել հասնելս տևեց քսանչորս ժամից ավելի։ Հակառակ գարնան, հեղձուցիչ շոգ էր նավի խցիկում, ուր չորս հոգիանոց տեղում լցվել էինք տասով։

Ինչպես Անատոլիայի բոլոր քաղաքները, այստեղ Դարդանելում ևս, ինչ-որ խոր թախիծ ու տխրություն կա։ Կրպակներ՝ խոնավ ու խճողված, ստամոքս պրկող մի հոտ և թշվառություն։ Հետո՝ գինետներ, հյուրանոցներ մութ ու լպրծուն և սևազգեստ կանայք։ Էշեր ճանապարհների վրա, շան ոռնոց և հսկա մի պատմություն անցյալի։ Դարդանել... սեղմ նեղուցից այն կողմ՝ բացվող հեռանկար, օտար հորիզոնների կարոտ, բանտարկված լինելու անհուն տառապանք։ Մի ինչ-որ զինվոր բարևեց ինձ։ Մոռացել էի, ես ենթասպա եմ, ուսերիս փայլում է դեղին, փոքր երկաթյա գծիկը, մի-մի հատ յուրաքանչյուր ուսիս։ Մի գյուղացու հարց եմ տալիս։

— Ինչքա՞ն ժամանակ է հարկավոր Էզինե հասնելու համար...

Մի սիգարեթ փաթաթել ու ծխելու չափ, որդիս...

Չքայլե՞մ արդյոք... Ավելի լավ է, ավտոբուս նստեմ, արագ հասնեմ տեղ, հանգստանամ։

Մի սիգարեթ փաթաթելու և ծխելու չափ ճանապարհ։

Հինգ ժամից ի վեր գնում ենք, հա գնում, ուր որ է պիտի մթնի, իսկ էզինեն չկա դեռևս...

Թուրքիայում, եթե լինես Անատոլիայում, չփորձվես հարց տալ որևէ հասցեի, կամ քաղաքի հեռավորության մասին, պատասխանը մեկ է.

— Տեհա՞, մի սիգարեթ փաթաթելու և ծխելու չափ, որդիս...

Ժամանակը կանգ է առել Անատոլիայում... Երկա՞ր, երկա՞ր ժամանակներից ի վեր, ասում են մոտավորապես մի հիսուն տարի...

Ճանապարհները այս կողմերում ասֆալտապատված չեն, գլխավոր ուղիներից դուրս է մնում էզինեն։ Պիտի ասել էգեականի ափերից բավականին հեռու կորսված ու խուլ մի անկյուն է սա։ Բայց գարուն է, օդի մեջ զգալի է ինչ-որ ջրի աղի բույր, որ հեռուներից է գալիս, հակառակ այն փաստին, որ ավտոբուսում աղի քրտինքի, ամիսներից ի վեր ոտերից չհանած զուլպաների, ջուր չտեսած մարմինների, մարդկային քրտինքի դառն հոտն է։ Սիգարեթի ծուխ, որը փաթաթում են իրար ետևից, ծծկեր երեխաների կանչ և մեքենայի մի անկյունից լսվող Թրքական տխուր մի երգ։ Թրքական մի երգ, մարդկային այդ խուլ տառապանքների և ճգնոտած դյուղերի ցավն ու վիշտը արձագանքող։ Մեկ-մեկ, բոլորս վեր ենք ցատկոտում, ավտոբուսի անիվը դեմ է առնում ճանապարհների ուղիղ մեջտեղը թողլված մի քարի, և մեկ էլ կարծես ինչ-որ մեքենաների մեջ պայթյուն է տեղի ունենում։ Կանգնում է ավտոբուսը, շարժավարը իջնում է իր խցիկից, հայհոյում, նայում է շորս բոլորը, կրկին հայհոյում և շարունակում ճանապարհը։

Բայց ծառեր են, անվերջ ու անհատնում ծառեր շորս դին։ Զիթապտուղի, ընկույզի անվերջ ու անհատնում ծառեր։ Կարող ես և պատկերացնել, որ ինչ-որ ընկել ես պատ-

մության հին, հին, անհիշելի ժամանակների մեջ. մեկ-մեկ քո ճանապարհին դեմ են առնում ուղտերի քարավանները, ուղտեր, որոնց սապատների վրա երփներանգ գորգեր և գույնզգույն լաթեր են փաթաթված։ Կապույտ ուլունքներ, հետո փոքր-փոքր զանգակիկներ վզերից կախ։ Առջևից, քարավանի առջևից գլուխը կախ մի իշուկ...

— Գնում են կիրակի օրվա մենամարտին մասնակցելու,— ասում է իմ կողքը նստող և ժամերից ի վեր ձեռքի համբիչի հատիկների հետ քթի տակից ինչ-որ բառեր մոլտացող մարդը։ Հայհոյո՞ւմ է, թե աղոթում, չկարողացա հասկանալ։

— Ի՞նչ մենամարտ,— հարցնում եմ ես մեղմիվ։

— Ուղտերի մենամարտ, եղբայրս, մերձակա գյուղերի միջև։ Ինչ է, այստեղացի չե՞ս։

— Պոլսեցի եմ,— ասում եմ տխուր։

Իմ զգայարանների ու մարմնի վրա շոքած տխրությունը իմ կամքից անկախ է, ինչ էլ անես, ուրախ լինել չես կարող Անատոլիայում։ Ներքին, սիրտ պրկող անասելի մի ցավ ճնշում է քեզ։

Ճանապարհին մեկ-մեկ ծառերի միջից դուրս են գալիս գյուղացի փոքր տղաներ, նրանց աչքերի մեջ կարդացվում է ինչ-որ անհասցե մի սարսափ, որ չգիտես որտեղից է ծնունդ առնում, բայց և այդպես այդ «սարսափը» արգելք չէ, որ նրանք ավտոբուսին և ճանապարհորդներին բարևեն յուրահատուկ ձևով։

Առաջին անգամ չէ որ հանդիպում ենք նույն գռեհիկ դիմավորմանը։ Ցնցոտիապատ ու կիսամերկ, իրենց մարմինների սեռային անդամները ցուցադրում են ներքին անհուն մի հրճվանքով և հայհոյում։ Բայց անտարբեր են բոլորը, ոչ մի ընդվզում, ընդհակառակը, նույնիսկ կան, որ ծիծաղում են։

Յուրաքանչյուր կանգառում, որոնք հազիվ քառասունհիսուն տուն հաշվով փոքր գյուղեր են, աթարից շինված, թիթեղյա տանիքներով և ծուռ ու մուռ կեղտոտ փողոցներով, մեր դեմ են վազում լաճեր, առանց բացառության ոտաբոբիկ և քուրջերի մեջ կորած։ Շատերի դեմքերին, մանավանդ

անճոռնի սափրված գլուխների վրա, վերքեր են կեղտի ու մրի մեջ կորած, թիթեղյա ամաններ են շալակել և միաբերան գոչում են.

— Թա՜ն խմեք, թա՜ն, սառը թան, հինգ դրուշի թան, թաա՜ն...

Գյուղի մուտքին, բավականին հեռու, մեզ դիմավորողները միշտ լինում են շները, ամեն հասակի, որոնց ընկերանում է ահռելի հաչոցը. ելքի ժամանակ նույն պատկերն է, շներն են ճանապարհ գցում մեզ նույն ոռնոցներով...

— Այս գյուղում մի ընկեր ոստիկան ունեի,— պատմում է կողքիս մարդը համբիչի հատիկները ափի մեջ ոլորելով,— ոստիկան Քյամիլը, լավ տղա էր. ի՞նչ անել, որ ոստիկան էր, խրված էր պարտքերի մեջ, վերջերս, ամսվա սկզբին ստանում է ռոճիկը, հաշվում, հաշվում է, տակից դուրս գալ չի կարողանում: Իր պարտատերերին տալիս է մաս առ մաս ինչքան որ կարողանում է, հետո մտնում ոստիկանական հսկիչ խցիկներից մեկը և ատրճանակը պարպում ուղիղ սեփական կոկորդը...

— Թա՜ն խմեք. թա՜ն, սառը թան, հինգ դրուշի, թա՜ան...

Ծառեր անվերջ. ձիթապտղի և ընկույզի անվերջ, անհատնում ծառեր: Գարուն է, և գարունը կարծես Անատոլիայում ամոթն ու թշվառությունը ծածկող միակ քողը...

— Պատկերացնո՞ւմ ես,— շարունակում է նա,— սիրելի սպաս, մարդը, օրենքի մարդը իր ատրճանակը դատարկի իր իսկ կոկորդը և ինչի՞ համար. հավանաբար նրա պարտքը այս տեսած ծառերից մի հատի իսկ բերքովը կարելի լիներ փակել: Մինչդեռ այս ծառերը...

Ես նայում եմ ծառերին, ոլորապտույտ ճամփաների ամբողջ երկարության վրա հաղարներով շարքի են կանգնել նրանք:

— Այո՛, այդ ծառերի մի հատի իսկ բերքովը... Մինչդեռ նրանց ձեռք տալ չի կարելի. Քյամիլը նրանց հսկողությանն էր կանգնած. նրանք, այդ բոլոր ծառերը Իսմայիլ պեյինն են, Իսմայիլ պեյին դու ճանաչո՞ւմ ես...

— Ե՞ս... որտեղից:

— Հապա դու որտեղացի՞ ես:

— Ասացի, չէ՞, պոլսեցի եմ։

— Հա, պոլսեցի ես, ասել էիր, իսկ նա էլ, Իսմայիլ պեյը Անկարայից է, մեծ մարդ է, ավելի ճիշտ՝ մեծ մարդու եղբայր է, իսկ դու մեծ մարդուն ճանաչում ես...

— Ե՞ս... որտեղից։

— Ոնց թե որտեղից...— ու ոլորում է համբիչը, հայհոյո՞ւմ է թե աղոթում, չեմ հասկանում։— Ձիթապտուղ է արտածում բոլոր երկրի համար և արտասահման... Այվալըգի ձիթայուղ խմե՞լ ես...

— Այո՛։

— Հենց այդ է որ կա։ Հաղարավոր ծառեր, որ պատկանում են մի մարդու, մի կարճլիկ, թզուկ մարդու. նրա եղբայրը բարձր պաշտոնի է Անկարայում, իսկ մեր գյուղերը ջուր իսկ չունեն...

— Հապա այս կանաչությունները...

— Այդ կանաչությունների ջուրը Իսմայիլ պեյինն է, ծառերը՝ Իսմայիլ պեյինը, ծառերի շվաքն իսկ Իսմայիլ պեյինն է, եղբայրս...

Ոլորանի մի անկյունում ցնցվում է մեքենան ու կանգ առնում։ Լսվում է շարժավարի թաց հայհոյանքը. իջնում է ցած։ Շատերը դուրս են թափվում ավտոբուսից. կանգնում ծառերի տակ կոնակ դարձրած մեզ և... վերադառնում։

— Սիրաս ցավում է, սպաս...

— Ի՞նչ բանի համար,— միամիտ հարց եմ տալիս ես։ Նայում է ապշած աչքերիս մեջ և...

— Գիտես,— ասում է,— ես Քյամիլին բավականին պարտք ունեի...

— Ինչքա՞ն, ինչքան մնաց մինչև էղինե,— խոսքը փոխում եմ ես։

— Էղինե՞... հա մինչև էղինե,— պատասխանում է ցրված,— մի սիգարեթ փաթաթել ու ծխելու չափ, սպաս...

Ճիշտ էր ասում, եթե մի ժամից ավելի չկանգնեինք այդտեղ մեքենան վերանորոգելու համար։ Երեկո էր, երբ հասանք քաղաք։ Ոռնոցներից և մեզ դիմավորող շներից հայտնի էր, որ հասել ենք արդեն։ Մութ էր. նախ քարյուղի լամպերն էին աթարից շինված տների փոքր ու նեղ պատու-

հաններին, հետո ինչ-որ լամպերի դժգունությամբ լուսամփոփներ և դեղնախոց հալածական, փողոցային լապտերներ։ Զով գարնան գիշեր է, անձրև է եկել, ինչ-որ հեռու, հեռուներից եկող ծովի մի բույր կա մթնոլորտում, թե՞ ինձ այդպես է թվում։ Լացս է գալիս, ուզում եմ փախչել, փախչել մեռ, ո՞ւր. ես էլ չգիտեմ։ Կթոռում են ոտքերս։ Ավտոբուսից դուրս են թափվում ինչ-որ մարդկային կերպարանքներ, և անհայտանում մթության մեջ։ Շարժավարն է, որ հայհոյում է անընդհատ, չգիտես ում հասցեին...

— Որտե՞ղ է կենտրոնական հրապարակը։

— Հենց այստեղ, սպաս։ Իսկ ո՞ւր եք գնալու։

— Հյուրանոց։

— Հենց դեմինն է, որ կա։

Քայլում եմ ոլոր քայլերով։ Մտնում եմ ներս, տապակած տուճուխի ու ապուխտի բարկ հոտն է և քացխած գինիի ինչ-որ բուրմունք և սիգարեթի թանձր ծուխ...

— Սենյակ ունե՞ք։

— Ձեզ համար անպայման, սպաս։

— Մի բաժակ գինի...

— Աֆիոնո՞վ...

— Թող լինի... խմում եմ,— մի հատ էլ...

Պտտվում է գլուխս, խառնվում է սամամոքս, զզվելի բան է աֆիոնով գինին։

— Ցույց տվեք սենյակը։

Սենյակի լույսի՞ց է, թե սավանների ու բարձի կեղտից, դեղնորակ և սրճագույն բծերով պատած ինչ-որ «սպիտակություն» է։ Նայում եմ դուրս՝ քաղաքին։ Մի կամուրջ է դեմս, գարնանային զով իրիկուն է, երկնքում աստղեր են, դեղին կիսալուսին, հեռվից, շատ հեռուներից ինչ-որ արձագանքող տխուր մի երգ կարոտի ու սիրո մասին։ Երդին միախառնվող ինչ-որ ջրի կարկաչ և աղբի կծու ոչ հոտ... հետո, այս բոլորին հաջորդող շան տխուր մի ոռնոց...։

Երազումս մի մարդ կապար էր պարպում իր սեփական կոկորդի մեջ, ինչ-որ տղաներ փայտերը ձեռքերին թափ են տալիս ձիթենիի ճյուղերը. մի մարդ՝ թզուկ ու հաղատ, ուշագնաց լինելու աստիճան ծիծաղում է, ուղտեր են՝ երփներանգ

կտավներ իրենց սապատներին, զանգերի զողանջ։ Դարդանելի ալիքներն են, որոնք խուժում են վրաս, սաստիկ, սաստիկ ծարավ եմ զգում...

Թա՜ն խմեք, թա՜ն, սառը, հինգ զրուշի, թա՜ն...

Ջրհեղեղ է, բայց տարօրինակ, ձիթայուղ է հոսում փողոցներից և խեղդում մարդկանց, քշում տները, կառաստները լողում են դեղնորակ յուղի ալիքների մեջ, և այդ բոլորի վրա, խոշոր-խոշոր, յուրաքանչյուրը կարծես մի ձմերուկ լինի, համբրիչի անվերջ հատիկներ են։ Մի այլ մարդ, ո՛չ նման թզուկին, ուղտի սապատի վրա հեծած, գլխին կանաչ փաթթոցով, հոհոում է այնպես, կոտորվում ծիծաղից։ Ես լսում են աղեկտուր մի ճիչ... հետո, իսկապես տարօրինակ է, ավտոբուսում կողքիս նստած մարդը, մի իշուկի վրա նստած, հավաքում է համբրիչի հատիկները, նայում եմ դիմագծին, շրթների վրա մի հաստ բեխ կա, նա բեխ ունե՞ր, չգրավեց ուշադրությունս։ Նա հավաքում է համբրիչի խոշոր-խոշոր հատիկները և շպրտում ուղտի սապատի վրա հեծած փաթթոցավոր մարդու գլխին։ Ոչ մեկը չի կպչում իր թիրախին, հայհոյում է, բայց ինչ-որ սարսափելի է, նա մեկ-մեկ ոռնում է, աղեկտուր, սիրտ մաշող ձայնով։ Սաստիկ, սաստիկ ծարավ եմ զգում...

***

Ինձ հաջողվեց իմ նշանակված նույն զորաբաժանման մեջ ծառայելու կոչված և Անատոլիայի հյուսիսային նահանգներից եղող մի ենթասպա տղայի հետ սենյակ վարձել քաղաքում։ Նեղ, շատ նեղ մի փողոց է, այնպիսիներից, որ եթե չորս հոգի կանգնեն կողք-կողքի, կարող են և փակել երթևեկությունը։ Իսկ մեր սենյակի պատուհանից երկարիր ձեռքդ և դրեթե կհասնես դեմի տան պատուհաններին։

Հանդիպակաց տները կարծես թեթև խոնարհվում են փողոցի վրա և իրար գլուխ տալիս։ Այնպես, որ մայթերի չորս հոգիանոց լայնությունը դեպի վեր գնալով նեղանում է և ցերեկվա լույսի տակ իսկ ինչ-որ խորհրդավոր մի մթությամբ պատում փողոցը։

Պատուհանները վանդակապատ են, բայց այդ արդեք

Նրերը պատճառ չեն եղել, որ ընկերս հենց առաջին բոպեին իսկ տեղեկանա թե, ով է ապրում հանդիպակաց տան մեր պատուհանի ուղիղ զուգահեռ սենյակում։

— Առանձին մի աղջիկ է, ուսուցչուհի և... Պոլսից,— ուրախ տալիս է մանրամասնությունները։

— Ո՞րտեղից իմացար։

— Մեր տանտիրուհուց... այսինքն, եղբայրս, օրերս ուրախ կարող ենք անցընել։

Հաշիվը արված է արդեն իսկ։ Մեր տանտիրուհին տարիքն առած թրքուհի է, պատկառելի մի կին։ Երբ հանձնեց բանալիները, չգիտես ինչու պարտք համարեց հանգստացնել մեզ։

— Փառք ալլահին, բոլոր թաղը մուսուլմաններ են...

Ես լռեցի, և պիտի ասել լռեց և... ընկերս։ Նա զարթոնում հասկացավ, որ ես հայ եմ։

— Երեկ գիշեր քեզ տեսա հյուրանոցում գինի խմելիս, ներս մտար և հաջորդաբար երկու բաժակ թունդ գինի պատվիրեցիր, լավ մարդ ես երևում, եկ միասին սենյակ վարձենք։

Իմ լավության չափանիշը գինի խմելն է։ Իսկ ինձ ձեռնտու է նրա հետ լինելը։ Հետամնաց և պահպանողական քաղաք է, լավ է երկուսով, մանավանդ, որ ինքն էլ թաթար է։ Մնաց, որ հակառակ սպայի իմ համազգեստին հայությունս կարող է լավ չդիմավել այստեղ։ Որևէ մեկի մտքից չի անցնում, անշուշտ, որ ես կարող եմ հայ լինել և քրիստոնյա։ Նախ լավ թրքերեն եմ խոսում և շեշտավորմանս մեջ ոչ մի կասկած առաջացնող երանգ չկա։ Հարցերը ավելի բարդացրեց մեր տանտիրուհին.

— Փառք ալլահին, բոլոր թաղը մուսուլմաններ են...

Իսկ ընկերս, որ Թեֆիկ է կոչվում, հենց որ մտանք սենյակ, վառեց լույսը և սկսեց հանվել։ Հետո թե.

— Եղբայրս, երգել գիտե՞ս...

— Ոչինչ, երգում եմ մեկ-մեկ...

— Խնդրում եմ երգիր... էս էլ արաղը, մի քիչ տաքանանք ու գնանք ման դանք։

Օդու հետ բացվում է տրամադրությունս, որ վատ էր չափից դուրս։

խոսում ենք կյանքի, ապագայի մասին։ Թեֆիկը պատմում է իր ծրագիրներից, հետագա բարձր պաշտոնների հնարավորություններից։ Տնտեսագետ է, ավարտել է Պոլսի համալսարանը, բայց նրա բոլոր եզրակացությունները հանգում են կյանքում լավ սնվելու և բազմազան կանայք ունենալու հնարավորության։ Միակ նյութը կինն է, անսպառ, անհատնում նյութը, որ խլում է ժամեր՝ երբ հանդարտ է ուղեղը, խլում է ժամեր՝ երբ մշուշված է գինիով։ Գրականությո՞ւն, գրականության հաջողված գործերը նրանք են, որ հրահրում են սեռային ախորժակը, գրգռում են կիրքը, և ապշում ես, երբ նա համարձակ պատվիրում է գրքեր...

— Գիրք տվեք,— ասում է նա գրավաճառին,— վեպ։

— Ի՞նչ վեպ...

— Բան ասացիր...— պատասխանում է զարմացած,— էնպիսի գրքեր, աղբերս, որ բան հասկանաս, էն բաներից...

Իսկ էն բաներից բան հասկանալու մասին գիտի և... գրավաճառը։

Գիշերները ման ենք գալիս ծուռ ու մուռ, նեղլիկ փողոցներով։ Մութ, խոնավ ու թախծոտ փողոցներ են։ Քաշում է ձեռքից ու կանգնեցնում մի պատուհանի առաջ։

— Տե՛ս, հե՛...

Ես ամաչում եմ և քայլում առաջ։ Քաղաքը շրջապատված է լեռներով ու ձորերով, վայրի մի ձոր կա, խշխշան մի դեռ է անցնում այդ ձորի միջից։ Օձերի ձոր է կոչվում... և երբ լուսնյակ գիշեր է, սարսափ է ազդում մարդու վրա...

— Երգի՛ր, աղբերս, լավ ես երգում, սրտով, հա՞ սիրահարված չես...

Ե՞ս, սիրահարվա՞ծ, թերևս. բայց չգիտեմ ում...։ Կարոտը ճնշում է հոգիս, առօրյա բանակային կյանքն ու շրջապատս խելագարեցնելու աստիճան ընկճում և ճղմում են զգայարաններս...։ Սիրահարվա՞ծ... չգիտեմ ում վրա... կյանքին թերևս, թերևս սիրո վրա եմ սիրահարված։ Գորշ է ամեն ինչ։ Մի աղջիկ է անցնում փողոցներով, ծածկված սև վարշամակի ու քողի տակ... տրոփում է սիրտս, բայց հուսահատությունը պատում է էությունս... երբ խորհում եմ

Թեֆիկի մասին։ Նա լպիրշ ու ծայրահեղ գոեհիկ խոսքեր է գցում աղջկա ետևից։

— Թեֆիկ,— ասում եմ,— ամոթ է, փչացնում ես ամեն ինչ...

— Քո գործը չի, աղբերս, իմը փորձված եղանակ է,— պատասխանում է հանդիսատ։

Եվ իրավացի է դուրս գալիս։

Զսխալվեցի՞, որ նրա հետ սենյակ վերցրի, բայց բոլորն էլ այդպիսին են։ Այժմ խուսափում եմ և աշխատում ոտքան կարելի է առանձին մնալ։ Աշխատանքից հետո, վերցնում եմ ինձ տրամադրված ձին ու ման գալիս լեռներով ու ձորերով։ Ամեն, ամեն ինչ ճնշում է հոգուս վրա...

Երեկո է, իջնում եմ տխուր ու ընկճված մի փողոցից-լքված և առանձնության մեջ։

Մտածում եմ, որ բախտի շար քմահաճույքով ինձ վիճակվել է ծնվել ու ապրել այդպիսի երկրում, հեռու և օտար իմ հայրենիքից։ Մշուշոտվում են աչքերս, գեթ մի հայ մարդ լիներ, մի քրիստոնյա հայ մարդ, որի հետ կարելի լիներ կիսել սրտիս տառապանքը... և հայտնվում է նա... այդ կինը։

Գեղեցիկ է, սլացիկ հասակով. վեր է հանել երեսի քողը և ամփոփել ճակատի վրա, որտեղից դուրս է հորդում ածխանման մազերի փունջը։ Հոգնած է երևում, քրտինքի հաղիվ նշմարելի հատիկներ կան քունքերի աղվամազերի և վերի շրթունքի վրա, հոնքերը իջնում են աղեղնաձև աչքերին, և արտևանունքները թեթև շուք են գծագրում այտերի վերին մասում։ Այտերի վերին մասում, ձախում, փոքրի՜կ-փոքրի՜կ մի խալ կա, այնքան քնքուշ, այնքան խելագարեցնող։ Դալուկ են շրթները և սարսռում են ինչ-որ ներքին հուզումից։ Սպիտակ, սպիտակ մի մորթ ունի, և այր մարդու նայվածքից դիմագծի այդ սպիտակությունը կարող է ալիքավորվել ու իջնել խորը, խորը իր հոգվույն մեջ։ Քայլելիս նազանքով օրորում է մարմինը բնական և անբռնազբոս և կարծես կաքավում է... Տեսավ ինձ, և վարդագույն մի ալիք անցավ ամբողջ մարմնիցը. խալի սևը շեշտվեց առավել։ Անակնկալ էր, ամայի այդ փողոցում մի օտարականի, այն էլ

սպայի անցքը այդպես, հապճեպ վար առավ երեսի քողը և թաղվեց մթության մեջ...

Օրերի ազդեցությո՞ւնն էր, թե պահի ընձեռած արտասովոր ցնցումը, իմ մեջ զարթնեցրեց ինձ համար էլ անսպասելի հանդգնությունը: Քայլերս դարձան ետ ինքնաբերաբար, անասելի մի հուզմամբ հետապնդելու նրան: Իր կրունկների դոփյունը, այնքան մեղմ, բայց սրտիս այնքան ուժգին արձագանքող, իր կրունկների դոփյունը փողոցի քարերին՝ ավելացրին սրտիս տրոփը և երիտասարդական զարթնող և հետզհետե բազմապատկվող բուռն մի տենչով քայլերս հարմարվեցին իր քայլերին:

Հասկացավ, որ հետապնդում են, կանգնեց մի պահ, շատ կարճ մի պահ, ստուգելու համար քայլերիս արձագանքը և զգաց, որ իրեն շատ մոտ կանգ առա և ես: Առաջին անգամն է կյանքումս, որ այդպես անսովոր բան է պատահում ինձ հետ: Ի՞նչ եմ անելու և ի՞նչ եմ ասելու: Իսկ եթե ամուսի՞ն ունի, եթե տեսնեն ինձ և ստուգեն իմ հայությունը... վազում եմ փորձանքի հետևից, բայց անկախ է կամքիցս այդ բոլորը: Կանգնել է, և ես դանդաղ մոտենում եմ:

— Քույրիկ, մի բոպե...

Նա քայլում է արագ, հևիհև, վազում է կարծես ահաբեկված, և ես այդ նեղ, հազիվ երեք մետր լայնք ունեցող փողոցներում հետապնդում եմ նրան: Եթե ուզենամ կարող եմ և բռնել թևիցը: Բայց ի՞նչ կստացվի: Նա թեքվում է, մտնում առավել լայն ու լուսավոր մի փողոց, առաջին կարգին փողոցը ցարդ էղինեում իմ տեսածների մեջ, և կանգնում մի երկհարկանի, ցածրիկ տան առաջ: Բանալիով. որ ափին մեջն է, բաց է անում դուռը: Ես իր մոտն եմ, շվարուն, դողահար. բայց նա մտնում է ներս և դուռը փակում հապճեպ և աղմուկով կողպում, մեկ... երկու... երեք անգամ: Ես սառել կանգնել եմ այդպես և դողում եմ, նրա մարմնի դողն էլ անցել է ինձ: Հիմարություն... կանգնել եմ շվարուն ու պարտված... և ի՞նչ... և վերջ: Ուշքի եմ գալիս: և արագ հեռանում: Ուզում եմ սակայն ստուգել հասցեն, սա էլ մի այլ հիմարություն: Փողոցի ելքին, որ բավականին երկար է, վերջին տան պատուհաններին կից, մի փոքր կապույտ

ցուցանակ կա, և ես կարդում եմ. և սխալ չեմ կարդում, այո՛, կարդում եմ ուղիղ, հատ-հատ յուրաքանչյուր գիրը մեծատառով... «Ermeni mahallesi»[1], քրտինքը պատում է ճակատս, սկսում է երկրորդ դողը։ Չսխալվեցի՞ արդյոք։ Չէ՛, ճիշտ ու ճիշտ Ermeni mahallesi»... դանդաղ-դանդաղ հեռանում եմ և մտնում մի խուլ գինետուն։ Հիմա եմ հասկանում, թե տանտիրուհին ինչու ասաց «Փառք աստված, բոլոր թաղը մուսուլմաններ են»...

— Մի մեծ բաժակ գինի։

— Հայուհի՞ է արդյոք, անցնում է մտքիցս, բայց ինչո՞ւ սև այդ լաչակը դիմագծին,— ի՞նչ գեղեցիկ էր։ Մի բաժակ, մի մեծ բաժակ գինի...

Թեֆիկը տանն է։

— Ի՞նչ է, աղբերս,— ասում է,— խելագարվածի տեսք ունես, հո հիվանդ չես...

— Մի կին տեսա,— փախցնում եմ ակամա բերանիցս։

— Է՜հ, վերջապես աղբերս,— կրկնում է ուրախ,— ո՞նց էր...

— Չխոսեցի նույնիսկ...

— Ա՜յ հիմարի մեկը,— ավելացնում է,— ո՞րտեղ տեսար, լա՞վն էր...

— Հուրի, իսկական հուրի, հայոց թաղում,— պատասխանում եմ, անհամբեր սպասելով իր հակադրեցությանը...

— Հայոց թաղո՞ւմ,— կրկնում է շվարուն,— ի՞նչ է, տակավին հայոց թա՞ղ կա էգինեում. ի՞նչ ես ասում, լավ է։ Տեսնես ոնց են ձերոնք, հը՞, ես տակավին չեմ փորձել, գիտե՞ս...

Դեղնեցի հավանաբար...

— Լավ, է՜հ,— ասում է, և շոյում բեղերը,— դե, աղբերս, եկ մի հատ երգիր...

— Թո՛ղ, անպետքի մեկը,— ջղայնացած պոռում եմ հանկարծ։

Զարմանք է կտրել...

— Լա՛վ, լա՛վ, հո սիրահարված չե՞ս...։ Ասա տեսնենք

---

[1] Ermeni mahallesi (Թրք.)— հայոց թաղ։

ո՞նց էր,— շարունակում է հաշտարար տոնով և ավելացնում,— նկարագրիր, բայց մանրամասնորեն, աղբերս...

— Լռում եմ...

— Գիտե՞ս ինչ խոտհեցա այսօր,— փոխում է նյութը, զգալով տրամադրությունս,— ա՛յ, որ մարդ հարուստ լինի, պիտի լինի Իսմայիլ պեյին պես...

— Ո՞վ է Իսմայիլ պեյը...— դժվարավ հարց եմ տալիս։

— Չե՞ս իմանում, այ տղա, այս երկրամասի տերն ու տիրակալը։

— Հա, հիշեցի,— ասում եմ,— մի մարդ ճանապարհին, ավտոբուսի մեջ, պատմեց ինձ, իսկ հետո...

— Հետո, ո՞նց թե ա՛յ տղա, որ մարդ այդքան հարուստ լինի, ամեն օր մի տաս հատի հետ կարող է լինել... Վարշապետի եղբայրն է մարդը...

— Ո՞ր վարշապետի...

— Քանի՞ վարշապետ ունենք, 1948-ին, ա՛յ աղբերս,— ասում է զարմացած,— չէ, դու ճիշտն ասա, ուղեղդ կորցրե՞լ ես, թե տեղումն է դեռ...

***

— Հայոց թա՞ղը։

— Է՜հ, դա վաղուց էր, տղաներ, շատ վաղուց,— պատմում է մեր տանտիրուհին,— հիմա անունը կա, ինքը... ոչ։ Վաղուց, շատ վաղուց էր, ինչ ասեմ, լավ էլ չեմ հիշում, պատերազմի տարիներն էին, այն ժամանակ ամուսինս՝ քարա Ահմետը, երիտասարդ տղա էր, երիտասարդ հուժկու մի տղամարդ։ Նա ինձ շատ էր սիրում. ես իմ կյանքի երջանիկ օրերը նրան եմ պարտական։ Ճիշտ է, գաղան բնավորություն ուներ, փախցրել էր ինձ տանից, բայց հարգում և պաշտում էր։ Մի խոսքս երկու չէր անում, շատ էր՝ ուզում ինձանից մի զավակ ունենալ. բայց ինչ անել, չհաջողվեց... Մեր օջախի ջերմությունը խանգարողը միայն դա էր։ Բայց պիտի ասել, լավ տարիներ էին այն օրերը, առատ էր ամեն ինչ, հացն ու կարագը, յուղն ու մեղրը։ Այն ժամանակ ձիթենիի այս անհատնում անտառները մի հոգու սեփականությունը չէին։ Մարդիկ այսքան աներես

չէին դարձած։ Մենք փոքր այգի ու դաշտ ունեինք, իր հայրն ու մայրը ողջ էին, ապրում էինք մեր աշխատանքով։ Աշխատանքը բավարարում էր։ Քաղաքն էլ այդպիսին չէր այդ տարիներին, կանաչապատ էր, լեռներում թանձր ու խիտ անտառներ էին, բարեբեր անտառներ... Դեռ մեր կողմերը, ուշինչ, բայց պատմում են, արևելքում այդ խիտ ու հսկա անտառային տարածություններից այժմ ոչ մի բան չի մնացել. մերոնք կտրել, կտրել ու փչացրել են, անտառները վերածել քարքարոտ տափաստանների։ Հիմա թշվառություն է ամենուրեք, մենք մի կերպ այս կողմերում յոլա ենք գնում։ Չդիտես ինչը փոխվեց։ Այն տարիներին էլ տուրքերը նույն տուրքերն էին, ոստիկանությունն ու զինվորականությունը նույնը։ Բայց ամեն ինչի մեջ համ ու հոտ կար, կարծես ինչ-որ օրհնված մի մատ։ Ի՞նչ ասեմ, տղաներս, ասեմ, թե այդ բոլորը գյավուրների երեսից էր, սուտ խոսած կլինեմ, բայց որ գյավուրները վատ մարդիկ չէին, ի՞նչ մեղքս պահեմ, թող նրանց ինձ Մուհամմեդը. ճիշտ եմ ասում։ Օրինակ, հենց մեր տան կողքին ապրում էր Կարապետ անունով մի մարդ. նա մի շատ սիրուն կին ուներ. նրանք չորս աղջիկ ունեին։ Ամենամեծը՝ տասնհինգ տարեկան, երկրորդը՝ տասներեք, երրորդը՝ տասը։ Սպասում էին մի մանչ զավակի, Կարապետը մի օր ասել էր Քարա Ահմետին, թե Ահմեդ, թե, որ էլի աղջիկ ծնվեց, ես կխելագարվեմ...

Ահմետս էլ թե՝ Կարապետ, թե որ աղջիկ ծնի, կտաս ինձ...

Խոստացել էր, և դու տես որ չորրորդն էլ մի լուսնի նման աղջիկ ծնավ։ Հոր այտի վերին մասում շատ սիրունիկ մի խալ ուներ, մի տաս օրվա, արտահանունքները շուք էին տալիս ստորին կոպերի վրա։ Հարցն այն չէ, որ նա՝ այդ չորրորդ աղջիկը, շատ էր գեղեցիկ, վերջիվերջո տղեղ էլ որ լիներ, զավակ էր էլի, արյունից ու մսից պոկված։ Ո՞նց կարելի է ուրիշին տալ... Այդ օրերին էր, որ ծագեց համաշխարհային պատերազմը, շանցավ մի տարի, և մի օր գաղտնի հրահանգ եկավ վերևից։ Իրարանցում էր, սարսափ։ Գյավուրներին՝ կին, տղամարդ, երեխա, հավաքեցին մի դիշերվա մեջ, ոտի կանգնեցրին Հայոց թաղը և տարան... Բոլորին

ջարդեցին «Կապույտ ձորի» մեջ։ Աղեկտուր ճիչերը լսվում էին այստեղից։ Տեղահան եղող ժողովուրդի մեջ Կարապետն ու իր սիրունիկ կինն էլ կային։ Կարապետը արցունքն աչքերին բախեց մեր դուռը, թե՝ Ահմետ, սիրելիս, դու մի աղջիկ էիր ուզում, ես տալիս եմ շորսը. խնդրում եմ պահիր տունդ, նրանց բան չպատահի, ես լավ բան չեմ սպասում այս բոլորից։ Թե որ ասված կամեցավ ու վերադարձանք, վերադարձրու երեքին, շորրորդը թող քոնը լինի. թե որ ուրիշ բան պատահեց, նրանց բախտը դու տնօրինիր։

Շատ մտերիմ էինք, աղ ու հաց էինք բաժանել տարիներով. չմերժեցինք։ Բայց երբ Ահմետը լսեց գյավուրների հետ պատահածի մասին, նա աղջիկներին տարավ մառան ու փակեց այնտեղ։ Տևաբար լաց էին լինում։ Կարապետի սիրուն կնոջը սպանելուց առաջ, մի տաս-տասնհինգ հոգով բռնաբարել էին, մարդը տեսել էր այդ ամենը։ Է՜հ, շատերին էին արել նույն բանը սպանելուց առաջ։

Թեֆիկը պատմության այս մասում շարժվեց։ Բայց իմ ներկայությունը կաշկանդեց նրան։ Տանտիրուհին ազատ պատմում էր այդ բոլորը առանց դույզն վարանման։ Նա երբևիցե չէր կասկածում, որ ես հայ կարող էի լինել։ Թեֆիկը նույնպես չէր կարողանում զգուշացնել նրան։ Հարմար չէր զգուշացումը այլևս։ Նետը ելել էր աղեղից։ Ես աշխատում էի անտարբեր տեսք ընդունել, բայց չէր հաջողվում։ Ինչ որ տաք արյան մի հոսք լեցվում էր սրտիս վրա և ինձ մղում դանդաղ զգայազրկության։

— Ահմետն էլ բավական օգտված կլինի առիթից,— ընդհատեց Թեֆիկը...

— Քարա Ահմետս այդպիսի մարդ չէր,— առարկեց կինը,— նա սիրող, իսկական տղամարդ էր։ «Կապույտ ձորը» էդ օրվանից հետո կոչվեցավ «Օձերի ձոր», բայց չեմ հասկանում թե ինչու «Հայոց թաղը» մնաց էլի նույնը։ Երբ ժողովուրդը լսեց, որ այլևս չկան գյավուրները, սկսեց թալանը, դատարկվեցին տները, պիտի ասել, մենք անմասն մնացինք այդ բոլորից։ Մի երկար ժամանակ լրիվ ամայի էին հայոց տները։ Հետո ինքնակոչ մարդիկ սկսեցին մեկ-մեկ սեփականատերեր դառնալ... Հետո, էլի վերևից խիստ հրա-

հանդ եկավ թե՝ ովքեր որ հայ են պահել, ենթակա են աքսորի և նույն ճակատագրին: Իմ մեջ զլուխ զցեց սարսափը: Ահմետը նույնպես վախեցավ:

Հո չէր կարելի էդ աղջիկներին երկար պահել մեր տանը: Ասենք մի օր, տաս օր, մի ամիս պահեցիր մառանում, վե՞րջը... Թշնամիներն էլ անպակաս էին: Ահմետի հայրը թե՝ մի ճարը տես էդ լակոտների: Լրտեսներն էլ վխտում էին շորս դին: Ու մի գիշեր Ահմետս փողոց գնաց ու վերադարձավ շատ ուշ, թունդ հարբած: Մտավ ներս և ասաց, թե՝ աղջիկների հայրն ու մայրը ինչ-որ տեղ սպասում են, և ինքը հարկ է մեկ-մեկ տեղ հասցնի նրանց: Ուրախացան: Նախ վերցրեց ամենամեծին, գնաց դուրս, բավական ժամանակ հետո վերադարձավ ու տարավ երկրորդին, հետո էլ փոքր ընդմիջումով երրորդին: Ամեն անգամ, որ ներս էր գալիս, ավելի էր մթագնած լինում դեմքը: Չէի հասկանում, թե ինչ էր կատարվում, բայց զգում էի թե, ինչ որ ծանր բան էր տեղի ունենում: Չորրորդին, փոքր երեխային, որ ձախ այտում մի սիրուն խալ ուներ և որի արտևանունքները դեռ այդ օրերին իսկ շուք էին տալիս սառորին կոպերի վրա, վերցրեց գիրկն ու.

— Այշե,— ասաց,— չէի ուզում սրան էլ տանել, բայց կատարվածից հետո, ինչ արած, այլևս ուշ է, չեմ կարող...

— Իսկ ի՞նչ արեցիր մյուսներին,— ասացի ես դողահար...

Խմած էր սաստիկ.— Ես ու հայրիկը վերջացրեցինք հաշիվը,— պատասխանեց:

Կանգնեցի ոտքի և կատաղած նայեցի աչքերին.

— Հո, այդ լաճերի հետ չանպատվեցի՞ր ինձ...

Մի կողմ հրեց ինձ կատաղած...

— Այդ էր պակաս,— ասաց:

Բայց ես չէի հավատում, մեծը գեղեցիկ էր, ճիշտ մորը նման, հասուն կին էր դարձել արդեն:

— Հապա ինչո՞ւ առաջինի հետ երկար տևեց պատմությունը...

Վար կախեց աչքերը և հազիվ փսփսաց...

— Հայրիկն էր, չկարողացա ետ պահել,— ասաց,— մայրիկին բան չասես...

— Իսկ հետո՞:

— Հետո տարավ մորթեց մեկ մեկ...

Իմ աչքերին մշուշ իջավ, սպիտակել և դողում էի ամբողջ մարմնով: Թեֆիկը նայեց ինձ և կախեց գլուխը: Տանտիրուհին շվարեց:

— Ես կնիկ վիճակովս տոկացի, բայց դու այր մարդ ես, նույնիսկ չե՞ս կարող լսել,— ասաց մեղմ, խոսքը ուղղելով ինձ:

Ես կանգնեցի ոտքի և դսպելով հուզումս.

— Գնամ մի քիչ ման գամ,— ասացի,— բայց չասացիք, ի՞նչ է արել ձեր ամուսինը այդ փոքրիկ երեխային...

— Տվել է անծանոթ մի մարդու, թե՝ առ, վերցրու, հայի լակոտ է, ինչ ուզում ես արա...

— Իսկ ի՞նչ է արել նա...— դողում էր ձայնս:

— Ձենք իմանում և չիմացանք էլ. Ահմեան էլ չէր հիշում այդ մարդուն, շատ է հարբած եղել էդ գիշեր, հավատացեք նա կյանքում այդ գիշերվա նման հարբած չկար: Նա լավ մարդ էր, լավ, սիրող ամուսին, պատվախնդիր ու պարկեշտ...

Ես գրեթե խուճապահար դուրս նետվեցի տանից, պրկված էր գլուխս, քայլերս ակամայից ինձ առաջնորդեցին այնտեղ... «Հայոց թաղը»...: Մութ էր փողոցը, ամայի, տներից աղոտ լույսեր միայն դուրս էին տալիս իրենց գեղնավուն ցոլքը: Մի տեղ ինչ-որ տասնյակ մարդիկ միաբերան մի բան էին ընթերցում: Մոտեցա դռանը և ականջ դրի... «զուրան»-ն հատվածներ էին հեգում:

Չգիտեմ ինչպես, ներքին ինչպիսի դրդմամբ, ոտքերս կանգ առան մի տան սեմին, և ես սեղմեցի զանգը: Ոչ մի շշուկ, դռան կողքին մի փողոցային գորշավուն լապտեր հաղիվ լուսավորում էր շրջակայքը. էլի ձեռքս բարձրացավ ու հանդչեց զանգի կոճակի վրա: Բացվեց դուռը և...

— Վա՜յ, դո՞ւ ես,— ասաց մի առնական ձայն, ինձ չգիտես որտեղից ծանոթ:

— Այո՛, ես եմ,— բայց ո՞վ եմ ես, ո՞րտեղից է այս մարդը ճանաչում ինձ...

— Անցիր, սպաս, անցիր ներս, ի՞նչ հով քեզ այստեղ գցեց, աղջիկս։

— Վարձու սենյակ եմ ման գալիս,— պատասխանեցի դողահար... և ճանաչեցի մարդուն։ Նրա ձեռքին նույն համբիչն էր և տեսա, որ բեխեր ուներ շուրթերի վրա, հաստ ու խիտ բեխեր...

— Հաթճե,— պոռաց նա,— Հաթճե, ե՛կ, հյուր ունենք,— և թեթևցս բռնած ներս քաշեց ինձ...

— Նստի՛ր, այ տղա, —ասաց,— ի՞նչ է, շշմել կանգնել ես, եկ մի արաղ խմենք...

Կինը շառագունեց, երբ տեսավ ինձ. նա ճանաչեց անմիջապես, այս անգամ մանային սպիտակ յաղմայով էր, նույնպես հավաքված իր ճակատի սպիտակությանը հետ ուժեղ հակասություն կազմող ածխանման մազերի վրա։ Անմիջապես ձեռքը տարավ ճակտին, ուզեց քանդել կապը և ծածկել շուրթերը օտարից...

— Աղբեր տղա է,— ասաց մարդը,— յուրայինի պես պահիր քեզ, կարիք չկա ծածկվելու։

Իսկապես գեղեցիկ էր նա, ձախ այտում սիրուն, սիրուն փոքրիկ մի խալ այրում էր իմ աչքերը, իսկ արտևանունքները սենյակի աղոտ լույսի տակ առավել շուք էին տալիս սառորին կոպերին...

— Ի՞նչ է, աղբերս, դեռ հյուրանոցո՞ւմ ես։

Զգաստացա.

— Չէ՛, մի տեղ գտել եմ, բայց գոհ չեմ,— ասացի ես։

— Բա՜, դու ինձ ո՞րտեղից գտար։

Զգում էի, որ դողում էր նա. հեռացավ սենյակից։

— Պատահմամբ մի դուռ բախեմ ասացի...

— Լավ ես արել, աղբերս. լեռը լեռան չի հանդիպի, բայց մարդը մարդուն կհանդիպի։ Հաթճե,— պոռաց,— սիրունիկս, օղի բեր ինձ ու սպայիս։

Ու մինչ նա գեռնին դրված թախտի վրա սկսում էր

շարել ամաններն ու խոհանոցից բերած աղանդերները, մարդը դարձավ ինձ.

— Ծանոթանանք, աղբերս,— ասաց,— մենք դեռ կարդին չենք էլ ծանոթացել... Իմ անունը Սապրի է, սա էլ կինս է՝ Հաթճեն, և այսքան։ Մարդ ու մարդասանք չունենք։ Մինուճար մարդիկ ենք։ Մի ծերուկ հայր ունեի, լուսավորվի հոգին, լավ, մարդասեր մարդ էր. մի քանի տարի առաջ մահացավ, հիմա դու էլ իմ աղբերն ես...

— Իմ անունը,— ասացի,— Լևոն է,— այլևս թաքցնելու մեջ իմաստ չէի գտնում, և շեշտեցի դիտմամբ,— ես հայ եմ, ինչպես դիտեք պոլսեցի...

Տիրեց երկար լռություն։ Ես անթարթ նայում էի Հաթճեին։ Ոչ մի շարժում, մնում էր կանգնած, անտարբեր ու վերացած իր վստահությունը. բայց զաղտագողի զգում էի, որ զննում էր ինձ։ Վախեցա ակամա։

— Ուրեմն կենացդ. բարի եկել ես. գալդ բարի լինի, աղբերս,— թնդաց Սապրիի ձայնը։

— Դե՛ ոչինչ, Հաթճե, աղբեր տղա է, այն էլ սպա, ոչինչ. կարող ես գալ և նստել մեզ հետ։

Տարօրինակը Սապրիի վստահությունն էր իմ նկատմամբ։ Եվ ավելի զարմանալին, մի գյավուրի առաջ իր կինը չթաքցրնելու և նույնիսկ սեղանին մասնակից դարձնելու լայնամտությունը։ Սա փոքր բան չի Անատոլիայում։ Ես ակամա սիրով ու հարգանքով լեցվեցի նրա նկատմամբ, բայց ապրում էի խոր հիասթափություն, ուրեմն այս բոլորը պարզ ու սովորական մի զուգադիպություն էր։ Հաթճեի որբությունը, ձախ այտի խալը և արտանունքները։ Տակավին աչքերի հեզ ու մեղմ նայվածքը...

— Սապրի պեյ,— ասացի,— վաղը կիրակի օր է, չգնա՞նք ուղտերի մենամարտին։

— Չէ՞ք տեսել բնավ,— մեջ մտավ կինը։

Սա էլ էր հանդուգն քայլ. առաջին անգամ նա խոսում էր ինձ հետ, բայց այդ չէր կարևորը, կինը միջամտի խոսակցությա՞ն։ Ես լսեցի նրա ձայնը։ Նա հնչում էր անապատում կկլկլաշ ու սառնորակ մի աղբյուրի զուլալ ջրի նման...

— Որտեղի՞ց։

— Ուրեմն կգնանք միասին, — ասաց Սապրին,— ՀաթՃեն չի կարող գալ. զավակների հարց է...

— Երեխաներ ունե՞ք...

— Հապա ինչ, երեք աղջիկ, ասուած մեր բախտը աղջիկով է բացել,— պատասխանեց մարդը... Ինչ անել, շատ ենք ուզում մի մանչ զավակ ունենալ, չի ստացվում...

Նա կրկին շառագունեց:

— Իսկ դու ամուսնացա՞ծ ես,— հարց տվավ Սապրին:

— Ո՛չ տակավին:

— Իսկ եղբա՞յր, քո՞յր...

— Դե ունեցել եմ, բայց կորել են չարդերին,— շարացած պատասխանեցի ես...

Տիրեց կրկին մի ճնշող լռություն...

— Նրանց հոգուն, թե որ մահացել են. իսկ թե որ ապրում են, ասուած թող միացնի ձեզ,— ասաց Սապրին և շարունակեց,— ես սիրում եմ հայերին, լավ աշխատասեր ժողովուրդ են, մայրս շատ է պատմել նրանց մասին, ի՞նչ անել... եվ, առհասարակ, գիտե՞ք, Լևոն պեյ, ես ինքս էդպիսի ազգային պատկանելիության շատ էլ կարևորություն չեմ տալիս, ինձ համար մարդն է կարևոր, ազբերս, եկ, խրմենք մարդու կենացը, իսկականի՛ն, լավի՛ն...

ՀաթՃեն զուրգուրոտ նայվածքով նայեց ամուսնուն... Իմանո՞ւմ էր նա իր անցյալը, թե այդպես սիրում էր մարդուն, իսկականին, լավին... Բայց խա՞լը... Հա աշխարհում ձախ այտի վրա խալ ունեցող մի՞թե մի աղջիկ է ծնվել... Սապրին կրկնում է հարցը: Ես տարվել էի.

— Իսմայիլ պեյին ճանաչո՞ւմ եք...

— Այո, պատմեցիք ավտոբուսում,— հարեցի քմծիծաղով:

Մենք ակամա խոսում ենք հոգնակի թվով:

— Հա, տեսնում եք. էդ է, որ կա, է՛հ, ինչ անեմ, որ նա թուրք է, նրա ձեռքը, որ գա, նա քեզ էլ կուտի, ինձ էլ, ազբերս...

— Իսկ չի՞ ուտում որ...— մեջ մտավ կինը:

— Ճիշտ ես ասում,— ասաց Սապրին,— նա ուտում է մեզ, կամաց, կամաց, քիչ առ քիչ և մենք չենք զգում այդ: Բայց թողնենք, Լևոն պեյ, երգել իմանո՞ւմ ես...

Մեկնելու առեն կինը արծաթյա ափսեի մեջ տաք ջուր մատուցեց ձեռքերս լվանալու համար և երկարեց սրբիչը... Ես միշտ հիշում եմ այդ պահը, այնքան ջերմություն և հյուրամեծարություն կար նրա շարժուձևի մեջ: Չգիտեմ ինչու լցվեցին աչքերս, նա այդ բոպեին փոքրացավ, փոքրացավ և դարձավ մի ութ տարեկան աղջիկ,— մի ութ տարեկան աղջիկ, որի անունը Եպրաքսե էր և որ հիմա չկա...

— Շնորհակալություն, քույրիկ,— ասացի ես:

— Լավ էիր երգում,— ասաց Սապրին,— մարդ, որ սիրո ու կարոտի երգեր է երգում, վատ մարդ լինել չի կարող, ուր էլ գտնվի, ինչ ասողի տակ էլ, որ ծնված լինի... Զմռռանաս, եկ վաղը, կգնանք անպայման, իսկ սենյակիդ համար մի բան կխորհենք, չմտածես...

«Հայոց թաղ»-ից անցնելիս զգում էի, որ մենակ ու առանձին եմ աշխարհում, մենակ, լքված ու առանձին...

Տանը Թեֆիկը ինձ դիմավորեց սառը:

— Աղբերս,— ասաց,— վաղը պիտի դուրս գալ էս սենյակից, տանտիրուհին կռահել է իմ կապը ուսուցչուհու հետ, էլ չի ուզում մեզ պահել իր տանը, շատ խոսեցի, չհամաձայնվեց...

— Հասկանալի է,— ասացի,— հանցավորը դու ես, ես ասում էի քեզ, այդպես չէր կարելի...

Երկուքս էլ հասկացանք իրար. բայց նա հայհոյում էր անպայման, և այն էլ ինչպե՞ս... հայհոյում էր թերևս այն բանի համար, որ ես որքան էլ տարօրինակ, սպա էի և մի սպայի երեսին, երբ նա համազգեստ է կրում, չի կարելի ասել այն, ինչ որ խորհում ես...

***

Չեմ իմանում, հարկ կա՞ նկարագրելու ուղտերի մենամարտը: Տոնական մթնոլորտ էր. շրջակա գյուղերից հաղարավոր մարդիկ ու կանայք էին լեցվել դաշտի շրջակայքում: Գույնզգույն լաչակներ պսպղում էին ամենուրեք: Կանաչ, կարմիր, կապույտ, դեղին լաչակներ: Կենտրոնում ու դաշտի ղանաղան մասերում յուրաքանչյուր գյուղից բերված գոլն

ու զուռնան էր, և ստեղծվել էր մի քաոս, մի արտակարգ իրարանցում։ Դաշտից դուրս, սաղարթների մեջ, հանդչում էին ուղտերը. պճնված, բազմագույն գորգերով, ուլունքներով և զողանջող զանգակիկներով։ Դհոլ ու զուռնայի բամբ ազդանշանի վրա հրապարակ էին դուրս գալիս երկուսը՝ վզերից պարաններ կապված։ Պարաններից կախված գյուղացիներն էին, որոնք քաշում ու կենտրոն էին բերում ուղտերին։ Առաջին բոպեներին անտարբեր ու անհոգի, սառած աչքերով ուղտերը կարծես ոչ մի մասնակցություն չունեին ընդհանուր ահ ու դողին։ Հետո մի այլ տեղից էգ մի ուղտ էին բարշ տալիս, նույնպես վզից կախ պարանից։ Էգը արագ անց էին կացնում մենամարտի համար նախատեսված երկու արու ուղտերի արանքից, և այստեղ պարզվում էր ինձ համար անսովոր մի տեսարան։ Արուները վրա էին տալիս էգին. բայց փորձված գյուղացիք հապճեպ հեռացնում էին էգին և թողնում, որ արուները փաթաթվեն իրար։ Հետո թուլացնում էին պարանները և հանում. հատուկ ուղտեր էին ման ածում անշուշտ, հատուկ կերակրում և էգերի նկատմամբ զուսպ պահում։ Սկսում էր մենամարտը։ Տիրում էր խորը լռություն։ Երկու ըմբշամարտիկների նման, գրեթե ուշիմության և տակտիկայի նույնպիսի փորձվածությամբ ուղտերը ջանում էին գլուխ ու վիզ ոլորել, ոտից վար գցել ախոյանին, և յուրաքանչյուր արված հաջող քայլի հետ թնդում էր ծափն ու կանչը, զուռնան սոլո էր ածում։ Հրճվում և ուրախանում էին մարդիկ։ Մի պահ իմ աչքերը հեռացան մարտադաշտից և հանդչեցին հանդիպակաց բլուրների վրա։ Լիքը մարդկանցով հեռացող դաշտից հետո, խուլ սաղարթների միջից տեսա Թեֆիկին, որ արագ դուրս եկավ ու խառնվեց բազմությանն։ Ակնարկս պահեցի սաղարթներին. քիչ անց դեղին լաչակավոր մի աղջիկ հետևեց նրան և արագ վազեց յուրայիններին մոտ։ Ինչպե՞ս էր այդ տղան այդքան հանդուգն դարձել։ Բոլորի ուշադրությունը կենտրոնում էր սակայն։ Սապրին ճշաց ուրախ և այս այն բոպեին էր, երբ ուղտերից մեկը սկսավ փախչել մենամարտի դաշտից։ Այդ պարտությունն էր նրա։ Մարդիկ վազում էին նրա ու հաղթողի ետևից պարաններով, որպեսզի կրկին դցեն նրանց վզներին և տա-

նեն հանգստանալու։ Թնդում էին էլի դհոլն ու զուռնան, իրար խառնում ամեն ինչ։ Հաղթանակ տանող գյուղացիք հրճվում էին ուրախությունից և պարեր կազմակերպում, հաղթվողները գլխիկոր հեռանում դաշտից։ Յուրաքանչյուր ուղտ պատկանում էր մի մարդու, բայց խորհրդանշում էր այդ գյուղացու պատկանած գյուղը։

— Միամիտ ու բարի մարդիկ են մեր գյուղացիք,— ասաց Սապրին։ Ուղտի մենամարտ, աքլորի մենամարտ, ըմբշամարտ. ա՞նց են կացնում ժամանակը։ Դհոլն ու զուռնան ինչքան բարձր են ճչում, հասկացիր, աղբերս, որ այդքան խորն է ցավը։

Պատահում էր, որ երկարում էր մարտը, և ուղտերից ոչ մեկը չէր զիջում մյուսին, ընկնում էր ու բարձրանում, հետո իր հերթին մյուսին գցում գետնին, երբեմն հարցական նշանների նման իրար մեջ ոլորվում էին երկար վզերը ու բոպեներով մնում այդպես։ Նման դեպքերում գյուղացիք պարանները կապում էին ուղտերի ոտքերին և տասնյակներով ձեռք-ձեռքի տված շղթայակապ դատապարտյալների նման պարաններից կախ, աշխատում էին բաժանել կռվող անասուններին։ Ոչ ոքի էր հայտարարվում. այդպիսի դեպքերում, հաղթանակի համար հարկ էր, որ մեկը լքեր դաշտը և փախչեր... սկսում էր կրկին զուռնայի կանչը...

— Գնանք մեր մոտ,— առաջարկեց Սապրին,— գնանք, Հաթճեն տաք ճաշ է պատրաստել քեզ համար. հետո սենյակի համար էլ պիտի ման գար այսօր. տեսնենք ինչ արեց...

— Ես արդեն կարգադրել եմ,— ասացի,— բանակատեղից եմ վերցրել, իմ ինչի՞ն է հարկավոր քաղաքում սենյակ վարձելը։ Ճիշտ է, մի քիչ պայմանները լավ չեն, բայց ոչինչ։ Փողն էլ գրպանումս կմնա...

— Չես գալու տուն...

— Այսօր ժամը յոթից պիտի հերթապահություն վերցնեմ, մեր հերթն է այսօր,— ասեցի.

Տխրեց և ինձ համար էլ անհասկանալի.

— Հաթճեն կուրախանար, աղբերս,— վրա բերավ։

Մի շաբաթ հետո, անակնկալ հրահանգ եկավ կենտրոնական շտաբից։ Ինձ ու բաֆրացի մի այլ ենթասպայի կար-

գաղթել էին հապճեպ տեղափոխվել Բայրամիչ։ Էզիներից մի քանհինգ կիլոմետր ներս, զինվորական աքսորականների հատուկ մի վաշտում ծառայելու։

Մեկնմանս նախօրեին գնացի Սապրիենց տուն... «Հայոց թաղ»-ում։ Երկար համառեցի դռան զանգի վրա։ Արձագանք տվող չեղավ։ Ներքին մի նախազգացում ստիպեց, որ շարունակեմ զանգ տալ... լսեցի մեղմ ոտքերի շշուկ, բացվեց դռան վրա հազիվ աչքեր տեղավորելու չափ փոքր մի դռնակ։

Նա էր. նրա աչքերն էին, սև ու պսպղուն և խոնավ... մի պահ կոպերը փակվեցին և ես նշմարեցի, որ արտևանունքների վրա գիշերային ցող էր իջել...

— Սապրին այստեղ չէ,— ասաց,— նրան տարան երեկ,— ձայնը դողում էր,—իսկ ես առանձին եմ զավակներիս հետ, ներիր, դուռը բանալ չեմ կարող...։—Կանգնեց մի պահ այդպես և ես տեսա, որ կոպերից մի շիթ սահեց վար... Ջախ այտի խալին...— ներիր աղբերս,— և փակեց դռնակը։

«Հայոց թաղ»-ում առանձին եմ ու մենակ։ Քայլում եմ դանդաղ և լսում եմ դանդաղ քայլերիս արձագանքը։ Շտապ ու արագ իջնում եմ ցած, կանգնում պատի մի անկյունում, քայլերիս արձագանքը շարունակվում է մի քիչ էլ և կանգնում։ Տարօրինակ... հավանաբար առանձին չեմ «Հայոց թաղ»-ում։ Հետո, անտարբեր շրջանցում եմ թաղը և մբռնում մի գինետուն։ Դատարկ մի սեղան կա միայն։

— Տապակած սուճուխ և մի մեծ բաժակ գինի...

Մի մարդ է մտնում ներս, երիտասարդ մի մարդ ու նստում դեմս։

— Տապակած սուճուխ և մի բաժակ գինի...

Իմ աչքերում փայտյա մի դուռ է, և դռան վրա փոքրիկ մի դռնակ, հետո երկու սև ու պսպղուն աչքեր... արտևանունքները այդ աչքերին շուք են տալիս ստորին ծնոտի վրա... Փայլփլուն մի շուք, գիշերային ցող է իջել արտևանունքների վրա...

Իմ դիմաց երկու աչքեր են, անգղի երկու գիշատիչ աչքեր, սիգարեթի ծուխ և գինու բաժակ... Իմ դիմացի աչքերում արյուն կա խոնված։

Դրսում, ինչ որ մի տեղից զուռնայի ձայն է գալիս, և ինչքա՜ն սուր ու ճչան է այդ ձայնը։ Մի շուն ոռնում է զիլ ու ջղեր է խանգարում, ոռնում է անընդհատ ու կծկում սիրտս։ Ես մրսում եմ, և գինին իսկի չի ազդում վրաս։ Ես մրսում եմ սաստիկ... Դրսում գարնանային անձրև է, գրբ-սում գիշեր։

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԳՈՂԳՈԹԱՆ

Մեռնի՛լ, մեռնի՛լ, անմահանալ մահվան մեջ
Մեռնի՛լ... գրկիդ զոգն, այսպես մեր սերն
անշեջ՝
Անմունին մեջ ծառացրնել տիրական:

Ռ. Սակ

Լոզանի համալսարանի բժշկական դիտությունների դասընթացներից, 1911 թվականի շրջանավարտների վկայականների բաշխման պաշտոնական երեկույթն էր:

Ամֆիթատրոնը լիքն էր մարդկանցով, այնտեղ էր Շվեյցարիայի գիտական ընտրանին. նախկին շրջանավարտ-բժիշկներ, Եվրոպայում իրենց մասնագիտությունների մեջ հռչակ ձեռք բերած վիրաբույժներ. ֆրանսիական, բելգիական և գերմանական դեսպանատների ներկայացուցիչներ. դեռևս գրի ու գրականության մարդիկ և մեկ-երկու հանրածանոթ, արվեստի այլ բնագավառի աշխատողներ:

Ծանր էր մթնոլորտը, լուրջ ու զսպված: Գիտական մտքի այսպես ասած շորությունը չէր զիջում նույնիսկ ամռան վերջին օրերի շոգերի բերմամբ հոլանի թևերով ու մանյակազարդ լանջերով կանանց ներկայությանը: Այս վերջինները ընդհանրապես հռչակավոր մարդկանց գեղանի, երիտասարդ կիներն էին: Ներկա էին նաև Շվեյցարիայի առողջապահության և Արտաքին գործերի մինիստրները: Թեպետ նրանք տեղ էին գրավում սրահի խորքում գտնվող ամբիոնի վրա, համալսարանի ռեկտորի և ֆակուլտետի դեկանի կողքին:

Խայտաբղետ հանդիսականների մեջ սակայն իր քսանամյա կուսական գեղեցկությամբ և սպիտակ, սեղմ շրջազգեստի մեջ շողշողում էր գերմանացի մի օրիորդ, որը իր ձախ ուսով հաղիվ հենած զինվորական բարձրաստիճան մի

սպայի, անտարբեր նայվածքով հետևում էր երեկույթի ընթացքին։ Ուշադիր մարդը սակայն կարող էր զգալ, թե այդ «անտարբեր» նայվածքի տակ խորը փոթորկվող մի սիրտ կա, որ սպասում է ինչ-որ բանի, որ կատարվելու է։ Նա հորդառատ դեղին վարսեր ուներ, որոնք իջնում էին քունքերին և ոլորվում էին երկնագույն բաց կապույտ մի ժապավենի սեղմումի մեջ, աչքերը նույնպես լազուր էին, գարնան առավոտների զովությամբ լի... սպիտակ էր դիմադիծը, թեթև մի վարդագույնով երիզված։ Ականջներին մարգարտյա գինտեր կային, այլ զարդ չէր կրում նա։ Սպան նույնպես գերմանացի էր. նա արհամարհական դիտում էր շրջապատը և կարծես չկամությամբ ընդառաջում իրեն ուղղված ողջույններին։ Սա ևս անհանգիստ էր իր տեղում և հայտնի էր, թե ոչնչով չէր հետաքրքրվում և չէր կապված օրվա եղելությանը։ Եթե չլիներ զույգի մեջ տիրող պաշտոնականությունը, հակառակ մեկ-մեկ աղջկա կողմից ցուցաբերվող ջերմության, անծանոթ մարդիկ կարող էին մի պահ կասկածել, թե նրանք կամ սիրահարներ են և կամ ամուսիններ, որոնք գժտվել են ինչ-որ բանից, և այժմ աղջկա կամ կնոջ ջանքերը չեն կարող հալեցնել ստեղծված սառույցը։ Այսուհանդերձ ծանոթ մարդկանց համար ևս հանելուկ էր նրանց ներկայությունը։ Արդյոք շրջանավարտ մի ուսանող բարեկա՞մ ունեին նրանք, ինչո՞ւ չէ, կարող էր պատահել։ Չէ՞ որ բազմաթիվ գերմանացի ուսանողներ կային Շվեյցարիայում։ Ճիշտ է, տպագիր ցուցակներում նրանց ազգանունը հիշեցնող ոչ մի թեկնածու չկար, բայց ի՞նչ իմանաս։ Շատերը ճանաչում էին նրանց, գիտեին, որ տղան, հակառակ իր երիտասարդ տարիքին, բարձր դիրք ունի գերմանական կայսերական բանակում, և այդ դիրքի համար կպարտի որքան բնածին իր տաղանդին, նույնքան և այն արյունակցական կապին, որ նրան կապում է Գերմանիո ղորավորագույն մարդուն՝ Բիսմարկին։

Աղջիկը նրա քույրն էր, ամենակրտսերը։ Ակներև փաստ էր, որ զինվորականը, որ գործով գտնվում էր Շվեյցարիայում, զիջել էր քրոջ թախանձանքներին և ժնևից եկել էր Լոզան, իսկ այժմ էլ նստած էր այստեղ նրա պարտա-

դրանքով: Այդ փաստը կարող էր դառնալ անհերքելի, եթե հետաքրքրասերները նշմարած լինեին, թե ինչպես երիտասարդ գեղեցկուհին բոթեց իր եղբոր թևը, երբ ամֆիթատրոնի բեմի վրա երևաց իր կյանքի առաջին քառորդ դարը հաղիվ բոլորած, թուխ մի երիտասարդ: Նորավարտ բժիշկը իր սև, արծվային աչքերով հանդարտ մոտեցավ ամբիոնին և հպարտ կանգնեց հանդիսականների առաջ: Նրա հագին սև կոստյում էր, որը սպիտակ շապիկի հակասության մեջ, օսլայած բարձր օձիքով և նույնպիսի սև գույնի փողկապով, երիտասարդին դարձնում էր առավել նիհար ու երկարահասակ:

Ծնոտի սև ու խիտ մորուքը, որը հասնում էր մինչև այտերի ստորին մասերը և թավ բեխերը անսովոր մի հմայք էին տալիս ենթակային և անձը դարձնում առավել հետաքրքրքրական ու դրավիչ:

— Ռուբեն Չիլինկիրյան,— հնչեց համալսարանի ռեկտորի ձայնը: Մի ձայն, որ հարդված ու սիրված էր նրա տիրոջ տարիների վաստակի, և ոչ միայն Լոզանում, այլև Եվրոպայում իր ձեռք բերած արդար համբավի բերմամբ:

Սրահում մի շշուկ անցավ...

Ռուբեն Չիլինկիրյան, տարօրինակ էր հնչում անունը և առաջացնում էր հարցասիրություն: Կարող էր գերմանացի լինել նա, գերմանացիների մեջ մեկ-մեկ պատահում էին այդպիսի վերջավորությամբ ազգանուններ, բայց անունը ինչ-որ օտարոտի էր հնչում, հետո թխությունը, արծվային այդ աչքերը, որոնք ինչ-որ հեռու, հեռավոր լեռների, վեհ ու սիգապանծ լեռների կարոտն էին թողնում դիտողի հոգում: Առնական, բայց կիրթ իր շարժուձևերը, հոնքերի աղեղնաձև սլացքը, առատ ու խիտ, ալիքավոր, սև ածխանման վարսերը, մի քիչ անսովոր Եվրոպայի այդ մասում, կարող էին և պատկանել մի իտալացու: Բայց անունն ու ազգանունը կապ չունեին Իտալիայի հետ: Արդյոք մի ասիացի....

— Ռուբեն Չիլինկիրյան, շնորհավորում եմ Ձեզ և հանձնում եմ ավարտական Ձեր դիպլոմի հետ նաև 1913 թվականի մեր համալսարանի ոսկյա մեդալը, ձեր այնքան որակյալ դիպլոմային աշխատանքի համար, որը այս նույն

սրահում պաշտպանեցիք գարնանը։ Ուրախ եմ հրապարակավ հայտարարելու, որ դուք ձեր համալսարանական ամբողջ տարիների ընթացքում աչքի ընկած ցուցաբերված համեստ նկարագրով, գերազանց վարքով ու բարոյականով և առավել ուսանելի, համառ աշխատասիրությամբ։ Ձեր և Ձեզանով ձեր ազգի անունը արձանագրվում է մեր համալսարանի, Եվրոպայում հռչակված լավագույն համալսարաններից մեկի, ոսկյա մատյանում։ Հաջողություն եմ ցանկանում Ձեզ, ի փառս մարդկության և Ձեր ազգի, որին ծառայելու համար էլ Դուք այժմ ստանում եք մասնագիտությունների մեջ ամենամարդկայինի վկայականը։ Դուք այսօրվանից կոչվում եք բժիշկ Ռուբեն Չիլինկիրյան։

Սրահում տիրում էր արտակարգ մի լռություն։ Ռեկտորը դիպլոմն ու մեդալը հանձնեց առողջապահության մինիստրին և այս վերջինը այն տվավ երիտասարդ բժշկին։ Կարծես վերջացավ ինչ-որ անսովոր սիմֆոնիա, ու մարդիկ, հանդիսականները ուզում էին պոկվել տպավորությունից... «Անծանոթ» մի ժողովրդի զավակ Եվրոպայում վերցնի ոսկյա մեդա՞լը... Առաջի՞նն էր ինքը, թե իր հետ համընթաց պայթեցին ընդհանուրի հավանության ծափերը։

— Գրեթե՞ն, զգո՛ւշ,— ասաց սպան ջղագրգիռ, հակվելով դեպի քույրը,— զսպիր անտեղի խանդավառությունդ, դա վայել չէ գերմանական, առավել կայսերական քո դաստիարակությանը... Դեռևս պիտի ասեմ, որ նա, այդ տղան, ինձ բոլորովին էլ դուր չեկավ...

Աղջիկը ցնցվեց և.

— Հեներիխ, ես սիրում եմ նրան...— շշնջաց մեղմ և շառագունեց ներքին ինչ-որ անդիմադրելի մի հուզումից։

Սպան ցուցադրական ու բորբոքված հեռացրեց ուսը և կարողացավ հազիվ վրա բերել.

— Դա ծա՞նր, շատ ծա՞նր ու թանկ կնստի քո վրա, դու մոռանում ես քո արիական արյունը... Ես քեզ վաղուց ասել եմ այդ մասին։ Ուրեմն քո թախանձանքները այս կատակերգության համա՞ր էին միայն...

Աղջիկը չպատասխանեց, նա իղուր հույսեր էր դրել իր եղբոր վրա, բայց չպատասխանեց. մնաց լուռ, որովհետև

նայվածքը մեխվել էր ամբիոնում կանգնած սևամորուս և սևաբեղ տղայի աչքերին, իսկ նրա աչքերի արծվային խոյանքը ինչ-որ հուրհրում էր ներքին, անդուսպ մի կրակով և խոնարհվել էր հլու, հպատակ։ Նրա աչքերը ասում էին, թե նա ևս սիրում է նրան և կյանքում սիրո առաջ ոչ մի արիական արյուն չի կարող արգելք հանդիսանալ։

Բայց այդ բոլորը տևեց մի պահ, և աղջիկը հասկացավ, որ ինչ-որ անասելի մի սրտի պրկում, այդ բոպեին ներքին շխոստովանված մի ցավ մթագնեց տղայի դեմքը։ Նրա սրտի ու հոգու աչքերում հայտնվեց մի փոքրիկ, մի քանդող ու մրրկող փոթորիկ։ Գրեթե հենը խոնարհեց գլուխը։ Նա ճիշտ էր հասկացել, այժմ երիտասարդ բժշկի հոգում մրրիկ էր, նրա ականջներում հեռավոր վայո՜ւնն էր կույսերի, կույսեր, որոնք իր հարազատ քույրերն էին. դեռևս նրա աչքերի մեջ, հոլանի թևերով և մանյակազարդ լանջերով կանանց գլուխների վրայից նա ներքին աչքերով տեսնում էր անշեջ բոցերը, կարմի՜ր, արնագույն, որոնք լափլիզում էին տներ, օջախներ, իր հարազատների օջախները։ Քանդում և հրին ու սրին էին հանձնում սերեր։ Նա տեսնում էր բոբիկ երեխաների, դողդոջ ծերունիների դանդե՜ր, դանդե՜ր, որոնք լեռնանում էին այստեղ, հենց իր աչքի առաջ։ Նա մտքով գնացել էր հետ։ Նրա աչքերի առաջ 1909-ի Ադանայի հայկական կոտորածների պատկերն էր ու մտքում հնչում էին իր իսկ գրած տողերը...

«Ով դո՜ն, ո՜վ դժբախտ երկիր հայրենի,
Որ արյունի տաք շամանդաղի մեջ
Զոհ դաղաններու խաղին վայրենի,
Ու համայնատա՜ռ բոցերու անշեջ,
Կմիա՜ս, դժբա՜խտ, երկիր հայրենի...»

Նա սեղմեց ափի մեջ իր դիպլոմը, որով պայքարելու էր այսուհետև, բայց այդ բոպեին էլ զգաց, որ դա քիչ էր դեռևս, վերազատավ իրեն։ Ծափեր էին, ծափեր սրահում, և այդ ծափերը իր համար էին։

— Շնորհակալություն,— ասաց մեղմ։— Ես այսօրվանից երդվում եմ ծառայել մարդկությանը և իմ ժողովուրդին, ես արժանի կլինեմ Ձեր գնահատանքին,— դեմքին մի դառը

ժպիտ կար, այսուհանդերձ զուսպ, բայց խրոխտ հնչեց խոսքը։ Աղջիկը հասկացավ այդ նախադասությունների մեջ թաղված խորհուրդը, թերևս։ Գրեթեհենը լավ էր ճանաչում նրան։ Նա գիտեր, որ իր սիրածի հոգում ինչ-որ ցավ կար, խոր վիշտ, և երկու տարի շարունակ այդ վիշտը որդի նման կրծոտում էր նրա էությունը։ Նա հաճախ խոսել էր իր հետ, խոսել էր Լեմանի ափին, երբ գինով ու խելակորույս քայլել էին միասին, քայլել էին երջանիկ, բայց և մի թաքուն խոր տրտմությունով։ Հեռուն Ալպյանների ձյունեղեն դաղաթներն էին, անշշունջ անտառների խորհուրդը, և կանաչ դաշտերը, որտեղից Ռոնն էր անցնում։ Եվ Լեմանի ափին, երբ մի աստղազարդ երեկո իրենք դիտում էին սպիտակ կարապներին, որոնք բերան բերնի, վիզը վզին, անբարբառ, մնում էին այդպես, հանգույն բոցավառ ջահի, լո՜ւռ, քարացած, տղան ծածկել էր դեմքը ափովը և լաց եղել, հետո փակել էր ականջները...

— Գրեթեհեն,— ասել էր,— ես խելագարվելու եմ, իմ սե՜ր, ականջներիս մեջ վայնանե՜ր են աղջիկների և աչքերիս առաջ խելահեղորեն փախչող բաղմությունների աղիողորմ ճիչեր...

Լուռ երեկո է Լեմանում, աստղազարդ, պայծառ երեկո...

Ինքը գրկել էր նրան և համբուրել շուրթերից երկա՜ր, երկա՜ր...

Հետո նա խոսել էր իր հետ, խոսել էր ինչ-որ հեռու հեռավոր Ադանայի մասին, ուր կիտրոնի ու նարնջի հսկա տարածություններ կային, ուր սպիտակ վարդերի նման բամբակն էր քաղվում դաշտերից, և հիմա այնտեղ կրակ էր ու ավար, ավա՜ր, արյո՜ւն, կոտորած։ Նա պատմել էր իրեն կատարված բարբարոսությունները։ Ընդվզել էր, նզովել Եվրոպական պետություններին, որոնք մնում էին միայն ականատես լուռ վկաները կատարվածին։ Տաղանդավոր, աշխատասեր մի ժողովուրդ կուլ էր գնում օրը ցերեկով և քրիստոնյա պետությունները միայն դիտում էին ձեռնածալ։ Աղջիկը հասկանում էր նրան, ընդվզում նույնպես, և այժմ նա ըմբռնեց, զգաց, որ իր սիրածը, հենց իր կյանքի ամենանվիրական բոպեին իսկ, երբ հպարտ կանգնած էր Եվրոպա-

կան աղջիկների լավագույն ներկայացուցիչներով հորդուն այս սրահի առաջ, չկարողացավ պոկվել այդ ցավից։ Նա զգաց, որ նրա սրտում արյուն լցվեց մի պահ, և տղայի ցավը, իր սիրած, պաշտած տղայի ցավը, համակեց իրեն։ Նա խոնարհեց իր աչքերը և սպիտակ, մարգարտաշար փոքր թաշկինակը մոտեցրեց այտին....

— Եվ լա՞ց ես լինում,— հարցրեց եղբայրը վիրավորված, դառը շեշտով,— ի՞նչ է, խայտառակելո՞ւ ես դու ինձ, չի բավում, որ ստիպեցիր քարշ դալ քեզ հետ։ Հաղար անգամ մերժածս բանը մի անգամ ևս ուզում ես, որ շեշտե՞մ։ Դու լավ գիտես, որ դա լինելու բան չի. նրան դեմ են ամբողջ մեր գերդաստանով... Վերջիվերջո, դու մոռանում ես, թե ում զավակն ես դու և ինչ պարտականություններ ունես անելու Գերմանիայի համար։

— Ես գերմանացի լինելն առաջ մարդ եմ և սիրում եմ նրան,— կրկնեց աղջիկը մեղմ, սառը տոնով։

— Գրանք քո խոսքերը չեն,— նույնպես մեղմ, վերին աստիճանի ջղագրգռված պատասխանեց եղբայրը,— Յուրաքանչյուր գերմանացի նախ գերմանացի է, հետո մարդ, և քո ասածդ բարբարոս զաղափարները պիտի պոկել արմատից, իսկ այժմ խնդրում եմ, անմիջապես հետևես ինձ, ես մեկնում եմ Հյուրանոց և վաղը առավոտ իսկ վերադառնալու ենք Բեռլին, դու այնտեղ հաշիվ կտաս և կխոսես հորդ հետ։

— Ես խոսք եմ տվել և ժամադրվել նրա հետ և պիտի գնամ, Հենրիխ,— ասաց վճռական Գրեթհենը։— Ինքս հետո առանձին կգամ Հյուրանոց...

Սպան բորբոքված և նշմարելի ջղային տեսքով ոտի կանգնեց և առանց որևէ բառ ավելացնելու զուսպ հեռացավ սրահից։ Նա վերին աստիճանի վիրավորված էր քրոջ արածից, իսկ Գրեթհենի համար այդ բոլորը նորություններ չէին։ Երբ իր սիրո մասին նախազգուշացրեց ծնողներին, հենց առաջին բոպեին իսկ հանդիպեց խոր ընդդիմության։ Հայրը պոռթկաց և քիչ մնաց ապտակեր նրան։ Բայց չհամարձակվեց։ Իսկ ինքը խորհել էր, որ օգտվելով եղբոր Շվեյցարիայում գտնվելուց, կարող է նրան մեղմել անձամբ ներկայացնելով Ռուբենին։ Ստացվեց հակառակը։ Բժշկի արտակարգ օր-

վա փառքն իսկ չօգնեց եղբորը, ընդհակառակը՝ հրահրեց նրան։ Իսկ Ռուբենը իր նամակներում խնդրում էր ամուսնություն։

«Կգաս,— գրել էր նա Գրեթհենին,— կգաս Լողան և միասին կվերադառնանք Գերմանիա, կներկայանամ ծնողներիդ։ Ես որոշել եմ պաշտոնապես խնդրել քո ձեռքը նրանցից, և ամուսնանալ քեզ հետ, իմ սեր։ Միառժամանակ կապրենք Գերմանիայում կամ Շվեյցարիայում, ես մասնագիտություն ձեռք կբերեմ և հետո, կմեկնենք իմ ծննդավայրը՝ Սիլիվրի։ Վստահ եմ, մերոնք քեզ գրկաբաց կընդունեն։ Հետագայում կապրենք Պոլսում, աշխարհի գեղեցկագույն քաղաքներից մեկում»։ Այնուհետև նա նկարագրել էր Բոսֆորի գեղեցկությունները ու խոսել իր այրող սիրո մասին դեպի իր Գրեթհենը։ «Մենք երջանիկ կլինենք,— ասել էր վերջում և հիշեցրել նրան այն «մեծ գիշերը»... մոռացա՞ր, իմ սեր, ներքևում Ռոնն էր,— իսկ վերևում, Ալպյաններին փղոսկրյա կողը։ Պատշգամբից երկարում էր մի վտիտ ձեռք, որի վրա անհունորեն երկնային երկու տենդահար շրթներ վառվում էին... մոռացա՞ր, իմ սեր, չէ՞ որ այդ ձեռքը իմն էր, իսկ շրթները՝ քոնը...»։

Գրեթհենի մարմնից ջերմ սարսուռ անցավ։ Ինչպե՞ս կարելի էր մոռանալ այդ բոլորը։ Ինչ միամիտ էր նա...։ Բայց այժմ ինչպե՞ս պատմել այդ բոլոր նորությունները նրան։ Ինչպե՞ս ասել, թե հայրիկը նույնիսկ սպառնաց ծառանգությունից և դերդաստանից զրկել իրեն, իր հարազատ աղջկան, եթե երբևէ փորձի ամուսնանալ նրա, այդ բարբարոս արևելցու հետ։ Թե մայրը լաց եղավ օրերով, քույրերը խռովեցին իրենից, իսկ եղբայրը, իր ամենասիրած եղբայրը լքեց սրահը հենց քիչ առաջ և առանձին թողնելով մեկնեց։ Եվ ասել այդ բոլորը այժմ, այս բոպեին, երբ նրա սիրտը խայտում է ցնծությունից։

— Չէ, կարիք չկա,— վճռեց Գրեթհենը։

Եվ երբ քիչ անց նրանք թևանցուկ, երկու կարապների պես իջնում էին այգիներով. տղան՝

— Գրեթհեն,— հարցրեց,— ինչքա՞ն կարող ես մնալ Շվեյցարիայում։

— Վաղը պիտի մեկնեմ,— պատասխանեց աղջիկը։

Ցնցվեց տղան.

— Վա՞ղը, հենց վա՞ղը,— կրկնեց մտահոգ,— բայց ինչո՞ւ, ինչո՞ւ, չէ՞ որ...

— Կհանդիպենք Գերմանիայում, Ռուբեն,— պատասխանեց աղջիկը քնքշորեն, կպատմեմ քեզ, այժմ թո՛ղ, սիրելիս...

— Բայց ի՞նչ կա, իմ սեր, թե չէ՞ այլևս...

Աղջիկը սպիտակ, դողդոջ ափովը փակեց նրա շրթները։

— Եղբայրս,— պատասխանեց,— ինձ հետ է, հապճեպ ուզում է մեկնել, և այժմ ինձ սպասում է հյուրանոցում...

Փոթորկվեց տղայի հոգին... չհավատաց աղջկան։

— Ամեն ինչ կպատմեմ, երբ գաս Բեռլին և տեղեկացնես ժամանումդ, այժմ գրկիր ինձ, Ռուբեն, գրկիր ինձ, մբրսում եմ...

Բարդիներ ու ուռենիներ կային լճակի ափերին, երեկոն իջնում էր հանդարտ, մանիշակագույնին էին տալիս հորիզոնում ամպերը, զգալի էր աշնան մոտալուտ գալուստը։ Գրեթհենը սպիտակ շրջազգեստի վրայից կապույտ մի վերարկու էր գցել, որը պարփակել էր թևերը։ Նա ինչ-որ անծանոթ մի աշխարհից եկած ոչ երկրային էակի էր նման, տղան ձեռքը բարձրացրեց աղջկա վարսերին ու մատները մոտեցրեց շատ մեղմ, բաց կապույտ ժապավենին, որը սեղմում ու գրկում էր աղջկա հորդառատ, շեկ մազերի փունջը։ Վարսերը ոսկյա հասկերի նման թափվեցին տղայի ձեռքերին, կարծես նա լճի ափին քարացած մի ուռենի էր, իսկ ինքը սրսփուն մի բարդի, որ կանգնել էր շվար, միայնակ ու անզոր... հետո նրանք մարդացան, երբ տղայի շուրթերը մոտեցան Գրեթհենի այրող շուրթերին։

Օ՜ երջանիկ տարիք, ուր մարդ կրնա զեթ
Տաք համբույրի մը անհունին մեջ մոռնալ
Գոյությո՛ւն ալ, տիեզե՛րքն ալ, ինքզինքն ալ,
Ու աշխարհին ժպտիլ անփույթ ու անգետ։

Նա մնաց տեղում շվար ու միայնակ մի բարդու նման, մնաց միայնակ ու անօգնական, մրրկող սիրուց ու բոպեական արթնացած անտանելի կարոտից։

Պոկվեց աշնանային մի տերև և սահեց կանաչների մեջ...

***

Ես կերա՛մ մի՞շտ, անձայրածի՞ր
Դամբաններ են ոտիս ներքեւ,
Քեզ սիրող մեղմ սյուտ մը պետք է,
Դուն փոքրակի՞ն կուժիդ բացիր...

Թ. Սկաի

Երեք տարի էր անցել Լողանի հանդիպման այդ օրից: Սպասումներով, տառապանքներով, պայքարներով լի երեք տարի: 1914-ի գարունն էր: Զարագուշակ մի թվական: Գրեթե ՀԵՆի ծնողները մնացել էին անդրդվելի իրենց համառության մեջ, նրանք պատրաստվում էին հրի ու սրի մատնել աշխարհը, նրանք Գերմանիայում տիրող դասակարգն էին: Ռուբենը իր ուսանողական տարիներից արդեն լցվել էր Եվրոպայում իշխող դասի դեմ, նա տեսել էր, զգացել, որ նրանք միայն ճոխ, ուռուցիկ ու դատարկ խոսքեր ունեն իրենց շրթներին, ճառեր, զուր խոստումներ, որը կձգտեր միայն հավերժացնել իրենց իշխանությունը: Նա ատում էր նողկանքով բոլոր տեսակի «փրկիչ»-ներին, նա պժգում էր ամեն տեսակի քաղաքագետներից, որոնք «առանց թույնի սպանում էին մարդկանց»: Նա գիտեր, որ աղքատը բարեկամ չունի: Նա ճանաչել էր Եվրոպան, զգացել, որ նրա շքեղ պողոտաների կողքին կա թշվառությունը, հարուստ ու փարթամ արդուզարդերի մեջ թաղված կանանց կողքին խուլ անկյուններում վաճառվող կենդանի միսը: Կյանքի հակադիր եղրեր... Սիրո քով աղբ, կյանքի հետ մահ և հարուստ սեղանների համադամների ու խորտիկների կողքին՝ սով: Նա ճանաչեց փողոցը, ճանաչեց պայքարը բազմությունների, որոնք նման էին օվկիանոսի, մի օվկիանոսի, որ մռնչում էր... «Հա՞ց, հա՞ց, հա՞ց» և մի գիշեր նա իր աչքերով տեսավ «բոցերու պես շքեղ, տեգի պես հպարտ» անհանդարտ մասսաների կարմիր դրոշակը: Նա հասկացավ, որ իր ու մարդկության ուղին, բախտը նրա հետ է կապված, շողշողուն այդ կարմիր դրոշակին: Ինքը վաղուց հասկացել էր, որ ընդհանուրի ճակատագրից է կախված և՛ իր ժողովուրդի ճակատագիրը, և՛ իր սե-

փական բախտը։ Նա գիտեր արդեն, որ Ադանայի ջարդերը նշակի դեպքեր չէին աշխարհի համար։ Զգում էր, որ մինչ այդ, նոր, հրեշային ջարդերի սարսափն է կախված մարդկության գլխին. բայց ի՞նչ իմանար նա. չէ որ նա բանաստեղծ էր, ի՞նչ իմանար, թե ինչ կարող էր կատարվել վաղը։ Վաղուց, շատ վաղուց, դեռևս Պոլսի Բերբերյան վարժարանի ուսանող, նա զգացել էր իր մեջ գրականության սերը, նրան տրսել էին դեռևս 1905-ին «Մասիս»-ում, բայց նրան դարձրեց բանաստեղծ տառապանքը, Գրեթհենի սերն ու Եվրոպայի ընդհատակը։ Ընչաղուրկների, թշվառների, սոցիալական հակասությունների մեջ տվայտող բազմությունների կանչը։ Բժիշկ էր, ունկնդրում էր մարդկանց սրտի տրոփին, կոչվում էր Ռուբեն Զիլինկիրյան, շոշափեց և կյանքի՛ բազկերակը, դարձավ Ռուբեն Սևակ։ Երիտասարդ էր դեռևս ինքը, երիտասարդ էր և նա... Գրեթհենը, իր սերը։ Նա ևս գերմանացի էր, բայց ժառանգել էր իր ժողովուրդի վեհն ու մարդկայինը։ Հայնեի, Գյոթեի, Շիլլերի, Բեթհովենի Գերմանիայի դուստրն էր, և նրա համար էլ գնաց սիրտ ետևից...Թողեց, լքեց իր ընտանիքը, արհամարհեց փողն ու ժառանգությունը և միացավ իր... «ասիացուն», իր սևամորուս և սևաբեխ ասիացուն։

1914-ին երբ նավը մոտեցավ Պոլսո քարափին, Սևակի հարազատները իրենց կրծքին սեղմեցին նաև երկու երեխաներ, որոնք արդեն ինքնուրույն կարողանում էին քայլել, հոգ չէ թե երբեմն թունդ հանելով մայրիկի, շեկ մայրիկի սիրտը։

Նա եկավ իր գերմանուհի կնոջ հետ Պոլիս ծառայելու իր ժողովուրդին, որպես բանաստեղծ և որպես բժիշկ։ Եվ եկավ 1914-ին... Ի՞նչ իմանար...

Օրերն անցնում էին հորդուն ու լի։ Յուրաքանչյուր օր, պարտասած իր հիվանդներից, վազում էր դասախոսություններին։ Նա նույնիսկ մոռացել էր նրան... Գրեթհենին...։

— Սևակ, իմ սեր,— ասում էր հաճախ կինը,— մոռացար դու ինձ, հայերը, քո նախանձոտ ազգակիցները խլեցին քեզ ինձանից...

Մի պահ հավատում էր նա կնոջ դառը ակնարկին ու ցնցվում։

— Գրեթհենն,— ասում էր հուզված,— ի՞նչ ես ասում, իմ սեր...

Եվ նրանք փաթաթվում էին... քարանում ճիշտ Լեմանի սպիտակ կարապների նման։

— Հիշո՞ւմ ես Ալպյանների ձյունապատ գագաթը։

— ... Եվ դաշտերը կանաչ.

— Իսկ Ռո՞նը, իմ սեր։

— Լեմանը, կարապները սպիտակ։

— Լողանի այդին։

— Բաղմությունների կանչը։

— Meine Liebe Mutter (իմ սիրելի մայրիկ) ձայն էր տալիս փոքրիկը։

Սևակը խոժոռում էր դեմքը... Կինը հասկանում էր ամուսնուն։ Հասկանում էր, որովհետև սիրում էր։

— Վաշե,— ասում էր,— հայերեն ասա, տես, հայրիկը խոժոռվեց,— Գրեթհենը հայերենը խոսում էր մի տարօրինակ առոգանությամբ և ծիծաղում։

Զգում էր Սևակը իր սխալը։

— Գրեթհենն,— կրկնում էր,— Գրեթհենն, Meine Liebe, (սիրելիս) ich liebe dich (ես սիրում եմ քեզ)։

— Շուվինիստ, — դիտմամբ բարկացնում էր նրան կինը...

— Եվ դո՞ւ ես ասում դա ինձ, դո՞ւ գերմանացիդ,— հարձակվում էր Սևակը,— դու իմ ժողովրդի համար, որ աշխարհի ամենեն համամարդկային, ամենանվիրված ազգն է թերևս։

— Չհասկացողին պիտի հասկացնել և ահա այսպես...— և համբուրում էր նրան։

Հաշտությունը, անխորտակելի, երբևէ չխախտված կընքվում էր։ Գրեթհենի ամենաերջանիկ պահերն էին կյանքում։ Նա լրիվ երջանիկ էր, և իր անիմանալի երջանկությունը ըմպում էր լիաթոք։ Նա սիրում, պաշտում էր իր ամուսնուն, զավակներին, Սևակի հարազատ ընկերներին՝ Դանիել Վարուժանին, տարօրինակ Սիամանթոյին և «արիստոկրատ» Չոհրա-

պին, զարմանում էր, որ իշխանական արտաքինի տակ, կիներին սիրելի այդ «բուրժուա»-ն ամենամեծ բարեկամն էր զրկյալների և հասարակ մարդկանց։ Նա մեծ հոգու տեր մարդ էր... Զոհրապը։ Թեպետ ջղային էր Սիամանթոն, նման իր գրականության, քնքուշ, հեզ ու ամաչկոտ էր Հեթանոս Վարուժանը։ Այո, Գրեթհենի երջանկությունը չմթագնվեց, երբ... պայթեց պատերազմը... 1915... նոր էր քաշվում իր թաքստոցից ձմեռը, ապրիլյան արևի առաջին ճառագայթները հազիվ էին տաքացնում Բոսֆորի ջրերը, օդի մեջ ինչ-որ տխրության մի երանգ կար։ Գիշերը մինչև ուշ ատեն վիճել էին, խոսել ընկերներով և բաժանվել։ Նա, Գրեթհենը գրադարակից հանել էր «ջահելության» օրերի հիշատակները։ Նկարներ, նամակներ, որտեղ սիրո զեղուն, բայց անկեղծ, անկըրկնելի հոսքը կար երկու սրտերի, այնքան հանդուգն ու համարձակ... Նա, Գրեթհենը, իր կապույտ գիշերազգեստի մեջ, թափանցիկ իր գեղով, նետվել էր ամուսնու բաղուկներին, երբ ուժգին հնչեց դռան զանգը...

Զոհրապը չկար այդ գիշեր, չէր եկած, արդյոք Բերա-Պալասի իր զվարճություններից հետո ուզեցել էր անակնկա՞լ անել նրան, բայց այսպես ուշ գիշերո՞վ։ Չէ, նա տակտ ունեցող մարդ էր, «ծերացած» ասպետ... Գրեթհենը մոտեցավ պատուհանին, մի կողմ քաշեց վարագույրը։

— Սեակ, մարիր լույսը,— և սենյակում մարվող լույսի հետ նա տեսավ փողոցում համազգեստների փայլուն կոճակներ. նրանք բազմաթիվ էին...

— Ո՞ւմ եք ուզում։

— Թուբեն բեյին, մի բոպեով,—ձայնեց մեկը խոժոռ ու խստաբան ձայնով։

Մի դող անցավ Գրեթհենի մարմնից. նա փշաքաղվեց։

— Ովքե՞ր են, իմ սեր...

— Ոստիկաններ...

— Ի՞նչ են ուզում։

— Չգիտեմ, հարցնում են քեզ...

Թուբեն Սեակին թուրքերը տարին այդ գիշեր։ Ապրիլյան զով գիշեր էր, գարնան մոտալուտ օրերի հեքով լի...

Առավոտ վաղ Գրեթհենը գնաց փնտրելու Սեակի ընկերներին։

Թուրքերը տարել էին Սիամանթոյին։

Թուրքերը տարել էին Վարուժանին։

Թուրքերը տարել էին...

Դեղին, հորդահոս վարսերն էին անկողնի վրա, տենդով գալարուն մարմինն էր իր և ականջներում շես գիտեր որտեղից որտեղ արձագանքող իր եղբոր ձայնը... «իսկ քո ասիացու բարբարոս գաղափարները պիտի պոկել արմատից...»։

Հանգնվեց, վազեց գերմանական դեսպանատուն.

— Իրավունք չունեն,— գոռաց դեսպանատան ծովային կցորդին, որ Գուման էր կոչվում և Վիլհելմ երկրորդի սիրելին էր։ Գրեթհենը նրան լավ էր ճանաչում և ուզեցել էր անձամբ նրան հանդիպել,— դուք կարող եք խոսել դեսպանի հետ և նա կարող է կանխել իմ ամուսնուն սպառնացող վտանգը, նա իմ ամուսինն է, և ես գերմանացի եմ...

Կցորդը դառը, զուսպ ժպիտով նայեց Գրեթհենին և...

— Մենք իրավունք չունենք այլ պետությունների ներքին գործերին միջամտելու, տիկին,— ասաց և կանգնեց ոտքի,— իսկ այլ ասելիք չունե՞ք...

Նա այն մարդն էր, որ հետագայում հայտարարեց, թե թուրքերը միանգամայն ճիշտ են վարվում հայերի հետ։

Ամիսներ հետո, երբ պարզ էր ամեն ինչ, Գրեթհենը կրկին եկավ դեսպանատուն, ներկայացավ դեսպանին և պահանջեց միջամտել իր ամուսնու աղատմանը։ Նա լաց եղավ...

— Այդ մասին մոռացեք Գերմանիայում և շամուսնանայք,— պատասխանեց երդվյալ հայատյաց դեսպան Վանգենհայմը, շնական արտահայտությամբ և ավելացրեց.— իսկ այժմ դուք դժվար թե նկատվեք գերմանացի...

Այս անգամ ինքը Գրեթհենը ցասումով կանգնեց ոտքի և գոռաց.

— Երկու զավակ ունեմ, հեր Վանգենհայմ, ծնված գերմանացի մի մորից, և գիտե՞ք ինչ, նրանցից երկուսին էլ ինքս, անձամբ, դաստիարակելու եմ այնպիսի ոգով, որ պայքարեն և հզմեն մեկը ձեր գերմանական իմպերիալիզմը, մյուսը ձեր դաշնակից և հոգեղբայր թուրքական ազգայնամոլության իժի

գլուխը, և վստահ եղեք այդպիսին էլ կլինեն, դա...գերմանացու խոսք է... Իսկ թե ո՞վ է իսկական գերմանացին, և՞ս թե դուք, այդ մասին արդեն կասի ժամանակը...

— Իղուր եք բորբոքվել, տիկին,— ինքն իրեն զսպելով վրա բերեց դեսպան Վանգենհայմը,— դա զառանցանք է, Գերմանիան տիրելու է աշխարհին, Գերմանիան, դա ժամանակն է...— և ծիծաղեց դեղին, ատորաքարշ ժպիտով,— իսկ այժմ հրամայում եմ դուրս գալ անմիջապես...

Հետագայում իրականացավ Գրեթհենի հավատքն ու վճիռը. իրականացավ, երբ ինքը Գրեթհենը, սիրո համար աշխարհ եկած այդ կինը, չկար կյանքի համար...

Նա... փոթորկին բացեց կուրծքը:

***

Ո՞վ կուլա այդպես խշտյակիս շեմքին.
— Քո՛յր, դարիքն է, բա՛ց:
Կմա՞խք մը կանցնի դուռսեն լալագին.
— Սո՛վն է, դուռդ բա՛ց:
Տապա՞ռն է չախչախ դռանքս կուրծքին.
— Ջա՛ղն է, դուռդ բա՛ց:

Ռ. Ֆակ

Ջանդրը 1915, օգոստոս...

Ամռան շոգ օր էր, կենտրոնացման ճամբարի № 17 բարաքի դուռը բաց անելով ներս մտավ Ռուբենը: Վարուժանը տխուր նայեց նրան: Սևակը անխոս մոտեցավ բարաքի երկհարիանի ծառի կոճղերից շինված անկողինների շարքին և բարձրացավ վերև: Անկողինները վաղուց իրենց սպիտակությունը կորցրած դեղնորակ, հարդով լցված տոպրակներ էին: Նա անխոս կուչ եկավ ձախ կողմի վրա: Նիհարել ու կմախք էր դարձել: Մնոտի վրա մի ժամանակ պատկառանք ներշնչող իր սև մորուքը կարծես ինչ-որ սուր էր՝ խրված դեմքին: Մթագնել էին աչքերը, և դեղնավուն տեսք էր ընդունել դիմագիծը: Ծանր էր տանում նա ճամբարային կյանքը, արդեն հինգ ամիս է, մնում էին նույն տեղում, անորոշ և անսասյուղ օրերի շարքը թավալում էր, ոչ մի նամակ ու երկտող Պոլսից:

Ի՞նչ էր անում Գրեթհենը, ի՞նչպես էին իր երկու երեխաները, ի՞նչ ճակատագիր էր վերապահված նրանց: Արդյոք ճի՞շտ էին այն շշուկները, որ տարածվում էին ամեն օր, ամեն ժամ, յուրաքանչյուր բոպե աղդելով մարդկային ջղերի վրա:

— Ի՞նչ է, տղա, ի՞նչ է պատահել,— կանգնելով Սեակի անկողնի կողքին հարցրեց Վարուժանը:— Նո՞ր բան ես լսել...

— Վարուժան,— ասաց Սեակը,— ո՞րտեղ է Սիմանթոն.

— Գնացել է լվացք անելու,— կիսահեգնական պատասխանեց Վարուժանը:

— Կանչի՛ր, բան ունեմ ասելու...

— Ասա՛, սիրելիս...

— Ինձ կանչեց հաղարապետը, մասնավոր առաջարկով...

— Քեմա՞լը...

— Այո՛:

— Եվ ի՞նչ:

— Առաջարկում է թուրքանալ և ընդունել մահմեդական կրոնը: Նա խոստանում է, որ կփրկի ինձ, մեզ սպասող ահավոր ճակատագրից: Նա ասաց, այո՛, ուղղակի ասաց, որ ոչնչացնելու են մեզ, արդեն հայությունչէ մնացած ամբողջ արևելքում, տեղահանված և բնաջնջված են: Կհավատա՞ս, Վարուժան, նա ասաց, որ արդեն մեկ միլիոն հայեր այժմ ապրում են երկրային դրախտում, և ասաց, շնական մի ժպիտով, հանգիստ, իսկ վերևից որոշում կա, չխնայել և ոչ մի հայի, լինի նա օրորոցի երեխա, թե անկողնում կաթվածահար պառավ, և այդ բոլորը Թալիաթի գազանի հրահանգն է... ո՛չ մի հայ մտավորական չէ մնացած ողջ Թուրքիայում. իսկ մենք, որ ապրում ենք ցարդ, դա նրա մարդասիրության շնորհիվ է, մեր կյանքը, այսինքն, նրան ենք պարտական, բայց չէ՞ որ վերջիվերջո ինքը սոսկ մի պաշտոնյա է, հրահանգների ստրուկ և ստիպված է գործադրել որոշումը, որը խիստ է և անբեկանելի:

— Իսկ ի՞նչ է առաջարկում քեզ թուրքանալուց բացի, Սեակ,— մեղմ հարցրեց Վարուժանը: Նա անցնող հինգ ամիսների ընթացքում պահում էր իր ջղերի հավասարակշռությու-

նը, միայն մի օր կորցրեց ինքն իրեն, երբ լսեց, որ նույնիսկ ձերբակալել էին Զոհրապին...

— Ուրեմն վերջ,— ասաց տխուր,— չեն խնայում նույնիսկ կղերականներին և նկատի չեն առնում խորհրդարանական անդամների անձեռնմխելիությունը: Խեղճ Զոհրապ,— կրկնել էր դառը շեշտով և աչքերիցը արցունքներ էին հոսել: Սիամանթոն նայել էր խրոխտ իրեն և մնացել էր լուռ: Նա առհասարակ լուռ էր մնում, և երբ զրում էր, որ ջղերը դավաճանում են, սկսում էր ինչ-որ աշխատանք՝ լվացք, բարբի մաքրություն:

— Ուրեմն դեռևս մնում ես միամիտ, Վարուժան,— հարցրել է Սիամանթոն:— Ուրեմն այժմ ես միայն համոզվում, որ լավ բան չեն խոստանում այս բոլորը: Հապա ինչո՞ւ պիտի լիներ անցնող ամիսների այս արհամարհանքը հանդեպ մեզ, հիշմարեցի՞ր մեզ դիտող թուրքերին, որոնք յուրաքանչյուր բոպե ինչ-որ բանի են սպասում: Միամիտներ ենք մենք,— կրկնել էր նա,— և խաբվեցինք ազդովին, իսկ մենք, գոնե մենք պիտի վերապահ լիներինք նրանց, այդ «երիտասարդ թուրքերի» դատարկ ու ստապատիր խոստումներից... արդարությո՞ւն, ազատությո՞ւն, հավասարությո՞ւն— —Adalet, hürriyet, müsavat— ասալեթ, հյուրրիեթ, մյուսավաթ: Մենք չիմացանք, որ նրանք ավելի խորամանկ էին, քան սուլթանները, նրանք ավելի արյունարբու, քան Աբդուլ Համիդը:

Սևակը հիշեց Լոզանը. 1911-ի Լոզանը. հիշեց գերմանական խելագարված ամբոխները և դրոշակը կարմիր... բայց լռեց: Իրավունք ուներ Սիամանթոն: Զոհ էր դառնում աշխարհի երեսին ապրող մի հերոս, մի ազնիվ, արի ժողովուրդ, կուլ էր գնում գազանների երախին, անհագ երախին և Եվրոպան լուռ էր, ինչպես եղել էր միշտ, որովհետև մարդկային տառապանքը, նույնիսկ տառապանքը երբ բացատրվում է ուրիշին, իր մեջ պիտի ունենա սրիկայություն, ստորություն, իր տառապանքովն իսկ շահ պիտի բերի օտարին: Իսկ հայի տառապանքը հայուն համար էր միայն, այդ տառապանքից չէր տուժում կամ օգտվում ուրիշը:

— Ձասացիր,— ասաց Վարուժանը,— չասացիր, Սևակ,

Թե ինչ էր առաջարկում Քեմալը փոխան քո աղջուրացության։

Ցնցվեց Սեակը և մեղմ պատասխանեց.

— Առաջարկում էր կնության վերցնել իր աղջկան... Այշեին։

— Ի՞նչ... նո՞ւյնիսկ...

— Այո՛,— կրկնեց Սեակը և ընկավ խոր մտածմունքի մեջ։

Այշե՞ն... երեք ամիս առաջ էր, հունիսին, հաղարապետ Քեմալ բեյի հարազատ աղջիկը ծանր հիվանդ էր...թոքերից։ Զանազբրում դիմել էին թուրք բժիշկների և նրանք մնացել էին անզոր հիվանդության արագ ընթացքի առաջ։ Տասնութամյա սիրուն թրքուհի էր Այշեն, նոր էր ավարտել տասնամյան, երբ վրա հասավ հիվանդությունը։ Առատ, մինչև կոնքերը իջնող հորդուն սև վարսեր ուներ նա, հիվանդության ներքին տենդից վարդագույն տեսք ընդունած նիհար այտերի խորքում պսպղում էին արտերի և դաշտերի կարոտը արթնացնող աչքերի հուզող կանաչը, և կարծես զարնան առավոտների այդպիսի եղյամը լիներ իջած այդ կանաչին, տևաբար խոնավ էին արտևանունքները... Մի թաքուն ցավ ուներ այդ աղջիկը, որ օրե օր ուտում էր նրան, մաշում... հոգեկան մի տագնապ, որի անունը իզուր փորձել էին տալ քաղաքի թուրք բնակիչները։ Նա մերժում էր որևէ դեղ ընդունել, մերժում էր առաջարկված ճաշերը և հյուծվում օրե-օր։ Ծնողքը ընկել էին խոր մտատանջության մեջ, նրանց մեկ հատիկ աղջիկն էր Այշեն և ահա օրից օր, ժամից ժամ մահվան ուրվականը կախվել էր կյանքի գարնան սեմին նոր ոտք դրած աղջկա գլխին։ Հայրը որոշեց Պոլիս տանել նրան։ Բայց վրա հասավ տեղահանությունը, և բանակը միացավ գործողություններին։ Կենտրոնից վերացրեցին բոլոր տեսակի արտոնությունները, շարժվելը դարձավ անհնար։ Թանձր հուսահատության մեջ թաղված, հաղարապետի մտքում մի կայծ բռնկվեց։ Չէ՞ր կարող աքդյոք տեղահանված «գյավուրներ»-ի մեջ մի մասնագետ բժիշկ լինել։ Առաջին փնտրտուքն իսկ՝ տվավ իր դրական

արդյունքը: Հայտնի դարձավ, որ մասավորականների շարքում կար Շվեյցարիայից շրջանավարտ, Եվրոպայում մասնագիտացած մի երիտասարդ բժիշկ, Ռուբեն Չիլինկիրյան անունով: Քեմալ բեյը խնդրեց նրան և առաջարկեց նայել աղջկան: Սևակը Այշեի մեջ դտավ իր դառն օրերի փրկության լաստը. նվիրվեց բուժման գործին: Ճիշտ էր ախտաճանաչումը, թոքախտ էր աղջիկը, սարսափելի մի հիվանդություն, որ առաջին հերթին պահանջում էր ջղերի զորավոր լարում, կամք, առատ ու կանոնավոր սնունդ, մաքուր օդ: Հայրն ու մայրը մոռացան, որ «գյավուր»-ի, մահվան դատապարտված մի հայու հետ գործ ունեն, խնդրեցին, պաղատեցին, որ անի ինչ որ կարելի է... Արտոնություն, հատուկ արտոնություն տրվեցավ Սևակին ման գալու Զանգեզուրում, լինելու տևաբար Քեմալ բեյի տանը: Նա գիտեր, որ նման հիվանդությունների ժամանակ առաջնահերթ խնդիրը կյանքի սեր, ապրելու կիրք ու կամք պարտադրելն է հիվանդին: Նա համակրում էր աղջկան: Այշեն իրեն հիշեցնում էր իր իսկ անցյալը, նրա աղաչող նայվածքի մեջ իր Գրեթհենեն մնացած ինչ-որ նշույլ կար, թե՞ իրեն էր այդպես թվում: Հետո, քաղաքում ման գալը, կյանքի, առօրյայի հետ կապվելը թեթևացնում էր նրա անձնական տառապանքը: Թեպետ նա հասկացավ, որ իրենք աբսորյալներ չեն սոսկ: Զանգեզուրում ամբոխի խմորվող ախորժակը, թաքուն փսփսուքները հասնում էին իր ականջին: Նա յուրաքանչյուր օր ախուր լուրեր էր տանում Սիամանթոյին ու Վարուժանին: Քեմալ բեյն ու կինը անսովոր լավ էին վերաբերվում իր հետ, դարձնում նրան նույնիսկ սեղանակից և նա օրվա մեջ երկար ժամեր մնում էր աղջկա սնարի մոտ: Իր մասնագիտության հանդեպ տածած սերը, խոր մարդկային իր սիրտը հակառակ ներքին իր ալեկոծումներին, աշխատում էր, որ գործեր հրաշք ու բուժեր աղջկան: Հենած աղջկա անկողնին, Այշեի այրող ափը իր ձեռքի մեջ, նա խոսում, պատմում, անվերջ զրուցում էր նրա հետ, կյանքի, ապրելու կոչ անում նրան: Եվ հետաքրքիրն այն է, որ Այշեն ախորժում էր մորուսավոր և սևաբեխ, դալուկ այդ երիտասարդ բժշկի ներկայությունից: Նրա կանաչ աչքերը խոնավանում էին, երբ բժշկի մեկնելու ժամն էր գալիս: Նա խընդ-

բում էր նրանից, որ մնար դեռևս, խոսեր, պատմեր նրան։ Առաջին անգամ Սևակն էր, որ նրան երեխայի նման կերակրեց, գդալով մեկ-մեկ շուրթերին մոտեցնելով տաք թանապուրը։ Այշեի շուրթերը դողում էին, սրսփում էր մարմինը. և իր բազկին կոթնած նրա ազազուն մարմնի ջերմությունից ինչ-որ հեռու հեռավոր հիշատակների զարթոնքն էր ապրում ինքը։ Կապվեց Սևակը նրան, կապվեց հարազատ մի եղբոր նման և օրից օր իր ուժերը վերագտնող աղջկա հետ ապրեց երանություն, հրճվանք։ Օրերը նվիրել էր նրան և այդ մեղմացնում էր իր վիշտը։ Հազարապետը գոհ արդյունքից, թողնում էր, որ նա շարժվի ինչպես որ կամենում է։ Մի ամիս անց, արդեն Այշեն ման էր գալիս սենյակում։ Նա նրա ստեղծագործությունն էր։ Ինքն էր կյանք տվել նրան, թելադրել, որ ապրի նա, և տեսնելիք զգում էին, որ երիտասարդ բժիշկը արտակարգ ներգործում է իրենց աղջկա վրա։ Մայրը սկսեց մտահոգվել և նախազգալ ինչ-որ թոքախտից առավել վատ արդյունքների մասին և մի օր փսփսաց իր ամուսնու ականջին...

— Այշեն սիրահարված է, Քեմալ,— ասաց նա,— ի՞նչ ես կարծում, հո մի բան չի պատահի...

— Կսպանեմ,— գոռաց սպան և հաջորդ օրն իսկ քաղաքավարի, ինչպես թուրքական դիվանագիտությունն էր թելադրում, երբ սպանելու բոպեն չէ հասած, սիրալիր շնորհակալություն հայտնեց Սևակին և ասաց թե, այլևս կարող է հոգնություն չստանձնել։ Այշեն լավացած է բավարար չափով։

Գոհ մնաց և բժիշկը։ Նա զգում էր, որ աղջկա աչքերի խոնավությունը և դեմքի սպիտակությունը հանախ ծածկող կարմրությունը ներքին այլ հուզումների արդյունք էին։ Նա զգացել էր, որ Այշեի բոպեներով հայելու առաջ կանգնելը, վարսերի պարը, հետո նույնիսկ հանախ, երբ նա լսում էր նրա շնչառությունը, հեքը կրծքերի միայն հիվանդության արդյունք չէին։ Աղջիկը տխուր նայվածքով երկար նայում էր իրեն, անհանգստություն պատճառելու չափ երկա՞ր ու թախծոտ...

Բժշկի բացակայությունը սակայն ահռելի հակազդեցություն գործեց աղջկա վրա. նա երկու օրվա մեջ կորցրեց ամեն

ինչ և Քեմալ բեյը խելագարված նման կանչեց Սևակին...

— Դուք,— ասաց,— խնդրում եմ սխալ չհասկանաք ինձ, անհրաժեշտություն եք նրա համար, հավանաբար մենք անապարեցինք, տոքթոր բեյ, շարունակեցեք գալ և առաջվա նման...

Երբ Այշեն տեսավ Սևակին, ընկավ նրա բազուկների մեջ և լաց եղավ...

— Դուք իմ փրկարարն եք,— ասաց նա հեկեկալով,— առանց ձեզ ես չեմ կարող ապրել...

Բայց քաղաքում բամբասում էին արդեն, մեղադրում հաղարապետին... Երկու սուրի մեջ ընկած.

— Այշե,— ասաց նրան հայրը,— հասկանո՞ւմ ես, թե դու ինչ ես ուզում։

— Ես սիրում եմ նրան, հայրիկ,— ասաց թրքուհին,— սպանիր ինձ, կա՛մ նա, կա՛մ մահը։ Նա միայն կարող էր ինձ փրկել, առանց նրան ես չկամ, հայրիկ...

Տիրեց խոր մտատանջություն։ Օդոստոսի սկիզբն էր։ Եկել էր վերջնական զատնի հրահանգը։ Երկու, երեք հոգի միայն տեղյակ էին կատարվելիքի մասին։ Ճամբարայիններին հանել ճանապարհ և ճանապարհին հանձնել հրոսակախմբերի ձեռքը...։ Զբաղեց Քեմալը լրիվ գիշերը և առավոտյան Սևակին կանչեց իր մոտ.

— Տոքթոր բեյ,— և ասաց ուղղակի,— աղջիկս սիրում է ձեզ։

Ցնցվեց Սևակը, նա գիտեր այդ, բայց հոր կողմից նման խոստովանություն և այնպիսի պայմանների մեջ, որ իրն էր, չէր սպասում։ Փորձեց միամիտ ձևանալ.

— Ի՞նչ եք ասում,— պատասխանեց,— ես նույնպես սիրում եմ նրան, բայց հարազատ եղբոր նման և մի բժշկի, որի համար բոլոր հիվանդները իր քույրերն ու եղբայրներն են։

— Ո՛չ այդպիսի սիրով,— շարունակեց հաղարապետը,— նա սիրում է ձեզ իսկական կնոջական սիրով... ես չէի նախատեսում նման բան, բայց լսեք ինձ, ինչ որ ասելու եմ։ Ձեզ բոլորիդ, առանց բացառության լավ վախճան չի սպասում։ Դուք չգիտեք անշուշտ, թե եղածը, կատարվածը սոսկ մի տեղահանություն չի։ Ոչնչացնելու ենք Ձեր ազգը երկրի

երեսից։ Նույնիսկ Բիսմարկն է ասել այդ, թե միայն մի հայ է թողնելու աշխարհի երեսին, նա էլ որպես Թանզարանի նը-մուշ։ Թալիաթը հրահանգել է բոլոր վիլայեթներում չխնա-յել ոչ մի երեխայի և ոչ մի ծերունու... բնաջնջել անխտիր բո-լորին։ Մի միլիոնի չափ հայեր արդեն այժմ ապրում են երկ-նային դրախտում,— Քեմալը ժպտաց այստեղ,— իսկ եթե Զանգեզուրում տակավին հանդարտ է կացությունը, դա շնորհիվ իմ մարդասիրության,— այստեղ ասեց հաղարապետը, նա վալիից դեռևս երեկ էր լսել վերջնական որոշումը, իսկ այսօր ստացել էր ինքը, ստացել էր առավոտ շատ վաղ,— այժմ, սի-րելի տոքթոր, պարզ է, թե ինչ է սպասում ձեզ բոլորիդ... Ես անշուշտ օրենքի, հրահանգի կողմից և պատասխանատու խախտում եմ կատարում հաղորդելով և տեղյակ պահելով ձեզ։ Սակայն դուք փրկեցիք իմ աղջկա կյանքը և աղ ու հաց կերաք իմ սեղանից, նա դեռևս ձեր կարիքն ունի։ Եկեք հա-տուցեմ ես էլ ձեզ։ Գրեցեք մի դիմում ինձ ուղղյալ, թե դուք ձեր երաշխում, հենց երեկ գիշեր, տեսել եք Մուհամմեդին, և նա ձեզ առաջարկել է հենվել մարդկության խսկական ու ի-րավ կրոնին, շարադրեցեք, դուք, կարծեմ, գրող էլ եք։ Մեղք եք, երիտասարդ մարդ եք, փայլուն ապագա եք խոստանում, և հիանալի գեղեցիկ գլուխ ունեք,— Քեմալը այստեղ ևս ժպտաց,— եկեք, դարձեք մահմեդական և թուրքացեք...

Դողում էր Սևակը նողկանքից և ատելությունից. լսած-ներից դեղնել էր դիմագիծը, բայց կարողացավ տիրել իրեն և հաղիվ ասաց.

— Իսկ ի՞նչ եմ ստանալու փոխարեն...

— Փոխարեն կստանաք ձեր կյանքը,— շոր պատաս-խանեց հաղարապետը,— և կդառնաք եթե ասուված ուղի իմ փեսան, տեսնենք, Ռուբեն բեյ, տեսնո՞ւմ եք, ես կատարում եմ իմ աղջկա ցանկությունը, նա ուզում է ձեզ...

Քեմալ բեյը ևս զսպեց իր դողը, որ իր ասածների հե-ռանկարից էր գալիս, բայց ելավ ոտքի, գնաց դեպի պատու-հանը, դարձրեց կոնակը Սևակին և նույն շորությամբ.

— Այժմ գնացեք և մի քանի ժամից, քանի ուշ չէ, տվեք ձեր պատասխանը։

***

Բացվեց № 17 բարաքի դուռը և սեմին երևաց Սիամանթոն... նա ևս լսեց պատմությունը և ջղային.

— Ուրեմն եթե Բիսմարկը որոշել է երկրի երեսին թողնել մի հայ, դա կլինես դու, եղբայրս, կընդունես պայմանը, իսկ հետագայում հաջորդող սերունդներին, որոնք հակառակ Բիսմարկների գալու են դեռ, կպատմես մեր ժողովրդի Ողբասականը: Կպատմես երբ Բիսմարկին քշած կլինեն այս աշխարհից: Իսկ Բիսմարկի հաջորդներին եթե հանդիպես մի օր, կհիշեցնես իր ասածը, դա թեզ կտալի, որպես նրա սիրած փեսայի:

Վարուժանը մնաց լուռ ու ուժգնված:

Սևակը ներկայացավ Քեմալ բեյին և ավեց պատասխանը.

— Բիսմարկն իղուր է որոշել այդպես, Քեմալ բեյ, իսկ իմ վճիռը ահա հետևյալը, և երկարեց մի փոքրիկ թղթիկ:

Քեմալ բեյը վերցրեց, դեմքին սադայելական ժպիտ և... մնաց սառած: Հայերեն ինչ-որ բանաստեղծություն էր, և այդ բանաստեղծությունը ասում էր...

Ո՛չ, ո՛չ, արշալույսն իրենց պիտի դա...
Ու եթե չի դա ավոտն ապագա
Պիտ, կամին... մինչ ե՞րբ, մինչև հավիտյան:
Ու երբ դեռ երկրի վրա Ազատության
Համար մեռնին ոտ մը մարդեր չնչին,
Անոնք պիտ՝ ըլլան Մարդկության վերջի՛ն
Վերջին հայերը...»:

1915 օգոստոս 13-ին Զանգեզուրի հյուսիս արևելքում, Թյունեյում, անտառային խիտ մի վայրում աքսորի ճանապարհին Թուրք ու քուրդ հրոսակախմբեր թալանեցին և սպանեցին հայ հազարավոր մարդկանց, նրանց մեջ երեքի հանդեպ եղան ավելի հրեշավոր, երեքը, որոնք կոչվում էին Ատոմ Յարճանյան, Դանիել Զուպուքքյարյան, և Ռուբեն Չիլինկիրյան...

Հետո եկավ ամբոխը և մեռելներին թալանեց մի անգամ ևս...

ՏԵՐ ՈՂՈՐՄՅԱ....

Կիրակի էր... 1915 թվականի ապրիլի 12-ը։ Բնությունից նոր էր քաշվել ձմռան սպիտակ քողը, և մանկամարդ, գեղատի կույսերի նորաբողբոջ ալ պտուկների նման սկսել էին պայթել ձյան տակ, ամիսներ թաղված ծառերի վաղահաս ծիլերը։

Դողում էր հողը գարնանային արբունքից և մրսում իր մերկությունը հանդուգն կրքով շոյող քամիների հեքոտ շընչից։ Իսկ կյանքի, հավիտենական վերանորոգման, զարթնումի այդ պահին, երբ ամեն ինչ փսփսում, հևում էր ապրելու, սիրո մասին, երբ Մարմարայի կապուտակ ջրերն իսկ եռ էին գալիս տարփոտ և խելագար ու փարվում ափերին, անսովոր մի գնացք սուրում էր Անատոլիայի ուղղությամբ...

Անսովոր էր այդ գնացքը այն պատճառով, որ հակառակ հառաջացյալ ուշ ժամին, նրա ոչ մի պատուհանում չէր երևվում հետին լույսի որևէ նշույլ։ Փակ էին գնացքի բոլոր դռներն ու պատուհանները, և անցքերում կանգնել էին սվինավոր, խստադեմ ու դաժան ժանդարմներ։ Պոզպատյա ռելսերի վրա թավալվող շոգեկառքի անիվների մահագույժ սառնությունից խոնարհվում էին դաշտերում կանաչին տվող թփերի ու մատաղաշ ծառերի աղաղուն իրանները և կարծես ուզում էին վերակենդանացման այդ անմահ ու միշտ կենդանի վկաները թաքնվել իրականությունից։ Այդ բոլորի միայն հանդուգն վկան կանգնել էր այնտեղ, վերևում, որպես դեղին, խելագար մի կիսալուսին, որպես մահիկ և անամոթ ժպտում,

հեգնում էր և իր ներքին հրճվանքի թափը շաղ տալիս բյուրավոր աստղեր ցանելով գարնանային զովությամբ օծուն Մարմարայի լեղակագույն ջրերին։

Գնացքում, գնացքի յուրաքանչյուր կառաշարում, անտարբեր կյանքին ու սիրո, չոքել էր անասելի մի տառապանք։ Գնացքում մահվան ուրվականն էր, բնության գրկում կատարվող կյանքի խոլական վազքին զուգահեռ։ Գնացքում իր լպիրշ ընդերն ու ժանգոտած ատամներն էր ցույց տալիս դեղին մի մորմոք և նրա համար էլ նա, սևազգեստ այդ աքսորականը արտաքին աշխարհը դիտում էր մի այլ ակնոցով...։ Նա ծառերի նորաբողբոջ ծիլերի մեջ տեսնում էր մատաղատի ծառերի գեղուղեշ հասակների տեսքով աղգակից գեղջկուհիների, որոնք, ինչպես խելառ քամիներից անպաշտպան ու միայնակ, բաց էին արել կուսական իրենց լանջերը և չէին իմանում, որ կարող էին և թաղվել, անսպասելի մի ձյան քողի տակ, մահանալ՝ դեռևս չտեսած գարնան օրերի սիրառատ ջերմությունը...

Նրա կրծքից մի սրտակեղեք օ՜ֆ, օ՜օֆ դուրս թռավ։

Նա ամաչեց իր ձայնից։ Գնացքում տիրում էր մեռելային լռություն։ Նա նույնիսկ զարմացավ, որ քիչ առաջ կարողացել էր խորհել կյանքի ու սիրո մասին, ինքը, կյանքի ու սիրո մեծ երազողը, ինքը, որ կյանքում որպես կնոջ փարվել էր միայն իր մոր թևերին և որպես մեծ սիրահար, իր դողդոջուն ափերի մեջ ճմլել էր իր մեջ արևների ջերմությունն ու փայլը։

Նա... Մեղանչե՞ց արդյոք, որտեղի՞ց խոլական այդ տենչը, կյանքի վայրագ այդ անպատմելի սերը մահ ու անորոշություն գնացող այդ գնացքի մեջ։

Տղամարդիկ, ծանոթ տղամարդիկ էին բոլորը, Պոլսի հայ ընտանին. գրողներ, ուսուցիչներ, խմբագիրներ, կղերականներ, ողջ մտավորականությունը։ Երեկ դիշեր էր, ուշ դիշեր, անակնկալ հավաքեցին բոլորին, ոճրագործներին վայել դաժանությամբ պահեցին 24 ժամ բանտի խցիկներում, բոլոր տեսակի հաղորդակցություններից կտրված, սոված ու ծարավ, առանց որևէ հարցաքննության և հետագայում փակ ինքնաշարժերով բերին քարափ... Սարայբուրնու։ Ինքն ու շատերը

մի պահ մտածեցին, թե այստեղ էլ վերջ է դնելու ամեն ինչ... օսմանյան դաժանությունը բաղմաթիվ վկաներ ունի Սարայպուրնուի հոսանուտ ջրերի մեջ։ Այդ ջրերում ինչքա՜ն ազատության ճիչ է խեղդվել, խողխողվել ինչքա՜ն արդարության կանչ... Բայց քարափում կանգնել էր Բոսֆորի ջրերում երթևեկող ծանոթ մի շոգենավ և... Հայտար փաշա, 225 են իրենք, մի հինգ հարյուր անպաշտոն ու պաշտոնական ոստիկաններ կլինեին միասին, նավուն մեջ։ Այդպես է միշտ բռնապետությունը, կարիք ունի քաղաքացիներն ավելի ոստիկանների... Եվ հիմա այդ գնացքը մութ, լիքը, լիքը ժանդարմներով և... սվիններ ու դարանակալ սարսափ, չես իմանում գործված ո՞ր հանցանքի համար, կատարված ո՞ր մեկ պարտաղանցության հաշվին...

Մեռելային մի լռություն էր գնացքում, յուրաքանչյուրն ապրում էր իր ներքին վշտով, իրենց եռին թողնված սիրելիների, զավակների, հարսների մորմոքը կրծում էր յուրաքանչյուրի կուրծքը և ինք լսում էր ականջ խլացնող, անաղմուկ սրտի այդ տրոփը, լսում էր և կարծում, թե հիմա ուր որ է կպայթի իր թմբկաթաղանթը։ Սաղայելական աղմուկ, որ ձայն չուներ, չուներ անուն, չուներ հնք և որ արձագանքում էր միայն ռելսերի վրա թավալվող անիվների համաչափ տեմպով...

Թրքը-թրքը, թրքը-թրքը...

Ներքին ջերմից շոգիապատ պատուհաններից այն կողմ էին մնացել վաղուց Իշխանաց կղզիների, գարնանային երեկոյի ջինջ մթնոլորտի մեջ հազարումեկ հեքիաթներ հիշեցնող փայլփլուն լույսերը։ Հորիզոնը ժամեր առաջ նախ կարմրին էր տվել, հետո տակավ անսովոր մի մանիշակագույն իշխել էր անհունին և հիմա մութ, մութ լաջվարդ էր ամեն ինչ... Անցել էին Նիկոմեդիան, ուր գիշերային սակավաթիվ անցորդներ և մեծ մասամբ հերթափոխի շտապող հայ բանվորուհիներ կասկածոտ զարմացումով ակնապիշ դիտել էին մթության մեջ սողացող անսովոր այդ գնացքը... Անցնում էին ժամերը և անցնող ժամերի հետ անտարբեր տեսքով գնացքին իր սառած աչքերն էր ուղղել հայ կյանքի խարտիշահեր կապուտաչյա Պարտիզակը, կարծես նախա-

զգալով ինչ որ բան, իր հերթին խաժ աչքերը չռել էր արի Ասլանբեկը։ Դեռևս հեռու էին մնացել Բյութանիո կանաչապատ ու բերրի դաշտերը, գիշերային սգո քողը դեմքին ու աշխարհի անցուդարձին անտեղյակ, հայ քաղաքացիների նման, ձորերի ու կիրճերի մեջ կուսված, քարյուղի լապտերների աղոտ լույսերով աչք էին քթթել Ճանապարհի հարյուրավոր գյուղերը... Մի պահ երկնքից իր ծոցի մեջ շուռ ված կապույտով Սարանջան կոհակավորել էր իր ջրերը և փոթորկել իր ընդերքը ի նշան զարմանքի, հետո որպես սառած բողոք, աչքը հառել էր... աստծուն։

Մեղանչե՞ց արդյոք... Բայց գործված ո՞ր մեկ մեղքի համար, կատարված ո՞ր մեկ պարտաղանցության։

Ծաղկաղարդ էին մրգաստանները, բայց ինքը զգում էր, նախազգում, որ սրսփուն բարդիների ու թախծոտ ուռենիների ստվերի մեջ համատարած ինչ-որ երկյուղ դարան էր մտել Ճանապարհներում...

Հոգեբանական այս գոբշ պահին, մեղմ շշունջով ասված նախադասությունը կարծես պայթյուն լիներ նրա համար։ Նա կարծեց, որ ինչ-որ դաշտերի մեջ առանձին կանգնած ընկուզենու բազմաճյուղ մի ծառից կրակեցին իր վրա. բայց խոսողը, կամ խոսել փորձողը գնացքի միակ հայ պաշտոնյան էր...

— Վարդապետ, խնդրեմ, ձերբակալյալ ընկերներուդ անունները սա թուղթին վրա գրելով ինձի տուր...

Նա սարսափահար խոնարհեց աչքերը, որոնք անասելի փայլով պսպղում էին մթության մեջ։ Խոնարհեց աչքերը, և սակայն վերցրեց իրեն երկարած թուղթն ու մատիտը։ Մոմի մի ուժգուն լույս լուսավորեց այդ բոլորը... և նա դողահար, մագաղաթյա մատներով սկսեց գրել...

Սիամանթո — *Ատոմ Յարճանյան, բանաստեղծ*

Դանիել Վարուժան — *Դանիել Զուգուրբարյան, բանաստեղծ*

Ռուբեն Սևակ — *Ռուբեն Զիլինկիրյան, բանաստեղծ*

Ռուբեն Զարդարյան — *արձակագիր*

Հրանտ Կյուրեղյան — *Հրանտ, արձակագիր*

Նորվանդ Թոլոյան — *Կավռոշ, երգիծագիր, խմբագիր*

Սարսռում էր ամբողջ մարմնով, բայց ձիգ էր անում գրելու և շարունակում էր անունների շարքը, երբ հնչեց դեղին մորմոքը։

— Ո՞վ է լույս վառել այդտեղ...

Թուրք ժանդարմն էր, լսվեց հազիվ լսելի մի հևք, և մոմը հանգավ։

Նրա դողացող մատները մթնում շարունակեցին լրացնել կիսակատար այդ ցանկը, թղթի վրա սահեցին անհավատար տառեր... Կոմիտաս վարդապետ։ Իսկ սրտից էլի պոկվեց խուլ արձագանքը... օ՞ֆ, օ՞ֆ...

Կառաշարի անկյունից, որտեղից որտեղ լսվեց մեղմ, շատ մեղմ երգի, տխուր երգի մի հնչյուն, այդ երգը կարծես գալիս էր հեռու հեռուներից և հուշում անպատմելի մի ցավ, ինչ-որ վշտի անասելի մի հոսք էր բերում իր հետ...

Կանչե՞ կռունկ, կանչե՞, քանի գարուն է,
Ղարիպներու սիրտը զո՞ւնդ-զո՞ւնդ արուն է,
Կռունկ ջա՞ն, կռունկ ջա՞ն, գարուն է...

— Լռե՛լ... — զոռաց ահարկու մի ձայն ղենքի պայթյունի պես։

Ձայնը մարեց...

— Ա՞խ, սիրտս արուն է...

Ամեն ինչ թաղվեց մեռելային լռության մեջ, բայց ինքը լսում էր ինչ-որ ականջ խլացնող, բայց սադայելական մի աղմուկ, որ ձայն չուներ, չուներ անուն, չուներ հևք, որ արձագանքում էր միայն ռելսերի վրա թավալվող անիվների համաչափ տեմպով...

Փակեց ականջները, արդյոք չէ՞ր խելագարվում, զլո՞ւխը, զլո՞ւխը, ասված իմ, բայց գործված ո՞ր մեղքի համար, կատարված ո՞ր մեկ պարտականության...

1915 թվականի ապրիլի 12-ն էր։ Բնությունից նոր էր քաշվել ձմռան սպիտակ քողը և մանկամարդ, գեղատես կույսերի նորաբողբոջ ալ պտուկների նման սկսել էին պայթել ձյան տակ, ամիսներ թաղված ծառերի վաղահաս ծիլերը...

Թրթռ-թրթռ, թրթռ-թրթռ, թրթռ-թրթռ...

1

Գնացքը առավոտ վաղ կանգնեց Էնկյուրիի մոտակա Սենջանգյոյի կայարանում... Սառը քամի էր, կայարանի եզրին, լրիվ երկարությամբ, իրարից երկուական քայլաչափ հեռավորության վրա շարվել էին արյունակալած աչքերով և ցրտից շառագունած դիմագծերով խոժոռադեմ ոստիկան զորքերի մի հարյուրյակ։ Մոտակա տների մեջ հազիվ հասուկենտ եռում էր թեյնիկը, իսկ կայարանի խորքում մի ծերունի ձախ ափի մեջ իր ճկույթ և մատնեմատի օժանդակությամբ չխկչխկացնելով ձեռքի բաժակը ինչ-որ արծաթաջրած մի փոքր ափսեի,— սահլեբ էր վաճառում, պահար ու թիմիոնով, տաք, շուրթեր այրող սահլեբ...

Անասելի մի կարոտ, ջերմ ու կորած անհիշելի ժամանակների մի կարոտ արթնացավ գնացքի ուղևորների սրտում։ Նրանք բոլորը, որ հազիվ երկու օր է դեռ բաժանվել էին տանից, արդեն զգում էին, որ վաղուց, շատ վաղուց կտրվել են կյանքից։ Այդ ծերունու կանչը Անատոլիան էր, ձմռան առավոտների Անատոլիայի գյուղաքաղաքների, գյուղերի հի՜ն, հին կարոտը։ Չէ՞ որ նրանց մեծամասնության հայրենիքը այստեղ է եղել, այս տափաստաններում, այս կիրճերի ու ձորերի գրկում, և այժմ նրանց թվում էր, թե սահլեբ վաճառող ծերունին ինչ-որ իրենց հետ կապ չունեցող և երբեք կապ չունեցած մի հեքիաթի հերոս է, ապրած դարեր առաջ և հիմա հանկարծակի ցցվել է այդտեղ, որպեսզի հուշի կատարվածի մասին։

— Սա՜հլեբ, տաք սա՜հլեբ,— հնչեց կրկին ծերունու ձայնը...

Եվ այդ ձայնը սոված մարդկանց այդ բազմության հոգվույն տվավ ապրելու, տոկալու անհուն տենչ, ա՜հ, եթե հնարավոր լիներ գեթ մի բաժակ խմել այժմ...

— Ծերուկ,— հանդգնեցավ ձայն տալ մեկը գնացքի պատուհանից,— մի բաժակ...

— Չե՛նդ,— գոռաց բարձրաձայն մի զինվորական, որ ոտքի երկարաճիտ սապոգները դոփելով սալահատակին, ձեռքին թուղթ, ինչ-որ սպիտակ մի թուղթ, գալիս է դեպի

ոստիկան զորքերը։ Նա վայրի մի հայացք գցեց կառաշարներին և գիշատչի անզուսպ ձայնով գոռաց.

— Գնացքից մեկ-մեկ իջնեն բոլոր նրանք, որոնց անունները կկարդամ այժմ, ո՛չ ոք հիշատակվածներից բացի, դուրս չգա գնացքից, խստիվ արգելվում է տեղաշարժվել. հասկացա՞ք, դավաճաննե՛ր...

Հասկացել էին վաղուց, բայց հեռուն, կայարանից այն կողմ ծխում էին գյուղական տների երդիկները, և ծերունին լուռ շարունակում էր շխկշխկացնել բաժակը ձեռքի արծաթաջրված, փոքրիկ ափսեին.

— Ռուբեն Զարդարյան,— բամբ հնչեց սպայի ձայնը,— իջի՛ր, Ակնունի, իջի՛ր, Խաժակ, իջի՛ր, Շահրիկյան, իջի՛ր, Չիլինկիրյան, իջի՛ր, իջի՛ր, Տոքտ. Տաղավարյան, իջի՛ր, Սարգիս Մինասյան, իջի՛ր։

Մահը գուժկան թևերով սավառնում էր բաժանմունքներում և բարձրաստիճան զինվորականի բերանից արձագանքող յուրաքանչյուր անվան հետ կարծես կայծակնահար էր լինում մի սիրտ և դողահար, անուժ ոտքեր քարշ էին տալիս մարդկային մի մարմին, որի գրպանում կար տրված անվանց փաստաթուղթը։ Մարդիկ ասես շնչող էակներ չէին, որ շարժվում էին Սենջանգյոլի կայարանում, յուրաքանչյուրը շարքի կանգնած ոստիկան զինվորի արանքը։ Նրանցից մեկը միայն, թուրքական խորհրդարանի անդամ Ակնունին էր, որ դարձավ սպային ու ասաց.

— Դուք իրավունք չունեք մեզ հետ վարվելու ոճրագործների նման, ես պիտի հեռագրեմ Պոլիս և բողոքեմ ձեզանից, վստահեցնում եմ ձեզ, շարաշար սխալվում եք, պարոն սպա...

— Իսկ ո՞ւմ եք բողոքելու... — դեղին, հաղիվ նշմարելի ժպիտով հարց տվեց սպան։

— Հենց նորին գերազանցություն Թալիաթին... ներքին գործոց նախարարին, հասկանո՞ւմ եք։

Սպայի դեմքին մեծացավ ժպիտը և շուրթերը գծագրեցին մահիկի նման մի կիսալուսին։ Չես իմանում, նա ժպտաց նեղողամտաբա՞ր, թե՞ ցինիզմով, բայց երկար նայեց հարց հարուցողի դիմագծին և զարմանալիորեն լռեց։ Արդյոք գիտե՞ր նա, թե Թալիաթը իր կյանքը կպարտեր Ակնունուն, նա

էր տաճին պահել իր տանը, մահվան վտանգ ստեղծելով իր գլխին...

— Դա ձեր իրավունքն է, պեյս,— ասաց քաղաքավարի և հեռու, համենայն դեպս զգաց, որ մի քիչ շատ քաղաքավարի ստացվեց այդ բոլորը և պոռաց.— լռի՛ր...

Եվ խորհրդարանի հայ անդամը լռեց:

Իսկ նա, սեաղգեստ վարդապետը հաշվում էր մտովի, նա անշարժ նստել էր իր տեղում և սպասում էր իր անվան արձագանքին, բայց նրա անունը չկարդացվեց: Յոթանասուն-հինգն արդեն իջել էին և նա զգաց, որ կառաշարներում և կայարանում տիրեց դիվային մի լռություն, և այն աղմուկը, որ ձայն չուներ ու չուներ անուն, սկսեց զնգալ իր իսկ ականջներում: Նա չէր կարող հավատալ երբեք, որ այդքան միամիտ կարող էին լինել ազգի, ժողովրդի առաջնորդության հավակնություն ունեցող մարդիկ, և դա նրան ահավոր վիշտ էր պատճառում, մթագնել էր նրա բանականությունը, չէր կարողանում ըմբռնել կատարվածը և ուշքի եկավ, երբ ռելսերի վրա էլի նույն անիվների արձագանքն էր, համաչափ և խելագարեցնող:

Նույն բարդիներն ու նույն ուռիներն էին, դաշտերում նոր ծաղկած կակաչի, հարսուկի, ծծմորի անկանոն շարքեր, Հեռուն մայրիի անտառներ կային, արևը նոր էր բարձրանում հորիզոնից և իր ոսկի փոշին էր թափում դարձան երազով զոզահար, եղյամակալած բուսականության վրա: Արտերի մոտից դեղին ու կարմիր լաչակավոր գեղջկուհիներ շտապում էին ինչ-որ տեղ, մեկը նրանցից անտեղյակ ձեռքով ասեց նույնիսկ անցնող գնացքին, արևը խոխտացրեց նրա աչքերը, որ հավանաբար, ցորենագույն կլիներին: Նա հասուն ուլիքը կրծքերն ուներ ու շորորվում էր քայլելիս... ոտները բորիկ էին, մի երփներանգ շալվար հասնում էր մինչև սրունքների ծայրամասին:

— Օ՜ֆ... օ՜ֆ...

Յախտարիկներ կային երկաթյա ռելսերի զուգահեռ էլեկտրական ձողալարերի վրա, որոնք սարսափահար մի պահ լքում էին իրենց կայքը և էլի վերադառնում նույն տեղը, ինչ-որ բարակ մի առու զարթնում էր հեռուն և արևի պրիսմակ-

վող հայելիի մեջ զուգվում նաղանքով, հետո շարունակում իր ճանապարհը, թեքվելով ու անհայտանալով ինչ-որ սովեբախիտ կանաչությունների մեջ։

— Ինչո՞ւ բաժանեցին այդ յոթանասունհինգին և տարան, ինչո՞ւ, գործված ո՞ր հանցանքի, կատարված ո՞ր մեկ պարտադանցության համար...

Էնկյուրիում նրանց դիմավորեց քաղաքի ոստիկանության մնօրենը, շրջապատված բաղմաթիվ ոստիկաններով և եղներ լծված գաղնընեներով։ Զորական նստեցրին նրանց կառքերի մեջ և յուրաքանչյուրին տվին մեկական ոստիկան... Անկանոն ու վատ էին ճանապարհները, գաղնբի տախտակները հնացած ու ճաթոտած, ցնցումներից գալարվում էին աղիքները և ստամոքսի սովածությունը ուժգնագի էր անում մարդկանց։ Ցնցումից մի ծերունի վար գլորվեց կառքից և թավալվեց փոշիների մեջ, քիչ մնաց ետևից եկող կառքը կոխոտեր նրան, թերևս լավ էր, եթե այդպես լիներ։ Բայց շտապեցին վերցնել նրան և գրեթե շպրտեցին պատահական մեկի մեջ...

Նա՝ վարդապետը, ամբողջ ճանապարհի ընթացքում նայում էր եղներին և իր մտքի առաջ գծագրվում էր հեռու-հեռավոր հարազատ դաշտերի նկարը, ուր ցորենի անծայրածիր տարածություններ էին, լիքը, հասուն հասկերով։ Ցորենի այդ դաշտերի մեջ ծծմորի կապույտ, ազազուն ցողունն էր, բարակիքան, նազելի կույսերի դյուրաթեքությամբ։ Բայց ա՜հ, գլուխը, գլուխը պայթում էր կարծես ցավից, թե՞ մտքերի հաճախանքից, ինչ-որ մի տեղից անանուխի բույր է գալիս ու պրկում ստամոքսը... Եղները... նրա աչքերի առջև դեռևս շարունակվում էր երազների հոսքը, կարշնեղ մի երիտասարդ, սև, ածխանման վարսերը ճակատին վարում էր արորը, բորիկ էին ոտքերը, ճիշտ քիչ առաջ արտերի մեջ շտապող գեղջկուհու նման, նրա մեջքին մի սպիտակ գոգնոց էր և լիքը, առատ ցորենի սերմեր, նա վարում էր արորը...

Հո՞, հորովել... հորովել.... հորովել...
Ա՜յ, եզո ջան... ախպեր ջան...

Ո՞վ էր եղանն ասել եղբայր... Ո՞վ էր իր կյանքի, իր առօրյայի հարազատին մարդացրել այդպես, ա՜յ եղո ջան... Հիմա նույն եղներն էին, լծված քառասուն սայլերի... ա՜յ ախպեր ջան... Հորովել։ Գլուխը... Անանունի ինչ-որ բույր կար մթնոլորտում, ո՞վ էր ասել, ո՞ր ազգը, ո՞ր մարդկայնորեն վեհ ժողովուրդը, որ մարդացրել էր նույնիսկ անասուններին։ Չէ՞ որ նրանք հաց էին տալիս իրեն, բաժանում իր առօրյան, քրտինքն ու վիշտը, սերն ու ուրախությունը։

Հո՜, հորովել...

Մթնշաղին, երբ արևը թոնրի տեսքով էր հորիզոնում և տներից գալիս էր լավաշի բուրմունքը, նրանք, քառասունչորս դաղնքներ հասան Գալայճրք գյուղամանիստ գյուղաքաղաքը։ Մի գյուղաքաղաք ու գյուղաքաղաքում մի խարխուլ խան, որից նա, սևաղեստ աքսորականը, հիշում է վերմակների վրա վխտացող ոջիլների շարքերը...

Հո՜, հորովել...

Գալայճրքից Զանգրբը տաս ժամ տևեց ճանապարհը, հսկա մի շենք, որ զորանոց է հիշեցնում։ Բարաքներում սա՜ռը, սառը քամի է, որ սանձարձակ սուրում է հյուսիսից հարավ և արևմուտքից արևելք։ Առաստաղից երկնքի աստղերն են երևում, մանավանդ մեկը պսպղում է բոլորից վառ. դոների առաջ սվիններով փայլն է...

Հասակավոր մի աքսորական, անունը չի հիշում, մոտեցավ պահակներից մեկին, հանեց իր գրպանից ոսկյա ժամացույցն ու շղթան և.

— Թե որ մեռնեմ, խնդրում եմ սրանք հանձնել իմ ընտանիքին ի Պոլիս, ահա և հասցես գրել եմ թղթի վրա...

Ա՜յ եղո ջան, ախպեր ջան...

Հին երգ է, հին եղանակ, նրա գլխում անանուն, անձայն դիվային զնգոցն է... համաչափ և խելագարեցնող։

— Վարդապետ,— լսվեց ինչ-որ մեկի շշունջը,— վարդապետ, աղոթիր մեր հոգվույն համար։ Աղոթե՞լ... Հենց այս բոպեին... աղոթել, բայց ինչո՞ւ, հետո ինքը, ինչո՞ւ ինքը...

չէ որ հիմա իր գլխում աղմուկ է, խլացուցիչ, խելագարեցնող մի աղմուկ, նրա աչքերի առաջ այրվող դաշտերի, հրո ճարակ դարձած անծայրածիր ցորենի արտերի նկարն է, ականջներում կույսերի վայնասունը, աղոթել ինչո՞ւ համար, ի՞նչ բանի, դողդողում են ոտքերը, կթոտեցին ծունկերը և նա... փլվեց։

Ծունկի եկան և մյուսները, թերևս կարծելով, որ նա պատրաստվում է աղոթելու։

— Վարդապետ, աղոթիր մեզ համար։

Չգիտի իր ձայնն է, թե ուրիշի, բայց այդ ձայնը բարձրանում է սրտի խորքերից, սրտակեղեք բարձրանում է և արձագանքում զորանոցի պատերում, սվիններով և աստղերի փայլի հետ, մթագնելով նրանց շողը։ Նա երգում է նա, հայ գեղջուկի հարազատը, երգում է նա, Կոմիտասը, երգում է Տեր Ողորմյա...

Տեր ողորմյա, տեր ողորմյա,
Տուր աշխարհիս խաղաղություն,
Ազգիս հայոց ազատություն...
Տեր ողորմյա, տեր ողորմյա...

Բայց սա աղոթք չի։ Սա կոչ է խաղաղության և ազատության, բռնության դեմ, ըմբոստության երգ է կոմիտասյան տեր ողորմյան։ Նա կանգնեց ոտքի և զարմանք՝ տեսավ, որ իր առաջ կանգնած բազմության աչքերում վառվում է մի անզուսպ կրակ, մի բոց, մի ընդվզում։

— Տեր ողորմյա...

Նա վախեցավ, դողաց և դողդողացող ձեռքերով ուզեց շոշափել իր ընկերներին... և կրկին շոքեց գետնին...

— Տեր ողորմյա...

Լուռ էին բոլորը, լուռ և զուսպ ահեղ մի ներքին անիմանալի կրակից։ Կանգնել էին ոտքի և սպասում էին ինչ-որ բանի, ինչ-որ ահավոր մի պոռթկման, մի գերբնական արդարության, մի ժողովրդի համար, որ իր աղոթքի մեջ, իր խողխողման պահին ցանկանում է խաղաղություն աշխարհին...

Անսովոր, արտակարգ մի պոռթկում դարերի յաթաղանների ահագնության տակ շոքած իր սիրելի վարդապետից...

Իսկ նա՞... Իսկ նա ծիծաղում էր խելահեղ պոռթկումով, ահագնաձայն և թնդացնում զորանոցը, ծիծաղում էր, խեղդվում ծիծաղից և զեհենային այդ ծիծաղների ալիքները արձագանքում էին Զանգեզրի զորանոցի պատերում, անշարժացած ովիններին և երկնքում ահից սառած աստղի արտասվոր փայլի տակ...

1915-ի ապրիլ ամսին էր, մի հիսնամյակ առաջ... և զարուն էր Զանգեզրում։

Հունվար, 1965

«ԿՓՆՏՐՎԻ...»

Այս պատմվածքը ձոնում եմ մորս հիշատակին... Պատմվածքի՝ որի գլխավոր անցքերի զգալի մասը վերցրել եմ նրա դառն կյանքից...

1

Տան համար շուկայից գնած մսի, կաղամբի, ստեպղինի և այլ սննդամթերքների կողքին, ձեռքի թերթը ցանցի մեջ տեղավորելուց առաջ, մի անգամ էլ կարդաց հայտարարությունը ու դանդաղ քայլերով սկսեց առաջանալ...

Հայտարարությունը ինքն էր գրել և ուղարկել Փարիզում լույս տեսնող... «Ա...» թերթին: «Կփնտրվի...»

«Ատաբազարի Սուրբ Կարապետ թաղեն Պերվարթենց Ագապիի աղջիկը՝ Աղավնին կփնտրե 1915 թվականի տարագրության ժամանակ կորսնցուցած իր երկու զավակները: Աղջիկը՝ Եպրաքսե Պերվարթյանը, որ ութ տարեկան էր, և մանչը՝ Մինաս Պերվարթյանը, որ վեցին մեջն էր հազիվ, երբ տեղահան եղան հայրենի քաղաքեն տատիկի ու պապիկի հետ: Վերջին անգամ զիրենք տեսնողներ եղեր էին Ուրֆայում, որմե հետո լուր չեմ ստացեր: Ջարդերու ավարտեն ետքը ևս լուր չունիմ, բայց ժամանակ առ ժամանակ անորոշ տեղեկություններ, հակասական լուրեր հասեր են ինձ: Վերոհիշյալների մասին եթե կան ստույգ բան իմացողներ, կխնդրվի գրել հետևյալ հասցեին՝ Աղավնի Պերվարթյան (այժմ Սողոմոնյան) Լիոն, րյու Տիտյո, թիվ 35 (Lyon, rue Didieu № 35) երկրորդ հարկ, բնակարան 15:

Արտասահմանյան թերթերեն կխնդրվի արտատպել»:

Կանգնեց, սիրտը տրոփում էր անսովոր կերպով: Հենվեց ձեռնափայտին և աստծուն կանչեց օգնության: Չլինի հենց փողոցում էլ մի բան պատահի: Ընկնի ցած և մահանա, է՞հ

ինչ իմանաս, արդեն ութսունի սեմին է հասել և սիրտը լավ չի աշխատում։ Փառք Նորից, չէ որ ինքը կա ու կա, բայց ինչքա՞ն սիրելիներ թաղեց, և դեռևս այսքան շարշարանքներից, տառապանքներից հետո հասավ այս օրին։ Ճիշտ է, տխուր, դառն, շատ դառն բան է այսպես օտարության մեջ, օտար մարդկանց հետաքրքիր նայվածքների տակ հանկարծամահ լինելը... Հետո, հիմարի նման ո՞չ անձնագիր, ո՞չ էլ ինքնությունը հաստատող որևէ փաստաթուղթ ունի հետը։ Երանի մի քիչ մոտ լիներ տանը, բայց եղանակը լավ էր և ինքը փորձության չդիմացավ։ Ցանցի մեջ թերթը կա և թերթի շորրորդ էջում իր տված հայտարարությունը, ուր հասցեն որոշակի տված է։ Բայց մարդիկ ինչպե՞ս իմանան, այն էլ հայատառ մի թերթից, թե հենց ինքը, բյու Տիտյոյի համար 35 տան, 15-րդ բնակարանի Աղավնի տատիկն է։ Հանցավորը ինքն է սակայն, ասել են բժիշկները, որ զգույշ պիտի լինել, շուկայի և առհասարակ տան դժվարին աշխատանքները պիտի թողնել երիտասարդներին։ Տղան, որ նույնպես բժիշկ է և հիսունն անցել է արդեն, կռվում է ամեն օր իր հետ թե՝

— Մայրիկ ջան, առանձին դուրս գալ չի կարելի...

Հարսն էլ լավն է, բայց նա այսօր շտապ գործով տեղ գնաց։ Հետո, ինչ էլ լինի, լավ սակարկել չգիտի։ Ճիշտ է, գները սահմանված են, բայց դարձյալ տես՝ երբ ինքն է իջնում շուկա, հաստատված գներից նույնիսկ մի բան պոկում, գցում է գրպանը։ Թոռները համալսարանականներ են, մեկը արդեն վաղուց դարձել է իրավագետ, բայց նրանք ո՞ւր, շուկան ուր։ Ամեն մեկը իր գործով է տարված։ Հետո, ամենակարևորը թերթն էր։ Ում պատվիրում է, ասում է.

— Գրան մա (մեծ մայրիկ) հերիք չի՞, մեկին բաժանորդագրվել ես արդեն, չէ՞ որ բոլորը նույնն են...

Այսունհանգերձ օրվա մեջ յուրաքանչյուրը գնում է ֆրանսիական թերթերից մի քանիսը. է՛լ քաղաքական, է՛լ սպորտի, էլ կինոյի, բայց իր համար մի հատ հավելյալ թերթ գնելը մոռանում են։ Բոլորն էլ շատ են սիրում տատիկին, բայց չէ՞ որ հատուկենտ կրպակներում են միայն վաճառվում հայերեն թերթերը։ Է՜հ, հայերեն թերթից ի՞նչ են հասկանում որ, հարսն արդեն ֆրանսուհի է, իսկ թոռնիկները խելքը գել-

խին կարդալ անգամ չգիտեն։ Տղան էլ՝ նույն հոսանքի մեջ ընկած ասում է.

— Մայրիկ, ինձ հետաքրքրող շատ բան չկա այդ թերթերում,— և չի էլ նայում։

Թերևս ճիշտ է ասում, բայց ինքը վստահ էր, թե այսօր կհրատարակեն իր հայտարարությունը։ Փոստատարին սպասելու համբերություն չունի։ Ուզում է ժամ առաջ կարդալ, իսկ կարդալուց հոգին զովանում է, հանգստանում։ Հույսի հեռավոր մի նշույլ է փայլատակում սրտում։ Խղճի հանդեպ չհատուցված մի պարտք է կատարում կարծես...

Է՜հ, քառասուն տարի է, թերևս հիսուն, տալիս է նույն հայտարարությունը, և ի՞նչ, ավել է Պոլսում գտնված միջոցին, Պոլսի «Ժամանակ» օրաթերթին։ Հետո, տարիներ հետո, նույն հայտարարությունը, որոշ շարադրական տարբերակներով տպել են Բեյրութի թերթերը և հիմա էլ Ֆրանսիայում, Փարիզում լույս տեսնողները։ Դեռևս, հավանաբար, ինքը չգիտի, արտասահմանյան ինչքա՜ն, ինչքա՜ն օրաթերթեր, պարբերաթերթեր լույս են ընծայել նույնը, չէ՞ որ ինքը միշտ շեշտում է... «Արտասահմանյան թերթերեն կիսնդրվի արտատպել...»։

Այս բոլորը լավ, բայց արդյունք չկա։ Հիսուն տարի է անցել, այո՛, ուղիղ հիսուն տարի և համառությունը չի կոտրվել։ Հավատում է, որ նրանք ապրում են, հավատում է, որ երկրի երեսին ինչ-որ մի տեղ կան, շնչում են նրանք։ Ճիշտ է, հակառակ կին լինելուն, հակառակ տատիկ լինելուն, սնոտիապաշտ չէ, չի հավատում ո՛չ զրբացներին, ո՛չ ոգեհարցներին և պիտի ասել նույնիսկ երազներին։ Բայց մեկ-մեկ, երբ սուրճի գավաթ է բաց անել տալիս կամ բախտագուշակներին հարցնում է նրանց ճակատագրի մասին, ասում են թե աղջիկը ապրում է, քրդացած է, կամ արաբացած, հարուստ մի բեկի կինն է, տղան մահացած է։ Մի ուրիշը թե՝ տղան ողջ է, թշվառ ու անկար, աղջիկն է մահացած։ Ուղի-չուղի սիրտը հակվում է հավատալու։ Ախր ինքը իր սեփական ձեռքով գնացք նստեցրեց նրանց, ինչպե՞ս չհավատա...։ Այս է պատճառը, որ յուրաքանչյուր տարի փոխանակ հայկական որևէ եկեղեցում հոգեհանգիստ կազմակերպելու

նրանց հոգուն, տալիս է հայտարարություն, չէ՞ որ երկրորդի մեջ հույս կա։ Առանց հույսի ինչպե՞ս...

Դեռևս մտածում է, որ փոխանակ մգլոտած մի քահանա ուտի իր փողը, թող հայ թերթը շահի։ Գեթ այսպիսով, եթե արդյունքի էլ չհասնի, հայ մամուլին կողմնակի կերպով իր լուման մուծած կլինի։ Եթե իր նման հայտարարություններ, ծանուցումներ ավողներն էլ դադարեն, ապա ինչպե՞ս կապրեն հայ թերթերը...

Արևոտ, պայծառ օր է, և այդ է վատը։ Բժիշկները մասնավորաբար զգուշացրել են, որ գարնան այս եղանակներին պիտի ավելի ուշադիր լինել։ Գարունը բոլոր տարիքների համար էլ վտանգավոր եղանակ է... Ուզում էր նստել մի տեղ ու շունչ քաշել, բայց փողոցի մեջտեղում քառասային այս եռուզեռի, երթևեկի մեջ ումի՞ց կարող ես աթոռ խնդրել։ Զմտնե՞լ մի վառառատուն... Բայց հո չե՞ս խանդարի մարդկանց, թե որ գնելիք որևէ բան չունես, տհաճ մարդ ես բոլորի համար... Ճնշման զգացում կա սրտի վրա, հոգնությունի՞ց է, թե հուշերից...

Փոքր էր, շատ փոքր, հազիվ տասնչորսամյա, երբ ամուսնացրին իրեն։ Ամուսինը, հազիվ քսան տարեկան, գեղեցիկ տղամարդ էր։ Ինքը Ատաբազարում Հաճի Գրիգորի մետաքսի ֆաբրիկայի բանվորուհի։ Սիրահարվեց... Կարմրեց Աղավնի տատիկի ծերունական դիմագիծը երիտասարդական վերհուշներից։ Է՜հ, երեխա էր, ո՞ւմ վրա ուզես կարող էր սիրահարվել։ Տասնվեց տարեկանում արդեն դարձավ մայր, ծնեց Եպրաքսեին, տասնյոթին ունեցավ երկրորդը... Մինասին և մի քանի տարվա երջանկություն ու վերջ։ Ինքը ջահել թաղվեց ընտանեկան հոգսերի մեջ։ Քսաներկու տարեկան էր, երբ թոքախտից մահացավ ամուսինը։ Դե՜, գնա ու հաշտվիր կյանքի հետ, դեռևս կոկոն, երկու մինուճարներով այրի։ Չի հավատում ինքը «աչքի», բայց... աչքով կերան նրան մարդիկ, աչքով կերան։ Այո՛, ինքը ո՛չ սնոտիապաշտ է, ո՛չ էլ հավատում է ճակատագրին։ Աստծուն էլ չի հավատում, ա՜խր, կյանքի այդքան զարտուղություններից, ցավերից, դավերից հետո ինչպե՞ս հավատա։ Այսուհանդերձ...

— Մեղա, մեղա ամենակալին, եթե կաս երբևէ, եթե գոյություն ունես հայի համար...

Աղավնի տատիկը միշտ կրկնում է «հայի համար»-ը, որովհետև կյանքում իր տեսածները փաստում են, որ եթե եղել է աստված, այդ եղել է այլ ազգերի համար։ Հայի համար էլ ի՞նչ աստված, Աղավնի տատիկի սեփական ճակատագիրը բավ է՝ համոզելու, որ չկա նա...

— Եթե կաս, գեթ մնայիր երկնքում, ինչո՞ւ ես խառնվում երկրային գործերի մեջ,— փիլիսոփայում է հանձախ Աղավնի տատիկը, բայց չես գիտեր որտեղից եկած մի ներքին մղումով վրա բերում.

— Մեղա քեզ, եթե երբևէ մեղք եմ գործում, աստվածիկըս,— և կարծում է, որ փաղաքշական այդ մասնիկով էլ հանգստացնում է խիղճը։

Ամուսնու, իր այնքան սիրած ամուսնու մահից հետո շուզեց մնալ հայրենի քաղաք՝ Ատաբազարում։ Ի՞նչ աներ, բեռ լինել ծնողների վրա չէր կարելի, հետո հիշատակները խեղդում էին նրան։ Յուրաքանչյուր փողոցի անկյունում, Ատաբազարի համբավյալ «Զարխի» ջրերում նրա հետքերն էին, իր փշրված երազների, իր տենչերի, ձգտումների կոտրվածքները... Ի՞նչ կարող էր անել Ատաբազարում։ Վերցրեց երեխաներին, թողեց հորն ու մորը և շունչը առավ Պոլսում։ Քաղաքում ճանաչված, հարուստ, ամուրի մի մտավորական մարդու տան մեջ տնային ծառայող դարձավ։ Աշխատասեր, պարկեշտ, զեղեցիկ կին էր։ Իր զավակների հետ ապրում էր հսկա տան սենյակներից մեկում և աշխատում օրնիբուն։ Ուշիմ կին էր Աղավնին։ Կարողացավ իր երիտասարդությամբ, մաքրասիրությամբ իր կամքից անկախ տիրոջը համակրանքը փոխակերպել... սիրո։ Բայց, ինք գեղջկուհի էր, այս որտեղի՞ց որտեղ այդպիսի բախտ իրեն, ամուրի հարուստ մի մարդ կարո՞ղ էր նրան որպես կին վերցնել։ Իսկ ինք չէր կարող նույնիսկ մի բոպե մտածել այդ կարելիության մասին։ Վճռեց հեռանալ։ Սակայն... պայթեց համաշխարհային պատերազմը։ Իրարանցում էր, վախ, անորոշություն... Ի՞նչ էր անելու։ Անցնում էին օրերը և ինք զգում էր, որ այդպես շարունակել չի կարելի։ Ճիշտ է, լավ էր

վարձատրվում, ապահովել էր իր զավակների ուսման կարելիությունը։ Ինքն էլ փոխվել էր այդ տան մեջ։ Եկող ու գացող այցելուների խոսակցությունները, գրքերով լի գրադարանները նոր աշխարհ էին բացել իր առաջ և դեռևս շատ, շատ երիտասարդ էր ինքը... Բայց վճռեց ու կրկին մի օր թե՝

— Աղաս, ուզում եմ հեռանալ այստեղից։

Զգաց, որ շփոթվեց տերը.

— Ինչո՞ւ,— կմկմաց մեղմ,— գոհ չե՞ս տանից, վարձատրությունից։

— Ընդհակառակը, աղաս, բայց ուզում եմ գնալ տուն, մորս ու հորս մոտ...

— Վաղը կպատասխանեմ,— ասաց տերը։

«Վաղը» մինչև լուսանալը չքնեց Աղավնին, արդյո՞ք սխալ որոշում չընդունեց։ Ի՞նչ կարող էր անել Առաքաղարում, արդյո՞ք չի կործանում իր զավակների ապագան, բայց անսպասելի մի առաջարկ վերիվայր շրջեց իր կյանքի ուղին։

Առավոտյան տերը թե՝

— Աղավնի, ես քեզանից մեծ եմ մի տասնհինգ-քսան տարով. բայց լսիր ինչ որ ասելու եմ, կամ առաջարկելու հիմա։ Արդյոք չէի՞ր ուզի ամուսնանալ ինձ հետ... Ես խորհել եմ վաղուց, և այս գիշեր էլ գրեթե չեմ քնել լրիվ, որոշումս հաստակ է, թե որ ուզում ես...

Այդ բոլորին կարծես կրծքի ձախ կողմում սիրտը սկսեց ուժգին խփել. բայց հիմա հասկանում է, որ այդ խփելուց եթե չմահացավ, այլ էր պարագան, իսկ հիմա՝ այլ...

— Աղավնյակս,— ասաց,— վաղն իսկ ես կորդեգրեմ երկուսին էլ, միառժամանակ ուղարկիր ծնողներիդ մոտ, կամուսնանանք և խոսք եմ տալիս, ամենաշատը մի քանի ամսից կգնանք միասին և հա կբերենք։

Աղավնին ինքը իր իսկ ձեռքով հագցրեց նրանց, ուտելիք ու փող դրեց հեռանները և իր կյանքի ու որոշումների մասին մանրամասն մի թուղթ գրեց հորն ու մորը ուղղված։ Եվ թեև ահավոր դժվարությամբ, բայց համոզեց, որ գոնե մի քանի ամսով հարկ է գնան տատիկի ու պապիկի մոտ,

թե շատ լավ ապագա է սպասում նրանց, և ինքը ձեռներիցը բռնած տարավ Հայտարփաշա. Անատոլիայի ուղղությամբ մեկնող գնացքների կենտրոնական կայարանը։ Ի՞նչ իմանար...

Չէ, թուրքերի մեջ էլ լավ մարդիկ կային էն օրերին, ինքը գիտի այդ։ Տոմսավաճառը նայեց նրան և.

— Քուչրիկ,— ասաց,— հայ ես, չէ՞։

— Այո՛։

— Դե, այդ գնացքի համար տեղ չունեմ, թող մյուսով գնան, վաղը...

— Լուր եմ ուղարկել, հեռագրել, նրանց դիմավորելու են,— խնդրեց ինքը։

— Ոչինչ,— ասաց մարդը,— ոչինչ, թող վաղը գնան։

— Խնդրում եմ,— պնդեց կրկին,— խնդրում եմ երկու տոմս ճարեք։

— Իսկ ո՞վքեր են սրանք։

— Իմ զավակներն են։

— Ի՞նչու ես ուղարկում։

— Անհրաժեշտ է։

— Ո՞ւր ես ուղարկելու...

— Ատաբազար։

— Թող մնան, քուչրիկ,— կրկին համառեց մարդը,— թող մնան, հաջորդ գնացքով կուղարկես։— Չգիտես ինչու լաց եղավ և ավելորդ բաներ ասաց.

— Թե ինչու տոմս տվիր ուրիշներին և իմ երեխաների համար չես տալիս։

Մարդը ճարահատ երկու տոմս կտրեց։ Փոքրիկները կարծես չէին ուզում պոկվել իրենց մոր փեշից։ Նայում էին տխո՞ւր, տխո՞ւր, դառը, լացակումած աչքերով...

Գնացքը շարժվեց, թաշկինակները մնացին օդում. գնացքի մի պատուհանում գծագրվեց չորս փոքրիկ... առու։ Իր կոկորդում խցկվեց մի բան, չէր իմանում ինչ և հիմա հիսուն տարի հետո այդ ծանրությունը մնում է այդպես խրված կոկորդում... Ա՜խ, ա՜խ, ասուված իմ, գնացքի այդ պատուհանը...

Անատոլիա մեկնող այդ գնացքից հետո, ուղևորների համար ճանապարհները փակվեցին... Սկսվեց տեղահանությունն ու հայկական զողզոթան։ Սկսվեցին չարդերը։

2

Ամուսնացավ ինքը, աչքերում պարփակած իր երկու միլիոնանոց ունեցվածքը և ամբողջ կյանքում... չներեց ամուսնուն։

Բայց ի՞նչ իմանար նա։ Պոլսից աքսորեցին մտավորականներին, այդ թվում և իր ամուսնուն։ Այրիացավ երկրորդ անգամ, գրկում տասնամյա մի մանչ զավակ... Պաշտեց ու պաշտում էր նրան, ամուսնուն, հակառակ սակայն ամուսնացավ երրորդ անգամ, ապահովելու համար իր մեկ հատիկի ապագան և պայման կապեց՝ հեռանալ Թուրքիայից Արաբական արևելք կամ Ֆրանսիա։ Քառասուն տարի է անցել իր երրորդ ամուսնությունից, հիսուն տարի գրեթե վերջին այդ գնացքից։ Հիմա Լիոնում է։ Երրորդից զավակ չուզեց ունենալ, ունի թոռներ սակայն, բայց ի ցավ իրեն տղան երբ ավարտում էր բժշկական համալսարանը, Փարիզից՝ իր հետ բերավ մի կին և ներկայացրեց. ֆրանսուհի էր։ Երրորդ ամուսնուն կորցրեց մի հինգ տարի առաջ... քաղցկեղից։ Թոռները նույնպես հասել են, մեծացել։ Մեկը դարձել է վաղուց իրավագետ, մյուսը դառնալու է բժիշկ։ Աշխատեց, որ կյանքում, ամեն ինչ կորցնելն հետո, գեթ կարողանա վրեժը լուծել անցյալից և փրկի ի դին ամեն զոհողության հայոց Մեսրոպատառ այբուբենը։ Ջհաջողվեց։ Լավ կին է հարսը։ Առաջադիմական հայացքների տեր, լավ մայր։ Ինքը գոհ է նրանից, բայց կոկորդում մի բան կա, խցկված մի բան, չի իմանում ինչ... Մի անգամ գաղթերից մաղապուրծ ճողոպրած մի մարդուց, Լիբանանում լսեց, թե ինչ-որ Սասաբաղարից եկած և Ուրֆայում գտնվող գաղթականների մեջ կային այդպիսի մի ութ տարեկան աղջիկ Եպրաքսե անունով և մի մանչ՝ վեց տարեկան, որոնք ձեռք-ձեռքի բռնած լալով ման էին գալիս։ Կորցրել էին տատիկին ու պապիկին... ո՛չ ոք չկար, որ հետաքրքրվեր նրանցով...

Խփեց սիրտը ուժգին, մի աթոռ էլ չկա, որ նստի ու շունչ քաշի մի քիչ։ Ինչո՞ւ դուրս եկավ տանից, թերթի համար էր, ուզում էր շոպե առաջ կարդալ, չհամբերեց, չկարողացավ սպասել փոստատարին։ Ամեն տարի ապրիլին, երբ տալիս է հայտարարությունը, կարծես սիրտը հովանում է ինչ-որ բանից, բայց սիրտը... Թոռները այսօր պիտի գնան հայկական հավաքույթի։ «Շիշ-քեպապ»-ի փարթիի. ուշինչ, զոնե «շիշ-քեպապ»-ով թող զգան, որ հայ են կյանքում։ Հարսը կարևոր մի տեղ գնաց այսօր։ Հիմարություն, թող ինքը նստեր տանը, կասեր տղային, կբերեր թերթը, շատ-շատ, թող սպասեր մի օր էլ... Ի՞նչ անել, որ տղան կարող է և մոռանալ, չէ՞ որ բոլոր կրպակներում հայերեն թերթեր չկան։

Դիմացի պատի վրա ինչ-որ դեղին բծեր կան, արևի՞ց է, թե իր աչքին են թվում այդպես... Կարող է և պատահել, որ Ուրֆայից փոխած լինեն Ճանապարհի ուղղությունը։ Կյանք է, ինչ իմանաս, թերևս այնտեղ են, Հայրենիքում, թեպետ ոչ մի բախտագուշակ այդպիսի բան չի ասել իրեն, բայց միթե աշխարհի ամենաուժեղ բախտագուշակն անգամ կարո՞ղ էր հավատալ, որ այդքան շաբաթանքներից, տառապանքներից հետո կլինի հայերի համար հայրենիք, այն էլ ինչպիսի՞ն... Ա՜խ, որ մեռներ, գեթ մեռներ հայրենի հողում, հայրենի հողում գերեզման ունենար։ Ամուսնուն թաղեց Ատաբազարում, երկրորդ ամուսնուն ու զավակներին հանձնեց անապատներին, երրորդը թաղվել է Լիոնում, իսկ մոր ու հոր հողաթումբերը անհայտ են... Ա՜խ, գեթ մի աթոռ լիներ... Մեկը զարնվեց թևին։ Ցանցը պոկվեց ափից, մայթերի վրա ինքը տեսնում է թափված ատեպղիններ և մսի բացված փաթեթ, հետո կաղամբ, որը գլորվում է, գլորվում մայթերի վրա, զավազանը, դեղին բիծը... ու Աղավնի տատիկը ընկավ մայթերին...

Հայերեն թերթեր են իր գրասեղանի վրա, ծալ-ծալ հայերեն թերթեր։ Տղան է բերել, իրավագետ տղան։ Նայում է նա, Աղավնի տատիկի տղան, թերթերին և աչքը հառում գրասեղանի աջ անկյունում հանգչող մոր նկարին...

— Ինչո՞ւ առանց լուր տալու փողոց դուրս եկար, մայրիկ,— արցունքոտվում են աչքերը, փախցնում է նայվածքը նկարից ու նայում թերթերին...

«Կփնտրվի...

Ատաբաղարի սուրբ Կարապետ թաղեն...»

Մայրիկի հայտարարություն է, հայտարարությունների հավաքածուներ, բաղմաղան անուններով թերթերի մեջ, թվով մի հինգ տասնյակի չափ։ Բոլորը ծալվել են կանոնավոր և ծրարվել վառվռուն, եղրին ոսկեգույն փուլեր ունեցող յաղմայի մեջ։ Ատաբաղարից բերված հի՞ն, հին մի յաղմա...

— Հայրիկ,— հանկարծ լսվում է ավագ տղայի ձայնը։

— Ի՞նչ կա։

— Տես,— ու բերում է սպիտակ թղթի վրա գրված իր ձեռագիրը... ֆրանսերենով. «Ա... թերթի խմբագրությանը.

Խնդրում ենք դադարեցնել Ձեր թերթի առաքումը մեր հասցեով։ Տատիկը մահացավ, հայերեն կարդացող չկա...»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պատմվածք՝ Վազգո ընկերության, երազի և տիկնիկների մասին . 3
Գրատուն «Բաֆֆի» 34
Կապույտ մորմոք 67
Բուրգոյի տղան 74
Քաղաքի լուսաբացը 86
Հարևան ջան 96
Վարաները 103
Պատմվածք՝ պատմվածք գրելու մասին 110
Խոհեր բաց երկնքի տակ 113
Խոհեր մարդու մասին 137
Հայոց թաղը 146
Բանաստեղծի Գոգոթան 174
Տեր ողորմյա 197
«Կփնտրվի...» 205

Գեղամ Լևոնի Սևան

Հայոց թաղը

Խմբագիր՝ Մ. Ս. Թերզյան
Նկարիչ՝ Մ. Ռ. Սասոյան
Գեղ. խմբագիր՝ Ան. Վ. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Օն. Ս. Փանիկյան
Վերատեսող սրբագրիչ՝ Լ. Շ. Հովհաննիսյան

Հանձնված է արտադրության 4/II—1967 թ.
Ստորագրված է տպագրության 6/X 1967 թ. Թուղթ՝ տպագրական № 2
84×108 1/32. տպ. 13,75 մամ.=11,27 պայմ. մամ., հրատ. 9,7 մամ.,
պատվեր 228. ՎՖ 07336, տիրաժ 7000, գինը՝ 38 կոպ.
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91.

Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր մամուլի կոմիտեի
պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության 1-ին տպարան,
Երևան, Աշավերդյան փող. № 65.

ԳԻՆԸ 38 ԿՈՊ.